



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

L57

1633

1999

43785-4.2.

ԳԱՍԱԳԻՐԻ

ԱԶԳԱՅԻՆ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ

ՀԱՅՈՑ

ՍԿՍԵԱԼ Ի ՀԱՅԿԱՑ

ՄԻՆԷ Ի ԹԻՒԿԱՆԵՆ ԳՐԻՍՏՈՒ

1870

ՀՐԱՄԱՆԱԻ

ՀԱՍՏԱՐԱԿԱՑ ԿՐԹՈՒԹԵԱՆԵ ԺՈՂՈՎՈՑ

ԱՇԽԱՏԱՍԻՐԵԱՑ

ՄԿՐՏԻՉ Ց. ՉՕԼԱԳԵԱՆ

Բ. ՅՊԱԳՐՈՒԹԻՒՆ

№ 233



28093-62

Կ. ՊՕԼԻՍ

Գ Ի ՊՐԵՍՏՐԱՆԻ ԶՈՐԿԱՐԵԱՆ

1875

ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՎՐԱՅ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳԻՏԵԼԻՔ

Հայոց ազգը՝ չորս հազար երկու հարիւր քսան
երկու տարուան ազգ մ'է, և տասը գլխաւոր
փոփոխութիւններ կրելուն համար, նորա սլաւ-
մութիւնն ալ տասը մասի կը բաժնուի. որք են՝

Մասն առաջին՝ Հայկազունք .

Մասն երկրորդ՝ Կուսակալք .

Մասն երրորդ՝ Սըշակունիք .

Մասն չորրորդ՝ Մարզպանք և Կիւբապաղատք .

Մասն հինգերորդ՝ Պատրիկք և Ոստիկանք .

Մասն վեցերորդ՝ Բազրատունիք .

Մասն եօթներորդ՝ Ռուբինեանք .

Մասն ութերորդ՝ Բռնակալք .

Մասն իններորդ՝ Պատրիկք .

Մասն տասներորդ՝ Սահմանադրական Վար-
չութիւն :

ՄԱՍՆ ԱՌԱՋԻՆ

ՀԱՅԿԱՉՈՒՆՔ

Հայկազանց իշխանութիւնը՝ Քրիստոսէ 2350
տարի առաջ սկսեց և 2020 տարի զխմանալով՝



28. 1639

1633-60

9

մեծն Աղեքսանդր Մակեդոնացւոյն ձեռքով
վերջացաւ . Քրիստոսէ 330 տարի առաջ :

ՄԱՍՆ ԵՐԻԿՐՈՐԴ

ԿՈՒՍՍԿԱՆԻՔ

Աղեքսանդր Մակեդոնացի Հայաստանի տի-
րելով, երբէմն Մակեդոնացի և Սելևկիացի և
երբեմն ալ Հայ կուսակալներով 180 տարի կա-
ռավարելէն ետքը՝ Պարթևաց Վաղարշակ
Թագաւորին ձեռքով վերջացաւ . Քրիստոսէ 150
տարի առաջ :

ՄԱՍՆ ԵՐԻՈՐԴ

ԱՐՇԱԿՈՒՆԻՔ

Վաղարշակ՝ Պարթևաց Թագաւորը Հայաս-
տանէն կուսակալները վճնտելով, Սրշակ՝ իւր
եղբայրը Թագաւոր դրաւ, որուն անուամբը
Սրշակունեաց Թագաւորութիւն կոչուեցաւ և
383 տարի դիմանալէն յետոյ՝ Պարսից Վառամ
Թագաւորին ձեռքով վերջացաւ . Քրիստոսի 433
Թուականին :

ՄԱՍՆ ԶՈՐՐՈՐԴ

ՄԱՐԶՊԱՆԻ ԵՒ ԿԻՒՐԱՊԱՆՆԻՔ

Վառամ Թագաւորը Հայաստանը նուաճելով,
իր կողմէն մարզպան մը դրաւ, երբեմն ալ Յոյնք
իրենց կողմէն Կիւրապաղատ անուամբ մէկը կը
խրկէին . այսպէս կառավարեցին զՀայաստան
230 տարի . մինչև որ Հագարացիք Հայաստան
արշաւելով, ամենքն ալ վճնտեցին . Քրիստոսի
693 Թուականին :

ՄԱՍՆ ՀԻՆԳԵՐՈՐԴ

ՈՍՏԻԿԱՆԻ ԵՒ ՊԱՏՐԻԿԻՔ

Հագարացիք Հայաստանը նուաճելով, իրենց
կողմէն Ոստիկան կը խաւրէին . երբեմն ալ Յոյնք
Հայոց հաւանութեամբը՝ Հայ իշխաններէն Պատ-
րիկ մը կը դնէին Հայաստանը կառավարելու .
ասանկով՝ Պարսիկք և Յոյնք 166 տարի իշխեցին,
մինչև Աշոտ Բագրատունիին իշխանութիւնը .
Քրիստոսի 859 Թուականին :

ՄԱՍՆ ՎԵՅՆԵՐՈՐԳ

ԲԱԳՐԱՏՈՒՆԻՔ

Աշոտ Ա. Բագրատունի նախարարաց ցեղէն ըլլալուն, ասոնց իշխանութիւնը Բագրատունեանց թագաւորութիւն կոչուեցաւ և 222 տարի գիմանալէն յետոյ, Յունաց ձեռքով կործանեցաւ. Քրիստոսի 1080 թուականին:

ՄԱՍՆ ԵՕԹԵՐՈՐԳ

ՌՈՒԲԻՆԵԱՆՔ

Բագրատունեանց թագաւորութիւնը դադրելէն տարի մը ետքը, Ռուբէն անունով Բագրատունի իշխանէ մը, Կիլիկիոյ մէջ Ռուբինեան իշխանութիւնն սկսաւ և 293 տարի գիմանալով՝ Մէլէք—էլ—էշրէֆ Շապան Եղիպատով սուլթանին ձեռք վերջացաւ. Քրիստոսի 1371 թուականին:

ՄԱՍՆ ՌԻԹԵՐՈՐԳ

ԲՈՆԱԿԱՆՔ

Ռուբինեանք կործանելէն ետքը, Հայաստանը ղանաւորներու տակ կը հեծէր 86 տարի, մինչև

որ Յամանցիք, Պօլիսն առնելով, Հայոց Պատրիկութիւնը հաստատեցին. Քրիստոսի 1461 թը ւականին:

ՄԱՍՆ ԻՆՆԵՐՈՐԳ

ՊԱՏՐԻԿՔ

Յաթիհ Սուլթան Մէհմէտ, Կ. Պօլսոյ տիրելէն եօթը տարի ետքը, Յովակիմ անուամբ եպիսկոպոս մը՝ Հայոց վրայ Պատրիկ դրաւ, և աթոռը հաստատեց ի Պօլիս, իրեն վերապահելով միայն Հայաստանի զինուորական պահպանութիւնն ու արոց հաւաքումը. այսպէս սկսաւ Պատրիկութիւնն և այս ընթացքով կը կառավարուէր Հայոց ազգը:

Բայց վերջերը Ամիրայք՝ զՊատրիկն, իրենց գործիք ընելով, ըստ կամաց ժողովուրդը հարստահարել սկսան, և այն աստիճան ճնշեցին զայն, որ ալ չկրնալով համբերել, Բ. Դունէն Ամիրայից՝ ազգային գործոց չմիջամտելու և ազգային իրաւանց անթերի պահպանութեանը համար, խմբադրեալ կանոնադրի մը վաւերացումը խնդրեց, և ընդունեցաւ, որով վերջացաւ Պատրիկաց և Ամիրայից 499 տարի միապետաւ:

բար վարած իշխանութիւննին . Քրիստոսի 1860
թուակ սնին :

ՄԱՍՆ ՏԱՍՆԵՐՈՐԴ

ՍՍ.ՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ

Բ. Գուռը՝ Սահմանադրութիւնը վաւերացնելով, ժողովուրդն իւր իրաւանդ տէրն ըրաւ .
Ընդհանուր և Վարչական ժողովներ կազմելով,
Ս.միրայից բանութիւններն ալ ջնջուեցան և սկըսաւ ժողովրդային վեհապետութիւնը, որուն
գործադրութիւնը 12 տաբէ եղաւ . Քրիստոսի
1872 թուականին :



ԱԶԳԱՅԻՆ

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՅ

Դ Ա Ս Ա Գ Ի Ր Ք

Ի ՊԵՏՍ Ի ՊՐՈՅԵՑ

ՄԱՍՆ ԱՌԱՋԻՆ

ՀԱՅԿԱԶՈՒՆՔ

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

ՀԱՅԿԷՆ ՄԻՆՁԵՒ ԱՐԱՄ

2350—1300

- Հ. ՀԱՅՈՅ տէրութիւնն ե՞րբ կը սկսի :
- Պ. Զրհեղեղէն քիչ մը վերջը :
- Հ. Լնչու համար Հայ կըսուինք :
- Պ. Մեր տէրութիւնը կանգնող զիւցաղնին
անունը Հայկ ըլլալուն համար :
- Հ. Ո՞վ էր Հայկ :
- Պ. Նոյ նահապետին Յարէթ որդիէն սերած

կտրիճ մը . Յարէթին տղան Պամէր՝, Պամէրին տղան Թորդոմ, Թորդոմին տղան Հայկ, որ Բէլին հետ սպասեցազմեցաւ :

Հ. Ո՛վ էր Բէլ :

Պ. Աշտարակը շինողներուն մէջէն՝ հսկայ մը, որ մարդոցմէ իբրև Աստուած պաշտուիլ վ՛ուզէր :

Հ. Աշտարակն ինչո՞ւ կը շինէին :

Պ. Նոյայ՝ որդիքը շատնալով մեծ բազմութիւն մ'ալ Սենաար ըստած դաշտն եկան, ու հոն՝ երկրորդ ջրհեղեղէ մ' ազատ ըլլալու համար՝ Աստուծոյ դէմ ամբարտաւանութեամբ աշտարակ մը սկսան կառուցանել :

Հ. Կրցա՞ն 'ի գլուխ հանել աշտարակաշինութիւնը :

Պ. Աստուած՝ փոթորիկով մ' աշտարակը կործանեց և շինողներուն լեղուն խառնակեց . այս խառնակութեան ատեն, Բէլ՝ ուզեց ամենուն վրայ բռնանալ, բայց Հայկ չուզելով անոր հնազանդիլ, առաւ իւր որդիքը, թոռուները և ծառաները, որոնք 300ի չափ էին, ու իւր հայրենի երկիրը դարձաւ :

Հ. Բէլ երբոր Հայկայ այս ըրածը լսեց, ի՞նչ ըրաւ :

Պ. Մարդ զրկեց՝ որ դայ իրեն հնազանդ :

ապա թէ ոչ զինքն իւր որդիներով կը մեռցնենա՞ ըսաւ :

Հ. Հայկ ի՞նչ պատասխան տուաւ :

Պ. Բէլայ զրկած մարդը ետ դարձուց, և Նոյայ ճշմարիտ Աստուծոյն վրայ վստահացած՝ պատեցազմի պատրաստուեցաւ վանայ ծովուն եզերքը :

Հ. Ի՞նչ կերպով պատեցազմեցան Հայկ ու Բէլ :

Պ. Բէլ յանդգնութեամբ իւր անթիւ զօրքերէն մաս մ' առնելով՝ եկաւ Հայկայ վրայ . և երբ յաղթուելով ետ կը դառնար բանակէն օդնութիւն առնելու . Հայկ մէկէն քաշեց իր աղեղը, զարկաւ և սպաննեց այն ամբարտաւան հսկայն :

Հ. Հայկ ի՞նչ ըրաւ Բէլին դիակը :

Պ. Զմուսել տալով՝ տարաւ իւր բնակած երկիրը, և 'ի յիշատակ իւր յաղթութեան և 'ի տես ամենեցուն՝ բարձր բլրի մը վրայ թաղեց :

Հ. Հայկ՝ Բէլն սպաննելէն յետոյ ի՞նչ ըրաւ :

Պ. Շատ քաղաքներ շինեց, անոնց մէջ բարեկարգութիւններ և կանոններ հաստատեց, և 400 տարիի չափ իւր սերունդը խաղաղութեամբ կառավարելէն յետոյ մեռաւ . իշխանութիւնն իւր Արմենակ որդւոյն յանձնելով :

Հ. Այս միջոցիս ի՞նչ դէպք պատահեցաւ :

Պ. Նոյ նահապետ, բէլ ամբարտաւան հըսձ
կային աշխարհիս երեսէն վերնալը տեսնելով դո-
հութեամբ մեռաւ 930 տարուան, և թաղուե-
ցաւ Նպատ լեռան վրայ. նոյնպէս Նոյեմզարա
Նոյայ կիներն ալ, Մարանդ դաւառը:

Հ. Արմենակ ինչպէս կառավարեց:

Պ. Հայրենի երկրին մէջ թողուց իր խոռ և
Մանաւաղ եղբարքը, որոնց ցեղը շատնալով
խորխոռունիկ և Մանաւաղեանք ըսուեցան:
ինքն արեւելեան կողմերն երթալով հոն տեղ-
ուանքը շէնցուց: Իրեն յաջորդեց Արամայիս:

Հ. Արամայիս ի՞նչ ըրաւ:

Պ. Արմաւէր քաղաքը շինեց Երասխ գետին
քով: Ասոր Բաղ եղբօրը ցեղը եաքերը շատ-
նալով իր անուամբը Բղունիք կոչուեցան:

Հ. Արամայիսի ո՞վ յաջորդեց:

Պ. Իր որդին Ամասիա, որ իւր անուամբը Մա-
սիս անուանեց Արարատ լեռը, և իւր եղբայ-
ներէն մին Շարան՝ Հայաստանի բարեբեր մէկ
կողմը դրկեց, և այն տեղ Շարայի անուամբը
Շիրակ կոչուեցաւ:

Հ. Շարայի վրայ ի՞նչ գիտելիք կայ:

Պ. Շարայ խիստ շատակեր ըլլալուն՝ մին-
չեւ մտա ատեններս առակ եղած էր երբոր շա-

տակեր մէկը տեսնէին՝ կըսէին. Թէ քո Շարայի
որկորն է, մեր Շիրակայ ամբարքն չեն:

Հ. Ամասիային ո՞վ յաջորդեց:

Պ. Իր որդին Գեղամ. որ Սևան կղզւոյն քով
բնակելով՝ այն տեղուանքը Գեղարքունիք կամ
Գեղամայ ծով ըսուեցաւ, և որուն եղբարքը
Փառօխ և Յուլակ իրենց անուամբը Փառախոտ
և Յուլակերա քաղաքները հիմնեցին. և Սիսակ՝
Գեղամայ որդին՝ իր քաղցր նայուածքին հա-
մար Աղու կոչուեցաւ, և իւր բնակած տեղին
ալ Սիսական կամ Սիւնիք անունը կուտային:

Հ. Գեղամայ ո՞վ յաջորդեց:

Պ. Հարմայ իր որդին. ասոր օրովը՝ Հայոց մեր-
ձակայ ազգերը զօրանալով սկսած էին Հայաս-
տանի վրայ արշաւել. վասն զի Հայկայ և անոր
որդւոցը քաջութիւնները մոռցուեք էին. ուս-
տի Հայաստան Հայկի նման քաջի մը կը կարօտէր
թշնամիները վաճառելու և հայրենիքն ազատելու
համար. և ահա այն կտրիճը, այն քաջը՝ Արամ
եղաւ:



ԳԼՈՒԽ Բ .

ԱՐԱՄԷՆ ՄԻՆՁԵՒ ՊԱՐՈՅՐ

1300—640

Հ. Ո՛վ էր Արամ :

Պ. Հարմայի որդին , որ խիստ քաջ Ելալուն Հայաստանն աշտոնեց թշնամեաց ձեռքէն :

Հ. Որո՞նք էին Հայաստանի թշնամիները :

Պ. Նիւքար՝ Մարայ իշխանը . Բարշամ՝ Բաբելոնացոց իշխանը՝ և Պայապիս՝ Կապադովիոյ իշխանը :

Հ. Արամ ի՞նչպէս յաղթեց իր թշնամիներուն :

Պ. Նիւքարը Նախ բռնեց և աշտարակի մը ծայրէն դամել տուաւ . Բարշամն ալ սպաննեց . իսկ Պայապիս՝ յաղթուելով փախաւ Միջերկրական ծովուն կղզիներէն մէկը : Արամ անոր երկիրներուն տիրելով՝ փոքր Հայկ անուանեց , և Մշակ անունով իշխան մը կուսակալ դրաւ հոն ու ապստրեց որ Հայերէն խօսին : Մշակայ բնակած տեղը Մաժակ կոչուեցաւ , որ է Փայտերի :

Հ. Արամ ուրիշ ինչե՞ր ըրաւ :

Պ. Իր քաջութեամբն ու խոհեմութեամբը

քնոր ազգաց սիրտը վախ ձգեց և ամենուն պատկառելի եղաւ : Ասորեստանի թագաւորն Նինոս՝ իմանալով պատմութենէն որ Հայկ զինէ՛ իւր նախահայրը՝ սպաննել է , կ'ուզէր վրէժ առնել : Բայց վախնալով Արամայ քաջութիւններէն՝ բարեկամութիւնը ստանալու համար՝ մարդարտալարդ պսակ մը խաւրեց և իրեն երկրորդն անուանեց Արամը :

Հ. Արամ որչա՞փ ատեն իշխեց :

Պ. Յիսուն և ութ տարի իշխելով ընդարձակեց Հայաստանը , և իր համբաւն այնքան տարածուեցաւ որ օտար ազգերն սկսան մեր Ազգը Արմէն կամ Էրմէնի կոչել :

Հ. Արամին ո՞վ յանդրդեց :

Պ. Իւր որդին Արայ , որոյ դեղեցկութեանը համար Ասորեստանի թագուհին՝ Շամիրամ ուզեց հետը կարգուիլ . բայց Արայ յանձն չառնելուն՝ թշնամացաւ Շամիրամ և պատերազմի ելաւ ,

Հ. Պատերազմի վերջն ի՞նչպէս եղաւ :

Պ. Արայ քաջութեամբ պատերազմելով պատերազմին տաքցած միջոցին մեռաւ , և հաւնելով Շամիրամ մեր երկրին դիրքին և օդին մաքրութեանը՝ քաղաք մը շինել տուաւ . ամառը բնակելու համար և անունը Շամիրամակերտ

դրաւ, և որ վերջերը Վան ըսուեցաւ . այս քա-
ղաքը մինչև հիմայ կայ և իր պարիսպները կան-
դուն կեցած են :

Հ. Արայի ո՞վ յաջորդեց :

Պ. Արայի մահուանէն ետքը, Շամիրամայ ձե-
ռօք, Հայաստանի իշխան դրուեցաւ Արայի-
կարդոս որդին, որ Շամիրամայ հետ Նինուա-
սայ դէմ պատերազմած ատեննին՝ երկուքն ալ
մեռան :

Հ. Կարդոսին ո՞վ յաջորդեց :

Պ. Անուշաւան որդին . ասի թէպէտ դերի էր
Նինուասայ քով, բայց իր քաղցրաբարոյու-
թեամբն՝ ազատելով եկաւ աիրեց իր հայրեն-
եացը, և երկար ատեն Աղղը կառավարելէն և
շատ բարեկարգութիւն ընելէն յետոյ, մեռաւ
տունց զաւակ ունենալու : Իրեն յաջորդեց Պա-
րեւ անունով Հայկազուն իշխանը :

Հ. Ով էր Պարեւ :

Պ. Հայկայ միւս որդւոց ցեղերէն իջած ան-
ւանի ու կորովի անձ մը, որ Անուշաւանին տեղը
Նահապետ դրուեցաւ, և շատ քաջութիւններ
ընելով և իշխանութիւնն Սրբակին յանձնելով
մեռաւ :

Հ. Ո՞վ յաջորդեց Սրբակին :

Պ. Չաւան, Չաւանին՝ Փառնակ, և Փառ-
նակին՝ Սուր :

Հ. Սուրայ ատեն է՞նչ երևելի դէպք պատա-
հեցաւ :

Պ. Սուր՝ թշնամեաց դէմ երևելի յաղթու-
թիւններ ընելուն համար այս անունն ստացաւ :
Սուր օրով Քանանացիք Յէսուէն յաղթուելով,
ոմանք Հայաստան եկան, որոնցմէ Գնթունեաց
նախարարութիւնը ձևացաւ :

Հ. Սուրայ ո՞վ յաջորդեց :

Պ. Հաւանակ, Հաւանակին՝ Վաշտակ, և Վաշ-
տակին՝ Հայկակ Ա. որ Ասորոց Ամինէթէս թա-
գաւորին յաղթեց, բայց անոր յաջորդէն յաղ-
թուելով մեռաւ : Իրեն յաջորդեց Ամբակ Ա. :

Հ. Ամբակին որո՞նք յաջորդեցին :

Պ. Ամբակին յաջորդեցին հետզհետէ Առնակ,
Շաւարշ Ա, Նորայր, Վստամ, Կար, Գոռնակ,
Հրանտ, Ընձակ, Գղակ և Հօրոյ, որոց միայ
չիտելիք մը չունինք :

Հ. Հօրոյի ո՞վ յաջորդեց :

Պ. Չարմայր քաջ և հզօր իշ-
ցւոց օգնութեան զնաց, և
շատ քաջութիւններ ընելէն յ-
մեռաւ : Իրեն յաջորդեց Պեղ

Հ. Ի՞նչ դործ կը պատմուի Պերճի վրայ :

Պ. Խիստ քաջ և հզօր անձ մ'էր , բոլոր Հայաստանի տիրեց , շատ զօրք գումարելով նոր զինուորական կարգեր դրաւ , և շատ ազգեր նուաճելէն ետքը մեռաւ : Իրեն յաջորդ թողլով Յրբուն իշխանը :

Հ. Արբունի վրայ դիտելէք մը կայ :

Պ. Պատմութիւնը Արբունի վրայ բան մը չաւանդեր : Ասոր կը յաջորդեն Պերճ Բ , Բազդակ Հոյ , Յուսակ , Ամբակ Բ , Կայսակ , Փառնաւազ Ա , Փառնակ Բ , Սկայորդի :

Հ. Սկայորդիին օրո՞վն ի՞նչ պատահած է :

Պ. Ասորեստանի Սինեքերիմ թագաւորին որդիքը՝ Ադրամելէք և Սանասար իրենց հայրն սպաննելով Հայաստան վախան : ասոնցմէ ձեռահան Արժրունեաց և Պնունեաց նախարարուները :



Գ. Լ. ՈՒ Թ. Գ.

ՊԱՐՈՅՐԷՆ ՄԻՆՁԵԻ ՀՍՅԿԱԶԱՆՅ

Թ Ա Գ Ա Ի Ո Ր Ո Ւ Թ Ե Ա Ն Կ Ո Ր Ծ Ա Ն Ո Ւ Մ Ը

640—330

Հ. Սկայորդիին ո՞վ յաջորդեց :

Պ. Պարոյր իր որդին , որ Մարաց Վարբա , կէս իշխանին հետ միացած՝ Ասորեոյ Սարգանարազ թագաւորին յաղթեցին . Վարբակէս Ասորեստանի իշխեց , և Պարոյրն ալ թագաւոր պսակեց Հայաստանի :

Հ. Պարոյրին որո՞նք յաջորդեցին :

Պ. Պարոյրին յաջորդեցին հետզհետէ Հրաշեայ , Փառնաւազ Բ , Պաճոյճ , Կուռակ , Փառս :

Հ. Փառսին ո՞վ յաջորդեց :

Պ. Հայկակ Բ . որ Նարեղեղոնտար թագաւորին հետ միացած՝ Երուսաղէմն առին , և վերադարձին Հայկակ՝ Ծամբատ անունով Հրեայ իշխան մը Հայաստան բերաւ , յորմէ սերեցաւ Բաղրատունեաց նախարարութիւնը :

Հ. Հայկակին ո՞վ յաջորդեց :

Պ. Իւր որդին Երուանդ Ա . որ շորս տարի

Թագաւորեւն ետքը մեռաւ՝ իրեն յաջորդ ճը-
գելով Տիգրան Ա.ը, որ Հայկազանց ամենէն
երեսելի և ամենէն զօրաւոր Թագաւորն եղաւ :

Հ. Տիգրան ի՞նչ քաջագործութիւններ ըրաւ :

Պ. Տիգրան Հայաստանի առաջին սահման-
ները նորոգեց, և իր թշնամիները ջնջեց երկ-
րիս երեսէն, որոնց գլխաւորն և ամենէն զօ-
րաւորն էր Ա.ժգահակ :

Հ. Ո՞վ էր Ա.ժգահակ :

Պ. Մարագ Թագաւորն և Տիգրանայ բարե-
կամը, ասի շտեյլով որ Տիգրան, Կիւրոս՝ Պար-
սից Թագաւորին հետ բարեկամութիւն կընէ,
հետը թշնամացաւ. և որովհետև դէմ առ դէմ
պատերազմելու կերկնչէր, ուստի մտածեց խար-
դախութեամբ Տիգրանը բռնել և սպաննել :

Հ. Ա.ժգահակ կրցա՞ւ իր խորհուրդն յառաջ
տանիլ :

Պ. Տիգրանայ Տիգրանուհի քոյրն իրեն կին
առաւ, և անոր յայտնեց իւր նպատակը. Տիգ-
րանուհի Ա.ժգահակայ խորհրդին հաւանիլ կեղ-
ծելով՝ գաղտ ամեն բան իր եղբորն իմացուց :

Հ. Տիգրան ի՞նչ խոհեմութիւն բանեցուց այս
գործին մէջ :

Պ. Տիգրան այս լուրն առնելուն պէս թէ-

պէսև անմիջապէս պատերազմի պատրաստուե-
ցաւ, բայց իւր Տիգրանուհի քոյրն ազատելու
համար պատերազմն ուշացուց. որով Տիգրա-
նուհի յարմոր ատեն դանելով՝ փախաւ, և
Կիւրոս ալ Տիգրանին օգնութեան հասաւ :

Հ. Պատերազմն ի՞նչպէս եղաւ :

Պ. Երբ Կիւրոս իւր զօրքովը հասաւ՝ Տիգ-
րան Ա.ժգահակայ դէմն ելաւ, և պատերազ-
մին տաքցած միջոցին՝ Տիգրան Ա.ժգահակին
հանդիպելով՝ զարկաւ սպաննեց, և պատերազմը
լննցաւ :

Հ. Տիգրան Ա.ժգահակայ ընտանիքը ի՞նչ
ըրաւ :

Պ. Ամենքն ալ դերի ընելով՝ առաւ հետը
Հայաստան բերաւ. որոնցմէ սերեցան Վիշա-
պաղունք կամ Մուրացան ըսուած ցեղը, և
Տիգրանուհի քոյրն ալ, Տիգրանակերտի մէջ բը-
նակեցուց, յորմէ սերեցան Աստանիկ ըսուած
աղաս ցեղը :

Հ. Տիգրան որչափ ատեն Թագաւորեց :

Պ. Քառասուն և հինգ տարի, քաջութեամբ
խոհեմութեամբ, արդարութեամբ և խաղաղու-
թեամբ Թագաւորելէն յետոյ՝ մեռաւ. թողլով
Թագաւորութիւնը իր Վահագն որդւոյն :

Հ. Վահագնի վրայ ի՞նչ դիտելիք կայ :

Պ. Խիստ քաջ ըլլալուն համար՝ շատ առասպելներ զբուցեցին վրան, և Վրացիք ալ զինքը երկար ատեն պաշտեցին : Վահագնի ցեղը Վահունիք ըսուեցան :

Հ. Վահագնի ո՞վ յաջորդեց :

Պ. Հեազհետէ յաջորդեցին Առաւան, Ներսէհ, Չարէհ, Արդոմ, Բայգամ և Վան, որ Շամիրամակերտ քաղաքը նորոգելով՝ Վան կոչեց իր անուամբը :

Հ. Վանայ յաջորդն ո՞վ եղաւ :

Պ. Վահէ, ասի Գարեհ՝ Պարսից թագաւորին օգնութեան գնաց, որ Աղէքսանդր Մակեդոնացի թագաւորին դէմ կը պատերազմէր : Վահէ իւր Հայկազուն կարիճ բանակովը շատ քաջութիւններ ընելէն յետոյ՝ պատերազմին մէջ զահնուեցաւ մեռաւ, և Քրիստոսէ 330 տարի առաջ՝ որով վերջացաւ Հայկազանց հարստութիւնը 2020 տարի զիմանալէն ետքը :

ՎԵՐՋ ԱՌԱՋԻՆ ՄԱՍԻՆ

ՄԱՍՆ ԵՐԿՐՈՐԷ

ԳՈՒՍԱԿԱԼԷ՛

ԳԼՈՒԽ Ա.

ՎԱՀԷԻՆ ՄԱՀՈՒԱՆԷՆ ՄԻՆՉԵԻ ԱՐՇԱԿՈՒՆԵԱՅ

ԹԱԳԻՈՐՈՒԹԵԱՆ ՍԿԻՋԵՐ

330—150

Հ. Վահէին մահուանէն վերջը Հայաստանի վիճակն ի՞նչ եղաւ :

Պ. Վահէի մեռնելէն յետոյ Հայաստան Մակեդոնացուոց իշխանութեան տակն ինկաւ, և երբեմն Մակեդոնացի ու երբեմն Հայ իշխաններով կը կառավարուէր :

Հ. Ո՞վ եղաւ առաջին Մակեդոնացի իշխանը :

Պ. Միհրան՝ որ 5 տարի կառավարելով ետ կանչուեցաւ. ասոր յաջորդեց Նեոպոլոմէոս չար և հայատեաց իշխանը, որ Հայոց հետ ալէկ չվարուելուն համար, Ադուարդ՝ Հայկազուն քաջ իշխանը վճռեց զայն և ինքն սկսաւ կառավարել. ասի 33 տարի խաղաղութեամբ իշխելէն յետոյ մեռաւ :

Հ. Ո՛վ յաջորդեց Ս. դուարդին :

Պ. Հեողհեատէ իշխեցին Հրանտ, Արտաւազ,
Զահրատ և Արտաշիաս՝ որն որ իր անուամբը
Արտաշատ քաղաքը շինեց. ասանցմէ վերջը
քանի մը թագաւորներ ալ նստան՝ Բրիստոսէ
150 տարի առաջ որոնց պատմութիւնը շփոթ է,
և վերջացաւ Կուսակալաց իշխանութիւնը 180
տարի գլխմանայէն ետքը :

Երկ

ՎԵՐՋ ԵՐԿՐՐԳ ՄԱՍԻՆ

ՄԱՍՆ ԵՐԿՐՐԳ

ՍՐԵԱԿՈՒՆԻՔ

Գ. ԼՈՒԽ Ս.ՈՍԶԻՆ

Վ.Ա.Գ.Ա.ՐԵԱ.ԿԷՆ ՄԻՆԶԵԻ ՍԲԳ.Ս.Ր

150—3

Հ. Ո՛վ էին Ս. րչակունիք :

Պ. Պարթևաց ազգէն Ս. րչակ անունով կտրիճ
մ՞ իր ազգին վրայ թագաւոր եղաւ. նորա թագը
խիստ քաջ և զօրաւոր ըլլալուն՝ թագաւորու-
թիւնն ընդարձակեց, Հայաստանն ալ նուաճեց
իւր եզրայրը՝ Վաղարշակը՝ թագաւոր դրաւ և
աթոռը Մծբին հաստատեց :

Հ. Վաղարշակայ առաջին գործն ի՞նչ եղաւ :

Պ. Վաղարշակ արդարասէր, խոհեմ և իմաս-
տուն անձ մ՞ ըլլալուն և Հայերը շատ սիրելուն,
նախ ուզեց իմանալ թէ Հայոց սոցնու Հայաս-
տան գանուոզ նախարարներն ո՞րնսն ի՞նչ է,
եկած են, և անոնց պատմութիւնը զտաւ :

Հ. Վաղարշակ Հայոց պատմութիւնը զտաւ :

28083 20

Մ 239



Պ. Մար-Աբաս կատինա անունով Ասորի մը
Նինուէ առաքեց , որ հոն դրատան մէջէն Հայոց
պատմութիւնը գտնելով բերաւ Հայաստան :

Հ. Վաղարշակ ուրիշ ի՞նչ ըրաւ :

Պ. Վաղարշակ , Հայոց գլխաւոր թշնամին՝
Մորբիւղիկէսը բռնելով սպաննեց . և արքուն-
եաց մէջ նորանոր օրէնքներ և բարեկարգու-
թիւններ հաստատելէն յետոյ՝ 22 տարի թա-
գաւորելով մեռաւ :

Հ. Վաղարշակին ո՞վ յաջորդեց :

Պ. Սրշակ Ա. իւր որդին , որ իւր հօրը նման
քաջութեամբ երևելի եղաւ . Պծնտացիները նու-
աճեց , և ՚ինչան յաղթութեան կոթող մը
տնկեց ծովուն եզերքը ու նիզակով զարկա-
ծակեց քարը . Բաղրատունիներուն ալ բաւա-
կան նեղութիւններ տուաւ որ հրէական կրօնքը
թողուն , և 13 տարի թագաւորելով մեռաւ :

Հ. Արշակ Ա. ին ո՞վ յաջորդեց :

Պ. Սրտաշէս Ա. որ Յունաստանի և փոքր
Ասիոյ տիրեց . և Պարսից թագաւորն՝ որ ինչ-
ուան այն ատեն պատուով առաջին էր , իրեն
երկրորդն ըրաւ . և իր անուամբն ստակ կոխեց .
իւր Սրտաշէս աղջիկը Միհրդատին տուաւ ,
որ Վրաց բզեչին էր :

Հ. Սրտաշէսի զօրացը վրայ ի՞նչ կը պատմուի :

Պ. Երբոր ամենքը միաբան նեւ ձղէին արևը
կը խաբանէր , և եթէ մէկ մէկ քար նէտէին՝
բլուր մը կը ձևանար : Սրտաշէս երբ կը պատ-
րաստուէր Եւրոպա անցնել անհամար զօրքով-
ինքն ալ սպաննուեցաւ իւր զօրքերէն՝ 23 տարի
թագաւորելէ ետքը :

Հ. Ով յաջորդեց Սրտաշէսի :

Պ. Արդին Տիգրան , Բ. որ արդէն հօրը կեն-
դանութեան ատեն 2 տարի թագաւորած էր .
սա՛ նախ Յոյները նուաճեց որ ապստամբած
էին , և իւր Միհրդատ քեռայրը իրեն փոխա-
նորդ դրաւ . յետոյ Ասորուց երկրին տիրելով՝
Պաղեստինի վրայ գնաց , բայց Հրէից՝ Աղէք-
սանդը դշխոյն շատ ընծաներ տալով՝ Տիգրանին
սիրտն առաւ և խաղաղութեամբ ետ դարձուց :

Հ. Տիգրանայ վրայ ուրիշ ի՞նչ գիտելիք կայ :

Պ. Ետ մեհեաններ շինել տուաւ և Յու-
նաստանէն բերած կուռքերն անոնց մեջ դնե-
լով՝ քուրմեր հաստատեց , և իւր անդուգական
քաջութեամբը նոյն իսկ Հռովմայեցւոց մէջ մեծ
համբաւ ստացաւ :

Հ. Ի՞նչ սլատճառաւ թշնամացան Հայք Հը-
ռովմայեցւոց հետ :

Պ. Միհրդատ՝ Տիգրանայ քեռայրը՝ Ապագա-
գովիկոյ իշխելով իր Արիարաթ որդին անոնց
վրայ թագաւոր դրաւ . Հռովմայեցիք ալ Ապ-
պագաովիկացւոց օգնութեան զրկեցին . Արլա
քաջ զօրապետը՝ որ եկաւ Արիարաթը վճռեց
և Արիարտուրյան Ապպագովիկացին թագաւոր
դրաւ . Միհրդատ Տիգրանէն օգնութիւն առ-
նելով Հռովմայեցիները վճռեց և նորէն Արի-
արաթը թագաւոր դրաւ :

Հ. Հռովմայեցիք այս լսելով ինչ ըրին :

Պ. Այլ և այլ զօրապետներ խաւրեցին ,
որոնց շատ անգամ յաղթեց Միհրդատ , և
Ակիւղաս զօրապետին բերնէն վար հալած ոսկի
լեցնելով սպաննեց . բայց երբ տեսաւ իւր
Փառնակէս որդւոյն անոնց կողմն անցնելը՝ յու-
ռահատելով՝ ինքզինքն սպաննեց :

Հ. Տիգրան Միհրդատայ մահը լսելով ինչ
ըրաւ :

Պ. Տեսնելով Հռովմայեցւոց յարձակումներն՝
առաջնութիւնը՝ Պարսից Սրչէղ թագաւորին
տուաւ որ իրեն օգնէ . և որովհետեւ ինքը բա-
ւական ծերացած էր՝ Հայ և Պարսիկ բանակն
ընդհանուր սպարապետ կարգեց Բարզափրան
քաջ՝ Հայ նախարարը :

Հ. Բարզափրան ինչ քաջութիւններ ըրաւ :

Պ. Եղոր Ստրուոց երկրին տիրեց , վարպե-
տութեամբ Երուսաղէմն ալ առաւ Հռովմայեց-
ւոց նեռքէն . Տիգրան այս փառաւոր յաղթու-
թիւնները տեսնելով՝ ուրախութեամբ մեռաւ
33 տարի ապրելէն և 34 տարի թագաւորելէն
յետոյ :

Հ. Ով յաջորդեց Տիգրանին :

Պ. Եր Արտաւաղդ որդին , որ ինքզինքը բոլո-
րովին կերուխումի տուաւ , որով Անտոնինոս
Հռովմայեցւոց զօրավարը բոլոր Պտրուոց երկ-
րին տիրեց և Արտաւաղդն ալ խաբէութեամբ
բռնելով Եգիպտոս տարաւ՝ խօստմանք հակա-
ռակ , Պարսից թագաւորին օգնելուն համար
որ հաղիւ 3 տարի թագաւորած էր :

Հ. Արտաւաղդին ով յաջորդեց :

Պ. Հայաստան 1 տարուոյ չափ Հռովմայեցւոց
իշխանութեան տակ մնալէն ետքը , Տիգրանին
եղբօր որդին՝ Արշամ թագաւորեց Հայսց . և
աւելի խաղաղասէր ըլլալուն Հռովմայեցւոց հար-
կատու եղաւ , և 29 տարի թագաւորելէն յետոյ
մեռաւ :

ԳԼՈՒԽ Բ.

ԱՐԳԱՐԷՆ ՄԻՆՉԵՒ ՏՐԴԱՏ Ա.

3—286

Հ. Արշամայ յաջորդն ո՞վ եղաւ :

Պ. Աբգար իր որդին . ասի խաղաղասէր անձ մ'ըլլալուն իր թագաւորութեանը երրորդ տարին՝ Հայաստան բոլորովին Հռովմայեցւոց հարկատու եղաւ , և Օգոստոս կայսեր պատկերը Հայոց մեհեաններուն մէջ կախուիլ սկսաւ . թէպէտ Հերովդէս՝ Հրէից թագաւորն ալ ամբարտաւանութեամբ ուզեց որ իր պատկերն ալ Հայոց մեհեաններուն մէջ կախուի , բայց Աբգար յանձն չառնելով պատերազմի ելաւ և յաղթեց Հերովդէսին :

Հ. Աբգար ինչո՞ւ ապստամբիլ ուզեց Հռովմայեցւոցմէ :

Պ. Վասնզի խնդակցութեան համար դացած Հայ դեպքանները անարդուեր էին . ուստի ակտուր Եդեսիա փոխադրեց և սկսաւ ամրացնել զայն . բայց նոյն օրերը Արտաշիւ Պարսից թագաւորը մեռնելով անոր որդւոցը մէջ ծագած խռովութիւնը խաղաղեցնելու համար

Պարսկաստան դնաց , և վերադարձաւ սաստիկ բորոտութենէ մը բռնուած :

Հ. Աբգար ի՞նչպէս բժշկուեցաւ :

Պ. Բժիշկներուն ճարտարութիւնը ոչինչ օգտեց . և որովհետև Պարսկաստան երթալուն պատճառն իմացնելու համար Պաղեստին դեսպան զրկեր էր , նոքա հոն ֆրիստոսի հրաչադործութիւնները տեսնելով եկան պատմեցին Աբգարու . ասի ալ նամակ գրեց ֆրիստոսի , աղաչելով որ գայ Հայաստան և զինքը բժշկէ , և եթէ ինքն անձամբ չկրնայ գալ , գոնէ իւր պատկերը զրկէ :

Հ. Աբգար ի՞նչպէս նամակ գրեց ֆրիստոսի :

Պ. « Աբգար Արշամին որդին , աշխարհի իշխան , փրկիչ ու բարերար Յիսուսիդ՝ որ երուսաղեմի մէջ երեցար .

Ողջոյն .

« Գու անունդ և քու առանց դեղի բրած բժշկութիւններդ լսեցի . վասն զի , ինչպէս որ կ'ըսեն , դուն կոյրերուն աչքը կը բանաս , կաղերը կը քալեցնես , բորոտները կը սրբես , սատանաները կը հանես և երկայն ատեն հիւանդութիւն ունեցողները կ'առողջացնես , նաև

մեռեալներն ալ կը յարուցանես : Երբոր այժմ
ամեն բան ընցի , միտքս գրի որ դուն՝ կամ
Աստուած ես երկինքէն իջած այս բաները կը-
նես , և կամ Աստուծոյ որդի ես . ուստի քեզի
գրեցի և ազաչեցի որ դաս և իմ հիւանդու-
թիւնս բժշկես : Լսեցի որ Հրեայները քու
վրադ տրտունջ կ'ընեն ու կ'ուզեն զքեզ չարչա-
րել և մեռցնել . եկու իմ քովս , ես պզտիկ ու
գեղեցիկ քաղաք մ'ունիմ , որնոր երկուքնուս
ալ բաւական է » :

Հ. Քրիստոս կատարեց Աբգարու խնդիրքը :

Պ. Յիսուս Քրիստոս իւր պատկերն և նամակ
մ'Անանէ սուրհանդակին տալով կը գովէ Աբ-
գարին հաւատքը և կը խօստանայ իւր աշակերտ-
ներէն մին առաքել , իւր համբարձմանէն յետոյ
ինչպէս որ Թադէոս առաքելն եկաւ , բժշկեց
զԱբգար , քարոզեց Քրիստոնէութիւնը և հաս-
տատեց սուրբ եկեղեցին : Աբգար 38 տարի
Թադաւորելէն ետքը սրբութեամբ մեռաւ Քր-
իստոսի 35 թուականին :

Հ. Քրիստոսի նամակն ի՞նչպէս էր :

Պ. « Երանի անոր՝ որ դեռ չէ տեսած և ինձի
կը հաւատայ . վասն զի ինձի համար դրուած է
Թէ՛ ով որ զիս կը տեսնէ , ինձի չպիտի հաւատայ

և որոնք որ չեն տեսած՝ անոնք պիտի հաւա-
տան ու վերկուին . իսկ այն բանին համար որ գը-
րած ես Թէ քեզի գամ , պէտք է որ ես ինչ
գործքի համար որ հոս առաքել եմ , զայն կա-
տարեմ . և երբ որ կատարեմ , զիս զրկողին քով
պիտի համբառնամ . հաւբառնալէս յետոյ քեզի
աշակերտներէս մէկը կը զրկեմ , որ քու ցաւերդ
բժշկէ , ու քեզի և քու հպատակներուդ կեանք
պարգևէ » :

Հ. Աբգարու ո՞վ յաջորդեց :

Պ. Աբգարու մեռնելէն ետքը Հայոց Թագա-
ւորութիւնն երկուքի բաժնուեցաւ . Անանէ իր
որդին՝ Եղեւսիոյ մէջ Թագաւորեց , և կռապաշ-
տութիւնը նորէն սկսաւ . Սանատրուկ քեռոր-
դին ալ Հայաստանի մէջ Թագաւորեց , բայց
Անանէ 4 տարի Թագաւորելէն յետոյ՝ նորոգել
տուած պալատին մէջ վրան սիւն մ'ինկնալով
մեռաւ , ուստի Եղեւսացիք Սանատրուկն իրենց
Թագաւոր ընդունեցին երգմնեկրով որ Քրիս-
տոնէութիւնն ազատ պաշտուի :

Հ. Սանատրուկ երգմանը վրայ հաստատ կե-
ցա՞ւ :

Պ. Ոչ . հասցա՛ շատ քրիստոնեաներ նահատա-
կեց , որոնց մէջն էին Ադդէ անունով սուրբ

Հայրապետն իւր Սանդուխտ ազլիկը . և Ոգուհի կամ Թագուհի քոյրը : Մծբին քաղաքն ալ նորոգել տալով՝ մէջտեղն իւր արձանը կանգնեց ձեռքը դրամ մը տուած , իմացնել ուզելով որ բոլոր ունեցածը ծախսեր է այն քաղաքը շինելու համար : Սանատրուկ 34 տարի Թագաւորելէն ետքը մեռաւ որսի ատեն դիպուածով նետէ մը զարնուելով :

Հ. Սանատրուկին ո՞վ յաջորդեց :

Պ. Երուանդ , Թէպէտե Արշակունի էր՝ բայց ոչ Թագաւորական ցեղէ . իւր քաջութեամբն ու քաղցրաբարոյութեամբը բոլոր նախարարաց սիրտըն իրեն գրաւելով Թագաւոր եղաւ , և Թագաւորութիւնն ապահովցնելու համար Սանատրուկոյ բոլոր ցեղը թրէ անցուց , միայն Արտաշէս անուամբ պղտի տղայ մը փախաւ Պարսկաստան Սմբատ Բագրատունիին ձեռք :

Հ. Երուանդ իւր դահը կրցա՞ւ ապահովցնել :

Պ. Արտաշիսի Պարսկաստան փախչելը զինքն անհանգիստ կընէր . ուստի փոքր Հայքը Հռովմայեցւոց տուաւ , ու ինքն Երուանդաշատ քաղաքը շինելով աթոռը հոն փոխադրեց . ասոնցմէ զատ երբ իմացաւ որ Սմբատ Պարսից Դարեհ Թագաւորին օգնութեամբն Արտաշէսը Հայաս-

տան կը բերէ Թագաւորեցնելու համար , պատերազմի պատրաստութիւններ ըրաւ :

Հ. Երուանդ ո՞ր պատրաստուեցաւ պատերազմի :

Պ. Ախուրեան գետին քով՝ վարձուոր զօրքերէ բաղմամբիւ բանակ մը պատրաստեց , և երկու կողմն ալ սկսան սաստիկ պատերազմիլ , բայց մարտին տաքցած Ժամանակ նախարարներէն շատերն Արտաշիսի կողմն անցան . անոնց մէջ դիւսաւորն էր Արգամ քաջ նախարարը : Երուանդ ստիպուեցաւ փախչել Երուանդաշատ . հոն հասան Հայոց զօրքերը Երուանդաշատն առին և Երուանդն ալ սպաննեցին 20 տարի Թագաւորելէն ետքը : Արտաշէս փառաւոր շիրիմ մը կանգնել տուաւ Երուանդայ գերեզմանին վրայ՝ մօր կողմանէ Արշակունի ըլլալուն համար :

Հ. Արտաշէս Բ. իր բարերարացը հետ ի՞նչպէս վարուեցաւ :

Պ. Արտաշէս Թագաւորելուն պէս իր ազատիչ Սմբատը Հայոց զօրքերուն ընդհանուր սպարապետ դրաւ , Արգամն ալ իրեն երկրորդն ըրաւ , և Գիսակ իշխանին Ներսէս որդին ալ նախարարաց կարգը դասելով Դիմաքսեան անուանեց անոր ցեղն՝ ի յիշատակ Գիսակայ ՂԱր-

տաչէս ազատելու համար դէմքին կէսը կործարնցնելով մեռնելուն :

Հ. Արտաչէս որոնց հետ պատերազմ ունեցաւ :

Պ. Ալանաց թագաւորին հետ՝ որոյ տղան գերի բռնուեցաւ պատերազմին մէջ . բայց Ալանաց թագաւորին Սաթինիկ անուամբ աղջկանն աղաչանացը զիջանելով՝ Արտաչէս ազատեց անոր եղբայրը , և Սաթինիկն իրեն կին առաւ : Որոյ համար հետեւեալ երգը կ'երգէին :

Հէծաւ արի արքայն 'ի սեան գեղեցիկ
Եւ հանեալ զսակեօղ շիկափոկ պարանն .
Եւ անցեալ որսէս արծուի սրաթև ընդ գէտն ,
Եւ ձգեալ զսակեօղ շիկաբոկ պարանն
Ընկեց 'ի մէջք օրիորդին Ալանաց .
Եւ շատ ցաւեցուց զմէջք փափուկ օրիորդին
Արադ հասուցանելով 'ի բանակն իւր :

Հարսանեաց հանդիսին երգը .

Տեղ ոսկի տեղայր 'ի փեսայութեանն Արտաչիսի
Տեղայր մարդրիտ 'ի հարսնութեանն Սաթինիկան

Հ. Արտաչէս Հռովմայեցւոց հետ ի՞նչպէս վարուեցաւ :

Պ. Արտաչէս Հռովմայեցւոց հարկ աաբն ալ

դադրեցուց և մի քանի անգամ վռնտեց զանոնք Հայաստանէն . բայց վերջը երբ Տրայիանոս կայսեր անթիւ բազմութեամբ գալը լսեց՝ վախնալով շատ ընծաներ առած դիմացն ելաւ և պարտքերը վճարելով հաշտութիւն ըրաւ :

Հ. Արտաչէս ի՞նչ բարեկարգութիւններ ըրաւ Հայաստանի մէջ :

Պ. Թէ ուսմամբ , թէ արուեստիւ և թէ մշակութեամբ Հայաստանը ծաղկեցնելու հոգ տարաւ , գետերուն և լճերուն վրայ նաւագնացութիւններ հաստատեց . այնպէս որ օր ըստ օրէ օտար երկիրներէ անհամար գաղթականութիւններ կուգային Հայաստանի մէջ բնակելու համար . Արտաչէս և՛ տարի իւր ժողովուրդը խաղաղութեամբ կառավարելէն ետքը մեռաւ Մարանդ գաւառը , և իւր մահուանը վրայ այնպէս սգացին Հայերը՝ որ շատերն ինքզինքնին ող ող սպաննեցին Արտաչիսի գերեզմանին վրայ :

Հ. Արտաչէս Բ. ին ո՞վ յաջորդեց :

Պ. Իւր որդին Արտաւազդ Բ. որ զբօսասէջ և անկարգ կեանք մ'ունենալուն օր մ'որսի ելած ատեն խորունկ փոսի մը մէջ ինկնալով՝ կորսուեցաւ 2 տարի թագաւորելէն ետքը :

Հ. Արտաւազդայ վրայ ի՞նչ առասպելներ կը պատմուի :

Պ. Արտաւազդայ վրայ առասպելով կը պատմեն թէ, այրի մը մէջ շղթայով կապուած է և երկու որսի շներ միշտ կը կրծեն այն շղթան, որպէս զի բրդի և Արտաւազդ եղնէ աշխարհս կործանէ. բայց դարբիններուն երկաթ ծեծելու ձայնէն նորէն կը զօրանան շղթաները : Ասկէց զատ հետեւեալ երգը կ'երգէին :

Եթէ՛ դու յորս հեծցես

Յազատն 'ի վեր 'ի Մասիս :

Զքեզ կալցեն քաջը

Տարցեն յազատն 'ի վեր 'ի Մասիս

Անդ կացցես և զըյս մի՛ տեսցես :

Հ. Արտաւազդայ ո՞վ յաջորդեց :

Պ. Իւր եղբայրը Տիրան Ա. որ եղբօրը նման անկարգ կեանք մը վարեց և ՁԱ տարի թագաւորելէն ետքը՝ օր մը Վասմբան ձիւնի բռնուելով մեռաւ, և իրեն յաջորդեց իւր եղբայրը Տիգրան Գ. :

Հ. Տիգրանայ վրայ ի՞նչ գիտելիք կայ :

Պ. Տիգրան քաջ և արիասիրտ ըլլալով միաբանեցաւ Պարսից Պերոզ թագաւորին հետ յազ-

թեց Հռովմայեցոց. Սեւերիանոս զօրապետին և իր բանակին գլուխն անցած փոքր Ասիոյ կողմերն արշաւեց, բայց հոն իշխող թագուհիէ մը խաբուելով գերի բրնձուեցաւ : Նոյն միջոցին Ղուկիոս, Վերոս, Աւրեղիոս կայսեր գահակիցը՝ Հայոց վրայ գալով երբ իմացաւ Տիգրանայ գերութիւնը՝ ազատեց զանի և Հայաստան զրկեց. Տիգրան և՛ տարի թագաւորելէն ետքը մեռաւ :

Հռովմայեցոց Աղէքսանդր քրմապետը հետեւեալ պատգամը տուած էր Սեւերիանոսի :

ԶՊարթևս և զՀայս վող հարցես նիզակաւ

Դարձցես 'ի Հռոմ և 'ի Տիրերեայ ջուրն պաղպաջունս

Պսակ ընկալցի բոցաճաճանչ քո ճակատ :

Բայց երբոր Հռովմայեցիք չարաչար յաղթուեցան, ջնջեց զայն և հետեւեալ պատգամը տուաւ :

Մի՛ հարէր զօրս 'ի Հայաստան քանզի չէ բարոք

Մի՛ քեզ այր կանաչահանդերձ 'ի տխուր նեւտ

Մահ արձակեալ, արասցէ վախճան կենացդ :

Հ. Տիգրան Գ.ին ո՞վ յաջորդեց :

Պ. Իւր որդին՝ Վաղարշ, ասի Վաղարշապատ քաղաքը շինեց : Ասոր ատենները հիւսիսային

ազգերը Հայաստան արչաւեցին : Վաղարշ անոնց դէմ քաջութեամբ պատերազմելով մեռաւ 20 տարի թագաւորելէն ետքը . իրեն յաջորդեց որդին խոսրով Ա . որ խոսրով մեծ կոչուեցաւ :

Հ. Մեծն խոսրովու վրայ ի՞նչ կը պատմուի :

Պ. խոսրով իր հօրը տեղն անցնելուն պէս Հիւսիսային ազգաց վրայ պատերազմի ելաւ , յաղթեց անոնց , զարկաւ փախուց Հռովմայեցիներն ալ , որոնք Հայաստանը բոլորովին նուաճելու համար Հայոց վրայ եկեր էին , Պարսից հետ ալ պատերազմ ունեցաւ , որովհետեւ Արտաշիր անունով իշխան մը Պարսից Արշակունի Արտաւան թագաւորը մեռցընելով ինքը թագաւորեր էր , ասոր համար խոսրով անոր դէմն ելաւ և միշտ յաղթելով մինչև Հնդկաստան փախուց :

Հ. Արտաշիր ի՞նչ հնարք մտածեց խոսրովը յաղթելու :

Պ. Մեծամեծ պարգևներ խօստացաւ խոսրովը մեռցնողին . այս բանը յանձն առաւ Անակ Պահլաւունի նախարարը , և ձեւացնելով որ Արտաշիր բռնութիւններէն փախեր է , եկաւ Հայաստան . համբան դալու ատեն որդի մը

ունեցաւ , որ է մեր սուրբն Գրիգոր Լուսաւորիչ :

Հ. Անակ իր չարութեան խորհուրդը կատարե՞ց :

Պ. Անակ Քիչ ժամանակէն յաջողեցաւ . օր մ'որսի ելած ժամանակին զարկաւ սպաննեց զխոսրով , որ 45 տարի թագաւորած էր և ինքեալ փախչելու ատեն դետն ինկաւ ու խեղդուեցաւ :

Հ. խոսրովու մեռնելէն ետքը Հայոց վիճակն ի՞նչ եղաւ :

Պ. Արտաշիր եկաւ Հայաստան , բոլոր Հայերը նուաճեց . խոսրովու ցեղը ջնջել տուաւ որոնցմէ Տրդատ անունով մանչ մ'ու անոր խուրովիդուխտ քոյրն ազատեցան Արտաւազդ Մանգակունիին և Օտա Ամատունիին ձեռօք որոնք առաջինը Հռովմ և երկրորդը Կեսարիա փախուցին :

Հ. Տրդատ Հռովմայեցոց հետ ի՞նչպէս վարուեցաւ :

Պ. Շատ քաջութիւններ ընելով մեծ համբաւ ստացաւ Հռովմայ մէջ . անգամ մը մէկ ձեռքով երկու վայրենի ցուլերու եղջիւրներէն բռնեց և երկուքն ալ սպաննեց : օր մ'ալ ձիրն .

Թացի մէջ հակառակորդին ճարտարութեամբը կառքէն վար ինկաւ . ասոր վրայ Տրդատ սաստիկ բարկանալով կառքին ետեւէն այնպէս ուժով բռնեց որ ձիերը չկրցան յառաջ երթալ . ուրիշ օր մ'ալ Գոթացւոց Հռչէ Թագաւորին հետ մենամարտելով՝ բռնեց զայն և Հռովմայեցիները մեծ նախատինքէ մ'ազատեց :

Հ. Հռովմայեցիք ի՞նչպէս վարձատրեցին ըզ Տրդատ :

Պ. Դիոկղետիանոս կայսրն ուրախանալով՝ ուղեց զՏրդատ վարձատրել . և երբ իմացաւ որ Հայոց Թագաւորին որդին է , Թագաւորական պատաններ հազցուց , գլուխը Թագ դրաւ և շատ զօրքով զրկեց Հայաստան . այս միջոցին Հայաստանի վրայ իշխողն Արտաշիլի որդին Շապուհն էր . երբ Տրդատ Կեսարիա հասաւ , բոլոր նախարարները դիմացը ելան և զինքը Թագաւոր դրին ընդհանուր Հայաստանի :



ՍԲԳԱՐԻՆ ՄԻՆՉԵՒ ԱՐՇԱԿՈՒՆԵԱՅ

Թ Ա Գ Ս Ի Ո Ր Ո Ւ Թ Ե Ա Ն Կ Ո Ր Ծ Ա Ն Ո Ւ Մ Ը

Հ. Ի՞նչպէս վաճակեց Տրդատ Շապուհը Հայաստանէն :

Պ. Տրդատ՝ Հայ և Հռովմայեցի զօրքերուն գլուխն անցած՝ Շապուհի դէմն ելաւ յաղթեց . և պատերազմեցան մինչև որ բոլորովին վաճակեց Հայաստանէն զՊարսիկս , որոնք ՁՅ տարի բռնաբար իշխած էին . և մտակայ ազգերուն սիրտը վախ ձգեց . Եկեղեաց գաւառէն անցնելու ատեն Երիզաւանին մէջ Անահայ շնորհակալութեան զոհ մատոյց , և խստիւ հրաման հանեց որ ամեն տեղ կուց յարգանք մատուցանեն :

Հ. Եկեղեաց գաւառին մէջ ի՞նչ պատահեցաւ :

Պ. Տրդատ իմանալով որ նոյն գաւառին մէջ քրիստոնեաներ կան և իր հրամանին հակառակ

Քրիստոնէութիւնը կը պաշտեն, խստիւ հրաման հանեց որ ամեն միջոց 'ի դործ դրուի Քրիստոնէութիւնը ջնջելու. ուստի շատերը նահատակեցան, ասոնց մէջն էր նաև սուրբն Գրիգոր՝ որ Անակայ որդին ըլլալն իմանալով՝ շատ մը շարձարեւելն ետքը՝ Արտաշատ քաղքին խոր վիրապին մէջ նետել տուաւ:

Հ. Տրդատայ ի՞նչ դէպք պատահեցաւ:

Պ. Նոյն օրերը Հռովմի մէջ ալ Քրիստոնէութեան դէմ սաստիկ հալածանք ելնելուն՝ Հրեոսիսիմեանց կուսանք փախեր Հայաստան եկեր էին. Տրդատ Հռիփսիմէին դեղեցկութեանը հաւնելով՝ ուղեց իրեն կին առնուլ. սուրբ կոյսը մերժեց. ուստի Տրդատ ալ բարկանալով թրէ անցնել տուաւ դամէնքն ալ, բայց ինքն ալ Աստուծոյ պատժուելով՝ օր մ'որսի ասեն խոզի կերպարանք մտաւ իր մէկ քանի իշխաններով:

Հ. Ո՞վ բժշկեց զՏրդատ:

Պ. Սուրբն Գրիգոր՝ որ 14 տարի վիրապին մէջ աստուածային զօրութեամբ ողջ մնացած էր, Տրդատայ խորովիդուխտ քրոջը երազին մէջ Աստուծոյ հրեշտակն իմացուց, թէ մինչև որ Անակայ որդին՝ Գրիգորը վիրապէն չեղնէ՝ անկարելի է Տրդատայ բժշկութիւնը. այն ալ

Օտա նախարարը զրկեց որ դնաց Գրեգորը վիրապէն դուրս հանեց:

Հ. Սուրբ Գրիգոր ի՞նչ ըրաւ:

Պ. Սուրբն Գրիգոր բժշկեց զՏրդատ և միւս հարուածեալները, Հռիփսիմեանց ոսկերացը վրկայարաններ շինեց, հաւատացեալները մկրտեց և ինքն ալ կեսարիա դնաց ու հոն Արքեպիսկոպոս կոպոս ձեռնադրուեցաւ Ղևոնդ Արքեպիսկոպոսէն Քրիստոսի 302 թուականին:

Հ. Քրիստոնէութիւնն ի՞նչպէս տարածուեցաւ ի Հայաստան:

Պ. Տրդատ Քրիստոնեայ ըլլալէն վերջը՝ սրբոյն Գրիգորի հետ միացած՝ կուստունները կործանեց, քուրմերն և անոնց պաշտամունքը ջրնջեց, եկեղեցիներ շինեց, որոնց մէջ ամենէն նշանաւորն ու փառաւորն եղաւ Ս. Էջմիածին:

Հ. Սուրբ Գրիգոր ի՞նչպէս լուսաւորիչ ըսուեցաւ:

Պ. Ասկէ ետքը սուրբն Գրիգոր Հայաստանի ամեն կողմերը կը պտըտէր, Քրիստոնէութիւնը կը քարոզէր և հաւատացեալները կը մկրտէր և այսպէս անդուլ քարոզութեամբը լուսաւորեց բոլոր Հայաստանը, որոյ համար Լուսաւորիչ ըսուեցաւ:

Հ. Տրդատ Գրիստոնեայ ըլլալէն յետոյ որո՞ւ հետ պատերազմ ունեցաւ :

Պ. Տրդատ՝ ներքին բարեկարգութեան զբաշած միջոցին՝ Հիւսիսային ազգերը Շապուհի հետ միացած սկսան Հայաստան արշաւել , որոնց դէմն ելնելով ամենքն ալ հալածեց : Այս միջոցին Մամիզուն Չինացի իշխանը Հայաստան եկաւ , յորմէ սերեցաւ Մամիկոնեան նախարարութիւնը :

Հ. Այս միջոցիս ուրիշ ի՞նչ երեւելի դիպուած պատահեցաւ :

Պ. Այս միջոցիս Նիկիոյ սուրբ ժողովքն եղաւ՝ ուր ներկայ էր Հայոց կողմէն սուրբն Արիստակէս՝ սուրբ Լուսաւորչի պղտի որդին , որնոր Հանգանակը Հայաստան բերաւ : Ս. Լուսաւորիչ հոգևորական կառավարութիւնը յանձնելով որդւոյն՝ ինքը Մանեայ այրը քաշուեցաւ , ուր ճգնութեամբ և աղօթքով անցուց մինչև իւր վախճանը :

Հ. Ո՞րչափ ատեն թագաւորեց Տրդատ :

Պ. Տեսնելով նախարարաց անկարգութիւնները՝ թողուց թագաւորութիւնն ու Լուսաւորչայ ճգնարանը քաշուեցաւ . նախարարները շատ աղաչեցին որ դայ թագաւորութիւնը ձեռք

առնէ . բայց երբ Տրդատ յանձն չառաւ՝ թունաւորեցին զինքը , և ասանկով այն Գրիստոնեայ և քաջ թագաւորին կեանքը կարճեցին 85 տարեկան հասակին մէջ . 54 տարի թագաւորելէն ետքը : Տրդատայ վրայ հետեւեալ առածը կըսէին :

Իբրև զսէգն Տրդատ՝ որ սիգալովն Աւերեաց զթուխս գետոց , և ցամաքեցոյց Իսկ 'ի սիգալ իւրում յորձանս ծովուց :

Հ. Տրդատայ մեռնելէն յետոյ ի՞նչ եղաւ Հայաստանի վիճակը

Պ. Տակնուվրայ եղաւ Հայաստան . Բիւնունեանց , Մանաւազեանց և Որթունեանց ցեղերն՝ իրարու հետ պատերազմելով ջնջուեցան . Աղուանք ապստամբեցան և Սանատրուկ անունով մէկը թագաւոր դրին իրենց վրայ , նոյնպէս Բակուր՝ Աղձնեաց իշխանն՝ ապստամբեցաւ :

Հ. Հայոց խելացի նախարարներն այս դէշութիւններուն ճար մը չգտա՞ն :

Պ. Հայոց խելացի նախարարներն ասոնց առաջքն առնելու համար սուրբ վրթանէս կաթուղիկոսին հետ միացած՝ Տրդատայ որդին Խոսրով Բ . ը թագաւոր դրին . Հռովմայ կոստանդ կայսրն ալ թագ ու ծիրանի խաւրեց Խոսրովին :

Հ. Խոսքով Բ. ին վրայ ի՞նչ դիտելիք կայ :

Պ. Իր հօրը քաջութիւններէն բոլորովին զուրկ մեղկ և զբոսասէր կեանք մ'անցուց . ասոր օրով Շապուհ և Հիւսիսային ազգերը մեծ պատրաստութեամբ Հայաստան արշաւելով՝ մինչև վաղարշապատ հասեր էին . ասոնց դէմն ելաւ վահան Ամասունի քաջ զօրավարը , և Հայերը հոն այնպիսի կատաղութեամբ պատերազմեցան , որ թշեամեաց նետ ձգելու ատեն թող չը տալով սաստիկապէս հալածեցին դամենքն ալ . Խոսքով 10 տարի թագաւորեւէն յետոյ մեռաւ :

Հ. Խոսքով Բ. ին ո՞վ յաջորդեց :

Պ. Իւր որդին Տիրան Բ. որ սուրբ վրթաւ նետին հետ կոստանդնուպօլիս երթալով թագաւոր պսակուեցաւ կոստանդ. կայսրէն : Շապուհ Տիրանին կոստանդնուպօլիս երթալն իմանալով անհամար զօրքով Հայաստան զըրկեց իր ներսէն եզբայրը , բայց Արշալիր կամարա կան՝ որուն յանձնուած էր Հայաստանը , միացնելով նախարարները՝ յաղթեց թշնամուսն և վաճառեց զՆերսէն :

Հ. Տիրան ի՞նչպէս կառավարեց երբոր Հայաստան վերադարձաւ :

Պ. Բոլորովին անկարգութեամբ . Շապուհին

հետ ալ հայտութիւն խօսելով սկսաւ տուրք տալ անոր՝ ինչպէս Յունաց կուտար . բայց քեչ մը վերջը թշնամացան . Յուլիանոս՝ Յունաց կայսեր օգնելուն համար : Տիրանի անգթութեան ամենէն մեծն եղաւ Յուսիկ սուրբ հայրապետը ծեծելով սպաննել տալը , Յուլիանոս ուրացող կայսեր պատկերը եկեղեցւոյ մէջ կախել չտալուն համար , բայց ինքն ալ պատիժը շուտով առաւ :

Հ. Ի՞նչ պատիժ ընդունեցաւ Տիրան :

Պ. Յուլիանոս Պարսից դէմ ըրած պատերազմին մէջ զարնուելով մեռաւ . և Շապուհ Տիրանէն վրէժը լուծելու համար բարեկամութիւն կեղծելով՝ իրեն կանչեց զինքը և աչքերը կուրցընել տուաւ . այսպէս Տիրան թշուառութեամբ 11 տարի թագաւորեւէն յետոյ՝ իր Արշակ որդիէն սպաննուեցաւ .

Հ. Տիրան Բ. ին ո՞վ յաջորդեց :

Պ. Իր որդին Արշակ՝ որ Արշակունի թագաւորաց մէջ ամենէն մոլի , անկարգ և վատաբարոյն եղաւ և Յունաց ու Պարսից ալ խաղալիք . վասն զի Յոյնք և Պարսիկք իրենց մէջ ունեցած ատելութենէն , Յոյնք ստիպեցին զինքը՝ որ Պարսից չձառայէ , Արշակ մտիկ չըրաւ . վասն զի Տիր-

բոնի ֆահանայից ներկայութեանը երդուած էր Ս. Աւետարանի վրայ Պարսից հաւատարիմ մնալու, ուստի թէոթոս Յոյն զօրապետն ահագին բազմութեամբ սկսաւ Հայաստան գալ. ան ատեն Մեծն Ներսէս՝ Սուրբ Գրիգոր Լուսաւորչի թողան թողը՝ կոստանդնուպօլիս գնաց և վաղենտիանոս կայսեր բարկութիւնն իջեցուց :

Շապուհ ալ Տիգրան քաղքին քահանաներն ու սարկաւագները 70 հոգի սպաննել տուաւ, և սկսաւ ֆրիստոնէից դէմ սոսկալի հայածանք հանել, որով բիւրաւոր հոգի մեռան՝ որոնց թիւը 200,000 կ'եղնէ :

Հ. Արշակ ուրիշ ի՞նչ անիրաւութիւններ ըրաւ :

Պ. Իր Տրդատ եղբօրը Գնել որդւոյն հարբստութեանն և ամուսնոյն վրայ նախանձելով՝ սպաննել տուաւ զանի, և անոր փառանձեմ կիներ ալ իրեն կին առաւ. փառանձեմ ալ Արշակայ Ողիմպիադայ կիներ թունաւորեց Մըջիւնիկ անուամբ անարժան քահանայի մը ձեռօք : Ասկից զատ Արշակ Արշակաւան անունով քաղաք մ'ալ շինել տուաւ առանց նախարարաց, խորհրդին անապու :

Հ. Արշակ ի՞նչպէս շենցուց Արշակաւանը :

Պ. Հրաման հանեց որ հոն դիմող յանցաւոր-

ներն ազատ են դատաստանէ. այս լսելով չարագործ մարդիկ անմիջապէս հոն դիմեցին, թէպէտ և նախարարք այս անկարգութեան դէմ բողոքեցին. վասն զի շատերուն ծառաներն իրենց տիրոջ ինչքերը յափշտակելով կամ գողնալով Արշակաւան փախած էին, բայց Արշակ մտիկ չըրաւ. սւստի նախարարներն օգնութեան կանչեցին զՇապուհ, Արշակաւանը կործանեցին. Արշակ ալ նեղը մնալով՝ վրաց ապաւինեցաւ օգնութիւն գտնելու համար :

Հ. Արշակ վրացոցմէ օգնութիւն գտա՞ւ :

Պ. Շատ զօրք առնելով եկաւ Հայաստան և սկսաւ պատերազմիլ նախարարաց դէմ. նոյն միջոցին Յունաց վաղէս կայսրն ալ Արշակայ դէմ զօրք զրկեց, լսելով որ Արշակ Պարսից օգնել էր Յունաց դէմ գալու ատեն. սոսկալի եղաւ արիւնհեղուցութիւնը. Արշակ նեղը մնալով սուրբ Ներսիսի դիմեց՝ որ մեծ դժուարութեամբ նախարարները հաշտեցուց, և Յոյներն ալ Արշակայ Պապ որդին պատանդ առնելով՝ դարձան կոստանդնուպօլիս սուրբ Ներսիսին հետ :

Հ. Սուրբ Ներսիսին ի՞նչ պատահեցաւ կոստանդնուպօլսոյ մէջ :

Պ. վաղէս կայսրն առանց սրբոյն Ներսիսի

երեսը տեսնելու աքսորել հրամայեց, և սուրբ Ներսէս նաւով երթալու ատեն նաւն անմարդաբնակ կղզիի մը քով դամաքը զարնուելով ջախջախեցաւ. սուրբ Ներսէս ութն ամիս հոն մնաց, ու Աստուծոյ խնամքովը ծովուն ալիքներուն ամեն օր դուրս նետած ձկներովը կը կերակրուէր:

Հ. Արշակ ի՞նչպէս վարուեցաւ նախարարներուն հետ:

Պ. Սուրբ Ներսիսի Հայաստանէն հեռացած ատեն, Արշակ իր սիրը նախարարներէն սկսաւ հանել, որոնցմէ շատերն սպաննել տուաւ, Ներսէս կամարականին ցեղն ալ բոլորովին ջնջեց. այս միջոցին Շապուհ՝ Ալանոզան Պարթև և իշխանը շատ զօրքով Հայաստան զրկեց. նախարարներէն շատերն Արշակին բարկացած ըլլալուն՝ ամենը մէյմէկ կողմ քաշուեցան. Արշակ ալ մինակ մը նալուն՝ ճարը հատած ելաւ Շապուհին դնաց, որ քիչ մ'ատեն պատուով պահելէն յետոյ շրջով կապած Անյուշ բերդը զրկեց:

Հ. Արշակ ինչո՞ւ ինքզինքն սպաննեց:

Պ. Շապուհ՝ Մերուժան Արծրունի և վահան Մամիկոնեան ուրացեալ նախարարներն իր կողմը շահելով, բազմաթիւ զօրք տուաւ ձեռուրնին

և Հայաստան զրկեց որ երթան Հայերը կրակապաշտ ընեն, անոնք ալ ամեն շարիք հասուցին թշուառ Հայաստանին՝ Արշակ աս ամենը լսելով յուսահատաբար ինքզինքն Անյուշ բերդին մէջ սպաննեց 18 տարի թշուառութեամբ թագաւորելէն յետոյ:

Հ. Արշակայ ո՞վ յաջորդեց:

Պ. Արշակայ մեռնելէն յետոյ Հայաստան բոլորովին տակն ու վրայ եղաւ. և մեծն Ներսէս՝ որ կոստանդնուպօլիս կը գտնուէր՝ աղաչեց թէ՛ սոգոս կայսեր՝ որ Արշակայ որդին Պապը Հայոց թագաւոր դնէ, ուստի թէ՛ սոգոս Տերենտիանոսի հրամայեց որ շատ զօրքով Հայաստան երթայ՝ Պապը թագաւորեցընէ. և երբ Չիրաւ ըսուած դաշտը հասան՝ Պարսիկներէն մեծ ընդդիմութիւն տեսան՝ և քիչ մնաց որ պիտի յաղթուէին բայց Ս. Ներսէս նպատ լեռանը վրայ բազկատաւրած ազօթելով՝ յաջողակ քամի մ'ելաւ որ Պարսից նետերը ետ կը դարձնէր և ամոյ մ'ալ արևը խաբանեց. ասանկով Հայերը դիւրութեամբ վճռուեցին Պարսիկները, և Սմբատ Բագրատունին՝ Մերուժան ուրացեալ նախարարը բռնելով հրաչէկ շամբուր մը գլուխը դրաւ և սպաննեց զայն:

Հ. Պատերազմին վերջն ինչ եղաւ :

Պ. Պապ թագաւորն և նախարարները միասնալով երգում ըրին սուրբ Ներսիսի առջև, որ անկից վերջը հաւատարմութեամբ ծառայեն Աստուծոյ, բայց քիչ մը վերջը Պապ դրժեց իւր երգմանը և սրբոյն Ներսիսի գաղտնի թոյն տալով՝ մեռցնել տուաւ, վերջն ալ ապստամբեցաւ թէոզոս կայսրէն և Տերենտիանոս զօրավարը վրաւնտելով՝ Շապուհէն օգնութիւն առած՝ Յունաց դէմ պատերազմի ելաւ և յաղթուելով բռնուեցաւ: Թէոզոս կայսրն ալ գլխատել տուաւ 9 տարի թագաւորելէն ետքը:

Հ. Պապ թագաւորին ո՞վ յաջորդեց :

Պ. Վարազդատ՝ Արշակունի կտրիճ երիտասարդը՝ որ իւր քաջութիւններովը խիստ երևելի եղած էր Յունաց քով: Կը պատմեն թէ օր մը 5 լուսարտացիի դէմ ելնելով 5ն ալ ետևէ ետև սպաննեց. օր մ'ալ բերդի մը վրայ յարձակելով՝ 47 հօգի մէկ մէկու ետևէ զարկաւ սպաննեց առանց վնասուելու և երբ Հայաստան կուգար՝ գողերու հանդիպելով ցատկեց Եփրատ գետին վրայէն, որուն լայնութիւնը 22 կանգուն էր, և գողերը բռնեց:

Հ. Վարազդատ ո՞րչափ թագաւորեց :

Պ. Հաղիւ երկու տարի. վասն զի Յոյն զօրասպետաց ամբարտաւանութեանը չկրնալով հանդուրժել՝ ուզեց ապստամբիլ և հարկատու ըլլալ Պարսից. բայց այս խորհուրդը թէոզոս կայսրն իմացած ըլլալով՝ Պոյիս կանչեց զինքը՝ վարազդատ յուսալով սր եթէ անձամբ երթայ կրնայ ինքզինքն արդարացնել, ելաւ գնաց բայց կայսրն առանց երեսը տեսնել ուզելու՝ թուլիս կղզին արտորել տուաւ զինքը:

Հ. Վարազդատին որո՞նք յաջորդեցին :

Պ. Թէոզոս՝ Պապին երկու որդիքն՝ Արշակը Գուինի մէջ. և Վաղարշակը՝ Երիզայի մէջ թագաւոր դրաւ, որպէս զի եթէ մին ապստամբի՝ միւսը հաւատարիմ մնայ. բայց Վաղարշակ և ոչ տարի մը թագաւորելով մեռաւ. այս միջոցին՝ թէոզոս Յունաց կայսրը մեռնելով՝ Յոյնք և Պարսիկք որոշեցին որ Հայաստանի արևելեան մասը Պարսից իշխանութեան տակ՝ և արևմտեան մասը Յունաց իշխանութեան տակ մնան. այս պատճառաւ Արշակ Գ. չուզելով Պարսկաց ծառայել՝ Յունաց մասն անցաւ և ակթուրը Երիզա փոխադրեց:

Հ. Պարսիկք իրենց մասին թագաւոր գրին :

Պ. Արշակունեաց ցեղէն Խոսրով անունով մէկն

իրենց մասին թագաւոր դրին . և որովհետեւ նախարարներէն շատերը Յունաց մասն անցած էին՝ խոսրով նամակ գրեց անոնց որ դառնան դան, խոստանալով նաև իւրաքանչիւրին կալուածներն իրենց դարձնել . ուստի սկսան նախարարներն անոր երթալ , և կողոպտելով նաև Արշակայ դանձերն ալ հետերնին տարին . Արշակ դեռ պան զրկեց որ դանձերն ետ դարձնէ . բայց խոսրով յանձն չառնելով՝ պատերազմ բացուեցաւ մէջերնին . Արշակ յաղթուեցաւ և երկզա դառնալով մեռաւ տարի 5 թագաւորելէն յետոյ , և խոսրով Գ. Յունաց կայսեր հարկ տալ խոստանալով թագաւոր եղաւ բոլոր Հայաստանի :

Հ. խոսրով Գ. խաղաղութեամբ իշխեց :

Պ. Նախարարներէն ոմանք հետը թշնամութիւն ունենալով՝ գացին ամբաստանեցին Շապուհի՝ թէ խոսրով կուղէ ապստամբիլ , Շապուհ ալ իր որդին՝ Արտաշէրը շատ զօրքով Հայաստան զրկեց , և խոսրով առանձին ու անօգնական մը նալով՝ գնաց Արտաշէրի քով , որ անմիջապէս շղթայի զարնելով Անյուշ բերդը զրկեց 5 տարի թագաւորելէն ետքը , և վաւաճապուհ խոսրովի եղբայրը Հայոց վրայ թագաւորեցնելով՝ Հայաստան զրկեց :

Հ. վաւաճապուհ ինչպէս կառավարեց զՀայաստան :

Պ. Ուսումնասէր , հանդարտաբարոյ և խոհեմ անձ մ'ըլլալուն՝ ամենեկին ապստամբութիւն չը խորհելով սիրելի եղաւ Պարսից վաւաճապուհի թագաւորին : Այս կաղաղ միջոցին Հայաստանի մէջ սուրբն Սահակ Պարթև Հայրապետն և սուրբն Մեսրոպ՝ վաւաճապուհի ուսումնասիրական և ուսուցիչ տեսնելով ետևէ եղան Հայերէն գրեր գտնել՝ դպրոցներ բանալ՝ և ազգին ուսումնականն որ կենդանութիւն տալու , որոնց հետ միաբանեցան Մովսէս Խորենացի , Էգնիկ , Կորիւն , Եղիշէ , Ալան արծրունի , Ղազար և Մամբրէ . ասոնք գիշեր ցորեկ անդուլ աշխատութիւնով , դպրոցներ բանալով և թարգմանութիւններ ընելով՝ Ազգին վերակենդանութեանը պատճառ եղան . ահա այս ժամանակն է որ Հայ գրագիտութեան ոսկեդարը կ'ըսուի Գրիստոսի 404 թուականին : վաւաճապուհ 21 տարի թագաւորելէն յետոյ մեռաւ :

Հ. վաւաճապուհին ո՞վ յաջորդեց :

Պ. իր որդին Արտաշէս դեռ պզտիկ ըլլալուն՝ խոսրով Գ. իր եղբայրը՝ որ բանտէն ելած էր , երկրորդ անգամ թագաւոր եղաւ : Բայց հազիւ

տարի մ'իշխելով մեռաւ , և Յազկերտ՝ Պարսից թագաւորն՝ իր Շապուհ որդին Հայոց թագաւոր դրաւ , որ շուտով կրակապաշտ ընէ Հայերը :

Հ. Հայերը Շապուհին հետ ի՞նչպէս վարուեցան :

Պ. Հայք իմանալով Յազկերտի միտքը՝ սկսան արհամարհանօք վարուիլ Շապուհին հետ , այնպէս որ երբ օր մ'որսի ատեն Ատովմ Մոկացի քաջ իշխանին հետ վայրենի էշեր որսալու համար ժայռերէն վեր կ'արշաւէին՝ Շապուհ զՄոկացի Հայերը սատանորդի կոչեց . այս նախատինքը ծանր եկաւ իշխանին . ուստի օր մ'ալ վայրենի կինճ որսալու ատեն՝ Հայերը եղեգնուտին կրակ տուին , Շապուհ դանդաղելով չկրցաւ եղեգնուտէն դուրս ելնել , և սկսաւ աղաչել , Ատովմ զայն ազատելէն յետոյ՝ ծաղրելով Շապուհին ըսաւ , եթէ դու Մոկացիները սատանորդի կը կոչես՝ ես ալ Պարսիկները կնամարդի և վատ կը կոչեմ , վերջապէս այնչափ բարկացուցին զՇապուհ՝ որ յարմար առիթ մը կը փնտուէր Պարսկաստան փախելու :

Հ. Շապուհ կրցա՞ւ այդ առիթը ձեռք ձգել :

Պ. Շապուհ իմանալով իր Յազկերտ հօրը հիւանդութիւնը՝ ճամբայ ելաւ Պարսկաստան եր-

թալու և դաղտնի հրամայեց իր զօրապետին՝ որ Հայ նախարարները բռնէ ու Պարսկաստան զրկէ բայց հազիւ ինքը Պարսկաստան հասած էր՝ իր մարդիկներէն սպաննուեցաւ . Յ տարի Հայաստանի թագաւորելէն յետոյ նախարարներն իմանալով այս բանս՝ Շապուհին թողուցած զօրացը վրայ յարձակելով լաւ ջարդ մը տուին , բայց Պարսից Վաւամ թագաւորէն վախնալով ամենն ալ իրենց բերդը քաշուեցան . յետոյ Վաւամ իր սովորական հարկը ժողվելու համար Վաւամ-Շապուհի որդին Արտաշէսը Հայոց վրայ թագաւոր դրաւ որ 18 տարեկան էր :

Հ. Արտաշէս ի՞նչպէս կառավարեց ազգը :

Պ. Անկարգ , մոլի և վատաբարոյ ըլլալով ամենուն ատելի եղաւ . Հայոց նախարարներն Արտաշէսէն ձանձրացած՝ կուզէին թագաւորութիւնը Պարսից ձգել , թէև սուրբն Սահակ Հայրապետը շատ թախանձեց , շատ աղաչեց և շատ արտասուեց որ նախարարներն այս չար խորհրդէն հեռացնէ , բայց անոնք յամառեալ աւելի լաւ համարեցան Պարսիկ իշխանով կառավարուիլ քան Հայ թագաւորով մը , և Վաւամէն խնդրեցին որ Պարսիկ իշխան մը դնէ իրենց վրայ , Վաւամ ալ կանչելով զԱրտաշէս՝ աքսորել տուաւ 6 տարի

Թագաւորելէն ետքը և զսուրբն Սահակն ալ՝ որ
կը պաշտպանէր Արտաշէսը՝ բանալ դնել տուաւ .
այսպէս վերջացաւ Արշակունեաց Թագաւորու-
թիւնը ֆրիստոսի 433 թուականին 583 ամալի
դիմանալէն ետքը :

ՎԵՐջ ԵՐՐՈՐԴ ՄԱՍԻՆ



ՄԱՍԻՆ ԶՈՐՐՈՐԳ

ՄԱՐԶՊԱՆԻՔ

ԳԼՈՒԽ Ա .

ՎԵՂՄԻՆՉԻՇԱՊՈՒՅ Ա . ՄԱՐԶՊԱՆԵՆ ՄԻՆՉԵՒԷ
ԴԵՒԻԹ ՍՈՆԱՌՈՒՆԻԻՆ ԿԻՐԱՊԱՆԱՏ ԸԼԼԱԸԷ

433—625

Ճ. Արշակունեաց Թագաւորութեան վերջանա-
լէն ետքը ի՞նչպէս կը կառավարուէր Հայաստան :

Պ. Պարսից Թագաւորին կողմէն իշխան մը կու-
գար և հօն նստելով հարկը կը ժողուէր և մի-
անդամայն կը հսկէր Հայոց աշխարհին . այս իշ-
խանը Մարզպան կ'ըսուէր , և առաջին Մարզ-
պանն եղաւ Վեհմիհրչապուհ՝ որ բնութեամբ
խաղաղասէր և ազնիւ մարդ մ'ըլլալուն՝ Ահ տա-
րի կառավարելէն յետոյ մեռաւ : Ասոր յաջորդեց
Վասակ Սիւնի Հայ Մարզպանը , որ Հայ ըլլալով
փոխանակ ազգը մեխթարեւո՝ չարիք չմնաց հա-
սուց ազգին :

Հ. Ինչո՞ւ Յաղկերտ Հայ Մարզպան դրաւ :

Պ. Պարսիկները Հայոց թագաւորութիւնը ձեռք անցունելէ յետոյ՝ ուղեցին անոնց կրօնքն ալ քնջել . ասոր համար Յազկերտ Պարսից թագաւորը՝ ազգին երևելի նախարարները կը պատուէր , ինչպէս վասակ Սիւնի իշխանին Մարզպանութեան և վարդան Մամիկոնեանին ալ ընդհանուր սպարապետութեան պատիւը տուաւ . և որովհետեւ վասակ Մարզպանը շահած էր՝ կը մընար վարդանը Հայաստանէն հեռացնել . ուստի հրամայեց որ Հայերն իրեն զօրք տան՝ որպէս զի ազգին երևելիներն ու պատերազմական զօրութիւնը հեռացէէ որ չկարենան իրեն դէմ դնել . և Հայերը Հոնաց դէմ եօթը տարի պատերազմաւ յոգնեցնելէն յետոյ սկսաւ կրակապաշտութեան ստիպմունքն ընել , նախարարներուն մէջէն յայտնի դէմդրաւ Գարեգին քաջ նախարարը :

Հ. Հայ նախարարներէն ոմանք Պարսկաստան գտնուած ատեննին Հայաստան ի՞նչ վիճակի մէջ էր :

Պ. Շատ հնարքներ մտածեց Յազկերտ՝ բայց նախարարները չկրցաւ շահիլ . Ստովմ Գնունի և Մանածիհր Ռչաշենի իրենց զօրքերովն երբ կը փախէին՝ իմանալով Յզակերտ , զօրք զրկեց ե-

տեւնուն և զամենքն ալ թրէ անցնել տուաւ . յետոյ Գենշապուհ անունով քննիչ մ'առաքեց որ Հայերը շատ նեղեց . թուղթ մ'ալ գրելով՝ հրամայեց որ կամ անոր պատասխանը տան և կամ Պարսից կրօնքն ընդունին . Յովսէփ կաթողիկոս՝ ազգին միաբան հաւանութեամբը թղթին պատասխանը գրեց :

Հ. Հայոց դրած պատասխանին վրայ ի՞նչ բրաւ Յազկերտ :

Պ. Սաստիկ բարկանալով հրամայեց որ ազգին բոլոր մեծամեծները Պարսկաստան դան . ուստի նախարարներն ալ ճարերնին հատած Պարսկաստան դացին . Յազկերտ զամենքն ալ բանտ դնել տուաւ և ստիպեց որ հաւաւքնին ուրանան և իրեն հետ երկրպագութիւն ընեն Սրեգական . բայց նախարարները տեսնելով որ եթէ իրենք Յազկերտին կամքը չկատարեն՝ պիտի չահատակուին և Հայաստան ալ ոտնակոխ պիտի ըլլայ , ուստի առ երեսս հաճութիւն տուին Յազկերտի կամացը , որով մեծամեծ պարզեւնեքով , մեղերով և զօրքով վերագարձան ՚ի Հայաստան՝ Հայերն ամբողջ կրակապաշտ ընելու համար :

Հ. Մոգերն ի՞նչ ընդունելութիւն դտան Հայերէն :

Պ. Սուրբ Գեւորդեալ և ուրիշ աստուածընտիր քահանաներ ժողովրդեան հետ միացած լաւ ջարդ մը տալով լեղապատառ փախուցին մոգպետն իր մոգերովը . իսկ ուրացեալ նախարարներն Յովսէփ Կաթողիկոսին ոտքն իյնալով՝ իրենց պահանջ ուրացութեանը վրայ թողութիւն խնդրեցին . բայց վասակ սրտանց ուրացած ըլլալուն՝ ամեն հնարք ՚ի գործ կը դնէր քահանաներն ու ժողովուրդը համոզելու՝ որ Յազկերտի առջեւ յանցաւոր չի գտնուին , միւս կողմէն ալ գազանի և յայտնի կը ջանար կրակապաշտութիւնը մուծանել Հայոց մէջ , վասն զի Յազկերտ անոր խոստացած էր Հայոց թագաւորութիւնը . և երբ բռնուէր՝ սուտ երդումներով և սուտ զղմամբ կազատուէր բարեպաշտ Հայոց ձեռքէն :

Հ. վասակ կրցաւ իր խորհուրդն առաջ տանիլ :

Պ. Այն միջոցին Յազկերտ Աղուանից երկիրն ալ շատ մոգեր զրկեր էր արեւապաշտութիւնը հոն ալ հաստատելու , բայց Աղուանք չկրնալով դէմ կենալ՝ օգնութիւն ուզեցին Հայերէն . ասոր համար հարկ եղաւ որ Հայ զօրքերն երեքի բաժնուին . առաջին մասը Ներշապուհ Արծրունիին տուին Պարսից դէմ պատերազմելու , երկրորդը վասակայ՝ Հայաստանը պահ-

պանելու , և երրորդը՝ վարդանայ՝ Աղուանից օգնելու համար , որ երթալու ատեն Պարսկաց հանդիպելով լաւ ջարդ մը տուաւ և փախուց դամենքն ալ . նոյնպէս Աղուանից երկիրն ալ մոգերը ջարդեցին , կրակատուները կործանեցին և Պարսից զօրքերն ալ հալածեցին . և մինչդեռ վարդան Աղուանից երկիրն այսպէս քաջութիւններ կընէր , ասդին անզգամ վասակ իրեն յանձնուած զօրքովը Պարսից Միհրնբրսեհ հազարապետին կողմն անցաւ , որ նոյն միջոցին Հայաստան եկած էր բաղմաթիւ զօրքով և փիղերով :

Հ. վասակայ այս ընթացքն ինչ ազգեցութիւն ըլլաւ Հայոց վրայ :

Պ. իրենց այն դառն վիճակին մէջ աւելի հոգի առած և զօրանալով ամեն կողմէն սկսան ժողովրուիչ Աւարայր գիւղին քով իբր 66000 հոգւոյ չափ՝ որոնց մէջ քահանաներ , վարդապետներ և եպիսկոպոսներ ալ դանուեցաւ . և իրենց սպարապետ ընտրեցին դքսն վարդան : Հոն ամենքը միարբերան ուխտեցին որ մինչեւ իրենց արեան վերջին կաթիլը թափելով պաշտպանեն իրենց սուրբ հաւատքը , և Հոգեգալստեան վեցերորդ երեկոյն՝ որուն երկրորդ օրը պատերազմ պիտի ըլլար , բոլոր վարդանեանք հաղորդուեցան քրիս-

տոսի սուրբ մարմնոյ և արեամբը , և ամենքն ալ մահուան պատրաստուեցան . հոն քաջն վարդան և սուրբն Ղեւոնդ մէկ մէկ ազդու յորդորներ կարգացին զօրաց՝ որով ամենքն ալ քաջալերուելով միաբերան , կեցցէ՛ Գրիստոնէութիւն և Հայրենիք , գոչեցին :

Հ. վարդանանց պատերազմն ի՞նչպէս եղաւ .

Պ. Գրիստոսի 451 թուոյն Յունիսի Զին , Աւաւտուն սկսաւ պատերազմն խիստ կատաղութեամբ՝ Աւարայրի դաշտին մէջ՝ Տղմուտ գետին եզերքը . քաջն վարդան և ընկերներն այնպիսի ուժգին զօրութեամբ յարձակեցան Պարսից զօրաց վրայ , որ անոնց կարգն ու կարգադրութիւնները բոլորովին խառնակեցան և մեծ շփոթութիւն մտաւ մէջերնին . անհնարին էր նկարագրելը կ'ըսէ մեր եղիշէ ականատես պատմագիրը վարդանանց քաջութիւնները , մանաւանդ վարդան՝ կայծակի նման ամեն կողմ կը հասնէր և Պարսիկները անխնայ կը ջարդէր . բայց վերջապէս թշնամեաց նետերէն պաշարուելով զարնուեցաւ մեռաւ . և իրեն հետ նահատակուեցան նոյն օրը ուրիշ քանի մը մանր մունր պատերազմներու մէջ 1036 հոգի . իսկ Պարսից կողմէն միայն նոյն օրը 3500 հոգիէն աւելի մեռան . օրն

իրիկուն ըլլալով Հայերը ճեղքեցին դարձեալ Պարսից բանակը և իրենց բերդերը քաշուեցան :

Հ. վասակ ուրիշ ի՞նչ չարիք հասուց Հայոց :

Պ. Խաբէութեամբ մարդ կ'ըռնէր կամ հաւատքնին ուրայնել կուտար և կամ կ'ըսպաններ . շատ տեղեր կործանեց , թէպէտեւ շատ աշխատեցաւ որ Հայոց ձեռքն եղած բերդերն առնու՝ բայց չյաջողեցաւ . Ս. Յովսէփի կաթողիկոսն և Ս. Ղեւոնդ քահանայն և ուրիշ շատ մը քահանաներ ըռնելով Պարսկաստան դրկեց . ուստի Հայ նախարարներն ալ Պարսից բերդերուն վրայ յարձակելով մեծամեծ փնսաներ հասցնել սկսան : Յաղկերտ իմանալով բոլոր այս եղածները՝ Ատրորմիզդ անուենով Պարսիկ մը Մարզպան դրաւ Հայոց վրայ . ասի առ երես հրաման ըրաւ՝ որ ամեն մարդ աղատ պաշտէ Գրիստոնէական կրօնքը , և ինքը մէկ կողմէն նախարարները ըռնելով Պարսկաստան դրկեց Ս. Ղեւոնդեանց հետ :

Հ. Յաղկերտ իրեն դացող քահանաներն ու նախարարներն ի՞նչ ըրաւ :

Պ. Ղեւոնդեանները սոսկալի տանջանքներով նահատակել տուաւ , նախարարներուն ալ ստիպեց որ հաւատքնին ուրանան . բայց անոնք յանձն չառնելով՝ երկար ատեն բանտը մնալէն

յետոյ՝ Շղոմշապուհ անունով իշխանին աղաչան-
քովը ազատեցան և Պարսկաստան կը բնակէին :

Հ. Անօրէն վասակ ինչ վախճան ունեցաւ :

Պ. վասակ՝ որ անձամբ Յաղկերտի գտցած էր
իր հաւատարիմ ծառայութեան փոխարէնն ըն-
դունելու՝ յանցաւոր դատուելով՝ մահապարտից
բանտը նետուեցաւ , ուր որդնոտելով մեռաւ
Քրիստոսի 432 թուականին :

Հ. Ո՛րչափ ատեն Պարսկաստան կեցան նախա-
բարները :

Պ. Յաղկերտ մեռնելով իրեն յաջորդեց Պե-
րոզ իր որդին , որն որ նախարարներն ութը
տարի իր գործերուն ծառայեցնելով՝ երբ Ա-
տրովհնասպ Մարզպանը Հայաստան կուգար ,
զանոնք ալ զրկեց իրենց հայրենիքը , որոնք
եկան և սկսան աշխատիլ Քրիստոնէութիւնը պայ-
ծառացնելու և ազգը խաղաղութեամբ կառա-
վարելու . Այս միջոցներուն մեծին վարդանայ
Հմայեակ եղբօրը մեծ որդին՝ վահան՝ իր քաջու-
թեամբն ու խելացիութեամբը շատ սիրելի եղաւ
Պերոզ թագաւորին , Պարսիկ նախարարաց . և
Ատրովհնասպայ որ 20 տարի Հայաստանի Մարզ-
պանութիւնն ըրաւ . ուստի ուրացեալ նախա-
բարները նախանձելով ամբաստանեցին Պերոզի

ղվահան . նա ալ Պերոզի աչքէն չկոխալու հա-
մար հաւատքն ուրացաւ :

Հ. վահան նորէն Քրիստոնէութեան դարձաւ :

Պ. Իմանալով վրաց վախթանկ թագաւորին
Պարսիցմէ ապստամբիլը՝ յարմար առիթ սեպելով՝
Հայերն ալ յորդորեց որ իրենք ալ ապստամբե-
լով Քրիստոնէութեան համար պատերազմին . այս
առաջարկութիւնը ոմանք ընդունելով՝ վահանը
Սյարապետ և Սահակ Բաղրատունին ալ Մարզ-
պան դրին . իսկ մէկ քանի նախարարներ փո-
խանակ օգնելու՝ գացողներուն ալ արգելք եղան
բայց քանի մը նախարարներ ալ աւելի հասա-
րակաց օգուտը մտածելով հաստատուն կեցան
վահանայ հետ : Երբ Պերոզ լսեց վահանայ ա-
պրտամբութիւնը , Ատրներսէհին ձեռքով շատ
զօրք զրկեց , ապսպրելով որջ բռնել վահանը :

Հ. Ատրներսէհ կրցա՞ւ բռնել զվահան :

Պ. վահան թէպէտեւ շատ ջանաց որ բոլոր նա-
խարարները միաբանէ , բայց չկրցաւ . վան զի
նախարարներէն ոմանք շահու և փառասիրու-
թեան համար Պարսից կողմն անցած էին . ուստի
վահան ալ Յովհան Մանդակունին հետն առած ,
թէպէտեւ քիչոր՝ բայց յազթեց և փախուց
բոլոր Պարսիկները :

Հ. Պարսիկք ուրիշ զո՞վ զրկեցին վահանայ վրայ:
 Պ. Պարսիկք Միհրանն առաքեցին վահանայ վրայ . յետոյ Զարմիհր Հազարաուխար , յետոյ Շապուհ Միհրանեանը . ասոնց ամենուն ալ յաղթեց , միայն անգամ մը Միհրանին դէմ պատերազմած ժամանակ՝ յաղթուեցաւ՝ վախժանկ վրայ թագաւորին խորգախուժեամբը , որ Հայոցմէ օգնութիւն ուզեր էր . վահան գնաց և հոն յանկարծակիի դալով՝ յաղթուեցաւ , և այս պատերազմին մէջ Սահակ Բագրատունին , որ 1 տարի Մարզպանութիւն ըրաւ , և վահանին եղբայրը՝ Վասակ՝ նահատակուեցան :

Հ. Պարսիկք ի՞նչ կերպով հաշտուեցան վահանայ հետ :

Պ. Վահան անգամ մը 30 հոգւով Շապուհին դէմ յաղթութիւն մ'ալ ըրաւ , վասն զի միշտ Աստուծոյ ապաւինած էր . Այս միջոցին Պերոզ մեռնելով՝ իր վաղարշ եղբայրը թագաւորեց Պարսից . սա լսած ըլլալով վահանայ անպարտելի քաջութիւններն ու անոր արդար պահանջմունքը՝ Նիխոր անուն խաղաղասէր մարդը զրկեց որ եկաւ վահանայ դաշինքն ընդունեց , որոնց գլխաւորն և առաջինն էր՝ Քրիստոնէութիւնն ազատ պաշտուի Հայաստանին մէջ . Նիխոր յանձն

առաւ , ուստի վահան ալ Պարսից դուռն երթալով երդում առաւ թագաւորէն , և Հայոց ընդհանուր Սպարապետ դրուելով դարձաւ Հայաստան . Անդեկան Պարսից իշխանն ալ Մարզպան եկաւ :

Հ. վահան ի՞նչպէս Մարզպան եղաւ :

Պ. Անդեկան 2 տարի մարզպանութիւն ընելէն յետոյ Պարսկաստան երթալով այնքան դովեց զվահան , որ վաղարշ Պարսից թագաւորը մարզպանութիւնը վահանին և սպարապետութիւնը վահանայ վարդ եղբօրը տուաւ . մեծ միջիթարութիւն գտան հայք՝ տեսնելով որ քաջ քրիստոնեայ , իմաստուն և իրենց սիրելի Հայ իշխան մը Մարզպան դրուեցաւ :

Հ. վահան կրցա՞ւ Հայաստանը խաղաղութեամբ կառավարել :

Պ. Այ . վասն զի վաղարշ մեռնելով յաջորդեց կաւատ . սա ուզելով Հայերը կրակապաշտ ընել , Պարսիկ Մարզպան մը դրաւ . բայց վահան վռնտեց զայն և 26 տարի Հայաստանը կառավարելէ յետոյ մեռաւ Քրիստոսի 810 թուականին : Ասոր օրովը Հայաստանի մէջ Յովհաննէս Մանդակունի կաթողիկոսը կը ծաղկէր , որ հոգւով սրբով լցուած ներհուն անձ մ'էր :

Հ. վահանին տեղ ո՞վ Մարդպան դրուեցաւ :

Պ. վարդ իւր եղբայրը , որ հաղիւ 4-5 տարի մարդպանութիւն ըրաւ . վասն զի մէկ քանի հոգի նախանձեւելով անոր պատուոյն վրայ , ամբաստանութիւն գրեցին . ուստի կաւատ ալ Բուրդան անունով Պարսիկ մը Մարդպան դրաւ , որ զՀայերն 3 տարի շատ նեղեց : Այս միջոցին Հոնք Հայաստանի վրայ վազելով շատ աւերմունք կ'ընէին . ասոնց դէմն ելաւ Մտէժ Գնունի իշխանը , և աղէկ ջարդ մը տալով փախուց . կաւատ Մտէժին այս քաջութիւնն իմանալով Բուրդանին տեղ Մարդպան դրաւ , որ 31 տարի խաղաղութեամբ ազգը կառավարելէն ետքը մեռաւ :

Հ. Մտէժին տեղ ո՞վ Մարդպան դրուեցաւ :

Պ. Ետեւէ ետեւ չորս Մարդպան դրուեցան , Դենչապուհ , վշնասոյ վահրամ , վարազբատ , Սուրէն . որոնք 40 տարի իշխեցին , ասոնցմէ ոմանք ազգը նեղեցին և ոմանք խաղաղութեամբ կառավարեցին . ասոնց մէջ ամենէն անօրէնը Սուրէնն եղաւ՝ որ շատ չարիք հասուց Հայոց , և Մանուէլ Մամիկոնեան իշխանն սպաննեց . ուստի Մանուէլի եղբայրը՝ վարդան՝ բարկանալով զօրք ժողկեց , վաղեց Դուին քաղքին վրայ , Սուրէնն սպաննեց և մոզերն ալ ջարդեց :

Խոսրով Պարսից թագաւորը Սուրէնի մահը լսելով շատ զօրք զրկեց վարդանայ վրայ . վարդան թէպէտ քիչ զօրք ունէր , բայց վարպետութեամբ սլատերաղմելով յաղթեց թշնամոյն :


Հ. Սուրէնին տեղ ո՞վ Մարդպան դրուեցաւ :

Պ. Խոսրով աւելի մեծ բանակ մ'ալ ճամբեց վարդանայ վրայ . ասի առանձին մնալով Կ. Պոլիս գնաց , և երբ Յուստինոս կայսեր օգնութեամբ Հայաստան կուգար , Խոսրով ինքն անձամբ 140000 զօրքով վարդանայ վրայ եկաւ , և երկու կողմէն ստիպի ջարդ մ'ըլլալէն ետքը՝ վերջապէս Պարսկաց ձեռքը մնաց Հայաստան . Խոսրով Հայոց սիրտը շահել ուզելով ձիհր-վզոն խաղաղասեր Պարսիկը Մարդպան դրաւ՝ որ 14 տարի կառավարեց , ասի վերջին Պարսիկ Մարդպանն եղաւ : Այս միջոցին Մովսէս կաթողիկոս Հայոց առմարը նորոգելով , նոր թուական հաստատեց որ Գրիգորոսի 531 թուականին կ'սկսի :

Հ. Ձիհր-վզոնին տեղ ո՞վ Մարդպան դրուեցաւ :

Պ. Սմբատ բազմայաղթ կոչուած Հայք՝ իր քաջութիւններուն համար . ասի 8 տարի մարդպանութիւն ընելով մեռաւ . իրեն յաջորդեց Գաւիթ Սահառունի՝ որն որ 23 տարի մարդպանութիւն ընելէն ետքը՝ վախնալով Պարսիկներէն՝

Թողուց իշխանութիւնը Կ. Պօլիս փախաւ . այս միջոցին Խոսրով պատճառաւ մը թշնամանալով Մուշեղ Մամիկոնեանի հետ՝ 40000 զօրքով եր Միհրան քեռորդին Մուշեղայ դէմ զրկեց , Մուշեղ ալ իր վահան ազգականը օգնութեան կանչեց , որ հնարագիտութեանը համար Գայլ վահան կոչուեցաւ . ասի յաղթեց Պարսից և Միհրանն ալ բռնելով սպաննեց , և անընդհատ Պարսից դէմ պատերազմելով մեռաւ , իրեն յաջորդեց Սմբատ քաջ և հայրենասէր որդին՝ որ միշտ պատերազմեցաւ Պարսից հետ , յաղթեց և չորս երեւելի զօրավարնին ալ սպաննեց :



Գ. ԼՈՒԻՍ Բ .

ԴԱԻԹ ՍԱՀՈՌՆԻՒՆ ԿԻԻՐԱՊԱՂԱՏՈՒԹԵՆԷՆ
ՄԻՆՉԵԻ ՀՍՄԱԶԱՍՊ ՄՍՄԻԿՈՆԵԱՆԻՆ
ՊԱՏՐԻԿ ԸԼԼԱԼԸ

631 — 655

Հ. Դաւիթ Սահառունի Մարզպանին ո՞վ յաջորդեց :

Պ. Սմբատ բազմեյաղթին որդին՝ վարազաիրոց Մարզպան գրուեցաւ , որ 8 տարիէն Կ. Պօլիս փախաւ եր ընտանիքովը : Այս միջոցին Պար-

սից մէջ խռովութիւն իյնալով՝ Հայք Յունաց ապաւինեցան և իշխան մ'ուզեցին , անոնք ալ Դաւիթ Սահառունին առաքեցին Կիւրաղապատ անուամբ , որ իշխանութեան անուն մ'է , Գրիստոսի 631 թուականին . բայց 4 տարիէն վնտոցին Հայերն զԴաւիթ , և իրենք սկսան մէկզմէկու հետ կռուիլ ու Հայաստանը տակնուվրայ ընել . նոյն միջոցին Հաղարացիք Հայաստան արշաւելով՝ չարիք չը մնաց որ չհասցնէին Հայոց :

Հ. Հաղարացւոց արշաւանացը դէմ դնող չեղաւ :

Պ. Թէոդորոս Ռչտունի և վահան կամաարուկան քաջ իշխանները թէպէտեւ սկիզբները լաւ ջարդ մը տուին , բայց Սահուռ Անձեւացի և ուրիշներ Հաղարացւոց կողմն անցնելով՝ սկսան թշնամույն հետ Հայերը ջարդել . այսպիսով ցըրուեցան վահանայ զօրքերը . Հաղարացիք մինչեւ Դուին առաջ քալեցին , քաղաքը պաշարմամբ առին և շատ մարդ ջարդելէն ետքը 35000 հոգի ալ գերի տարին : Հաղարացւոց երթալէն ետքը վարազաիրոց՝ Կիւրաղապատ դրուեցաւ Յունաց կողմանէ՝ որ տարիէ մը մեռնելով իրեն յաջորդեց Սմբատ իւր որդին :



ՄԱՍՆ ՀԻՆԳԵՐՐՈՐԳ

ՊԱՏՐԻԿԲ

ԳԼՈՒԽ Ա.

ՀԱՄԱԶԱՍՊ ՄԱՄԻՒՈՆԵԱՆԻՆ ՊԱՏՐԻՒՈՒԹԵՆԵՆ
ՄԻՆՉԵԻ ԱՐՄԱՐԱՅԻՈՑ ԿՈՂՄԵՆ ԱՐԳԸԼԼԵՑ Ա.
ՈՍՏԻԿԱՆԻՆ ԳԱԼՈՒՍՏԸ

655 — 693

Հ. Մմբատին կիւրապաղատութեան ատեն Հայք հանգստացա՞ն :

Պ. Մմբատին կիւրապաղատութեան երրորդ տարին Հագարացիք վերստին Հայաստան դալով մեծամեծ կոտորածներ բրին . ուստի նախարարք ալ մարդ զրկեցին Ամիրապետին՝ որ իրեն կը հնազանդին . այս բերով Յոյնք սկսան Հայաստան արշաւել , բայց Ներսէս Գ. Կաթողիկոսին խնդրա- նօք , Համազասպ Մամիկոնեանը Պատրիկ դրուե- ցաւ . ասոր օրովն էր որ Դաթիկ ճգնաւորին հայց- մամբը վարազայ սուրբ խաչին դիւանն եղաւ :

Հ. Համազասպայ Պատրիկութիւնը ո՞րչափ տե- ուեց և իրեն ո՞վ յաջորդեց :

Պ. Ամիրապետն իմանալով որ Հայերը դարձեալ Յունաց հպատակեր են , իր քովն եղած պա- տանդներն ամենքն ալ թրէ սնցուց . և երբ կը պատրաստուէր վերստին Հայաստան դալու , ինքն ալ իր զօրքերէն սպաննուեցաւ : Ասոր յաջորդին նորէն հպատակեցան Հայք և քիչ ատենէն Հա- մազասպ ալ մեռնելով իր եղբայրը Պատրիկ դըր- ուեցաւ , որ Զէ տարի խաղաղութեամբ աղգը կա- ռավարեւէն ետքը՝ խաղրաց պատերազմին մեջ զարնուելով մեռաւ : Այս միջոցին երեւելի էին Անանիա Շիրակացին և Մովսէս Սիւնեցին : Եր- կու տարիի շափ Հայաստան տակն ու վրայ ըլլա- լէն ետքը՝ Աշոտ Բագրատունի Բիւրատեան իշ- խանն սկսաւ Հայաստանի տիրել , և Հագարա- ցւոց ալ հարկ տալ :

Գ. ԼՈՒԻՍ Բ.

ՈՍՏԻԿԱՆՔ

ԱՅԳՂԼԼԱՅ Ա. ՈՍՏԻԿԱՆԷՆ ՄԻՆՉԵՒ ԲԱԳՐԱ-
ՏՈՒՆԵԱՆՅ ԹԱԳԱԻՈՐՈՒԹԵԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԻԼԸ

693 — 885

- Հ. Աշոտ ո՞րչափ ատեն Պատրիկութիւն ըրաւ :
- Պ. Յոյնք՝ իմանալով որ Հայերը Հագարացոց հարկատու եղեր են , շատ զօրք զրկելով մեծամեծ աւերմունքներ ըրին ՚ի Հայաստան . Հագարացիք ալ ընդհակառակը կարծելով որ Հայք Յունաց հնազանդեր են՝ անոնք ալ շատ վնաս հատուցին Հայոց , թէպէտ Աշոտ ասոնց դէմ դրաւ քաջութեամբ՝ բայց ինքն ալ զարնուելով մեռաւ 3 տարի Պատրիկութիւն ընելէն ետքը , Քրիստոսի 693 թուականին , և Հայաստան բոլորովին Հագարացոց ձեռքը մնաց , որոնք Ոստիկան անունով մէկը կը զրկէին Հայաստանը հսկելու համար :
- Հ. Ո՞վ եղաւ առաջին Ոստիկանը :
- Պ. Աբդլլայ Ա. որ շատ չար ըլլալուն՝ Սահակ Կաթուղիկոսն ու նախարարները Դամասկոս զրկեց .

- բայց Մմբատ Բիւրատեան Յունաց օգնութեամբ վճռեց զանի Հայաստանէն . և երբ Մոհմատ զօրավարին անհամար զօրքով Հայաստան դալը լուեցաւ՝ Սահակ Կաթուղիկոս , որ Մոհմատի հետ բարեկամութիւն ունէր , իսկոյն Դամասկոսէն ճամբայ ելաւ որ Մոհմատին բարկութիւնը իջեցնէ . բայց ճամբան հիւանդանալով աղաչանաց թուղթ մը գրեց ու ինքը վախճանեցաւ . և երբ Մոհմատ Սյրբոյն մարմին քովէ եկաւ , Կաթուղիկոսն ողջ մարդու պէս նամակը Մոհմատին տուաւ և Հայոց հետ հաշտեցուց զայն :
- Հ. Աբդլլայ ոստիկանին ո՞վ յաջորդեց :
- Պ. Կոչմ 13 տարի , որ բոլոր ազգին մեծերը և նախարարները Նախկեանի եկեղեցւոյն մէջ ժողովելով այրել տուաւ : Ասկէ ետքը ետեւէ ետեւ նստեցան վիլթ 10 տարի և Մուհամմէտ 4 տարի դաժան մարդիկը , և Աբդլլայզիզ 11 տարի որ բարի մարդ մ'էր , ասոր ալ յաջորդեց Մրուան՝ որ 1 տարիէն Աշոտ Բագրատունին իշխան դնելով ինքն ամիրապետ եղաւ . որով 15 տարիի չափ խաղաղեցաւ Հայաստան բայց երբ Մրուան մեռաւ՝ Եէզիա անունով չարաճըճի մարդ մ'ոստիկան դրուեցաւ՝ 2 տարի որ Հայերը շատ նեղեց . ասոր օրով Հայք վզերնին կապարեայ կնիք կը կախէին

Ի նշան ստրկութեան, ասոր ալ յաջորդեց Սահակ Բագրատունի բարեպաշտ մարդը՝ որուն վեցերորդ տարին Միւլէյման ոստիկան զրկուեցաւ, 9 տարի և վերջն ալ Պէքեր անողորժ և անգութ մարդը 7 տարի. ասոր ալ յաջորդեց Հասան՝ 3 տարի որ ամենէն աւելի նեղեց զՀայերը :

Հ. Հասանին ո՞վ յաջորդեց :

Պ. Մուշեղ Մամիկոնեան Հայ Իշխանը՝ որ Հասանին զօրքերը լաւ մը ջարդելով զինքը փախուց Դուինէն. նոյնպէս Աշոտ մնակեր՝ քանի մ'անգամ յաղթեց Հագարացոց, մինչեւ որ Եէգիտ Բ. շատ զօրքով նուաճեց Հայերը շատ չարիք հասցընելով, բայց վերջը Խուզիմա 11 տարի, Հոլ 13 տարի և Բագարատ Բագրատունի 32 տարի, այս ոստիկաններուն բարութեամբը քիչ մը հանդարտեցան. Բագարատին յաջորդեց Ապուսեթ, 11 տարի Հայք սպաննեցին զայն. ուստի Բուզա ոստիկանը զրկուեցաւ, որ Հայաստանն արիւնյուայ ըրաւ և Աշոտ Արծրունին տնով տեղով Դամասկոս գերի վարեց, նոյնպէս շատ նախարարներ և Իշխաններ բռնած Պաղտատ գերի տարաւ. ասոնց մէջն էր Սմբատ սպարապետը, որ թէպէտ Բուզայի առաջնորդեց որ պատուոյ հասնի, բայց զայն ալ շղթայեալ բանտարդեց՝ ուր զղջալով իր ըրածին

վրայ, Սմբատ Խոստովանող ըսուեցաւ : Ասկեց վերջը Սմբատ Բագրատունիին Աշոտ որդին սկսաւ Խաղաղութեամբ կառավարել զՀայաստան :

Վ. Ե. Բ. Զ.



ՄԱՍՆ ՎԵՅԵՐՈՐԴ

ԲԱԳՐԱՏՈՒՆԻՔ

ԳԼՈՒԽ Ա.

ԱՇՈՏ ԲԱԳՐԱՏՈՒՆԻ ԱՌԱՋԻՆ ԹԱԳԱԽՈՐԷՆ

ՄԻՆՁԵՒ ԱՇՈՏ ՈՂՈՐՄԱԾ

885 — 990

Հ. Ինչպէս սկսաւ Բագրատունեաց թագաւորութիւնը :

Պ. Սմբատ խոռտովանողին որդին Աշոտ՝ հաւատարմութեամբ Հագարացոց ծառայելով Հայոց ժողովրդեան ալ սիրելի եղաւ, և համբաւը մինչեւ Ամիրապետին ակննջը հասաւ՝ որն որ իշխանաց իշխանի պատիւը տուաւ Աշոտին և անոր յանձնեց Հայաստանի հարկը ժողուելը. նախարարներն այս բանիս վրայ ուրախանալով՝ Գէորգ Կաթուղիկոսին հետ միաբանած խնդրեցին Ամիրապետէն՝ որ Աշոտն իրենց վրայ թագաւոր դնէ, խոստանալով որ հաւատարիմ կը մնան. Ամիրա-

պետը խնդիրքնին կատարեց և Աշոտը թագաւոր դրաւ. Հայաստանի, որն որ ամեն կողմ խաղաղեցնելէն ետքը՝ կոստանդնուպօլիս դնաց Լեւոն կայսեր՝ ուր մեծամեծ պատիւներ դատաւ, և վերադարձին Շիրակ հասնելով հիւանդացաւ և մեռաւ 26 տարի իշխանութիւն և 5 տարի թագաւորութիւն ընելէն ետքը :

Հ. Աշոտին ո՞վ յաջորդեց :

Պ. Սմբատ իւր որդին. բայց Աբաս՝ իր հօրեղբայրը՝ որ Աշոտին սպարապետն էր, շատ զօրք ժողուած պատերազմի ելաւ. և կ'ուզէր ինք թագաւորել, և երկու անգամ յաղթուեցաւ. ուստի Սմբատ՝ Աբասին տեղն սպարապետ դրաւ իր Շապուհ եղբայրը. եւ երբ Հայաստան քիչ մը խաղաղութեան երես պիտի տեսնէր, Սիվին Պարսից սատիկանը նախանձելով Սմբատայ մեծնալուն վրայ՝ 30000 զօրքով պատերազմի եկաւ և յաղթուեցաւ. նոյնպէս Ահմատ Միջագետի սատիկանը՝ Գազիկ արծրունին (Սմբատայ աղագականներէն մին) օգնութեան առած յանկարծ պատերազմի ելաւ Սմբատայ դէմ, բայց Սմբատ քաջութեամբ պատերազմելով յաղթեց Ահմատին և փախուց իր տեղը :

Հ. Սմբատ Ահմատին յաղթելէն ետքը կըրցա՞ւ հանդարտիլ :

Պ. Ափշին նորէն պատերազմի ելաւ . Սմբատ ալ անօգնական մնալով պատանդ տուաւ իր որդին , բայց Ափշին երբ կ'ուզէր ուրիշ չարիքներ ալ հասցնել՝ սոսկալի մահուամբ սատկեցաւ և իրեն յաջորդեց Յուսուփ իր եղբայրը :

Հ. Սմբատ Յուսուփին խարդախութիւններէն ազատելու համար ինչ ճար մտածեց :

Պ. Որովհետեւ Սմբատ Յուսուփայ խարդախ բլլալը քաջ գիտէր , ոստիկանաց նեղութիւններէն ազատելու համար աղաչեց Ամիրապետին՝ որ փոխանակ տուրքերն ոստիկանաց ձեռքով տալու , ուղղակի իրեն դրկէ . ասոր վրայ Յուսուփ բարկացած շատ զօրքով Սմբատայ վրայ եկաւ , բայց անոր զօրութիւնն իմանալով՝ հաշտութիւն խօսեցաւ , միտքը դնելով՝ որ յարմար առթով մը վրէժը լուծէ :

Հ. Ինչո՞ւ ապստամբեցան նախարարները Սըմբատէն :

Պ. Եգեբացւոց կոստանդին թագաւորը Սմբատէն ապստամբեցաւ . Սմբատ ալ վրաց Ատրնբրսեհ թագաւորին հետ միանալով , յաղթեց , և կոստանդինն ալ գերի բռնելով Անիի մէջ կ'պահէր . բայց չորս ամէն վերջը գլխով կոստանդինի վրայ՝ ազատ թողուց . այս բանս վրաց թագաւորը

ւորը և նախարարք իրենց անպատուութիւն սեպելով , պատերազմի ելան Սմբատայ դէմ , բայց յաղթուելով ամենքն ալ գերի բռնուեցան և Սմբատ մէկ քանի նախարարայ աչքը կուրցուց և Ատրնբրսեհի վրայ գլխով ազատեց . այս միջոցին Գագիկ Արծրունի՝ Սմբատայ քեռորդին՝ ապստամբելով դնաց Յուսուփին քով . Յուսուփ ալ քաջ գիտնալով որ Հայոց զօրութիւնը տկարացրնելու միակ միջոց անոնց մէջ երկպառակութիւն ձգելն է . Գագիկին շատ պատիւներ ընելով թագաւոր դրաւ զանի , յետոյ Գագիկ և Յուսուփ միացած՝ պատերազմի ելան Սմբատայ դէմ , նա ալ անօգնական մնալով , Գուգարացւոց երկիրը փախաւ :

Հ. Սմբատ Գուգարացւոց երկիրն ինչ բրաւ :

Պ. Երբ իմացաւ որ իր Աշոտ և Մուշեղ որդիքը յաղթուեր են Սեւորդիններուն մասնութեամբ՝ ինքն ալ յուսահատելով կապոյտ բերդը քաշուեցաւ . Յուսուփ Հայաստանի շատ տեղերն աւերակ ընելէն յետոյ՝ եկաւ կապոյտ բերդը պաշարեց . խորամանկ ոստիկանը միշտ Հայերը կը քչէր բերդին դէմ պատերազմելու համար . Սմբատ տեսնելով որ իրեն համար երկու կողմէ ալ Հայերը կը ջարդուին . երդումն առնելով Յուսուփէն անձին վրաս մը չը հասցնելու՝ անձնատուր

100
11

եղաւ . Յուսուփ թէ եւ Սմբատը պատուելով ազատ թողուց , բայց յետոյ շատ տանջանքներով նահատակեց Քրիստոսի 919 թուականին . 30 տարի թագաւորելէն ետքը Գաղիկ ալ վասպուրականի մէջ սկսաւ թագաւորել :

Հ . Սմբատի ո՞վ յաջորդեց :

Պ . Յուսուփ Հայաստանի ամեն կողմն արիւն լուայ ընելէն ետքը՝ պահապաններ թողլով՝ Պարսկաստան դարձաւ : Բայց Սմբատայ որդին՝ Աշոտ Բ . որ Աշոտ Երկաթ ըսուեցաւ , հօրը մահուան լուրն առնելուն պէս՝ անմիջապէս 600 հօգուց չափ մարդ ժողովեց և վաղեց Յուսուփին թողուցած պահապաններուն վրայ և սաստիկ շարդ մը տալով փախուց . նախարարք Աշոտի քաջութիւնները տեսնելով միաբանեցան և զինքը թագաւոր դրին , բայց ոմանք վերջերը նախանձելով ապրատամբեցան ու նորէն խռովեցին աշխարհը :

Հ . Այս նեղ միջոցին Աշոտ ու՞սկեց օգնութիւն գտաւ :

Պ . Կոստանդին Պերփեռուժէն Յունաց կայսրն իմանալով խեղճութիւններն , Աշոտը՝ Կ . Պօլիս կանչեց , և շատ պատուելէն վերջը Յունաց զօրքով դարձուց իր թագաւորութեանը . Յուսուփ՝ կայսեր օգնութենէն վախնալով՝ Աշոտին հօրեղ-

բօրորդին՝ Աշոտ սպարապետը թագաւորեցուց , որ Աշոտ բռնաւոր ըսուեցաւ . այս պատճառաւ շատ արիւնահեղ պատերազմներ ըլլալէն յետոյ երկու Աշոտները հաշտուեցան Յովհաննէս Կաթուղիկոսի միջոցաւ :

Հ . Աշոտ Երկաթ ուրիշ թշնամի ունեցա՞ւ :

Պ . Մնկրթութիւնն այն աստիճան աիրած էր Հայոց մէջ՝ որ ամենքն ինքնիշխան թագաւորել կուզէին , ինչպէս նաև Արաս՝ Աշոտի եղբայրն՝ ապրտամբելով սկսաւ պատերազմիլ . Աշոտ Երկաթ թէպէտև յաղթեց , բայց իր քովի ազէտ , փառամոլ և անձնասէր պաշտօնակալներէն յուսահատած հարիւր հօգուով Սեւան կղզին քաշուեցաւ :

Հ . Սեւան կղզին մէջ Աշոտ Երկաթին ին՞չ դէպք պատահեցաւ :

Պ . Յուսուփ իմանալով՝ Նըսըր անունով անպիտան ոտտիկանը Հայաստան ղրկեց որ շատ չարիք հասուց . Նըսըրէն ետքը Բըշըր՝ որ Սեւան կղզին պաշարեց Աշոտը բռնելու համար , բայց Աշոտ Երկաթ իր հարիւր կտրիճներովն այն աստիճան քաջութեամբ պատերազմեցաւ որ շատ մարդ սպաննեց . թշնամիք սկսան փախչիլ , ինքն ալ ետեւնուն հյնալով հարածեց զամենքը և Հայաստան գալով թագաւորութիւնը ձեռք առաւ .

Աբաս եղբորը հետ ալ հաշտուեցաւ . 24 տարի թշուառութեամբ թաղաւորելէն ետքը մեռաւ . Աշոտ Շահնշահ ալ ըսուեցաւ , որ թաղաւորներու թաղաւոր ըսելէ :

Հ . Աշոտ Երկաթին ո՞վ յաջորդեց :

Պ . Աբաս իւր եղբայրը՝ որ բոլոր թշնամիներուն յաղթելով աթոռն ալ կարս փոխադրեց . ուստի Հայաստան քիչ մը խաղաղութեան երես տեսնելով սկսաւ ծաղկիլ : Նոյն միջոցին Բեր անուն վըրաց և Ափխազաց թաղաւորը պատերազմի ելաւ Աբասայ դէմ , և ծաղրելով պատգամ զրկեց որ կարսի Մայր Եկեղեցին ինք պիտի օծէ վրաց ծիսով , Աբաս դէմն ելաւ յաղթեց և Բեր թաղաւորը բռնելով կարս բերաւ , ցուցուց այն Եկեղեցին որ կուզէր ինքն օրհնել , յետոյ աչքերը կուրցուց . Աբաս 24 տարի թաղաւորելէն ետքը մեռաւ : Ասոր օրով վասպուրականի մէջ Արծրունեաց թաղաւորութեանը կիշխէր Աշոտ Դերենիկ՝ որ այլազգեաց ձեռքը մասնուեցաւ իր Ապխարիպ զորավարին ձեռքով , բայց վերջը Ապխարիպ իր քաջութեամբը ազատեց դարձեալ Աշոտ Դերենիկը :

Հ . Աբասին ո՞վ յաջորդեց :

Պ . Իր որդին Աշոտ Գ . որն որ հօրը մեռնելէն

ետքը սկսաւ Հայաստան ասպատակողները վռնտել , և ինը տարի հայրենիքը պաշտպանելէն յետոյ՝ նախարարները զինքը Անիի Մայր Եկեղեցւոյն մէջ թաղաւոր օծեցին . Աշոտի եղբայրը Մուշեղ ալ կարսի մեջ թաղաւորեց . Աշոտ խըռովութիւն չհանելու համար ձայն չհանեց , թաղաւորական այն ճիւղը «թաղաւորութիւն կարուց» ըսուեցաւ , որ քիչ մը վերջը Յունաց անցաւ : Այս միջոցին Համտուն Հագարացուց զօրապետը Ամիրապետէն ապստամբելով Հայաստանի վրայ վազեց . Աշոտ դէմն ելաւ սպանեց զայն , որով Ամիրապետէն թաղաւորական թաղ ընդունեցաւ : Աշոտի օրով ծաղկեցան մեծն խոսրով Անձեւացին , Ս . Գրիգոր Նարեկացին և Ղեւոնդ փիլիսոփան . Աշոտ 26 տարի խաղաղութեամբ կառավարելէն ետքը մեռաւ , և իր աղքատասիրութեանը համար «Աշոտ ողորմած» ըսուեցաւ :



Գ. ԼՈՒԻՍ Բ.

ՍՇՈՑ ՈՂՈՐՄԱՍԵՆ ՄԻՆՉԵՒ ԲԱԳՐԱՏՈՒՆԵԱՑ
Թ.Ա.Գ.Ս.ԻՐՈՐԻԹԵԱՆ ԿՈՐԾԱՆՈՒՄԸ

990—1080

Հ. Աշտի ս'վ յաջորդեց :

Գ. Սմբատ Բ. իր անդրանիկ որդին՝ որ իր հօրը պէս քաջութեամբ և իմաստութեամբ սկսաւ ազգը կառավարել. շատ շինութիւններ ըրաւ. Տրդատ ճարտարապետին ձեռքով Անիի մայր եկեղեցին շինել տուաւ, և Անիի շրջապատը ամուր պարիսպ մը քաշել տուաւ՝ որուն համար կ'ըսեն թէ ութը տարի հազարաւոր հողի աշխատեցան. իսկ քաղքին բոլոր եկեղեցեաց թիւը հազար և մէկի կը հանեն, և ռամկաց մէջ սովորութիւն էր որ Անիի հազար և մէկ եկեղեցեաց վրայ երգում կ'ընէին : Սմբատ Բ. 13 տարի թագաւորելէն ետքը մեռաւ՝ քրիստոսի 990 թուակրօնին. Սըմբատ թէպէտեւ խաղաղութեամբ և խոհեմութեամբ թագաւորեց, բայց վերջերն եկեղեցական արարողութեաց գէմ մեղանշելով իր անունը արատաւորեց :

Հ. Սմբատայ ս'վ յաջորդեց :

Գ. իր եղբայրը Գագիկ Ա. որ բարեպաշտութեամբ քաղաքաշինութեամբ երեւելի՝ և Բագրատունեաց թագաւորութեանը պարծանք եղաւ, 30 տարի խաղաղութեամբ թագաւորելէն յետոյ մեռաւ : Ասոր յաջորդեց Յովհաննէս Սմբատ, որ թէպէտ խելացի էր՝ բայց գործունեայ և աշխոյժ չըլլալուն՝ շատ շարիքներ պատահեցան Հայաստանի մէջ. իր Աշտ եղբայրն ապստամբեցաւ, որ քաջ և տաք գլուխ երիտասարդ մ'ըլլալուն՝ վասպուրականի Սինեքերիմ թագաւորէն օգնութիւն առած՝ եկաւ Անին պաշարեց. բայց Պետրոս Կաթողիկոս և վրայ թագաւորը միջնորդելով հաշտեցուցին. Աշտ հաշտութեանը վրայ զղջալով մտաբերեց որ Յովհաննէս Սմբատն ըսպաննէ, ուստի հիւանդ ձեւանալով Յովհաննէսը հրաւիրեց. հոն Յովհաննէս՝ Աշտին լարած որդայթն կ'յնալով աղաչեց որ կենացը խնայէ. բայց Ապիրատ իշխանը՝ որ Յովհաննէսը մեռցնել խոստացած էր՝ փոխանակ մեռցնելու, Անի տարաւ և հոն թագաւորեցնելով ինքն ալ փախաւ :

Հ. Յովհաննէս Սմբատի օրով ինչ պատահեցաւ,

Գ. Ասոր օրով Սկիւթացիք սկսան Հայաստան արշաւել վասպուրականի Սինեքերիմ թագաւորը

ձեռուընուն ազատելու համար վասպուրականը
 Յունաց թողուց և ինքը Սերաստիան առաւ .
 Սկիւթացիք հետզհետէ յառաջանալով՝ սկան մե-
 ծամեծ աւերումներ ընել , թէեւ վասակ Պահ-
 լաունի քիչ մ'ատեն դէմ դրաւ , բայց ինքն ալ
 սպաննուեցաւ առանձին աղօթած միջոցին :

Հ . Յովհաննէս Սկիւթացոց ձեռքէն ազա-
 տելու համար ինչ ճար մտածեց :

Պ . Յովհաննէս չկրնալով Սկիւթացոց դէմ
 դնել՝ վասիլ կայսեր օգնութեան դիմեց , խոս-
 տանալով որ իրեն մեռնելէն յետոյ Անին Յունաց
 անցնի . վասիլին յաջորդ եղբայրը՝ կոստանդին
 մեռնելու ատեն կիրակոս անուն վատ չքահանայի
 մը կը յանձնէ Անիի դաշանց թուղթը . ուտի
 չքահանան պահելով զայն , երբ 1034 ին Միքա-
 յէլ կայսր կ'ըլլայ՝ անոր կը յանձնէ և փոխարէն
 բազում ոսկի կ'ընդունի . այս սոսկալի մասնու-
 թեան հետեւութիւնն եղաւ Բագրատունեաց թա-
 գաւորութեան կործանումը . իսկ Յովհաննէս 20
 տարի թաղաւորելէն ետքը անորդի մեռաւ :

Հ . Յովհաննէս Սմբատին մեռնելէն ետքն ինչ
 վիճակ ունեցաւ Հայաստան :

Պ . Երկու տարիի չափ անտէր մնաց , ուտի խտրիկ
 անուենով Պարսիկը , որ Բերկրիին քաղաքապետն

էր , Հայերուն դէմ ոխ պահած ըլլալուն՝ Ամի-
 րայից օգնութեամբը շատ տեղեր նուաճեց և
 մարդաչափ փոս մը փորել տալով՝ ձեռքն ինկած
 Հայը մորթել տուաւ և անոնց արիւնով լեցուց
 փոսը , ինքն ալ արիւնարբու դազանի պէս մէջը
 լուացուեցաւ : Այս միջոցին վեստ Սարգիս Սիւն-
 եաց իշխանը զօրանալով կուղէր ամենուն վրայ
 թաղաւորել :

Հ . Յոյներն Անին առնելու համար ինչ ըրին :

Պ . Միքայէլ կայսրը՝ վեստ Սարգսի թելադ-
 րութեամբ երեք անգամ զօրք զրկեց որ Անին
 առնեն . այս զօրքերը շատ աւերմունքներ ըրին ,
 բայց իրենցմէ ալ բազում մարդ կորսնցուցին .
 ուստի չորրորդ անգամ 100000 զօրքով եկան և
 Անին պաշարեցին Սարգսի օգնութեամբ . վահ-
 րամ Պահլաունին Անիին մէջ գտնուած 30000
 զօրքով յանկարծ դուրս յարձակելով սոսկալի
 շարդ մը տուաւ , մնացածներն ալ ցիրուցան ըրաւ .
 այս յաղթութենէն ետքը վահրամ և նախարար-
 ները միաբանելով Գագիկ Բ . ը թաղաւոր դրին
 իրենց վրայ :

Հ . Ո՞վ էր Գագիկ Բ .

Պ . Յովհաննէս Սմբատին Աշոտ եղբորը որդին
 էր , իմաստուն և չնաշխարհիկ կատարելութիւն .

ներով զարգարեալ . Գազիկ թագաւորելուն պէս՝ վեառ Սարգիսը բռնեց ու կապած՝ Անի բերաւ , բայց մէկ քանի նախարարաց աղաչանքն ազատեց : Այս միջոցին Սկիւթացիք վերստին Հայաստանի վրայ յարձակեցան . Գազիկ 16000 զօրքով անոնց դէմն ելաւ , յաղթեց և հալածեց զանոնք :

Հ . վեառ Սարգիս ուրիշ ինչ չարիք հասուց :

Պ . վեառ Սարգիս շարունակ Յոյները կը դըրդուէր որ Անին ուզեն . ուստի երբ Միքայէլ կայսրը մեռաւ՝ Մոնոմախոս իւր յաջորդը սկսաւ Անին պահանջել . և երբ Գազիկ յանձն չառաւ՝ Մոնոմախոս երկու անգամ պատերազմի ելաւ և յաղթուեցաւ : Այս միջոցին Հայաստանի մէջ կը ծագուէր Գրիգոր Մայրիտարոս մականուանեալն՝ որ ոչ միայն Հայոց մէջ՝ այլև Յունաց մէջ երեւելի համբաւ ստացաւ :

Հ . երբոր վեառ Սարգիս խորհուրդը յառաջ չգնաց ինչ բրաւ :

Պ . իրեն պէս քանի մը ազգատեաց նախարարներու հետ միանալով խորհուրդ տուաւ Մոնոմախոս կայսեր՝ որ բարեկամութիւն ձեւացնելով կ . Պոլիս կանչէ զԳազիկ , ու վերջէն իրենք Անին կը յանձնեն : Գազիկին իմանալով խորհուրդը՝ կայսեր հրաւէրը մերժեց , բայց նախարարները

սուտ երդում ընելով թէ իրենք Անին կը պաշտպանեն , յորդորեցին զինքը որ երթայ , Գազիկ ելաւ զնաց ահեղ երդումն առնելով՝ նախարարներէն ու կաթուղիկոսէն , բայց աւելի ճարը հասնելով քան թէ համոզեալ :

Հ . Գազիկ՝ կայսրէն ինչպէս ընդունուեցաւ :

Պ . Մոնոմախոս թէեւ սկիզբէն պատիւ և սէր ցըցուց , բայց վերջն սկսաւ Անին ուզել , Գազիկ յանձն չառաւ , բայց երբ Սարգիս և համախոհները Անին բանալիները կայսեր զրկեցին , այն ատեն Գազիկ յուսահատութենէն թագաւորութիւնը ձգեց 3 տարի իշխելէն ետքը . կայսրը՝ Գազիկին քանի մը քաղաքներ տուաւ , ու ինքը Հայաստանի տիրեց Գրիստոսի 1045 թուականին :

Հ . Գազիկ Բ . թագաւորութիւնը ձգելէն ետքը ինչ վիճակ ունեցաւ Հայաստան :

Պ . Ամեն տեսակ թշնամիք Հայաստանի վրայ վազելով մտքէ չանցած չարիք հասուցին Հայոց . որոնց մէջ նշանաւոր եղան Տուղրիկ , Ալփապլան և Մելիք Շահ . ասոնք , շատ բերդեր կործանեցին , շատ մարդ ջարդեցին : Լաստիվերացի ախնատես պատմագիրը՝ Սմբատայ բերդը ըսուած ամուր բերդին մէջ պատահածները , այսպէս կը նկարագրէ . « վիրաւորած .

ներէն ոմանք դեռ կէս մը կենդանի, ոմանց վիզը կէս մը կտրած, ձեռուրնին ոտուրնին գետինը կը զարնէին, ոմանց ալ փոքրիկ տղաքները գրկերնուն յափշտակուելով գետինը զարնուած, և ողջ մնացածներուն լալու ձայնը լեռները կը թնտացնէին ։

Հ. Այս ատեններս Հայոց մէջ երեւելի ո՞վ կար :

Պ. Այս թշուառութեանց մէջ թաթուլ երեւելի և քաջ իշխանը՝ քանի մը նախարարաց հետ միաբանելով թշնամեաց դէմն ելաւ և յողթուեցաւ . կուռն մէջ թաթուլ Տուղրիլի իշխաններէն մէկուն տղան վիրաւորելով ինքն ալ գերի բռնուեցաւ, և երբ Տուղրիլին դէմն ելաւ, Տուղրիլ ըսաւ որ եթէ տղան ապրի՝ քեզ ալ կ'ազատեմ. թաթուլ պատասխան տուաւ, թէ որ ես զարկի՛ Հապրիբ . մեռաւ տղան և զինքն ալ սպաննեցին : Տուղրիլին յաջորդեց Ալիասլան :

Հ. Ալիասլան ի՞նչ չարիք հասուց Հայոց :

Պ. Երկար ատեն Անին պաշարելէն ետքն առաւ, սոսկալի շարդեր ընելով՝ քաղաքն ալ գրեթէ կործանեց . յետոյ Գազիկ՝ Կարսի թագաւորին հրաման զրկեց որ գայ իրեն հնա-

զանգի, Գազիկ ալ սուգի հագուստ հագած Ալիասլանին դէմն ելաւ, ըսելով որ Տուղրիլի մահուանը համար սուգի մտեր եմ. Ալիասլան վրան խղճալով սիրով պագտուեցաւ և խաղաղութեամբ ետ դարձուց . բայց Գազիկ այնուհետեւ Կարս մնալն ապահով չսեպելով՝ իշխաններն հետն առած Յունաց երկիրը գնաց, կայսրը Մամնդաւ բերդը տուաւ՝ որով Կարսի թագաւորութիւնն ալ վերջացաւ՝ Մուշեղ, Աբաս և Գազիկ՝ երեք թագաւոր ունենալէն յետոյ :

Հ. Գազիկ Յունաց երկրին մէջ ի՞նչ կ'ընէր :

Պ. Յունաց երկրին մէջ թէպէտև Հայ թագաւորի անուամբ կը շրջէր Գազիկ, բայց Յոյները իրենց սովորութեանը համեմատ չարաչար կը նախատէին զՀայս, ինչպէս Կեսարիոյ Մետրապօլիտը՝ շանը անունը Արմէն դրած էր, իմացաւ զայն Գազիկ և օր մ՝ ելաւ Մետրապօլիտին այցելութեան գնաց, կերակուրի ատեն խնդրեց Գազիկ՝ շունը՝ կանչել, Մետրապօլիտը նեղը մնալով՝ Արմէն Արմէն ըսելով շունը կանչեց . Գազիկ աչք ըրաւ ծառաներուն որ շունն ու Մետրապօլիտը պարկի մը մէջ դրին և այնքան ձեծեցին, որ շունն զՄետրապօլիտը խածնելով երկուքն ալ սատու կեցան :

Հ. Յոյնք այս վրէժն ինչպէս լուծեցին :

Պ. Գաղիկ օր մը կիզիստուա բերդն երթալով պարտէզին մէջ մինակ կը պտըտէր, բերդին պահապաններն՝ որ Յոյն էին՝ դարան մանելով բռնեցին և չարաչար տանջանքներով սպաննէին ետքը՝ մարմինն ալ բերդէն վար կախեցին, թէեւ Հայերը բազմութեամբ եկան բերդը պաշարեցին, բայց բան մը չկրնալով ընել՝ ետ դարձան. յետոյ թշուառ Գաղիկոյ ոսկորները Բանիկ անուամբ Հայ մը գիշերանց գերեզմանէն հանելով Պեղու քաղաքը Գաղիկին շինել տուած վանքին մէջ թաղեց, Քրիստոսի 1070 թուականին :

Հ. Այս միջոցին Հայաստանի ո՞վ կիշխէր :

Պ. Ալփասլանին որդին Մելիք Շահ : Պարսից թագաւորը ըլլալով Հայաստան արշաւեց և Յոյները բոլորովին վաճառելով ինքը տիրեց Հայաստանի : Այսպէս վերջացաւ կարու և Արծրունեաց թագաւորութիւննէն ալ Բագրատունեաց թագաւորութեան վերնալուծը, որով թշնամիք արձակ համարձակ անտէր տան մը վրան ուղաճնուն պէս յարձակելով՝ մտքէ չանցած չարութիւններ գործեցին :



ՄԱՍՆ ԵՕԹԵՐՈՐԳ

ՌՈՒՐԻՆԵԱՆՔ

ԳԼՈՒԽ Ա.

ՌՈՒՐԻՆԵԱՆՅ ԻՇԽԱՆՈՒԹԵԱՆ ՍԿՍԵԼԷՆ
ՄԻՆՁԵԻ ԼԵԻՈՆ Բ. Ի ԹԱԳԱԻՈՐ ՕԾՈՒԻԼԸ

1080 — 1198

Հ. Ռուբինեանց իշխանութիւնը որո՞ւ ձեռքով սկսաւ :

Պ. Բագրատունեաց թագաւորութեան կործանումէն 34 տարի ետքը՝ Քրիստոսի 1080 թուականին Ռուբէն անունով իշխան մը՝ որ Բագրատունեաց վերջի թշուառ թագաւոր Գաղիկին ազգականն և կիզիստրայի մէջ Գաղիկին բռնուած ժամանակն անոր հետ դանուղներէն մէկն էր, կիլիկիոյ կողմերն երթալով հոն բնակող քաջարի Հայոց սիրտը վաստկեցաւ, քանի մը հարիւր կըտրիճ գլուխը ժողովեց, և օգնական դտաւ նաեւ դող վասիլ կոչուած քաջ և հայրենասէր իշխանը :

Հ. Ռուբէն ինչպէս հաստատեց իր իշխանութիւնը, և իրեն ո՞վ յաջորդեց :

Պ. Ռուբէն մէկ քանի քաղաքներու տիրեց, Յունաց դէմ ալ քանի մը քաջութիւններ ընելէն ետքը մեռաւ 16 տարի իշխելով : իրեն յաջորդեց իր որդին Կոստանդին Ա. որ իր քաջութիւններովն ընդարձակեց տէրութիւնը. և երբ որ Եւրոպայի ազգերը Ս. Երուսաղէմն Եգիպտացոց ձեռքէն ազատելու կ'երթային, օգնեց անոնց, և իշխան Հայոց կոչուեցաւ. Կոստանդին Ա. հինգ տարի իշխելէն վերջը մեռաւ :

Հ. Ռ՞վ յաջորդեց Կոստանդինին :

Պ. Թորոս Ա. ասի նախ Յոյներէն Անարզարա քաղաքն առաւ, Մկիթացիները և Պարսիկները՝ որ Հայաստանի վրայ կուգային, զարկաւ փախուց, կիզկատեալ բերդին ալ տիրեց, և Մանտալեան երեք իշխաններն, որ Գաղիկը մեռցնողներն էին, բռնեց սպաննեց. և ինքը 23 տարի իշխելէն ետքը մեռաւ, իրեն յաջորդեց իր եղբայրը, Լեւոն Ա. որ քանի մ' անառիկ բերդերու տիրելուն համար ամենուն՝ ինչուան նաեւ Յունաց սիրտը վախ ձգեց. բայց Անտիոքի Պէտէվի իշխանէն բռնուելով բանտարկուեցաւ, ուստի քանի մը քաղաք և մէկ որդին պատանդ տալով ազատելէն յետոյ՝ կիլիկիա

եկաւ, մէկէն զորք ժողվեց, և տուած քաղաքներն ետ առնելէն զատ այնչափ նեղը խօթեց Պէտէվին՝ որ ինքը Լեւոնին պատանդներ տալով հաղիւ ազատեցաւ :

Հ. Յունաց կայսրն ինչո՞ւ համար Լեւոնին դէմ պատերազմի ելաւ :

Պ. Լեւոնի այս աստիճան զօրանալը՝ Յունաց Պէրբէռութէն կայսեր ականջը հասնելով՝ մեծ պատրաստութեամբ Լեւոնի վրայ պատերազմի ելաւ. Լեւոն վախնալով կայսեր բազում զօրացը դէմն ելնելու՝ փախաւ ընտանիքովը, ուստի կայսրն ալ զկիլիկեան անտէր դռներով շատ քաղաքներու տիրեց, Անարզարան առաւ, Լեւոնն ալ կ. Պոլիս գերի տարաւ. թէպէտ ինքն ալ իր զօրաց մեծ մասը կորսնցուց :

Հ. Կայսրը Լեւոնին հետ ինչպէս վարուեցաւ :

Պ. Կայսրն զանի տարի մը բանտը պահելէն յետոյ, վրան գթալով բանտէն հանեց և իր պալատը կը պահէր, բայց քանի մը տարիէն վերստին բանտը դնել տուաւ, անոր Թորոս որդւոյն հետ. հոն սրտին ցաւէն մեռաւ Լեւոն 14 տարի իշխելէն և 4 տարի բանտը կենալէն ետքը. և երբ կիւ Մանուէլ կայսր եղաւ, Թորոս բանտէն ելած էր, փախաւ և կիլիկիա գալով՝

յայտնեց իր ո՞վ ըլլալը , իշխաններն ալ միաբանելով՝ իշխան գրին իրենց՝ որ մէկէն սկսաւ քաջութիւններ ընել :

Հ . Յունաց կայսրը երբ թորոսին վախճիլը լսեց ի՞նչ ըրաւ :

Պ . Անգրոնիկոս զօրավարը զրկեց շատ զօրքով՝ որ երթայ թորոսը շղթայի զարկած Պօլիս բերէ . բայց թորոս Բ . միշտ արթուն գտնուելով՝ այն պիտի քաջութեամբ սպտերազմեցաւ՝ որ Յունաց զօրքերուն մեծ շարդ տալէն յետոյ՝ շատ իշխաններ ալ դերի բռնեց , զորոնք կայսրը գնել ուղեւով ՚ի պատիւ իշխանաց շատ ստակ տուաւ , և թորոս բոլոր առած ոսկին դեփարաներուն առջեւ իր զօրացը բաժնեց , և երբ անոնք զարմացան , ըսաւ թորոս . կամաւ ըրի՛ որպէս զի նորէն բռնեն ձեր իշխանները . դարձեալ եկաւ Անգրոնիկոս՝ և արիւնահեղ պատերազմով չարաչար յաղթուեցաւ , կայսրը՝ կոստանդին կալամարոս զօրապետն առաքեց , ան ալ յաղթուեցաւ , ուստի թորոս բոլորովին վաճառեց Յոյները կիլիկիայէն :

Հ . Ուրիշ որո՞ւ հետ պատերազմ ըրաւ թորոս :

Պ . Իկոնիոյ Գըլըճ Ապան Սուլթանը կայսրէն զրդուած՝ պատերազմի ելաւ , անոր ալ յաղ-

թեց թորոս . բայց երբ Մանուէլ կայսրը վերստին մեծ պատրաստութեամբ կիլիկիոյ վրայ կուգար՝ հաշտութիւն խօսեցաւ և քանի մը տարի ալ ապրելով , մեռաւ 24 տարի իշխելէն ետքը :


Հ . Թորոս Բ . ին ո՞վ յաջորդեց :

Պ . Թորոսի որդին անչափահաս ըլլալուն՝ թովմաս Պայլ անուամբ Լատինացին , որ թորոսին աներն էր , խնամակալ դրուեցաւ . բայց Մլէհ՝ թորոսին եղբայրը՝ Բերիոյ Ամիրայէն օգնութիւն առած , եկաւ և շատ խռովութիւն հանելէն յետոյ ինքն սկսաւ իշխել . Մլէհ սահմանակից թըշնամի աղգաց հետ պատերազմելով յաղթեց . Յունաց դէմ ալ քանի մ'անգամ յաղթութիւններ ըրաւ , բայց իր ժողովրդեան հետ անգթաբար վարուելուն՝ ինքն ալ սպաննուեցաւ իր զօրքերէն 5 տարի իշխելէն ետքը :

Հ . Մլէհի մեռնելէն ետքը՝ Հայոց իշխան ո՞վ եղաւ :

Պ . Մլէհի յաջորդեց Ռուբէն Բ , եղբորորդին՝ սա կիլիկիոյ վրայ մեծ խնամք և սէր ունեցաւ , բայց Լամբրոնի Հեթում իշխանին հետ թշնամանալուն՝ Անտիօքի Պէմունտ կոմէն նենգութեամբ բռնուեցաւ , սակայն իր Լեւոն եղբորը կտրիճութեամբը ազատելով՝ վերստին դարձաւ կիլի-

կիսա : Ասոր օրով անուանի էր Ներսէս Համբ-
րոնացի , Տարսնի Արք եպիսկոպոսը : Ռուբէն
11 տարի իշխելէն վերջը իշխանութիւնը Լեւոն
եղբօրը յանձնելով վանք մը քաշուեցաւ :



Գ. ԼՈՒԻՍ Բ .

ԼԵՒՈՆ Բ . ՌՈՒԲԵՆԵԱՆ Ա . ԹԱԳԱՒՈՐԷՆ
ՄԻՆՉԵՒ ՌՈՒԲԵՆԵԱՆՅ ԹԱԳԱՒՈՐՈՒԹԵԱՆ

ԿՈՐԾՄԱՆՈՒՄԸ :

1189 — 1190

Հ . Լեւոն Բ . ինչպէս կառավարեց իր ազգը :
Պ . Իւր խնամութեամբը և այլազգի իշխանաց
դէմ տարած յաղթութիւններովը տէրութիւնն
ամենայն մասամբ ծաղկեցուց ու ընդարձակեց ,
Երուսաղէմի վրայ դացող խաչակիր զօրաց օգ-
նելով անունը բոլոր Եւրոպա տարածեցաւ , և
վերջապէս Գերմանացուց կայսրէն՝ թագաւո-
րական թագ և Պապէն Դրօշ մ'ընդունելով՝ Սոյ
մէջ թագաւոր օծուեցաւ Գրիգոր Տղայ կոչուած

Կաթուղիկոսէն . Քրիստոսի 1198 թուականին
թագաւոր ըլլալէն վերջն ալ քանի մը մեծ յաղ-
թութիւններ ըրաւ իկոնիոյ և Բերիոյ Ամիրա-
ներուն դէմ , և 3½ տարի թագաւորելէն ետքը
մեռաւ :

Հ . Լեւոն Բ . ի ո՞վ յաջորդեց :

Պ . Լեւոնի յաջորդեց իր Զապել անուամբ
աղջիկը՝ զոր ֆիլիպոս անուն Լատինացիի մը
հետ կարգեցին . այս ֆիլիպոսը՝ միայն մօր կող-
մանէ Հայ ըլլալուն երկու տարիէն՝ Սոյ հա-
րստութիւններն սկսաւ Մնտիոք կրել՝ Հայ իշ-
խանք բարկանալով բանտ դրին զինքը՝ ուր
մեռաւ 2 տարի իշխելէն ետքը . այս միջոցին կը
ծաղկէին Կիլիկիոյ մէջ Մխիթար Գօշ առակախօսը
և Տարսնի Խաչատուր երաժիշտը :

Հ . Ֆիլիպոսին ո՞վ յաջորդեց :

Պ . Հեթում Ա . Զապելի հետ կարգուելով
թագաւոր եղաւ . ասի Հայաստանը զարգարեց
և տեսնելով որ թաթարք շատ չարիք կը հաս-
ցնեն՝ թաթարստան դնաց Մանգոյ խանին , սի-
րով ընդունուեցաւ և բարեկամութեան դաշինք
դնելով Կիլիկիա դարձաւ : Բայց իկոնիոյ Սուլ-
թանը վրան նախանձելով պատերազմի ելաւ
Հեթումի դէմ և յաղթուեցաւ . դարձեալ Կոս-

մանդին Լամբրոնի իշխանը միաբանելով իկոնիոյ Սուլթանին՝ պատերազմի ելան և յաղթուեցան և Նոյն միջոցին Եգիպտոսի Փրնտուխտար Սուլթանը զօրանալով՝ պահանջեց որ Հեթում Եգիպտացուցմէ առած քաղաքները ետ դարձնէ :

Հ. Հեթում Եգիպտացուոց քաղաքները ետ առաւ :

Պ. Հեթում յանձն չառաւ, ու իր երկու որդիքը Հայոց բանակին հրամանատար կարգելով պատերազմի զրկեց՝ բայց յաղթուեցան, որոնցմէ թորոս սպաննուեցաւ և Լեւոն գերի բռնուեցաւ. Հեթում շատ ստակով գնեց զԼեւոն, և թագաւորութիւնը անոր յանձնելով ինքը Դրազարկ ըսուած վանքը քաշուեցաւ, ուր մեռաւ բարի մահուամբ 45 տարի թագաւորելէն ետքը :

Հ. Լեւոն Գ. ինչպէս կառավարեց ազգը :

Պ. Բարեպաշտ և միանգամայն ուսումնասէր ըլլալուն՝ մէկէն սկսաւ դպրոցներ բանալ ու գիտութիւնը ծաղկեցնել, բայց քիչ ժամանակէն՝ ներքին երկպառակութիւնը այս բարիքներուն ամենն ալ ջնջեց, վասն զի իշխաններէն ոմանք, հետը թշնամանալով՝ փնտուխտարը Լեւոնին դէմ գրդուեցին. ան ալ անթիւ զօրքով Կիլիկիա եկաւ. Լեւոն անօգնական մնալով

փախաւ պահուեցաւ, և թշնամիք ամեն չարիք հասուցին. Լեւոն՝ Կիլիկիոյ այս աստիճան աւերմունքը տեսնելով չկրցաւ հանդուրժել, քիչ մը զօրք ժողովեց և իր ծերունի Սմբատ սպարաբապետին հետ միացած՝ յաղթեց Եգիպտացուոց և վռնտուց զանոնք՝ ինչպէս նաեւ իկոնիոյ Սուլթանը. ինքն ալ 19 տարի թագաւորելէն ետքը փախճանեցաւ՝ յաջորդ թողլով իրեն զՀեթում Բ. :

Հ. Հեթում Բ. ինչպէս կառավարեց ազգը :

Պ. Կրօնասէր ըլլալուն վանք մը քաշուեցաւ, և իւր տեղը թորոս Գ. ը թագաւորեցուց. թորոս ալ 3 տարիէն վանք մը քաշուելով՝ ստիպեց որ դարձեալ Հեթում իր եղբայրը թագաւորէ, բայց Սմբատ իր միւս եղբայրը յափշտակեց թագաւորութիւնը՝ մինչդեռ թորոս և Հեթում Պօլիս Մարիամ կայսրուհիէն հրաւիրուած էին, որ իրենց քոյրն էր, և երբ վերադարձան՝ Սրմբատ բռնելով զանոնք՝ թորոսն սպաննեց և Հեթումին աչքերը կուրցուց. սակայն կոստանդին միւս եղբայրնին սաստիկ բարկանալով Սրմբատայ անգթութեանը վրայ՝ պատերազմի ելաւ, և յաղթելով Սմբատին՝ բռնեց բանտ դրաւ և ինքն անոր տեղ թագաւորեց. Հեթումն ալ

բանտէն հանելով քովը կը պահէր . բայց երբ հրաշքով Հեթմայ աչքերը բացուեցան՝ ժողովուրդէն ուզեց որ նորէն Հեթում թագաւորէ . կոստանդին ասոր վրայ խռովութիւն հանել կ'ուղէր , ուստի Հեթում զինքն ու Սմբատը կ . Պօլիս գրկեց :

Հ . Հեթում Բ . ո՞րչափ ատեն թագաւորեց և իրեն ո՞վ յաջորդեց :

Պ . Քանի մ'անդամ Եղիպտացւոց ու Լիկայոնացւոց յաղթելէն յետոյ՝ թագաւորութիւնը թօրոս եղբօրը՝ Լեւոն որդւոյն յանձնելով՝ վանք մը քաշուեցաւ . բայց Լեւոն Դ . երկու տարի թագաւորելէն վերջը քանի մ' իշխանաց վատութեամբ թաթարաց Պիլղար զօրավարէն նենգութեամբ բռնուեցաւ և իր իշխաններովը հանդերձ սպաննուեցաւ :

Հ . Լեւոն Դ . ին ո՞վ յաջորդեց :

Պ . Լեւոն Դ . ին յաջորդեց իր եղբայրն Օշին , որ մէկէն զօրք գումարելով յաղթեց Պիլղարին և Եղիպտոսի Ամիրային՝ որ բազմութեամբ կիլիկիոյ վրայ եկած էին , Օշին 12 տարի մեծաւ քաջութեամբ և խելքով ազգը կառավարելէն ետեւ մեռաւ , իրեն յաջորդ թողլով իր որդին Լեւոն Ե . :

Հ . Լեւոն Ե . ի ատենը կիլիկիա ի՞նչ վիճակի մէջ էր :

Պ . Լեւոն Ե . ի ատենը Եղիպտացիք , Թուրքմէնք , և թաթարք առ հասարակ կիլիկիոյ վրայ սկսան յարձակիլ , որուն պատճառը՝ Լեւոնին Լատին իշխանաց հետ ըրած թղթակցութիւնն էր՝ որնոր Հայոց թագաւորութեանը կործանման պատճառ եղաւ : Լեւոն Ե . 2½ տարի խեղճութեամբ թագաւորելէն ետքը մեռաւ և իրեն յաջորդեց Յովհաննէս Պայլ՝ Լատին իշխանը՝ որ Հայաստեցութեանը համար մէկ տարիէն սպաննուեցաւ :

Հ . Յովհաննէսին ո՞վ յաջորդեց :

Պ . Գուխոն իր եղբայրը՝ զոր 2 տարիէն ըսպաննեցին Հայոց Ազգային եկեղեցւոյն մէջ Լատին ծես խօթել ուզելուն համար , և իրեն յաջորդեց կոստանդին Դ . որ թէպէտ ազգաւ Լատին էր , բայց խելքով 18 տարի ազգը կառավարեց , և Եղիպտացւոց դէմ ալ փառաւոր յաղթութիւն մ'ընելով մեռաւ . քիչ մ'ատեն կիլիկիա անտէր մնալէն յետոյ՝ իշխանք միաբանելով Լեւոն Զ . Լուսինեանը թագաւոր դրին . որուն միայն մայրը Հայ էր՝ այս մարդը իւր իմաստութեամբը լաւ պիտի կառավարէր :

աղգը, բայց աւա՛ղ որ ժամանակը չ'օգնեց
 թշնամի ազգերը զօրացած միշտ կիլիկիոյ վրայ
 կ'յարձակէին, և լեւոն օրինաւոր օգնութիւն
 չկրնալով դտնել Եւրոպայէն, կառավարութիւնը
 օրըստօրէ վատթարացաւ թէև մեծամեծ խոս-
 տումներ շատ կըլլար միշտ Հռովմայ Պատէն և
 Եւրոպայի թագաւորներէն :

Հ. կիլիկիոյ թագաւորութիւնն ի՛նչպէս վեր-
 շացաւ :

Պ. Եղիպտոսի Սուլթանը քանի մ'անգամ կի-
 լիկիոյ վրայ եկաւ, յաղթեց լեւոնին, և շատ
 աւերմունքներ ընելէն ետքը՝ ետ դարձաւ : Եր-
 կու տարիէն դարձեալ անհամար զօրքով եկաւ
 և բոլոր կիլիկիան անապատ դարձուց, ու լե-
 ւոնն ալ բռնեց, գերի տարաւ Եղիպտոս, 11
 տարի թագաւորութիւն ընելէն ետքը : Այսպէս
 վերջացաւ կիլիկիոյ թագաւորութիւնը Գրիստոսի
 1375 թուականին : Ռուբինեանց իշխանութիւնը
 թէ և ընդարձակութեամբ և զօրութեամբ խիստ
 պզտիկ էր, բայց քաջութեան և խոհեմութեան
 մասին շատ մեծ՝ մանաւանդ այնպիսի դարերու
 մէջ՝ որ ամեն կողմէն թշնամիք զօրացած ու
 Հայոց արտաքին ուժը տկարացուցած էին :

Հ. լեւոն Զ. ի՛նչ եղաւ Եղիպտոս :

Պ. լեւոն 7 տարի բանաը կենայէն ետքը՝
 ազատեցաւ, հրաման առնելով նաև որ՝ ուր որ
 ուզէ երթայ. ուստի լեւոն նախ Երուսաղէմ
 գնաց և իր ընտանիքը հոն թողլով՝ անցաւ Եւ-
 րոպա՝ ուր ամեն կողմ թագաւորական պատ-
 ուով ընդունուելով՝ փարիզ եկաւ և հոն մեռաւ
 նոյեմբեր 19 ը. Գրիստոսի 1393 թուականին 60
 ասրուան, և թաղուեցաւ Կեղեստինեանց վան-
 քին մէջ. 11 տարի թագաւորէլէն 7 տարի Եղիպ-
 տոս բանաը մնայէն և 12 տարի Եւրոպա պան-
 դըլստանայէն վերջը :

Վ Ե Ր Զ

ՄԱՍՆ ՈՒԹԵՐՈՐԴ

ԲՈՒՆԱԿԱՒ

ԳԼՈՒԽ Ա.

ՌՈՒԲՐԵՆԵԱՆՅ ԹԱԳԱՒՈՐՈՒԹԵԱՆ ԿՈՐԾԱՆՈՒՄԷՆ
ՄԻՆՁԵՒ ՅՈՎԱԿԻՄ Ա. ՊԱՏՐԻԿ Կ. ՊՕԼՍՈՅ

1393—1461

Հ. Ռուբինեանց թագաւորութեան կործանու
մէն վերջը ի՞նչ վիճակ ունեցաւ Հայաստան :

Պ. Ռուբինեանց թագաւորութեան կործանու
մէն ետքը, բոլոր Հայաստան Պատերազմի դաշտ
մը դարձած էր, վասնզի մէկ կողմէն Պարսիկք՝
որ Հայաստանի մեծ մասը իրենց իշխանութեան
տակ էր, Արաբացւոց արշաւանքէն ձնայած
զանազան ամիրաները վանել կուզէին, որոնք ան-
կախ և ինքնազուլի կ'իշխէին, միւս կողմէն
Էջրէֆ Շապան Եգիպտոսի Սուլթանը, զկիլիկիան
կայրէր, կաւրէր, կապականէր և հաւ արիւն
կղակ թշնամի մը Լէնկթիմուր՝ էօզլպէք Թաթա-

րաց թագաւորը անհամար զօրքով շատ տեղեր
նուաճելէն ետքը Հայաստան եկաւ :

Հ. Լէնկթիմուր ի՞նչպէս վարուեցաւ Հայոց հետ :

Պ. Հասած տեղերը սոսկալի անգթութիւն
թիւններ կրնէր, կարս քաղաքն առնելով շատ
մարդ ջարդեց, յետոյ անցաւ փոքր Ասիա,
աւաւ Սեբաստիա քաղաքը և որովհետեւ երդ-
ուած էր քաղաքացւոց սրով մարդ չ'սպաննել,
նախ քաղաքին զօրքերը ողջ ողջ թաղել տուաւ,
յետոյ տղայքն և ծերերը ձեռուընին ոտուընին
կապած դաշտի մը մէջ ձգելով կատղած ձիերու
կոխկռտեց. իսկ քաղքին մէջի բորոտներն ու
տկար մարդիկը խեղդել տուաւ, ըսելով՝ ես
ողջերուն չ'ինայեցի, դուք ի՞նչ բանի հարկաւոր
էք. ասոնք ընելէն՝ վերջը անթիւ բաղմութիւն
մ'ալ խորասան գերի տարաւ, և Հայաստանը
երկու իշխանի յանձնեց, որոնք զօրանալով իր
թագաւորութիւնը կործանեցին :

Հ. Այս միջոցին ի՞նչ գլխաւոր գիտելիք կայ
Հայոց վրայ :

Պ. Լէնկթիմուրին Հայաստան արշաւած ատեն՝
Սիւնեաց կողմերը կը զօրանար Պէլզինէ անուամբ
կարիճ Հայ իշխան մը, որ վաթսուն հազարի
չափ Հայ ընտանիք կը ինամէր և օր աւուր իր

քաջութեամբն ու ազգասիրութեամբը մեծ համբաւ կը տարածէր Հայաստանի մէջ . բայց վրայ թագաւորը նախանձելով՝ Ամնադին անուամբ վատ Հայու մը ձեռքով թունաւորել և սպաննել տուաւ զանի , որ Հայերը մեծ սուգի մէջ ձգեց . թէպէտև Ամնադին ալ իր արժանաւոր պատիժն առաւ Հայերէն՝ որ զինքը չարաչար սպաննեցին : Այս միջոցին Սուլթան Մէհմէտ Բ . Յաթիհ կոչեցեալ՝ Օսմանցոց թագաւորը՝ Կ . Պօլիսը Յունաց ձեռքէն առաւ , և վաճառակաւնութիւնն ու արհեստները ծաղկեցնելու համար շատ երեւելի Հայ արհեստագէտներ բերել տուաւ ու Պօլսոյ զանազան կողմերը բնակեցուց , և իրենց գլուխ կարգեց Պատրիկ մը ֆրիստոսի 1461 թուականին , իշխանութիւն տալով իշխել փոքր Հայոց և Յունաստանի մէջ դամբնաձ Հայերուն :

Վ Ե Բ Զ

ՄԱՍՆ ԻՆՆԵՐՈՐԴ

ՊՍՏՐԻԿԲ

ԳՂՈՒԽ Ա .

ՅՈՎԱԿԻՄ Ա . ՊՍՏՐԻԿԵՆ ՄԻՆՉԵԻ
ԱՒԵՏԻՔ ՊՍՏՐԻԱՐԲ .

1461—1701

Հ . ՈՎ ԵՂԱԸ Ա . Պատրիկ :

Պ . Յաթիհ՝ բոլոր Յունաստանի տիրելէն յետոյ , կողքէր նաև տէր ըլլալ Հայաստանի , բայց այս մեծ գործը առանց արեան և դիւրաւ գլուխ հանելն անկարելի էր , ուստի՝ իրեն նախկին բարեկամ Պրուսայու առաջնորդ՝ Յովակիմ եպիսկոպոսին դիմելով , յայտնեց իւր խորհուրդը , խօստացաւ նաև զինւորական պահապանութենէն ու տրոց հաւաքումէն զատ իրաւունքներն Հայ ազգէն Պատրիկ անուամբ մէկուն յանձնել և աթոռն ալ կ . Պօլիս հաստատել . երբ այս առաջարկութիւնն իմացաւ Յովակիմ եպիսկոպոս

Պարսխութենէն անմիջապէս էջմիածնայ և Սոյ կաթողիկոսներուն, գաւառաց Եպիսկոպոսներուն, իշխաններուն գրեց և անոնց ձեռօք, յորդորեց զազգը և հպատակեցուց Օսմանեան քաղցր լուծին. ուստի Ֆաթիհ ալ Յովակիմ Եպիսկոպոսը Պատրիկ գրաւ Հայոց վրայ և ինչ իշխանութիւն ու արտօրնութիւն որ տուերէր կրօնապէս Յունաց պատրիարքին նոյնը յար և նմանը տուաւ Հայոց Պատրիկին Հայ ազգին դոյութեան ու Հայ Եկեղեցւոյ անկախութեան համար:

Հ. Այս միջոցին ո՞վ էր էջմիածնայ կաթողիկոս:

Պ. Էջմիածնայ կաթողիկոսն էր Գրիգոր Ժ. Մակուեցի: Ասոր օրով Սարգիս անուն վարդապետ մը գողնալով Ս. Լուսաւորչայ ալը՝ Դավրէժ տարաւ, և շատ ալ ընծաներ առած՝ ճիհան Շահին գնաց կաթողիկոսութիւնն առնելու համար. բայց Աղթամարայ Չաքարիս կաթողիկոսը՝ ճիհան Շահ իշխանին մօրն աղաչելով՝ էջմիածնայ կաթողիկոսութիւնն ինքն առաւ: Յովակիմ Պատրիարք 17 տարի ազգը խաղաղութեամբ կառավարելէն ետքը մեռաւ:

Հ. Յովակիմ Պատրիարքին որո՞նք յաջորդեցին:

Պ. Հետզհետէ նստեցան Նիկողայոս Ա. 11 տարի. Կարապետ Ա. 20 տարի. Մարտիրոս Ա. 20 տարի. Գրիգոր Ա. 11 տարի. Աստուածատուր Ա. 13 տարի: Ասոր օրով էջմիածնայ Ստեփան կաթողիկոս, Սեբաստացի Միքայէլ Եպիսկոպոսը իրեն յաջորդ կարգելով շատ ընծաներ առած է. Պօլիս Սուլթան Սիւլէյմանին եկաւ, որ ֆանուշի կը կոչուէր, աղաչելու համար որ էջմիածնայ վրայ եղած բռնութիւններն և ծանր տուրքը թեթեւցնէ. նոյնպէս Պարսից Շահ-Թահմազ թագաւորին շատ ընծաներ զրկեց՝ աղաչելով որ ինայէ Հայոց, և արգիլէ ասպատակները ներդրելն տալէ վանօրէից և եկեղեցեաց. թէ Սուլթանը և թէ Պարսից Շահը զիջանելով անոր աղաչանացը՝ սկսան հոգ տանիլ ֆրիստոնէից վրայ: Ստեփանոս կաթողիկոս քիչ մ'ատեն է. Պօլիս կենալով, անցաւ Գերմանիա կարողոս Ե. Թագաւորին հետ տեսնուեցաւ. յետոյ գնաց Լեհաստան՝ ուր Հայերէն մեծ ընդունելութիւն գտաւ և շատ ստիպեցին որ հոն մնայ. բայց քիչ մ'ատեն հոն կենալէն վերջը Ռուսաստան գնաց, և բոլոր գաղթեալ Հայերը մխիթարելէն ետքը գարձաւ յէջմիածին:

Հ. Աստուածատուր Պատրիարքին ո՞վ յաշորդեց :

Պ. Ստեփան Ա. 11 տարի : Ասոր ալ յաշորդեց Տիրատուր՝ զոր 2 տարիէն գահէն վար առին՝ ժողովուրդը կեղեքելուն համար : Ասի գնաց առանձինն՝ Սոյ կաթողիկոս ձեռնադրուեցաւ միչդեռ օրինաւոր կաթողիկոս սւնէր աթոռը . ասոր պատճառաւ երկպառակութիւն մտնելով Հայոց մէջ՝ զիրար նախատել սկսան . Տիրատուրէն վերջը Պատրիարք եղաւ Յակոբ Ա : Ասոր օրով կաթողիկոսին ազաւանքովը Շահ-Թահմազ Հայաստանի , գրեթէ դեռ նոր շնորհեր էր զխաղաղութիւն , ասպատակները դադարեցնելով , ծառաները զինքը խեղդեցին , և իրեն յաշորդեց Շահ-Իսմայիլ իր որդին : Սա այնչափ անգութ էր՝ որ չէ թէ Հայոց՝ այլ Պարսկաց մեծամեծներն ամենքն ալ թրէ անցուց : Նոյն միջոցին Սուլթան Մուրատ Պարսկաստանի շիրթութիւնն իմանալով ահագին բանակ մը զրկեց Հոյաստան՝ Լայաբալայի հրամանատարութեամբը , որ երեւանայ վրայ գալով՝ Նախիջևան , Զալաբը , Դավրէժ քաղաքներն առաւ , և 60000 ի չափ Հայ դերի առնելով՝ Յունաստան տարաւ , Յակոբ Պատ-

րիարք 11 տարի ազգը կառավարելէն ետքը մեռաւ :

Հ. Յակոբ Պատրիարքին որո՞նք յաշորդեցին :

Պ. Յովհաննես Ա. 8 տարի . Թովմաս Ա. 10 տարի . Սարգիս Ա. 3 տարի . Յովհաննէս Բ. 1 տարի և Ազարիա Ա. որ կաթողիկոս տանն Սոյ էր , 1 տարի : Ասոր ալ յաշորդեց Սարգիս Բ. որ 3 տարի պատրիարքութիւն ընելէն յետոյ՝ Սոյ ինքննտիր կաթողիկոս՝ Տիրատուր Պօլիս գալով , կաշառօք պատրիարքական գահն ելաւ դարձեալ : Ասոր օրով էջմիածին պարտական իյնալով Մելքիսեդ Ա. էջմիածնայ կաթողիկոսը Կ . Պօլիս եկաւ հանգանակութեան համար : Պօլսեցիք շատ սիրով ընդունեցին զինքը և կողէին Պատրիարք դնել . կաթողիկոսը շատ դէմ կենալէն ետքը՝ զիջանելով ժողովրդեան թախանձանաց՝ Տիրատուրը վար առնելով , որ 3 տարիէ ՚ի վեր պատրիարքութիւն կ'ընէր , ինքը Պատրիարք եղաւ : Այս միջոցին սոսկալի սով մը տիրեց Հայաստանի մէջ , և յետոյ սարսափելի մահտարածամ՝ ալ հասնելով շատ գիւղեր և քաղաքներ անմարդաբնակ եղան :

Հ. Մեղքիսեդ կաթուղիկոս արչափ ատեն
Պատրիարքութիւն ըրաւ :

Պ. Հազիւ տարի մը կարող եղաւ շարունա-
կել իւր պաշտօնը և հրաժարեցաւ : Երեն յա-
ջորդեց Յովհաննէս Գ. խուլ : Մէկ տարիէն
Գրիգոր Բ. կեսարացի եպիսկոպոսը պատրիար-
քութիւնն առնելով սկսաւ ինքը կառավարել
ազգը : Սա բարի և ազգասէր անձ մ'ըլլալուն՝
ժողովրդեան մեծ հոգ կը տանէր : Ասոր օրով
Շահ-Աբաս Հայաստանը Օսմանցոց ձեռքէն
առաւ և ինքը տիրեց բոլորովին : Էջմիածնայ
կաթուղիկոսն ալ կանչելով մեծ գումար մը պա-
հանջեց անկէ , բայց նա չկրնալով վճարել՝ բանտ
դրուեցաւ , և երկար ատեն հոն մնալէն վերջը՝
Պարսկաստանի Հայք իրենց մէջ հանգանակու-
թիւն ընելով պարտքը տուին և կաթուղիկոսը
ազատեցին :

Հ. Շահ-Աբաս ուրիշ ինչ անդթութիւններ
ըրաւ :

Պ. Հայաստանի մէջ Օսմանեան պահապան զօ-
բաց Շահ-Աբասէն յաղթուելուն լուրը է . Պօլիս
հասնելուն պէս՝ Սուլթան Ահմէտ՝ ճղալէզատէ
Սինան փաշան անհամար զօրքով Պարսից դէմ՝
դրկեց . Շահ-Աբաս տեսնելով որ չպիտի կարե-

նայ յաղթել Օսմանեանց , հրաման ըրաւ որ
բոլոր Հայ ընտանիքները ժողովն Արարատայ
դաշտին մէջ , և անոնց քաղաքներն , աւան-
ներն ու գեղերն այրեն : և Հայերն արտօրնօք
Պարսկաստան տանին . որպէս զի՝ երբ Օսմանցիք
դան՝ պաշար և բնակութիւն չի գտնան :

Հ. Հայոց այս գաղթականութիւնն ի՞նչպէս
եղաւ :

Պ. Այս բռնի գաղթականութեան մէջ թըշ-
ուառ և անտէր Հայերուն կրած տառապանք-
ներն աննկարագրելի են . վասնզի Պարսիկներն
անդադար յառաջ կը մղէին զիրենք առանց
հանգիստ տալու , տկարներն ու ծերերը չարա-
չար կը ծեծէին , մէկ քանին ցիցը և մէկ քանին
ալ կախաղան հանեցին , որպէս զի՝ մէկաշները
վախնան և շուտով յառաջ երթան : Երբ Երասխ
գետին քով հասան՝ ըստ որում կ'աճապարէին
որ Օսմանցիք չհասնին , բաւական նաւակ ու
լաստ չ'ըլլալով սկսան ժողովուրդը գետը ձգել ,
որ լողալով անցնին , ասով անհամար մարդիկ
խեղդուեցան . գետէն և սուրէն ազատողնե-
րուն թիւն էր 12000 ընտանիք , ասոնք Նոր-
Ջուղայ ըսուած քաղաքը շինեցին . Շահ-Աբաս
Հայոց սիրտը վասակելու համար տուրքերնին

Թեթեւցուց և հետեւինն գթութեամբ վարուել սկսաւ :

Հ. Այս միջոցին Հայաստանի մէջ յիշատակի արժանի ինչ դէպք պատահեցաւ :

Պ. Մինչդեռ Հայաստան այսչափ անտանալի նեղութեամբ կը տառապէր, եկեղեցիները կը քանդուէին, վանքերը կը կողոպտուէին և կրօնի պաշտօնեայք՝ ոմանք իրենց ժողովրդոցը հետ կ'երթային, և ոմանք իրենց ուխտեալ վանքերուն մէջ գտնուած սրբոց մասուէնքները և նուիրական անօթները անարատ պահելու համար անդու կը հակէին. և ահա այս միջոցին Լատին կրօնաւորք յարմար առիթ սեպելով Հայաստանի ամայութիւնը՝ սկսան խումբ խումբ հոն վազել, որոնց երկուքը Մելքիսեդ կաթողիկոսին հանդիպելով ընծաներ մատուցին, նա մարդասիրութեամբ ընդունեց զանոնք յէջմիածին. Լատինք շուտով բարեկամացան միաբաններուն հետ և համարձակ կը պտըտէին մերձակայ վանքերը. ամեն օր Հռիփսիմեանց Գայլանեանց վանքերը կ'երթային՝ որոնց երկուքն ալ քանդուած էին. և որովհետեւ Լատինք գիտէին սրբոց մասանց՝ վանքին ո՛ր կողմն ըլլալը. սկսան այն կողմը քակել :

Հ. Լատինք կրցան գողնալ սրբոց մասուէնքները :

Պ. Վանքին մէջ մատուէն երկաթէ դուռը չկրնալով կոտրել, աւագ խորանին տակէն պատը ծակելով մատուէն իջան, և սկսան փորել. Հռիփսիմեանց ոսկերց արկղը գտնելով դուրս հանեցին, բացին արկղը և երբ մասուէնքները կըտաւով քսակներու մէջ դնել սկսան, էջմիածնէն երկու եպիսկոպոս այն կողմերն եկած ըլլալով վանքին մօտեցան, Լատինք շատ ջանացին որ եպիսկոպոսները անկէ հեռացնեն, բայց անոնք խորագիտութեամբ մտան տաճարը, և տեսնելով Հռիփսիմեանց ոսկերց արկղը զարհուրեցան, և շուտ մը Լատին կրօնաւորները ծեծելով վանքէն դուրս վռնտեցին, արկղն ալ էջմիածին բերին նոյն գիշերը, և հետեւեալ օրը հանդիսիւ ամբողջ միաբանք դարձեալ իւր տեղը տարին կաթողիկոսին հրամանաւ : Այս Լատինները թէպէտ շատ տեղերէ գողութիւններ ըրին՝ բայց ամենքն ալ ձեռուընուն առնուեցան Զուղայեցի Նազար մեծ իյխանին շնորհիւ, որ նոյն ատենը Պարսից Շահին սիրելին ու խորհրդակիցն էր :

Հ. Նոյն օրերն ուրիշ ինչ երեւելի գործ պատահեցաւ :

Պ. Շահ-Աբաս Պարսից թագաւորն ուղելով
 Հայերը բոլորովին պաղեցնել Հայաստանէն,
 միաքը դրաւ Էջմիածինը կործանել և անոր
 քարերովը նոր Էջմիածին մը շինել Սպահանայ
 Պարսից երկրին մէջ, և հոն բերել տալ Ս. Լուսաւորչայ
 աջը. այս խորհուրդը յայտնեց իր
 խորհրդակից խօճա Նազարին. Նազար որ ճարտարախօսութեամբ
 երեւելի եղած էր արքունեաց
 մէջ՝ բաւ. «Տէր արքայ, եթէ դուք
 կամք կրնէք հոս Էջմիածին մը շինել, ինչո՞ւ
 Այրարատայ Էջմիածինն քարերը հոս փոխադրենք.
 դուք կարող էք ոչ թէ քարէ այլ ոսկիէ
 շինել. բայց երբոր քարէ շինել կը հաճիք, հոս
 ձեր իշխանութեան տակ շատ աղնիւ քարեր կը
 գտնուին, անոնցմով աւելի փառաւոր կ'ըլլայ,
 և մենք աղօթող կ'ըլլանք քու կենացդ » : Այս
 խօսքով թէև զիջաւ Շահ-Աբաս առ երեսս,
 բայց հետեւեալ օրը հրաման ըրաւ Ամիրգունայ
 Թահմազդուլի նախարարին՝ որ կաթուղիկոնն ու
 Լուսաւորչայ Այն իրեն զրկէ, Թահմազդուլի իսկոյն
 գնաց Էջմիածին, Ս. Լուսաւորչայ Աջը՝
 ոսկիապատ աւետարան մը և արծաթ լաջ
 մը Մելքիսեդ կաթուղիկոնին հետ Սպահան
 առաքեց :

Հ. Գրիգոր Բ. Կեսարացի ո՞րչափ նստաւ
 պատրիարք :

Պ. Յովհաննէս Գ. խուլ մականուանեալ. հա-
 կառակելով Գրիգորի՝ 3 տարիէն վերջը վերըս-
 տին Պատրիարք եղաւ, բայց 4 տարիէն ժողո-
 վրդէն հալածուելով՝ դարձեալ Գրիգոր Բ.
 Պատրիարք դրուեցաւ, որ 10 տարի խաղաղու-
 թեամբ կառավարեց ազգը. և որովհետև մաս
 մ'անձինք Յովհաննէսը կուզէին՝ շատ ստակ
 վատնելով դարձեալ զանի պատրիարքական գահը
 հանեցին՝ որ 2 տարի իշխանութիւն վարելով
 դարձեալ Գրիգոր Բ. Պատրիարք եղաւ, և 3
 տարիէն հրաժարելով՝ Չաքարիա Ա. վանցի՝
 Պատրիարք նստաւ : Ասոր օրով երեւելի էր
 Մովսէս կաթուղիկոն՝ որ Էջմիածինը և բոլոր
 անոր շրջակայ վանքերը նորոգեց, հաստատեց
 նաև դպրոցներ, և զիշեր ցերեկ անդու աշ-
 խատելով աշակերտներ կը հասցնէր, Հայաս-
 տանի ամեն կողմ՝ նուիրակ զրկելով վանքերու
 և եկեղեցիներու շինութեան պէտքերը կը հո-
 գար : Ասոր օրով Գաղատացի Յովհաննէս անուն
 վարդապետ մը՝ Հայոց տառեր ձուլելով ժամա-
 դիրք, Մաղմոս եւայն տպել տուաւ :

Հ. Չաքարիա ո՞րչափ ատեն պատրիարքու-
 թիւն ըրաւ :

Պ. Հինգ տարի . և հետզհետէ նստան Յովհաննէս Գ. խուլ, չորրորդ անգամ, 5 տարի . դարձեալ Զաքարիա՝ 3 տարի : Ասոր օրով Լեհաստան գաղթող Հայոց մէջ մեծ գժտութիւն ելաւ իրենց նիկող անուն անարժան Եպիսկոպոսին՝ Հայ Եկեղեցւոյն մէջ Լատին ծէս մոցնել ուղերուն համար . Մովսէս կաթուղիկոս շատ յորդորեց զանի և Գրիգոր Կեսարացի հրաժարեալ Պատրիարքը զրկեց՝ որ համոզէ զնիկող բայց անօգուտ եղաւ . նորէն կաթուղիկոսն իր աշակերաններէն Կեսարացի Խաչատուր վարդապետն առաքեց՝ որ ճարտարախօս և խելացի անձ մ'էր . շատ աշխատեցաւ Խաչատուր՝ որ համոզէ զնիկող և ժողովրդեան հետ հաշտեցնէ, բայց անկարելի եղաւ :

Հ. Նիկող ինչ հնարք մտածեց կաթուղիկոսին ձեռքէն ազատելու համար :

Պ. Այն ատենները Լատին կրօնաւորները զօրացած էին Լեհաստանի մէջ . Նիկող անոնց դիմեց, ըսելով որ ես և ժողովուրդս Հայ կաթուղիկոսին իրաւասութեանը տակ չենք ուղեր կենալ . այս որ լսեցին Լատինք՝ սկսան ամեն ճիգ թափել . Նիկող անոնց հետ միացած՝ նախ կաթուղիկոսին զրկած Խաչատուր վարդապետն աքսորել տուաւ :

իբր խուլարար, և յետոյ չարիք չմնաց հասուց Հայ ժողովուրդին գլխուն, թէ և ժողովուրդը շարունակ կը մարտնչէր Լատին կրօնաւորաց դէմ՝ իր մայրենի և ուղղափառ եկեղեցիէն չզատուելու համար, և ամէն զոհողութիւն շինայեց թէ՛ նիւթապէս և թէ՛ բարոյապէս : Բայց Լատինք և Նիկող՝ որ առանց ժողովրդին հաւանութեամբը եպիսկոպոս եղած էր, վերջապէս յաղթող գտնուեցան, և 40000 Հայ ընտանիք պապականութեան մէջ իյնալով, իրենց սիրելի ազգութիւնը բոլորովին մոռցան :

Հ. Լեհաստանի Հայերն ուսկից գաղթած էին :

Պ, Բագրատունեաց կործանելէն ետքը Անեցիք բարբարոս ազգաց բռնութիւններէն ազատելու համար, ինչքերնին ժողուելով խորրմանցան, անկէ մաս մը Մոլտաւիա և մեծ մաս մ'ալ Լեհաստան գաղթեցին, հոն հետըզհետէ բաղմանալով 40000 տուն եղան . Լեհաց թագաւորն Հայոց ազգայնութեան իրաւունքները ճանչնալով՝ վոյթ անունով Հայ կառավորիչ մը դրաւ՝ որ ազգային դատաստանները տեսնէ, և 1516 ին Սիկամունտ թագաւորին հրամանաւը Լէմպէրկի մէջ Հայոց դատաստանարանը շինուեցաւ . այս քաղքին մէջ Հայք այն-

չափ զօրացան և հարստացան՝ որ գրեթէ Լեհաց տէրութեան բոլոր երեւելի քաղաքներուն մէջ իրենց վաճառականութիւնն ու արհեստը ասարածեցին . և մինչև հիմայ ԱՐՄԼՆԼԷՇ անուամբ շուկաներ , պողոտաներ և փողոցներ շատ կը գտնուին : Չինուորութեան մէջ ալ շատ յառաջագիմութիւններ ըրին և իրենց համբաւը ուրիշ երկիրներու մէջ գտնուող Հայերու քաջալերութիւն և խրախոյս կուտար , բայց այն նիկող անուն վատ եպիսկոպոսին ձեռքով 'ի պապականութիւն առաջնորդեցան 'ի մեծ սուգ ընդհանուր Հայութեան :

Հ . Զաքարիա Պատրիարքին ո՛վ յաջորդեց :

Պ . Դաւիթ Ա . Արեւելցի , որ ԼՂմիածնէն նուիրակ եկած էր , բայց 2 տարիէն աթոռէն վար աւանուելով՝ երեւանցի կիրակոս վարդապետը Պատրիարք դրուեցաւ : Ասի բարի և ազգասէր մարդ մ՛ըլլալուն՝ թեմերն այցելութեան ելաւ , երբ Պրուսա հասաւ , Հայք խիստ մեծ պատուով ընդունեցին զինքը . և որովհետև դատաւորը Հայերը շատ կ'ատէր , տեսնելով Պատրիարքին այնչափ փառաւորուիլը՝ բարկացաւ սաստիկ և հրամայեց որ կործանեն Հայոց եկեղեցին . այս լուրը Կ . Պօլիս նստող Եպարզոս Գարա Մուս-

թափա փաշան առնելուն՝ անմիջապէս դատաւորն ու եկեղեցին քանդողները խստիւ պատժեց ըսելով թէ « Հայոց եկեղեցին կործանելովսիդ՝ կ'ըստիպէք ժողովուրդը որ ուրիշ երկիրներ երթան իրենց պաշտամունքը կատարելու » և հրաման ըրաւ նաև որ եկեղեցին շինեն . կիրակոս Պատրիարք դարձաւ Կ . Պօլիս , և 1 տարի 3 ամիս պատրիարքութիւն ընելէն վերջը ժանտամահէն վախճանեցաւ :

Հ . կիրակոս Ա . ի ո՛վ յաջորդեց :

Պ . Խաչատուր Սերաստացի 1 տարի և 6 ամիս . յետոյ Դաւիթ Ա . որ Տաճիկ մեծամեծներն և մէկ քանի Հայեր իրեն կողմ շահելով Պատրիարք եղաւ : Ասոր օրով Լատինք Կ . Պօլսոյ մէջ բաւական մարդ որսացած էին՝ որոնց զլուխն էր կղեմէս անուն կրօնաւորիք : Դաւիթ քանի մ'անգամ զգուշացուց զկղեմէսն և անոր երթեւեկութիւն ընողները , բայց անոնք անհոգութեամբ Պատրիարքին ազդարարութեան ո՛չ միայն չ'անսացին՝ այլև սկսան իրենց մէջ տտակ հաւաքել որ Պատրիարքն աթոռէն իջեցնեն և տեղը թովմաս Բերիացին դնեն : Այս բանը մեծ Եպարզոս իմանալով ուղեց բռնել զկղեմէսն ու անոր համախոհ Լատինները : Լատինք այս լուրն

առնելուն պէս՝ փախան Իսկէնտէր Զէլէպիին տունը, միայն կրղեմէս բռնուեցաւ, բայց Գաղղիոյ դեսպանին մարդիկները ճամբան վրայ հասնելով՝ շատ ստակ տուին բռնողներուն և փախուցին իրենց դեսպանատունը. դեսպանը տեսնելով որ չպիտի կրնայ պաշտպանել կրղեմէսը Հռովմ փախուց, վասնզի Եպարզոսը բարկացած շարունակ փնտռել կուտար զանի:

Հ. Ո՛րչափ Պատրիարքութիւն ըրաւ Դաւիթ:

Պ. Դաւիթ հազիւ 5 ամիս պատրիարքութիւն քրած էր, թովմաս անուն վարդապետ մը շատ տուրք խոստանալով վճարել արքունի դանձունինքը Պատրիարք եղաւ, բայց չկրնալով վճարել խոստացած տուրքը՝ Հռովմ փախաւ: Իրեն յաջորդեց դարձեալ Դաւիթ՝ երրորդ անգամ: Ասոր Պատրիարքութեան երրորդ տարին սոսկալի հըրդեհ մը պատահեցաւ և Պօլիս, և այրեցան 2000 տունէն աւելի Գուճաբուի Ս. Աստուածածնայ մայր եկեղեցին. բայց երկու ամսէն Սուլթան Իպրահիմի հրամանաւը Տէվրիկցի Պօղոս վարդապետին յորդորանօքը՝ վերստին շինուեցաւ աւելի փառաւոր կերպով:

Հ. Դաւիթի Պատրիարքութեան օրով ինչ երեւելի դէպք պատահեցաւ Հայաստանի մէջ:

Պ. 1648 Ապրիլ ամսոյն 2 ին աւագ շաբթուահագին գետնաշարժ մ'եղաւ, որ ութ օր տեւեց, և կործանեցան շատ վանքեր՝ եկեղեցիներ մզկիթներ և անհամար տուն, որոնց տակը 50000 էն աւելի մարդիկ մեռան. այս միջոցին և Պօլսոյ Հայերը մեծ խռովութեան մէջ էին, վասնզի ոմանք կ'ուզէին որ Դաւիթը Պատրիարք մնայ ոմանք թովմասը. բայց թովմասնք յալթող գտնուելով՝ Դաւիթը վար առին հինգ տարի Պատրիարքութիւն ընելէն վերջը. և 11 ամիս աշխարհական տեղապահով ազգը կառավարուելէն ետքը՝ դարձեալ Դաւիթ Պատրիարք եղաւ, և 3 ամիսէն դարձեալ վար առնուելով, աշխարհականք սկսան կառավարել, մինչև որ եղիաղար Անթապցի, որ վերջերը երուսաղէմի Պատրիարք և Էջմիածնի կաթողիկոս ընտրուեցաւ, հաճեցունելով տեղապահներն՝ ինքը Պատրիարք եղաւ, սակայն խռովութիւնը չվերցաւ Հայոց մէջէն:

Հ. Փիլիպպոս կաթողիկոս ինչո՞ւ համար և Պօլիս եկաւ:

Պ. Պօլսոյ Հայոց մէջ պատրիարքական երկպառակութիւնը տիրելով օր ըստ օրէ թշնամութիւնը կ'աւելնար. ասոր համար շատ անգամ

Նամականքը գրեցին խաղաղասէր ոմանք կաթուղիկոսին, ոմանք ալ անձամբ գացին Էջմիածին, որ դարման մը գտնեն և այս երկպառակութիւնը վերցնեն Հայոց մէջէն. թեպէտեւ կաթուղիկոսը շատ անգամ կոնգակներով կը յորդորէր և իր կողմէն խաղաղասէր անձինք կը զրկէր, բայց չէր օգտեր. ուստի անճարացեալ ձամբայ ելաւ անձամբ Պօլիս դալու. Հայք կաթուղիկոսին Պօլիս դալը եպարգոսին իմացներով բազմաթիւ անձինք՝ Բ. Դրան պաշտօնակալներով կաթուղիկոսը դիմաւորել գացին մինչ ՚ի կարին. կաթուղիկոսը նախ երուսաղէմ հանդիպելով հոն գտաւ Սոսյ Ներսէս Սեբաստացի կաթուղիկոսը՝ և շատ սիրով տեսնուեցաւ հետը. այս երկու կաթուղիկոսներն իրենց եկեղեցականաց մէջի անկարգութիւնները վերցունելու համար մտաւկայ թեմերուն եպիսկոպոսներն ու վարդապետներն երուսաղէմ հրաւիրելով ժողով մը կազմեցին:

Հ. Երկու կաթուղիկոսաց այս ժողովքը ինչ կանոններ հաստատեց:

Պ. Սահմանադրութիւն մը շինեցին, որոյ առաջին և դրսւաւորն է Էջմիածնայ և Սոսյ կաթուղիկոսները մէկզմէկու հետ սիրով կապուին, և

Թեմերուն եպիսկոպոսները ձեռնադրէ, և մանաւանդ առանց ժողովրդին վկայութեան եպիսկոպոս չձեռնադրեն կաթուղիկոսք. մէկ վիճակ մը մէկ առաջնորդ ունենայ, եպիսկոպոսք իրենց թեմէն դուրս ուրիշ վիճակի մը քահանայ կամ վարդապետ չձեռնադրեն, վարդապետութեան կամ քահանայութեան պաշտօն չտրուի մէկու մը՝ մինչեւ որ ուսման և առաքինութեան մէջ կատարեալ չըլլայ, և իրենց վիճակին եպիսկոպոսէն ձեռնադրուին ժողովրդին հաւանութեամբը. եպիսկոպոսք չզրկեն զքահանաները իրենց իրաւունքէն՝ զոր ժողովուրդը կուտայ, և քահանայք մէկզմէկու ծուխ չյափշտակեն, քահանայք նշանտուութիւնն եկեղեցւոյ մէջ իմացունեն որ եթէ արգելք մը կայ՝ յայտնուի. երէցիկինը վախճանած քահանայ մը, եթէ ծեր և քանի մը զաւակ ունի և առաքինի ըլլալը վկայուած է, կրնայ եկեղեցւոյ մէջ պաշտօն վարել, ապա թէ ոչ պէտք է անպատճառ վանք երթայ: Այս կանոններն ամեն տեղ հրատարակեցին, փիլիպպոս կաթուղիկոս Ս. Յակոբայ աւագ խորանին բեմը շինել տալով ուղեւորեցաւ ՚ի Պօլիս:

Պ. Փիլիպպոս կաթողիկոսին Պօլիս դաշն ինչ ազդեցութիւն ըրաւ :

Պ. Դէմքով պատկառելի և ճարտարախօս ըլլալուն՝ եկեղեցեաց մէջ սէր ու միաբանութիւն քարոզելով՝ ժողովուրդը խաղաղեցուց . եղիազար Պատրիարքն ալ վար առնելով Յովհաննէս Դ. Մուղնեցի վարդապետը Պատրիարք դրաւ . ժողովուրդն սկսաւ մէկըմէկ համբուրելով եղբայր եմք մեք դոչել . շատ սիրեցին կաթողիկոսը և Էջմիածնայ համար մեծագումար ստակ հաւաքեցին իրենց մէջ , նաեւ բնիկ Պրուսացի Անտօն Չէլէպին Էջմիածնայ մեծ զանգակատունը շինելու համար խոստացաւ ամբողջ ծախքը վճարել . նոյն օրերը Լեհաստանէն Կ. Պօլիս եկաւ Նիկող անուն անարժան եպիսկոպոսը և քանի մը երեւելի Հայեր՝ զոր երկար համոզելով հաշտեցուց . Նիկող խոստացաւ որ անկէ ետքը ժողովուրդեան կամայք համեմատ վարուի . ժողովուրդին ալ կոնդակաւ պատուիրեց որ հաշտ աչօք նային իրենց առաջնորդին և ճամբու դրաւ . բայց Նիկող դարձեալ իր բնթացքը շարունակեց . իսկ կաթողիկոսը քիչ մ'ատեն ալ Պօլիս կենալով՝ օրհնեց ժողովուրդը և դնաց Էջմիածին :

Հ. Ուրիշ ինչ յիշատակի արժանի գործ ունի Փիլիպպոս կաթողիկոս :

Պ. Էջմիածնայ վանքը կատարելապէս նորոգելէն ետքը , Ասպահան գնաց , ուր մեծ ընդունելութիւն գտաւ Հայերէն , Սա կը փափաքէր Լուսաւորչայ Ս . Աջն Էջմիածին փոխադրել վերստին , բայց Զուղայեցիք դէմ կը կենային պատճառելով թէ՛ Զուղայեցի Հայերն ինքզինքնին միխթարելու համար միայն այս Ս . Աջն ունի , և թէ Շահ-Աբաս արքայն Զուղայեցուց տուած է զայն պահելու , եթէ ուզելու ըլլայ ինչ բնենք . ուստի Փիլիպպոս կաթողիկոս երեւանցուց օգնութեամբը շատ ընծաներ տալով Պարսից երեւելիները հաճեցուց . յետոյ ընծաներով թաղաւորին ալ աղերսագիր տուաւ և հրամանն ընդունելով , Զուղայեցի պարոն Սաֆարին տունէն Ս . Աջն եկեղեցին փոխադրեց ժողովուրդը օրհնելու համար . և երբ տեսաւ որ Զուղայեցիք դարձեալ կ'ընդդիմանան և չեն ուզեր տալ , Մարգար անուն վաճառականի մը հետ Դավրէժ փախուց ու ինքն ալ ժամբայ ելնելով հասաւ Դավրէժ և Ս . Լուսաւորչայ Այլ 40 տարի Պարսկաստան մնալէն յետոյ վերադարձուց Էջմիածին :

Հ. Յովհաննէս Մուղնեցի՝ ազգը կրցա՞ւ կառավարել :

Պ. Եղիազար Անթապցի քանի մ'երեւելի Հայեր իրեն կողմ որսալով է տարիէն Յովհաննէսը Պատրիարքութենէ ձգեց . սակայն իշխանները փոխանակ Եղիազարը Պատրիարք ընելու՝ իրենք ըսկսան տեղապահութիւն ընել . այս տեղապահները Կ. Պօլսոյ 6 եկեղեցեաց կողմէն ընտրուած էին , որք են , 'ի Սամաթիա Ս . Գէորգ՝ որ Պատրիարքարան էր . 'ի Գումգարու Ս . Աստուածածին . 'ի Լանկա Ս . Սարգիս . յԱլաճա-մէջիտ Ս . Նիկողոս . 'ի Պալատ Ս . Հրեշտակապետ և 'ի Ղալաթիա Ամենափրկիչ : Այս վերջինը Պօլսոյ մէջ Հայոց համար շինուած առաջին եկեղեցին է : Այս միջոցին փիլիպպոս Կաթողիկոս էջմիածնայ մէջ ուրիշ շատ կարգադրութիւն ընելէն ետքը վախճանեցաւ . իրեն յաջորդեց Յակոբ Զուղայեցի առաքինի՝ վեհանձն և խորախորհուրդ եպիսկոպոսը :

Հ. Տեղապահներն որչափ ատեն կառավարեցին Ազգը :

Պ. Հազիւ 2 տարի . վասն զի Հռոմ՝ փախած թովմաս Բ . Պօլիս դալով՝ դեսպանաց թարգմաններուն միջոցաւ վերստին Պատրիարքական

դահն ելաւ : Ասոր օրով Երուսաղէմի Աստուածատուր Պատրիարքը Կ . Պօլիս եկաւ Յունաց հետ դատ վարելու համար , վասն զի Ծռաղատիկ մ'առթիւ Յունաց և Հայոց մէջ վէճ բացուելով՝ Գրիգոր Մոկացի Երուսաղէմի նախկին Պատրիարքը տեղւոյն բզեշխին միջնորդութեամբ կրցաւ կատարել Ս . Յարութեան տաճարին մէջ իւր պաշտօնը , այս բանիս համար Յոյներն ին պահած էին . երբ Գրիգոր Պատրիարք մեռաւ՝ Յոյնք մեծաւեճ ընծաներ առած տէրութեան բարձրաստիճան անձանց դիմելով՝ Հայոց Ս . Յակոբայ վանքն իրենց սեպհականել կուղէին : ուստի Աստուածատուր Պատրիարքին ճարը հատնելով՝ շատ ստակ առած Կ . Պօլիս եկաւ , և Եղիազարին յաջողակութիւնն ու ճարտարութիւնը տեսնելով՝ իրեն փոխանորդ կարգեց , և խոստացաւ նաև իրեն յաջորդ ընտրել թէ սոյն իրաւացի դատը շահելու ըլլայ . Եղիազար այս խնդիրը յանձն առնելով՝ թէև շատ սարսափելի և անտանելի չարչարանքներ քաշեց թէ Հայոց և թէ Յունաց վրէժխնդրութենէն , բայց և այնպէս դատը շահեցաւ :

Հ. Թովմասի Պատրիարքութիւնն որչափ ժամանակ տեւեց :

Պ. Հաղիւ 1 տարի և 6 ամիս, վասն զի Հայ ժողովուրդն որ էջմիածնայ աթոռին և հոն բաղմնող կաթուղիկոսին վրայ մեծ սէր ունէր, կուզէր դարձեալ Յովհաննէսը Պատրիարք դնել. բայց թովմաս՝ դեսպանաց զօրութեամբը կը բռնանար Հայոց պատրիարքական գահուն վրայ, սակայն վերջապէս ժողովուրդը յաջողեցաւ վանել աթոռէն և տեղը կաֆայի Մարտիրոս վարդապետը դրաւ՝ որ Երուսաղէմայ միաբանութենէն էր: Սա Պատրիարքական աթոռը Գումգարու փոխադրեց Սամաթիայէն: Ասոր օրովը Կ. Պօլիս սոսկալի հրդեհ մը պատահելով՝ 3000 էն աւելի տուն և 5000 ի չափ անձինք այրեցան՝ որոնց մէջ էր Հայոց Լանկայի Ս. Սարգիս եկեղեցին, և հաղիւ աղաանցաւ Գումգարուի Ս. Ատողածածնայ եկեղեցին: Այս ատեններն Երեմիա Չելչալի քէօմիւրճեանց՝ երեւելի եղած էր իր տաղանդովը. այս մեծ մարդը բաւական աշխատութիւններ ունի գրական ասպարեզին մէջ: Մարտիրոս Բ. 1 տարի և 5 ամիս Պատրիարքութիւն ընելէն յետոյ վար առնուեցաւ. և իրեն յաջորդեց Տիվրիկցի Ղազար եպիսկոպոս՝ Բ. Դըրան գիւսանադպիր Տիվրիկցի Իպրահիմին ձեռօք:

Հ. Ռըչափ ատեն Պատրիարքութիւն ըրաւ Ղազար:

Պ. 2 տարի և 4 ամիս Պատրիարքութիւն ընելէն ետքը՝ էջմիածնայ միաբաներէն Յովհաննէս վարդապետ՝ որ էջմիածնայ անուամբ նուէր կը հաւաքէր, տեսնելով Պօլսոյ Պատրիարքական լիազօր իշխանութիւնը, էջմիածնայ համար ժողված ստակովը՝ Պատրիարք եղաւ և Յովհաննէս Ե. կոչուեցաւ. բայց հաղիւ 1 տարի և 1 ամիս անցած էր՝ ժողովրդեան մէջ դժտութիւն մտաւ՝ վատնած ստակները շուտով հաւաքելու համար հարստահարութիւններ ընելուն. ասոր օրով Երուսաղէմէն նուիրակ եկած էր Սարգիս վարդապետ Ռօտոսթօցի: Սա յարմար առիթ սեպելով՝ դնաց Անդրիանուպօլիս, Երուսաղէմի համար ժողված ստակները վատնելով և շատ ալ պարգեւ տալ խոտանալով Պատրիարք եղաւ Սարգիս Գ. անունով և եկաւ Կ. Պօլիս, հալածեց Յովհաննէսն ու ինքն սկսաւ կառավարել զԱրքը 9 ամիս, մինչեւ որ Յովհաննէս Ե. վերստին Պատրիարք եղաւ: Ասոր օրով Եղիազար Անթապցի որ Երուսաղէմի Պատրիարքական փոխանորդն էր, Երուսաղէմի մէջ բաղմնաթիւ շինութիւններ ընելէն ետքը, ջանք ըրաւ Տաճկաստանի կաթուղիկոս ըլլալ և աթոռը Երուսաղէմի մէջ հաստատել, և այս բանին հա-

մար Երուսաղէմի մէջ Էջմիածին անուամբ եկեղեցի մ'ալ շինեց :

Հ. Եղիազար կրցա՞ւ յառաջ ասնիչ իւր այս խորհուրդը :

Պ. Սոյ խաչատուր կաթողիկոսն Երուսաղէմ հրաւիրելով համոզեց զայն և հանեցուց ըսելով. « Դու քու վիճակիդ Հայոց, Էջմիածին՝ Պարսկաստանի և Արեւելքի մէջ գըտնուող Հայոց, իսկ ես՝ Կ. Պօլսոյ շրջակայից եւն. գտնուող Հայոց վրայ կաթողիկոս պիտի ըլլամ » : Ուստի շատ ստակ և ոսկի առած Եպարգոսին երթալով կաթողիկոսութեան և միանգամայն Երուսաղէմի Պատրիարքութեան հրովարտակն առաւ . ասկէ երկպառակութեան գուռ մ'ալ աւելի բացուեցաւ Ազգին մէջ . բայց Էջմիածնայ Յակոբ կաթողիկոսն՝ որ խոհուն և հեռատես անձ մ'էր, իմանալով Եղիազարու այս ընթացքն՝ անմիջապէս Կ. Պօլիս եկաւ, խաղաղեցուց ժողովուրդը, և անտի Սուլթանին գնաց յԱնդրիանուպօլիս, հոն վերստին վաւերացուց իր ընդհանրական կաթողիկոսութիւնը . և որովհետեւ Յովհաննէս Պատրիարքի վրայ ալ տըրտունջներ կային, վերստին Սարգիս Գ. Ռօտոսթօցիին հրովարտակն առաւ և Յովհաննէսը

հրաժարեցուց 2 տարի և 2 ամիս Պատրիարքութիւն ընելէն յետոյ : Այս ատեններս էր որ Ռսկան վարդապետ Մանչեսթերի մէջ տըպարան բանալով Աստուածաշունչ եւն. գրքեր տպագրել սկսաւ :

Հ. Սարգիս Գ. ո՞րչափ ատեն Պատրիարքութիւն ըրաւ :

Պ. Սարգիս 3 տարի Պատրիարքութիւն ընելէն ետքը մեռաւ, և իրեն յաջորդեց Էջմիածնայ միաբանութենէն Ստեփանոս վարդապետ Մեղրցի՝ որ խելացի և ուսումնական անձ մ'ըլլալուն՝ սկսաւ խաղաղութեամբ կառավարել Ազգը, բայց 4 տարիէն վախճանելով Յովհաննէս Զ. Սամաթիացի Բօգ՛ւ մակամուսնեալը յաջորդեց, որուն օրովը Հայերը շատ ստակ ծաղք ընելով Լանկայի Ս. Սարգիս եկեղեցւոյն շինութեան հրամանն առին, բայց հաղիւ ընցած էր, կործանեցին ՚ի հիմանց և մինչեւ այսօր աւերակ կը մնայ . Յովհաննէս Զ. 4 տարի Պատրիարքութիւն ընելէն վերջը՝ դահէն վար առնուելով Անդրէաս անունով երէց մի գրուեցաւ . 4 տարիէն կարապետ Կեսարացի Կրպոյ մակամուսնեալը յաջորդեց : Ասի 3 տարի ազգը կառավարելէն ետքը՝ արքունի բանակին մէջ հա-

ցադործ Մարգիս անուն անձ մ'երկյութեան աստիճան առնելով՝ Պատրիարք եղաւ . բայց 1 տարիէն վերստին կարապետ կեսարացի երկրորդ անգամ Պատրիարք եղաւ : Այս միջոցներուն ժողովուրդն ալ շուարեալ որուն հնազանդելը չէր գիտեր . Յակոբ կաթուղիկոս այս բաներն իմանալով վերստին կ . Պօլիս եկաւ ժողովուրդը խաղաղեցնելու :

Հ . Յակոբ կաթուղիկոս ինչ ըրաւ կոստանդնուպօլիս :

Պ . Հազիւ Պօլիս հասած էր , մահը հասնելով վախճանեցաւ . Հայերը մեծ վառօք Բերայի գերեզմանատան մէջ թաղեցին զինքը օգոտաոս 2 ֆրիստոսի 1680 թուականին . բոլոր ազգայինք սգացին այնպիսի աղգասէր և սուրբ հովուէ մը զրկուելուն հաճար : Յակոբ կաթուղիկոսի մահուընէն վերջը Էջմիածնայ միաբանք եղիազար Անթապցին ընդհանուր կաթուղիկոս ընտրեցին . ասով Ազգին մէջ այդ մասին խաղաղութիւնը հաստատեցաւ . իսկ Պատրիարքութեան գալով կարապետ 1 տարի և 5 ամիս իշխելէն վերջը թորոս Ա . երէցյաջորդեց , որուն պատրիարքութիւնը 40 օր տեւեց : Ասոր յաջորդեց երրորդ անգամ դարձեալ կարապետ Բ . կեսարացի 2

դեցին հետզհետէ Եփրեմ վարդապետ Էջմիածնայ միաբանութենէն՝ որ նուիրակ եկած էր , 1 տարի 8 ամիս : կարապետ Բ . կեսարացի չորրորդ անգամ՝ 1 տարի : թորոս Ա . որ 40 օր պատրիարքութիւն ըրած էր՝ երկրորդ անգամ 1 տարի : խաչատուր Երեց ձիւցի 7 ամիս : կարապետ Բ . կեսարացի հինգերորդ անգամ՝ որ 5 ամիս պատրիարքութիւն ընելէն յետոյ՝ ժողովուրդը զինքը բռնի գահէն վար առաւ և աքսորել տուաւ :

Հ . կարապետ Բ . ի ո՞վ յաջորդեց :

Պ . Երկու աշխարհական տեղակալներ նստան , որոնք երկու տարի խաղաղութեամբ ժողովուրդը կառավարեցին . ասոնց անուններն են , Սադաօղու և Շահին , որոց յաջորդեց Մատթէոս Սարի մականունանեալն . սա 2 տարիէն Սոյ կաթուղիկոսութիւնը յափրշտակեց : Ասոր յաջորդեց Եփրեմ Ղափանցի : Ասոր օրով շատ մը ձիգլիթ և Լատին կրօնաւորներ կ . Պօլիս և Անատօլի քաղաքները լեցուեր էին , մինչեւ անգամ Հայաստան և Պարսկաստան , որոնք յայտ յանդիման Հայոց եկեղեցին կը նախատէին և քանի մը թեթեւամիտ Հայեր իրենց կողմ որսալով չէր ըլլար օր խաղաղութեամբ անցնել , թէև ար-

քունի աստուծոնքը կ'արդիւնէին , և ճիգվիթներէն շատերը կը բռնէին խաղաղութեան համար , բայց Գաղղիոյ դեսպանին միջոցաւ անմիջապէս կազատուէին բանտէն ,

Հ . Եփրեմ Ղափանցի կրցա՞ւ կառավարել ազգը :

Պ . Ճիգվիթաց այս ընթացքը վարանման մէջ ձգեցին զինքը , վասն զի ամեն տեղ կրօնական ատելութիւն մ'է սկսաւ , և Եփրեմ 3 տարի և 6 ամիս պատրիարքութիւն ընելէն , յետոյ հըրաժարեցաւ , իրեն յաջորդեց Մելքիսեդ Սեփեհե մականուանեալն : Ասոր օրով Մխիթար Աբբայ Սերաստացի Կ . Պօլիս գալով՝ Ղալաթիոյ Ս . Լուսաւորիչ եկեղեցին քարոզիչ եղաւ : Մելքիսեդ 4 տարի և 3 ամիս պատրիարքութիւն ընելէն ետքը՝ Մխիթար վարդապետ Քիւրտիստանցի Մելքիսեդը աքսորել տալով՝ ինքը Պատրիարք եղաւ , բայց մէկ տարի և 2 ամիս ետքը Մելքիսեդ աքսորէն դառնալով՝ վերստին Պատրիարք եղաւ . 9 ամիս անցնելով Եփրեմ Ա . երրորդ անգամ յափշտակեց պատրիարքութիւնը : Ասի աթուր Անդրիանուպօլիս հաստատեց , և Կ . Պօլիսը փոխանորդով կը կառավարէր :

Հ . Եփրեմի պատրիարքութիւնն ո՞րչափ տեւեց :

Պ . Այս ատենները Լատին կրօնաւորներն այնքան շատցած էին 'ի Կ . Պօլիս' որ դրեթէ իւրաքանչիւր Հայ քահանայի տուն կը գտնուէին . թէեւ շատ անգամ կը վռնտուէին բարեպաշտ և իրենց մայրենի ու անդրանիկ եկեղեցւոյն կանոններն ու ծէսերը սուրբ և անարատ պահել ուզող առաքինի Հայ երեցներէ , բայց՝ նոքա իրենց յամառութեամբ՝ մինչեւ անգամ կը յանդգնէին Հայ եկեղեցիներուն սրբազան բեմին վրայէն կեղծ բարեպաշտութեամբ պապութիւն քարոզել . ուստի և ժողովրդեան տգէտ մասը խաբուելով անոնց պատիր խօսքերէն՝ կ'սկսէին անոնց կողմը բռնել՝ ոմանք ստակով և ոմանք ալ տեսակ տեսակ սնտոի խոստմունքներով , թէպէտ շատերը լաւ համոզուած կ'զգուշանային այդ կրօնաւորներէն՝ ինչպէս թունատու իժէմը . այդ ճիգվիթներէն մաս մ'ալ Հայ քահանայներու զգեստով Անդրիանուպօլիս գացին Պատրիարքն որսալու համար , բայց Եփրեմ պատրիարք ճանչնալով ոչ եկեղեցին ընդունեց և ոչ ալ անոնց կրօնքի վերաբերեալ խօսք մը ըրաւ : ճիգվիթք իրենց հանապազօրեայ խորամանկութեամբ մէկ քանի միամիտ քահանայներ որսալով սկսան հոն ալ երկպառակութիւն ձգել :

ուստի Եփրեմը հրաժարեցուցին պատրիարքութենէ 10 ամիս իշխանութիւն վարելէն ետքը :



ԳՂՈՒԽ Բ .

ԱԻՆՏԻՔ ՊԱՏՐԻԱՐԿԷՆ ՄԻՆՉԵԻ
ՍԱՀՄԱՆԱԴՐՍԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ

1700—1860

Հ . Ո՞վ յաջորդեց Եփրեմի :

Պ . Եփրեմ Պատրիարքին օրով է . Պօլիս եկած էր Երզնկացի Աւետիք անունով վարդապետ մը , և Սամաթիա Ս . Գէորգ եկեղեցւոյն մէջ քարոզութեան պաշտօն կը վարէր : Սա իր բարի խոհեմ վարքով և աղքու քարոզութեամբը բոլոր ժողովրդեան սէրն իրեն գրաւեց , և հեռաւոր թաղերէ անոր քարոզը մտիկ ընել կուգային , վասն զի քարոզութիւնները սիրոյ և միութեան վրայ էին , ամենուն հետ ալ սիրով կը վարուէր : Աւետիքի համբաւն ամեն տեղ տարածուելով , մինչեւ անգամ Շէյխ-Խւլ-Խալամի ականջը հասաւ , որն որ իր պալատը հրաւիրեց և երկար ատեն տեսութիւն ընելէն յետոյ , զարմացաւ Աւետիքի

իմաստութեանը վրայ , ուստի միշտ կուզէր որ քովը կենայ , եւ մինչդեռ Աւետիք Անդրիանուպօլիս էր , Հայերը բազմաթիւ ստորագրութեամբ աղերսագիր մը մատուցանելով Եպարգոսին , խնդրեցին որ Աւետիքն իրենց Պատրիարք դնէ , և որովհետեւ Եպարգոսն ալ ձանձրացած էր Պատրիարքայ փոփոխութեանը պատճառաւ Հայոց մէջ ծագած երկպառակութենէն , ուղեց նախ տեղեկութիւն առնել Աւետիքի վրայ և իմանալով անոր բարի վարքը՝ նա մանաւանդ Շէյխ-Խւլ-Խալամ էֆէնտիէն Աւետիքի լաւութիւնը , կանչեց Բ , Դուռը և պատրիարքական կոնդակը տուաւ : Այս բանը ժողովրդեան մեծ ուրախութիւն պատճառեց :

Հ . Աւետիքի վրայ ի՞նչ գիտելիք կայ :

Պ . Աւետիքի պատրիարքութիւնն ընդհանուր Հայոց ուրախութեան պատճառ եղաւ , այնպէս որ Հայք ամենը մէկ սիրտ և մէկ հոգի եղած՝ սկսան մէկմէկ սիրով համբուրել : Նոյն օրերն Երուսաղէմի միաբաններէն չորս վարդապետ իբեկնց անկարգութեանը համար Երուսաղէմի վանքէն արտաքսուելով , Անդրիանուպօլիս եկան , և սկսան նախատանօք խօսիլ Երուսաղէմի Մինաս Պատրիարքին վրայ : Ասոնք բազմաթիւ

կողմնակիցներ դռներով Եպարդոսին դիմեցին , երուսաղէմի Պատրիարքը պաշտօնէն ձգելու , և որովհետեւ Եպարդոսն Աւետիքի խաղաղասիրութեան և խոհեմութեան համբաւն առած և իրօք ալ տեսած էր , ուստի Երուսաղէմի պատրիարքութիւնն ալ անոր յանձնեց : Աւետիք քիչ մը ժամանակ ևս Անդրիանուպօլիս կենալով Կ . Պօլիս եկաւ , ուր ժողովուրդը բաղձութեամբ դիմաւորեց զինքը , և այնպիսի մեծ ու շքեղ պատուով ընդունեց՝ որոյ նմանը երբէք չէր եղած մինչեւ այն ատեն գահակալող Հայ Պատրիարքներուն : Օտար դեսպաններն ալ շնորհաւորի եկան , մանաւանդ Ֆէրիօլ՝ Գաղղիոյ դեսպանը , և Ղալաթիոյ Գաբուչինաց վանքին վանահայրը՝ Հայր Յակինթոս : Ասոնք շատ սիրով տեսնուեցան Պատրիարքին հետ , և ազգային երկպառակութեան վերջ մը տալու համար խոստացան սիրով մնալ շարունակ մէկզմէկու հետ :

Հ . Աւետիք Պատրիարքի օրով Ի՛նչ երեւելի դէպք պատահեցաւ :

Պ . Գաղղիոյ դեսպանը շատ ջանաց որ Աւետիքն իրեն կողմ դարձնէ՝ բայց չյաջողեցաւ , վասնզի Աւետիք իր եկեղեցւոյն ծխին և արարողութեանը ջերմ նախանձախնդիր էր , նա մա-

նաւանդ իր համոզիչ և ազդու քարոզութիւններովն ամբողջ Հայոց սիրտն իրեն գրաւեց , և այն Հայերն՝ որ առաջ Հայ եկեղեցւոյ առջեւէն անցնելն անգամ մեղք կը սեպէին , սկսան Հայոց եկեղեցին գալ և պատարագ տեսնել : Սեբաստացի Մխիթար վարդապետին ալ քանի մը անգամ նամակ գրեց՝ որ իրեն տեսութեան գայ , բայց Մխիթար՝ Լատինաց թելադրութեամբը չուզեց երթալ , կասկածելով որ Աւետիք Պատրիարք իրեն վնաս մը կը հասցնէ . վասնզի Լատինք իրենց կողմը եկողները Հայոց եկեղեցիէն բոլորովին պաղեցնելու և հեռացնելու համար՝ ամենուն սիրտը տարապարտ կասկածներ կը զարթուցանէին , որով պատճառ եղան այն ամեն աղետալի խռովութիւններուն՝ որոնք զՀայոց աղբը երկպառակեցին և մաս մաս բաժնեցին : Եւ Մխիթար վարդապետ յարմար առթով մը վաճառականի մը նաւով Մօռա փախաւ , հոն վանքմը շինեց և անոր մէջ դպրոց բանալով աշակերտներ ժողովեց՝ բայց քիչ մը վերջը Վենետիկեաց պատերազմին ատենը վանքն ու դպրոցը կործանելով Մխիթար գնաց Վենետիկ , և հոն հաստատեց իր բնակութիւնը Պապին իշխանութեանը տակ :

Հ. Աւետիք որչափ պատրիարքութիւն ըրաւ,

Պ. Աւետիք պատրիարք՝ խոհեմութեամբ իր հօտին ցրուեալ ոչխարներն օր առօր Հայաստանեայց Ս. Եկեղեցւոյն վարախը կը ժողովէր. Լատինք տեսնելով որ իրենց այնչափ ատենի մէջ որսացած ժողովուրդը ձեռքերնէն կելլայ, զայրանալով դարձեալ սկսան հակառակութիւն ընել և Հայ եկեղեցին նախատել, և յարմար առթի մը կ'սպասէին Աւետիք Պատրիարքը ձգելու, Նոյն օրերը 200000ի չափ Եէնիչէրիներ ապրատամբելով Սուլթան Մուսթաֆան դահէն վար առին և անոր տեղը Սուլթան Ահմէտը թագաւոր դրին. ուստի Աւետիքն ալ Եէտիգուլէն բանտը դրին՝ 1 տարի և 8 ամիս պատրիարքութիւն ընելէն յետոյ. ասով Լատինք և լատինացեալ Հայ քահանայներն ուղեցին Պատրիարքութիւնն իրենց ձգել, բայց չը յաջողեցան:

Հ. Աւետիքի ո՞վ յաջորդեց:

Պ. Երբոր Սուլթան Ահմէտ Կ. Պօլիս կուգար՝ Հայոց մեծամեծներն և մեկ քանի եպիսկոպոս իմացուցին Բ. Դրան թէ Երուսաղէմի և թէ Կ. Պօլսոյ Պատրիարք չունենալը. ուստի հրաման ելաւ՝ որով Մինաս նախկին Պատրիարք՝ Երուսաղէմի, և կայծակ Գալուստ վարդապետ Կ. Պօլսոյ

Պատրիարք եղան, Լատինք Գալուստ Պատրիարքին անհոգութենէն օգուտ քաղելով սկսան իրենց հակառակորդ եղողներէն շատերը մատնել Բ. Դրան. չարախօսելով թէ Քրանկացեալ և անոնց կողմէն լրտես են՝ թէ և իրենցմէ ալ շատերը կը բանտարկուէին, բայց Գաղղիոյ դեսպանին միջոցաւ անմիջապէս կ'ազատուէին. Ուստի ճշմարիտ Հայերը չկրնալով հանդուրժել Գալուստ Պատրիարքին անփոյթ կենացը վրայ՝ միաբանեցան և բողոքեցին Բ. Դրան, որով անմիջապէս վար առնուեցաւ 10 ամիս պատրիարքութիւն ընելէն ետքը. և անոր տեղը Ներսէս վարդապետ Կ. Պօլսեցի Պատրիարք նրստաւ՝ սակայն Հայերը դարձեալ Աւետիքը կուզէին:

Հ. Ներսէս որչափ ատեն պատրիարքութիւն ըրաւ:

Պ. Հայ ժողովուրդը՝ որ Աւետիքի վրայ մեծ սէր ունէր և կը ճանչնար անոր առաքինի յատկութիւնները, գիտէր՝ նաեւ այս բարի եկեղեցականին իր Ս. Եկեղեցւոյն քաջարի ախոյեանն ըլլալը, որ ոչ շահ կը փնտուէր և ոչ վառք, այլ գիշեր ցերեկ իր ժողովուրդեան անդորրութիւնը կը մտածէր. վասն զի հարուստը կը հա-

մողէր, աղքատը կը խնամէր և հարստահարեալը կը մխիթարէր. և Հայերը այնպիսի անձէ մը զրկուեցնուն վրայ մեծ ցաւով կը կենային. ուստի որոշեցին որ ստակ հաւաքեն և անով Բ. Դրան պաշտօնեայնները հաճեցնեն, անկէ ետքը Եպարզոսին դիմեն ու խնդրեն Աւետիք Պատրիարքը. Լատինք այս բանն իմանալով՝ Հայոց գլխաւորներէն 5 հոգի բանտարկել տուին. բայց Հայք փոխանակ վհատելու՝ առաւել զայրացած երդում ըրին թէ ինչ որ ալ պատահի, բանտ, աքսոր, մահ, չպիտի ետ կենան բողոքելէ. և քանի մ'օրէն դարձեալ հազարաբաւոր ստորագրութեամբ աղերսագիր մը մատուցին մեծ Եպարզոսին, յայտնելով թէ Աւետիք Պատրիարքին անկումը քանի մը հակառակորդ և պապադաւան անձանց միջոցաւն է. Եպարզոսը լաւ մը տեղեկանալով՝ ներսէսը վար առնել առաւ, որոյ Պատրիարքը ըլլալը 4 ամիս եղած էր, և անոր տեղ Աւետիք Պատրիարք դրաւ, նմա յանձնելով նաեւ Երուսաղէմի պատրիարքութիւնը:

Հ. Աւետիք ինչպէս վարուեցաւ Պապականներուն հետ:

Պ. Միշտ ներողամտութեամբ, այնպէս որ թըշ-

նամիք անդամ կը զարմանային այս մարդուն անյիշաչարութեանը վրայ. իր ամենէն անազուրյն և անյաղթելի թշնամին Ֆէրիօ՛լ որ Գաղղիոյ դեսպանն էր՝ այցելութեան եկաւ, Աւետիք ամենայն քաղաքավարութեամբ և սիրով ընդունեց զանի. նոյնպէս Գաբուչինաց վանահայրը՝ Հայր Յակինթոս այցելութեան եկաւ և յարգանօք ընդունուեցաւ Աւետիքէն. և վերջապէս ամենուն հետ մարդասիրութեամբ վարուելով, բոլոր թշնամիներն սկսան անկնածութեամբ վարուիլ, բայց Ֆէրիօ՛լ Գաղղիոյ թաղաւորին և Ս. Պապին դրդումներով դարձեալ սկսաւ թշնամանալ և ժողովուրդը Աւետիքի դէմ գրգռել, բայց առաջի ազգեցութիւն չունեցաւ, վասն զի ժողովրդեան մեծ մասը լաւ ճանչցած էր Աւետիքին արժանիքը:

Հ. Աւետիք կըցաւ շարունակել պատրիարքութիւնը:

Պ. Ֆէրիօլ պապականացեալ Հայոց ձեռօք գործ չկրնալ տեսնելուն՝ սկսաւ Դրան պաշտօնեայններն և վէզիր ֆեահեասին Հայոց Աւետիք Պատրիարքի դէմ գրգռել. վասն զի երանելի Պատրիարքը մեծ արգելք եղած էր Լատինաց. դեսպանն իր խորհուրդը առաջ տա-

նելէն ամենեւին ետ չկեցաւ . երբ տեսաւ որ Գրան պաշտօնակալներն ալ յանցանք մը չէին կրնար գտնել Աւետիքի վրայ , օր մը իր թարգմանին միջոցաւ սպառնալեօք ըսել տուաւ որ փրօփականտայի՝ Հայ Պապական վարդապետները Հայ եկեղեցւոյն մէջ պէտք է քարոզ խօսին և պատարագ մատուցանեն . բայց Աւետիք ամենայն հանդարտութեամբ պատասխանեց՝ թէ « Հայ եկեղեցւոյն ո՛չ Պապը , ո՛չ Գաղղիոյ թագաւորը և ո՛չ Գաղղիոյ դեսպանը կրնան խառնուիլ , այլ միայն Հայոց կրօնական Ս . Ժողովը այս խօսքին վրայ քննիչ սատարիկ բարկացած՝ Եպարզօսին դիմեց ըսելով , թէ Հայոց Պատրիարքը զիս անպատուեց , վկայ կոչելով իր թարգմանը , մէկ քանի՛ բազդախնդիր Հայ եկեղեցականք և մէկ քանի պապականացեալ Հայեր՝ որոնք յառաջուց պատրաստուած էին : Եպարզօս ասոնց համոզուելով Աւետիքը ձգեց պատրիարքութենէ և աքսորեց , երկրորդ անգամ մէկ տարի պատրիարքութիւն ընելէն յետոյ :

Հ . Աւետիք Պատրիարք ո՛րք աքսորեցաւ :

Պ . Թէպէտեւ Պահապարտ ըսուած կղզին , բայց Կիւսիսի Գաղղիոյ դեսպանէն կաշառուելով , ճամբան Գաղղիացի նաւապետի մը հըրաւ

մանատարութեան ներքեւ եղող վաճառականի մը նաւով Մարսիլիա տարին , և հոն Գաղղիոյ ներսերը՝ Նօրմանտիոյ և Պրիթանիայի սահմանազրխին մօտ Պենեդիկտեան կրօնաւորաց վանքը դրին , ուր խեղճ Պատրիարքը 5 տարի բանտարկուելէն յետոյ , ֆարիզ եկաւ և 10 ամիսէն մեռաւ 1711 յուլիս 21 : Պօլսոյ Հայերն իրենց Պատրիարքը շատ վնասեցին , շատ ստակ վատնեցին , քանի անգամ մարդ զրկեցին Գաղղիոյ , Իտալիոյ և Սպանիոյ երկիրները , չգտան , և քանի մ'անգամ ալ աղերսագիր մատուցին մեծ Եպարզօսին . և որովհետեւ Եպարզօսը դիտեր Գաղղիոյ դեսպանին Աւետիքի թշնամի ըլլալը նամակ գրեց Ֆէրիօլի և մինչեւ անգամ սպառնացաւ որ Աւետիքը դանուի , բայց Ֆէրիօլ միշտ ուրացաւ , Հայք այնքան սգացին իրենց սիրելի Պատրիարքին կորստեանը վրայ՝ որ ռաւկայ մէջ մինչեւ մեր օրերն առած եղած է թէ երբ մեծ բան մ'անյայտ ըլլայ , « Աւետիկն օյսեմունա տէ՛ծնախի » կըսեն : Աւետիքէն ետքը Գաղղիոյ դեսպանին խնդրանօք կիսարացի Մատթէոս Սարի մականուանեալը Հայոց Պատրիարք դրուեցաւ :

Հ . Մատթէոս ո՛րչափ պատրիարքութիւն ըրաւ :

Պ. Հազիւ 2 ամիս եղած էր նստելը՝ Հայերը զանի վար առնելով՝ Աւետիքի փոխանորդ Մարտիրոս վարդապետը պատրիարք դրին : Այս ալ Աւետիքին փոխանորդն ըլլալուն՝ դեսպանը վար առնել տուաւ՝ 4 ամիս պատրիարքութիւն ընելէն ետքը : Տեղը յաջորդեցին Միքայէլ անուանով երէց մը՝ 8 ամիս, և Ապուշեղցի Սահակ վարդապետը : Ասոր օրով Կ. Պօլիս եկաւ Զմիւռնիացի Յովհաննէս վարդապետը՝ որ երբեմն Աւետիքի փոխանորդն էր, և որ Եւրոպա ճանապարհորդած էր Աւետիքի վրայ լուր մ'առնելու համար . այս որ տեսան Հայք՝ խնդրեցին Եպարզոսէն որ Յովհաննէսն իրենց վրայ Պատրիարք դնէ . Եպարզոսը լսելով Հայոց աղաչանաց՝ Սահակը վար առնելով, որ 8 ամիս պատրիարքութիւն ըրած էր, Յովհաննէս Է. ը Հայոց վրայ Պատրիարք դրաւ . և սրովհետեւ Եպարզոսն իմացած էր Յովհաննէսի ճանապարհորդութիւնը, հարցուց թէ լուր մ'առած է Աւետիքի վրայօք . նա՛ ոչ պատասխանեց :

Հ. Ուրիշ ինչ հարցումներ ըրաւ Եպարզոս Յովհաննէս Պատրիարքին :

Պ. Աւետիքի և Գաղղիոյ դեսպանին մէջ եղած խօսակցութիւնները մի առ մի քննելէն

յետոյ՝ լատինացեալ Հայ քահանայից, Փրօփականտայէն եկող Հայ քարոզիչներուն և պապականացեալ Հայոց հոգեւոր արարողութիւնները մատակարարող անձանց վրայօք տեղեկութիւններ ուղեց . Յովհաննէս Պատրիարք խոհեմութեամբ երեք օր պայմանաժամ խնդրելով՝ գաղտնի իմացուց լատինացեալ քահանայից և պապականացեալ Հայ ժողովրդոց, բայց անոնք պատասխան անդամ չտուին . ուստի երեք օրէն վերջը Յովհաննէս յայտնեց Եպարզոսին, և Եպարզոսն ալ ամենը մէկ ժողովելով բանտ դնել տուաւ՝ որոնցմէ հինգ հոգի Մահմետականութիւնն ընդունելով ազատեցան, ոմանք պաշտօնեայնները կաշառելով ազատեցան և շատերը մնացին բանտը, մինչեւ որ Գաղղիոյ դեսպանը կասկածելով՝ որ զինքը կը մատնեն Ինքնապետին, շատ ստակ վատնելով Վէզիր Բէհետասին իրեն կողմն որսաց, բանտարկեալներն ազատեց և Յովհաննէսը ձգեց Պատրիարքութենէն մէկ տարիէն վերջը :

Հ. Յովհաննէսին ո՞վ յաջորդեց :

Պ. Սահակ Ապուշեղցի վերստին . սա խաղաղութեամբ ազգը կառավարեց 5 տարի և 3 ամիս . բայց Թէքիրտաղի առաջնորդը հետը թըշնամանալով եկաւ Կ. Պօլիս, Հայ մեծամեծներն

և Դրան բարձրաստիճան պաշտօնակալներն իրեն կողմորսալով Սահակը պատրիարքութենէ ձգեց. Եպարգոսը հրամայեց Հայոց որ Պատրիարք մը ընտրեն. Հայք՝ որ Պատրիարք ընտրելէ և հըրաժարեցնելէ ձանձրացած էին, տարակուսի էին թէ զով ընտրեն : Նոյն օրերը Յովհաննէս անուն Գանձակեցի արեղա մը կը գտնուէր որ փռան մը մէջ կը բնակէր Կ. Պօլիս, շատերը եպիսկոպոս կը կարծէին զինքը. հացագործներն ալ զայն ներկայացուցին Պատրիարք ընելու համար. թէպէտ Հայերէն շատերը չէին ընդունէր զայն, բայց Յովհաննէս արեղայ ճարտարտեսու ըլլալուն՝ ժողովրդեան մեծ մասն իրեն գրաւեց և Պատրիարք եղաւ Յովհաննէս Ը. անուամբ : Ասի Պատրիարք ըլլալուն պէս նախ լատինացեալ Հայոց նամակ գրեց՝ յորդորելով որ Հայոց եկեղեցին դան, բայց անոնք ամենեւին մտիկ չբրին, յետոյ լատինաց եպիսկոպոսին նամակ գրեց՝ աղաչելով որ Հայերը չ'արգելէ իրենց եկեղեցին երթալէ. ասկէ ետքը կամաց կամաց սկան գալ Հայոց եկեղեցին :

Հ. Ասիկց ետքը ինչ ընթացք բռնեցին լատինք Հայոց դէմ :

Պ. լատինք առաւել եւս բարկանալով սկսան

Հայոց եկեղեցին նախատել, ըսելով՝ թէ Հերետիկոս Հայ եկեղեցիներուն առջեւէն անցնելն անգամ մեծ մեղք է, և սկսան ստակ հաւաքել որ Եպարգոսը հաճեցունեն զի իրենց՝ զատ եկեղեցի և զատ Պատրիարք մը դնէ. Եպարգոսն իմանալով Պապականաց այս խորհուրդը՝ Պապականաց 3 գլխաւոր եպիսկոպոսները բանտարկել տուաւ. ուստի լատինք բոլոր Պապական ժողովուրդն ՚ի ժողով հրաւիրելով՝ խորհուրդ բրին որ պատրիարքն ամբաստանեն, և հետեւեալ օրն Եպարգոսին աղերսագիր մը մատուցանելով Պատրիարքն ամբաստանեցին, ըսելով թէ Պատրիարքը մեր 3 եպիսկոպոսները բանտարկել տուած է չեմք զիտեր ինչ պատճառաւ. Եպարգոսն այս բանիս վրայ բարկանալով՝ հրամայեց սը զիրենք թելադրող և առաջնորդ եղող անձինքն իրեն իմացունեն, և երբ անոնք չուզեցին իմացնել՝ Պապական ժողովուրդին մէջէն մէկ քանին բանտարկել տուաւ և միւսնեւրէն ալ երայխաւոր առնելով ազատ թողուց որ երթան իրենց առաջնորդ եղող անձինքն իրեն բերեն :

Հ. Պապականք կրցան բերել Եպարգոսին իրենց առաջնորդները :

Պ. Փրօփականտայի քարոզիչք, Լատինք և պապականացեալ Հայ կղերականք այս բանք կանխաւ իմանալով, ոմանք Լատինաց վանքին մէջ և ոմանք Պաղղիոյ դեսպանատունը պահուըտեցան, ժողովուրդը չկարենալով գտնել զանոնք, յուսահատեալ՝ Լատին եպիսկոպոսին և Պաղղիոյ դեսպանին դացին և սկսան սպառնալ բսելով թէ՛ մեզ առաջնորդ եղաք, թէ՛ դուք մեզ ոտք հանեցիք, թէ՛ դուք մեր եղբարցը մէջ ատելութիւն ձգեցիք և հիմայ բոլորովին ետ կը կենաք : ժողովուրդին այսպիսի յուսահատեալ խօսքերէն վախնալով իրենց քով պահուըտած պապական եպիսկոպոսները և քահանայները յորդորեցին որ երթան, խոստանալով որ ամէն միջոց ՚ի գործ կը գնեն զիրենք ազատելու համար, և ամենքն ալ բանտարկուեցան : Պատականացեալ ժողովուրդն իմանալով ասոնց խարդախ և քսու բնաւորութիւնը՝ սկսան ատելութեամբ վարուիլ Լատինաց հետ, և իրենց մայրենի եկեղեցւոյն գիրկը դարձան՝ ասով խաղաղութիւնը վերստին հաստատուեցաւ Հայոց մէջ :

Հ. Յովհաննէս Ը. ի Պատրիարքութիւնը որչափ տեւեց :

Պ. Հաղիւ 1 տարի և 8 ամիս . վասն զի նոյն օրերը Երուսաղէմի վանքը մեծ վտանգի էր իւր մեծագումար պարտուցը պատճառաւ, և գրեթէ ամեն Հայ մտատանջութեան մէջ էր, նոյն ատեն Պօլիս կը գտնուէր նաև Ս. Կարապետի միաբաններէն Յովհաննէս վարդապետ Բաղիչեցի, որ իւր սքանչելի քարոզութեամբը բոլոր ժողովուրդեան և Պատրիարքին սիրելի եղած էր : Սա ուղելով Երուսաղէմի վանքին դարման մ'ընել, Գումգափուի Ս. Աստուածածնայ եկեղեցւոյն մէջ Հայոց երեւելիներէն ժողով մը դումարելով՝ սկսաւ ողբալ Երուսաղէմի վանուց թշուառութիւնը . ժողովուրդը Յովհաննէս վարդապետի աղղու խօսքերէն զգածուելով ամեն կերպ ձեռնտուութիւն ընել խոստացաւ, այն պայմանաւ որ Յովհաննէս յանձն առնուի . Պօլսոյ և Երուսաղէմի պատրիարքութիւնները . սկիզբէն Յովհաննէս շատ դէմ կեցաւ, բայց երբ տեսաւ ժողովուրդին ստիպումը և Յովհաննէս Պատրիարքին յօժարութեամբ հրաժարիլը՝ յանձն առաւ միայն Պօլսոյ պատրիարքութիւնը, և եղաւ Յովհաննէս Թ. Պատրիարք : Ասի կորտ ըսուեցաւ : Իսկ Ս. Կարապետի առաջնորդ Գրիգոր վարդապետը՝ Երուսա-

դէմի Պատրիարք եղաւ՝ ժողովուրդեան և Էջմի-
ածնայ Աստուածատուր Կաթողիկոսի թախան-
ձանօքը :

Հ. Այս երկու Պատրիարքներն իրենց պաշ-
տօնն ի՛նչպէս վարեցին :

Պ. Կարծես նախախնամութենէն յատուկ ընտ-
րուած էին այս երկու անձինքը . վասն զի Գրի-
գոր , որ Երուսաղէմի Պատրիարք եղաւ , 8 տա-
րի շարունակ շղթայ կրելով Երուսաղէմի ամբողջ
պարտքը վճարեց , որուն համար Շղթայակիր
Գրիգոր Պատրիարք կոչուեցաւ . և Յովհաննէս՝
որ Կ. Պօլսոյ Պատրիարք եղաւ , անհնարին տա-
ւապանքներ կրելով և ամենէն խորամանկ Լա-
տինաց դարաններէն և մեքենայներէն իր ժո-
ղովուրդը զգուշացնելով՝ եկեղեցիներ շինեց ,
դպրոց մը բացաւ Իսկիւտարու մէջ , և բազ-
մաթիւ աշակերտներ հասուց : Ասոր օրով Աղ-
ուանք Նոր Զուղայի վրայ յարձակեցան և բազ-
մաթիւ Հայ ջարդեղէն և շատ նեղութիւններ և
տառապանքներ տալէն յետոյ 40 Հայ օրիորդ-
21000 թուման աւանելով վախան 1722 թուա-
կանին :

Հ. Ուրիշ ի՛նչ դէպք պատահեցաւ Հայաստա-
նի մէջ Յովհաննէս Թ. ի օրով :

Պ. Նոյն միջոցներուն Սիւնեաց աշխարհին Հա-
յերը խիտ նեղութեան մէջ էին այլազգի իշ-
խանաց յարձակումներէն . ուստի՝ Դաւիթ Սիւնի
քաջ իշխանը՝ քանի մը հոգի ժողվեց , թըշ-
նամեաց դէմն ելաւ և վախուց զամենքն ալ ,
Դաւիթ այս յաղթութիւնն իմանալով Հայ իշ-
խանները եկան հետը միացան , որով Դաւիթ
զօրքերը 400 ի չափ բլլալով սկսան շրջակայ թըշ-
նամի այլազգեաց վրայ յարձակիլ և յաղթելով
ամենուն սիրտը վախ ձգեցին . Տաճիկ իշխան-
ներն ամենը մէկ միացած Հայոց վրայ եկան .
Դաւիթ՝ իր անսարտելի օգնական Մխիթար իշ-
խանը Հայոց վրայ՝ զօրավար կարգելով Տաճկաց
դէմ պատերազմի ելաւ , բայց Հայերը սեսնե-
լով թշնամեաց անհամար բազմութիւնը ցիրու-
ցան եղան և Դաւիթ 17 հոգւով մնաց :

Հ. Դաւիթ ի՛նչպէս պատերազմեցաւ Տաճկաց
դէմ :

Պ. Հալիձորոյ Մէլիք Փարսատան և Տէր Աւե-
տիք կարիճ պատերազմողները քանի մը հոգւով
եկան միացան Դաւիթի հետ , որոնցմով դար-
ձեալ 450 հոգւոյ չափ եղաւ Հայոց Գունդը ,
և ամենքն ալ հաղորդուելով պատրաստուեցան
պատերազմի . թէպէտ թշնամիք 70000 էն աւելի

էին , եկան պաշարեցին Հայիձոր բերդն ու ըս-
կըսան սաստիկ պատերազմիւ վեց օր շարունակ .
Թշնամեաց կողմէն օրը 300 էն աւելի մարդ կը
ջարդուէր , և Հայոց կողմէն հազիւ 1 մարդ .
Տաճիկները տեսնելով որ պաշարմամբ բան մը
չկրցին ընել՝ յուսահատած սկսան մեքենաներով
բերդեն վեր ելնել , բայց բերդականք զար-
մանալի արագութեամբ պատերազմելով և ոչ
մէկու մը թողուցին որ բերդէն վեր ելնէ . պա-
տերազմին տաքցած ատենը Տէր Աւետիք և Մը-
խիթար 200 հոգւով բերդին դաղտնի դռնէն
դուրս ելան և սկսան թշնամեաց ետեւէն պա-
տերազմիլ . այսպէս Տաճիկներէն 13000 մարդ
ջարդելով 148 դրօշակ և շատ ալ աւար առին
և ցիրուցան ըրին թշնամին . ասանկով մօտա-
կայ թշնամեաց սիրտը վախ ձգեց Դաւիթ և 6
տարի իշխելէն ետքը մեռաւ 54 տարեկան :

Հ . Դաւիթ Սիւնի քաջ իշխանին օվ յաջորդեց :

Պ . Հայերը միաբան հաւանութեամբ Մխի-
թարն իրենց առաջնորդ և իշխան ընտրեցին .
բայց վերջերը մէջերնին խռովութիւն իյնալով
ոմանք Տէր Աւետիքի և ոմանք Մխիթարայ կողմն
անցան . ասանկով միութեան կապը քակուե-
լով զօրութիւննին պակսեցաւ . իմացան Տաճիկ-

ները Հայոց բերդականաց անմիաբանութիւնը ,
եկան բերդը պաշարեցին . բերդականք չկրնա-
լով դէժ գնել՝ Մխիթարէն ծածուկ որոշեցին
որ բերդը մատնեն և իրենք ազատին . ուստի
Տէր Աւետիքը պատգամաւոր զրկեցին . Տաճիկնե-
րն երդմամբ խօստացան բան մը չընել , բայց
բերդին տիրելէն յետոյ , բոլոր պատերազմող-
ներն թրէ անցուցին , բաց ՚ի Մխիթարէն որ ի-
մանալով անոնց խորհուրդը գիշերանց փախել
էր . Մխիթար քանի մօր պահուրտելէն վերջը՝
նորէն մարդ ժողովելով եկաւ քանի մը քաղաք-
ներու տիրեց , և երբ խնձորէսք բերդը պաշա-
րեր էր , օր մը քնացած ատեն իր մարդիկներն
եկան դուխը կտրելով Դաւիթ նստող բդեշխին
տարին , որ ցաւելով այն քաջ մարդուն սպան-
մանը ու ողջ չբռնուելուն վրայ , և զանի մեռ-
ցընողները սպաննել տուաւ , ըսելով « Դուք
այս քաջ , առաքինի և իրաւանց պաշտպան
մարդն աշխարհէ զրկեցիք , ուրեմն դուք որ
վատ և տիրանենդ մարդիկներ էք , առաւել
ևս արժանի էք զրկուելու աշխարհէս » :

Հ . Յովհաննէս կոլտա Պատրիարքին օրով ինչ
դէպք պատահեցաւ :

Պ . Աշուանք Պարսկաստան յարձակած միջո-

ցին , Օսմանեանք ալ Հայաստան արշաւեցին և 3 ամիս անդադար պատերազմելէ վերջը , Երեւան , Դաւրէժ , Գանձակ և ուրիշ շատ մը քաղաքներ առին , և անոնց Հայ բնակիչներն ըստ մասին ջարդեցին , և մեծ մաս մ'ալ գերի բռնելով Կ . Պօլիս և ուրիշ քաղաքներ տարին , և սկսան ծախել . Յովհաննէս Պատրիարք այս բանքս իմանալով , Եպարդոսին զնաց և աղաչեց որ արգիլէ գերեվաճառութիւնը , և մանաւանդ զանոնք՝ որ Սուլթանին հարկ կուտան . Եպարդոսը խելացի մարդ մ'ըլլալուն՝ իրաւունք տալով Պատրիարքին խօսքերուն , խստիւ արգիլեց գերեվաճառութիւնն ամեն տեղ . այս ատեններս Էջմիածնայ Աստուածատուր կաթողիկոսը վախճանելով իրեն յաջորդեց Ռէնեցի կարապետ Եպիսկոպոս՝ որ Գաղատիոյ առաջնորդ էր : Ասոր օրով Էջմիածին Յովհաննէս ձեռքն անցնելուն , կաթողիկոսը Պօլիս Ս . Աստուածածնայ եկեղեցւոյն մէջ օծուելէն ետքը , Եպիսկոպոսական ժողով գումարեց՝ ազգային գործերու և Երուսաղէմի վանուց պատրիարքութեանը վերայօք կարգադրութիւններ ընելու համար :

Հ . Ինչ որոչեցին Երուսաղէմի պատրիարքութեան համար :

Պ . Երկար ատեն խորհելէն յետոյ՝ որոչեցին և վճռեցին որ այսուհետեւ Երուսաղէմի միաբան չեղող ո՛ր և է անձ Ս . Երուսաղէմի Պատրիարք չ'ըլլայ , և ժողովուրդին ալ սիրով և խաղաղութեամբ ապրելու համար յորդորներ տալով՝ պատրաստուեցաւ երթալ Էջմիածին : Նոյն օրը Լատին եպիսկոպոսը և Գաղղիոյ դեսպանատան թարգմանը շնորհաւորութեան եկան Կաթողիկոսին , որ սիրով ընդունեց զիրենք և յորդորեց որ սիրով և խաղաղութեամբ վարուին Հայոց հետ , և հետեւեալ օրն ալ 'Էնչան փոխադարձ սիրոյ իր կողմէն Մանուէլ եպիսկոպոսը զրկեց Լատին եպիսկոպոսին և Գաղղիոյ դեսպանին՝ որ շատ սիրով ընդունուեցաւ . բայց քանի մ'օրէն վերջը երբ Կաթողիկոսը ճամբայ ելաւ զէպ յԷջմիածին , Լատինք իրենց խոստմանցը դրժելով՝ դարձեալ սկսան երկայառակել զՀայս : Յովհաննէս պատրիարք իր ազգասիրութեամբն ամեն գործի կը հասնէր՝ թէ 'ի դաւառս և թէ 'ի Պօլիս , ամենուն հետ սիրով կը վարուէր , լատինացեալ Հայերը մի առ մի կը կանչէր , կը յորդորեր կը համոզէր ու կ'աղաչէր . Լատին եպիսկոպոսին ալ նամակներ գրեց , և մէկ քանի անգամ ինքն անձամբ զնաց , ա-

զաչեց որ Հայ ժողովուրդը չարդիլէ Հայոց եկեղեցի յաճախելէն : Նոյնպէս մէկ քանի անգամ ալ Գաղղիոյ դեսպանին դնաց . դեսպանը Պատրիարքին աղաչանաց զիջանելով՝ խոստացաւ որ կը համոզէ Լատին եպիսկոպոսը :

Հ . Դեսպանը իր խոստմունքը կատարեց ,

Պ . Թէեւ դեսպանը շատ ջանաց համոզել զԼատինս՝ որ Հայոց հետ սիրով վարուին , բայց անկարելի եղաւ . վասն զի նոքա սկսան գիշերը ցերեկ պապականացեալ Հայ տուններուն մէջ քարոզութիւններ ընել : այս պատճառաւ շատ Հայեր բանտերու մէջ մեռան , մէկ քանին գըլուխնին կորսնցուցին և շատերն ալ աղքատացան : Ասկէ ետքը Հայք սկսան բողոքովին հեռու շրջիլ Լատիններէն . բայց սոքա նոր մեքենայ մը հնարեցին Հայերը վերստին որսալու , ըսելով որ՝ մենք խորհեցանք ձեզի համար ուրիշ եկեղեցւոյ հրաման առնել Գաղղիոյ դեսպանին միջոցաւ , բայց գոնէ առայժմ 50000 դահեկան պէտք է , այս գումարը հաւաքեցէք . թէեւ ժողովրդեան մեծ մասը գիտէին այդ հրամանին անկարելիութիւնը , բայց միամիտներ իրենց մէջ դրամ ժողովելով՝ Գաղղիոյ դեսպանին տուին , վասն զի քանի քանի անգամ լատինք

զանազան խոստմամբ խարելով՝ ստակնին առած և իրենց պիտոյիցը գործածած էին . ստոր համար Հայերը փոխանակ ստակնին Լատին քահանայից տալու՝ դեսպանին տուին :

Հ . Լատինք կատարեցին իրենց խոստմունքը :

Պ . Երբ դեսպանը Հայ պապականաց համար մասնաւոր եկեղեցւոյ մը հրամանն առնելու կ'աշխատէր , լատինք ամենը մէկ ոտք ելնելով դացին դեսպանին իմացուցին որ՝ եթէ Հայ պապականք մասնաւոր եկեղեցի ունենան , իրենց եկեղեցեաց եկամուտը կը կորի , և ան ատեն ինչպէս պիտի ապրին , եւայլն . այսպէս խօսքերով համոզեցին զդեսպանը . իսկ ասդին՝ ստակ տրուող խեղճերը կ'սպասէին որ զատ եկեղեցի պիտի ունենան : Եւ երբ տեսան որ այս ստակնին ալ դնաց , ամենքը դեսպանին գացին և սկսան ստակնին ետ պահանջել . դեսպանին ճարը հատնելով վռնտեց զամենքն ալ . ըսելով որ՝ ես ձեռնէ այն ստակը ոչ թէ մասնաւոր եկեղեցի շինել տալու համար առի , այլ Լատինաց եկեղեցին արձակ համարձակ գալու համար :

Հ . Պապականացեալ Հայերն ինչ ընթացք բռնեցին երբ դեսպանէն բացասական պատասխան ընդունեցին :

Պ. Ամենը մէկէն Եպարդոսին աղերսագիր արժ-
ւին, ըսելով որ՝ Գաղղիոյ դեսպանը և Լատին
եպիսկոպոսը մեր ստակներն առին, մեզի մաս-
նաւոր եկեղեցւոյ հրաման առնելու խոստումով,
բայց ոչ հրաման առին և ոչ ստակնիս կուտան:
Եպարդոսն աղերսագիրը կարդալով ամենքն ալ
վաճակեց. ուստի պապականք հասկնալով լա-
տինաց ընթացքը՝ սկսան հեաղհետէ Յովհաննէս
պատրիարքին դիմելով մեղայ գոչել. այնպէս
որ Լատին եկեղեցեաց մէջ հաղիւ քանի մը Գա-
ղատացի Հայեր կը տեսնուէին. այնուհետեւ շատ
տուներէ վաճառուիլ սկսան Լատին քահանայք,
որով բողոքովին վարկերնին կտորեցաւ թէ ՚ի Պա-
լիս և թէ դաւառներուն մէջ:

Հ. Ուրիշ ինչ հնարք մտածեցին լատինք Հա-
յերն որսալու համար:

Պ. Տեսնելով որ ալ անկարելի է Հայոց սիրտը
շահիլ, սկսան Պատրիարքարան յաճախել. և
Հայոց եկեղեցւոյն հետ միութեան վրայօք խօ-
սիլ. և օր մը Գաղղիոյ դեսպանն իր ընտանի-
քովը և երեւելի պաշտօնակալներովը Ղալաթիոյ
Ս. Լուսաւորչայ եկեղեցին եկան քանի մը Լա-
տին եկեղեցականներով. նոյնպէս աւագ ուր-
բաթ օրը թափօրի համար Ղալաթիա իջան Գաղ-

ղիացւոց և Լեհացւոց դեսպաններն իրենց ըն-
տանիքովը, և քէմեր աթը ըսուած փողոցը
նստան և ստիպեցին որ նախ Հայերը թափօրի
եղնեն, յետոյ Լատինք, և ՚ի վերջոյ Յոյներ
մինչդեռ առաջները նախ Յոյք և յետոյ Հա-
յերը կը կատարէին. սակայն որչափ որ Լատինք
կը մօտենային Հայոց, Հայք ընդհակառակն ա-
ռաւել եւս կը դժուէին անոնցմէ: Նոյն օրերը
վախճանեցաւ Յովհաննէս Թ. կոչոտ Պատրիարք
25 տարի և 5 ամիս պատրիարքութիւն ընելէն
յետոյ: Իրեն յաջորդեց Յակոբ Նալեան՝ զոր
ինքն ընտրած էր իրեն օգնական և միանգամայն
յաջորդ:

Հ. Յակոբ Նալեան ինչպէս կառավարեց ազգը:

Պ. Խոհեմ և առաքինի անձ մ'ըլլալուն՝ խա-
ղաղութեամբ կառավարեց ազգը: Ասոր օրով
լատինք նոր վարպետութիւն մը խորհեցան՝ պա-
պականացեալ Հայերէն ստակ քաշելու համար:
Եւրոպայէն մայրապետներ բերել տուին, և ա-
նոնց ձեռքով սկսան պապականներուն տուներէն
ստակ հաւաքել, ըսելով որ՝ կառավարութիւնը
Հայոց ձեռքէն Ղալաթիոյ Ս. Լուսաւորչայ և
Սամաթիոյ Ս. Գէորգայ եկեղեցիներն առնելով
ձեզի սխաի տոյ. առանկով շատ ստակ ժողուե-

լով պահուրտեցան . պապականեալ Հայք լատինաց ձեռքէն քաշած նեղութիւններնուն համար բողոքեցին . Եպարգոսն ալ ամէնքն ալ բանտարկել տուաւ , ըսելով որ՝ ո՛ւսկից առիք այդ իշխանութիւնը որ ուրիշի ստացուածքը գրաւելու կ'երնեք . որով մեծամեծ տուգանք տալով հազիւ ազատեցան բանտէն : Այս օրերը Գաղատացի պապականացեալ Հայք Սօֆիճի խանին մէջ ձայնաւոր պատարագ ըսել սկսան , բայց Եպարգոսն իմանալով Գաղատացւոց մեծերէն շատերը բանտարկել տուաւ , որոնք մեծամեծ տուգանքներով հազիւ կարող եղան ազատիլ :

Հ . Յակոբ Նալեանի օրով ի՛նչ պատահեցաւ Հայոց :

Պ . Ռըչափ որ Յակոբ Պատրիարք կը փափաքէր ժողովուրդը խաղաղութեամբ պահել , ընդհակառակն լատինք շարունակ գժտութեան և երկպառակութեան որովք պակաս չէին ըներ Հայոց մէջէն . ինչպէս որ այս անգամ Սիլիստրեցի Պրոխորոն անուամբ փառասէր վարդապետ մը Պօլիս գալով , մէկ քանի պապականացեալ Հայեր մտտեցան , և խոստացան Պատրիարք կարգել տալ զինքը , եթէ իրենց կողմն անցնի . Պրոխորոն՝ անսալով անոնց խորհրդոց՝ մեծամեծ

ընծաներով Եպարգոսին գիմեցին , և առանց ժողովուրդին իմացնելու Պատրիարք ըրին զՊրոխորոն , և Ս . Զատիկի առջի օրն արքունի տաշներով Պրոխորոն Պատրիարքը Ս . Աստուածածնայ եկեղեցին բերելով կուզէին ներս մըտցընել , երբ ժողովուրդը տեսաւ զայն՝ սկսաւ աղաղակել թէ՛ մենք զքեզ չենք ճանչնար , մենք Յակոբ Պատրիարքը կը ճանչնամք և զայն կ'ընդունիմք . բայց տաշներ բռնութեամբ ներս խօթելով տարին Պատրիարքական ամբողջ բազմեցուցին . և մինչդեռ կը պատրաստուէր քարոզի՝ դարձեալ սկսան աղաղակել , մեծամեծք տեսներով որ Պրոխորոն բռնութեամբ կ'ուզէ պատրիարքական գահը բարձրանալ , Սուլթանին իմացուցին . Սուլթանը զԵպարգոսը կանչելով՝ յանդիմանեց , առանց ազգին հաւանութիւնն առնելու Պատրիարք կարգելուն համար : Պրոխորոն եօթն օր պատրիարքութիւն ընելէն ետքը , Սամուելի բերդն աքտորուեցաւ և Հայոց ալ հրաման ելաւ որ իրենց Պատրիարք մը ընտրեն :

Հ . Յակոբ Նալեանի պատրիարքութիւնը ո՞րչափ տեւեց և Մինասի ո՞վ յաջորդեց :

Պ . Պրոխորոնի բռնութեամբ գահն ելած ա-

տեն՝ Նալեանն Յակոբ Պատրիարք 8 տարի և 2
ամիս պատրիարքութիւն ընելէն ետքը հրաժա-
րեցաւ : Նոյն ատենը մեռաւ նաև Երուսաղէմի
Կրիզոստոմոս շրջապակիր Պատրիարքը՝ և որովհետև
միաբանութիւնը դեռ չէր որոշած միաբաններէն
մէկը , առժամանակեայ Յակոբ Նալեանն ընտ-
րեցին Երուսաղէմի Պատրիարք , և Ս . Կարապետ
վանքին առաջնորդ Մինաս վարդապետը՝ Կ . Պօլ-
սոյ Պատրիարք ընտրուեցաւ : Ասոր օրով Էջմի-
ածնայ Ղազար Կաթուղիկոսը վախճանելով իրեն
յաջորդեց Մինաս վարդապետ , որ դեռ 2 տարի
էր Պօլսոյ Պատրիարք ըլլալը : Ուստի Մինասին
տեղ Կ . Պօլսոյ Պատրիարք ընտրուեցաւ Ղափան-
ցի Գէորգ վարդապետը , որ բարի և մարդասէր
անձ մ'ըլլալուն՝ ժողովուրդն սկսաւ հայրաքար
կառավարել . բայց անձնական տկարութեանը
պատճառաւ 1 տարիէն հրաժարեցաւ : Ասոր օր-
ովը խիստ երեւելի էր Հայոց մէջ Ակնցի Եղզուպ
ամիրան , որ ներքինապետին Հայ որդեգիրն իրեն
կնութեան առած էր , բայց Հայու մը թշնամու-
թեամբ սպաննուեցաւ : Եղզուպ ամիրայի մահ-
ուանք վրայ Հայք , Յոյնք , Հրեայք և Տաճիկք
առ հասարակ սգացին : Պօլեցիք Յակոբ Նալեա-
նը խնդրեցին՝ որ դայ դարձեալ Կ . Պօլսոյ Պատ-

րիարք ըլլայ : Յակոբ Պատրիարք 3 տարի և 1
ամիս Երուսաղէմի պատրիարքութիւնը վարելէն
ետքը՝ վերստին Կ . Պօլսոյ Պատրիարք եղաւ ,
և 12 տարի ազգը խաղաղութեամբ կառավարե-
լէն ետքը՝ յօժարութեամբ իրեն յաջորդ ընտ-
րեց Ղրիզոստոմոս վարդապետ Պասմաճեան Կ . Պօլ-
սեցի , և հրաժարականը գրեց Եպարդոսին՝ իմա-
ցրնելով նաև իր յաջորդին անունը : Նալեանի
օրով յոյժ երեւելի էր Հայոց մէջ Ղազար Ամի-
րայ , որ Բաղուպ բաշա Եպարդոսին սեղանաւորն
էր :

Հ . Ղազար ամիրայի վրայ ինչ գիտելիք կայ :

Պ . Խոհեմ՝ և առաքինի անձ մ'ըլլալուն , Բա-
ղուպ բաշա ոչ միայն իրեն սեղանաւոր ընտրեց ,
այլ բոլոր սեղանաւորաց ալ գլուխ կարգեց , և
հրաման տուաւ որ կարմիր թաւիչ փակեղ դնէ ,
և ձիով սպասաւորով շրջի ամեն աեղ , այժ մե-
նաշնորհութիւն մ'էր իրեն : Ղազար ամիրայ իւր
մարդասիրութեամբն ու առատաձեռնութեամբը
բոլոր հպատակ ազգաց սիրտն իրեն դրաւեց ,
բայց Երուսաղէմի Ս . Յակոբայ վանքն Յունաց-
մէ պահանջուելուն պատճառաւ . Փողերանոցի
տեսուչ Ստալրաք օղլու Յոյնին հետ թշնամացաւ ,
և երբ Բաղուպ բաշա մեռաւ , իրեն յաջոր-

դեց Համիտ Համզա բաշա, որուն սեղանաւորք Ստափրաք օղլուն ըլլալուն՝ Ղազարը մատնեց տէրութեան, ըսելով թէ՛ Րազուպ բաշայի բոլոր ստացուածքը Ղազարի քովն է. խսկոյն բանտարկուեցաւ Ղազար, և 40 օրի չափ տանջուելէն ետքը՝ յանուն արդարութեան զՍուլթան Մուստաֆան դատի հրաւիրեց: Երբ այս լուրն առաւ Սուլթան՝ դահէն վար իջաւ, և երեք քայլ յառաջանալով՝ հրամայեց որ գլխատուի իւր ոսոխը Չուխանի խանին դրանն առջեւ, և բոլոր ըստացուածքը յարքունիս գրաւեցաւ, բաց ՚ի երկու սնտուկէ՛ որ Ղազար ամիրայի կինը Տիրուհի մին Չօպան աղա սնուն Հայու մը, և երկրորդը Շնորհք սնուն անձի մը տուած էր պահելու համար. որ վերջը թէեւ Չօպան մականունանեալ Հայը սնտուկը ոսկւով լի ետ դարձուց, բայց Շնորհք աղամանդով լի սնտուկն առնելն ուրացաւ:

Հ. Յակոբ Նալեանի հրաժարականն ընդունուեցաւ:

Պ. Սկիզբէն Եպարզօսը չընդունեց հրաժարականը, բայց Յակոբ Պատրիարք՝ երկրորդեց. Եպարզօսը Սուլթանին ներկայացուց, և Սուլթանը՝ որ պին գործ արդարութեամբ և ի

մաստութեամբ կը տեսնէր, կասկածելով թէ դուրէ ակամայ և կամ քանի մ'անձանց ստիպմամբն եղած ըլլայ, իր հաւատարիմ մարդոցմէն մին Յակոբ Պատրիարքին զրկեց, և իմանալով որ յոժար կամօք կը հրաժարի, հրամայեց Եպարզօսին, զԳրիգոր Պատմաճեանը Հայոց Պատրիարք կարգէ: Յակոբ Նալեան իր օրերը գրաւոր երկասիրութեամբ անցուց և բաւական գրքեր տպել տուաւ, որք են՝ Զէն Հօգետոր, վե՛՛ Հասարոյ, Սեփուհի-Նարեկի, Գանչօքա՛ Մանուշմանց. և քիչ մը վերջը մեռաւ 1764 յուլիս 18 ին, և թաղուեցաւ Բերայի գերեզմանատան մէջ:

Հ. Գրիգոր Գ. ի Պատրիարքութիւնը ո՞րչափ տեսեց:

Պ. Խելացի, հեռատես և Նալեանի օրով վերջառու ըլլալուն՝ 9 տարի և 6 ամիս ազգը խաղաղութեամբ կառավարելէն և ճիզվիթաց ամեն մեքնայները հեռատեսութեամբ խորտակելով՝ ժողովուրդն զդուշաքընելէն ետքը հրաժարեցաւ: Իրեն յաջորդեց Զաքարիա Կաղզուանցի վարդապետը, որ Էջմիածնայ նուիրակ էր: Զաքարիա Պատրիարք՝ իր ազգասիրութեամբն սկսաւ ժողովուրդը հայրաբար խնամել. ամեն կողմ խա-

ղաղութիւնը կը տիրէր . թէպէտեւ մերթ ընդ-
 մերթ ճիզվիթութիւնը գլուխ կը վերցընէր , բայց
 Պատրիարքին և անոր խորհրդականացը մէկ ակ-
 նարկովը գետինը կիյնար . սակայն Ղատինք չու-
 գելով Հայոց խաղաղութեան երես տեսնելը ,
 վերստին խռովութիւն հանեցին . և Զաքարիա ,
 9 տարի պատրիարքութիւն ընելէն ետքը , Պրու-
 սա աքսորել տուին , և անոր տեղը Յովհաննէս
 Ամատանցի վարդապետը Պատրիարք եղաւ , զոր
 11 ամիսէն Հայերը վար առնելով , Զաքարիան
 վերստին Պատրիարք դրին : Այս միջոցին Սոյ
 եփրեմ կաթուղիկոսը վախճանեցաւ տեղւոյն այ-
 լաղդի իշխաններէն թունաւորուելով , և իրեն
 յաջորդեց Թորոս եպիսկոպոս Սսեցի :

Հ . Զաքարիայի պատրիարքութեան միջոցին
 Հայոց մէջ ի՞նչ երեւելի դէպք պատահեցաւ :

Պ . Զաքարիա Պատրիարքին օրովը վերստին
 սկսաւ խռովութիւնը Հայոց մէջ , անանկ որ սկսան
 մէկզմէկ մատնել Բ . Դրան , որով շատ անմեղ
 անձինք բանտարկուեցան , և մեծամեծ տու-
 դանքներով հազիւ կաղատէին : Զաքարիայի օ-
 րով երեւելի էր Տատեան Առաքել ամիրայն ,
 որ արքունի վառօգանոցը շինեց Յղատար , և
 ինքը վերատեսուչ եղաւ արքունի հրամանաւ :

Եւ այդ պաշտօնը մինչեւ ցայսօր Տատեան գեր-
 դատտանին յանձնուած է : Այս միջոցին կատա-
 րինէ Բ . Ռուսաց կայսրուհին Ղրբըմի Հայերը
 ճրաւիրեց ՚ի Ռուսաստան , որոնցմէ մեծ մաս մ'ե-
 կան և Տօն գետին եղերքը Նոր Նախիջեւան քա-
 ղաքը շինեցին , ուր 1816 ին 4600 տուն Հայ բը-
 նակիչ կար , կ'ըսեն , ազգային քաղաքապետի մը
 իշխանութեան տակ : Զաքարիա երկրորդ անգամ
 17 տարի պատրիարքութիւն ընելէն յետոյ մե-
 ուաւ :

Հ . Զաքարիայի ո՞վ յաջորդեց :

Պ . Դանիէլ եպիսկոպոս՝ որ էջմիածնէն նուխ-
 րակ եկած էր : Սա խոհեմ և առաքինի անձ
 մ'ըլլալուն սիրելի եղաւ Հայ իշխանաց , որոնք
 Զաքարիայի օր աւուր տկարանալը տեսնելով ,
 ստիպեցին զԴանիէլ որ Պօլսոյ Պատրիարք բլայ .
 Դանիէլ սիրով ընդունեցաւ . հազիւ 11 ամիս
 եղած էր պատրիարքական գահը ելնելը՝ էջմի-
 ածնայ Ղուկաս կաթուղիկոսը վախճանելով տե-
 ղը Դանիէլն ընտրեցին . բայց Դաւիթ եպիսկո-
 պոս յափշտակեց կաթուղիկոսութիւնը՝ վրաց
 Դաւիթ խանին միջոցաւ , և Դանիէլ եկաւ մնաց
 ՚ի կարին . և Կ , Պօլսոյ Պատրիարք եղաւ Յով-
 հաննէս եպիսկոպոս , որ իւր խստաբարոյու-

Թեամբը ժողովրդին հետ աղէկ չվարուելուն՝ Ա տարիէն Եւգոկիա աքսորեցաւ : Ասոր յաջորդեց Գրիգոր եպիսկոպոս Խամանեցի որ 11 ամիս պատրիարքութիւն ընելէն ետքը աքսորեցաւ ՚ի Քաղկեդոն :

Հ - Գրիգոր Պատրիարքի ո՛վ յաջորդեց :

Պ . Պօլսոյ Հայերն երկու կողմ՝ բաժնուած՝ ոմանք Դաւիթը կ'ուզէին և ոմանք ուրիշ անձեր , հուսկ յետոյ միաբանեցան և Յովհաննէս եպիսկոպոսը , որ Եւգոկիա աքսորուած էր , բերելով վերստին պատրիարք դրին : Յովհաննէս Պատրիարք Նարյը գափույի դուրսը Հայոց հիւանդանոցը և Սամաթիոյ Ս . Գէորգայ եկեղեցին շինել տուաւ՝ Սուլթան Սէյիմի հրամանաւ : Նոյն միջոցին Պարսից և Ռուսաց մէջ պատերազմ՝ բացուելով՝ Պարսիկք յաղթուեցան : Դաւիթ անվաւեր կաթողիկոսը , որ Պարսից զօրութեամբը կը բռնանար , էջմիածնայ դահուն վրայ , Ռուսաց միջոցաւ վար առնուելով՝ Դանիէլ օրինաւոր կաթողիկոսը դրուեցաւ : Յովհաննէսի օրով Յոյնք դարձեալ սկսան պահանջել Երուսաղէմի Ս . Յակոբայ վանքը , բայց Յովհաննէս Պատրիարք ազգին բոլոր իշխանները հրաւիրեց ՚ի ժողով , որոնց մէջ էին Տիւզեանք ալ , և յայտնեց ա-

նոնց Երուսաղէմի վանքին Յունացմէ պահանջուիլը . ուստի ամենը մէկ սիրտ և մէկ հոգի աշխատելով ազատեցին վանքը Յունաց ձեռքէն : Այս միջոցին Տաթեւացւոյն և Որոտնեցւոյն Ս . պատարագի ատեն յիշատակութիւնները դադրեցան : Յովհաննէս Պատրիարք երկրորդ անգամ 10 տարի ազգը խաղաղութեամբ կառավարելէն ետքը հրաժարեցաւ , և իւր բնակութիւնն իսկիւտար հաստատեց :

Հ . Յովհաննէսի ո՛վ յաջորդեց :

Պ . Աբրահամ եպիսկոպոս՝ նուիրակ էջմիածնայ : Այս մարդը ՚ի նպատտ վանքին՝ հաւաքած ստակոյն իշխաններէն մէկ քանին իրեն կողմ որսալով՝ և միանգամայն Յովհաննէս Պատրիարքի հետ սիրով վարուելով , Պատրիարքութիւնը ձեռք ձգեց : Սա սկիզբէն թէեւ շատ հեզութեամբ կը վարուէր ազգին հետ , բայց վերջերն սկսաւ խստութիւն բանեցնել թէ եկեղեցականայ և թէ աշխարհականաց , և Երուսաղէմի վանքին միաբաններն արդիւնց ստատարագելէ : Յովհաննէս նախկին Պատրիարք , Պէդեան Յաթութիւն անունով անձը զրկեց , խնդրելով որ Երուսաղէմայ միաբաններուն հրաման տայ պատարագելու . բայց Աբրահամ Պատրիարք մեր-



ժեց զՊէզճեան , և հրամայեց որ դուրս ելնէ սենեակէն՝ դեռն հերձուցողս գուշելով : Այս խօսքը Պէզճեանի ծանր դալով՝ յարմար միջոց կը փնտրուէր վրէժը լուծելու : Ասոր օրով Գատր դիւղի Ս . Թաղաւոր եկեղեցին շինուեցաւ , 1814 յուլիս 4 ին . օժման հանդէսը խիստ շքեղ և փառաւոր կերպիւ կատարուեցաւ : Նոյն օրերը նաև Բերացիք իրենց եկեղեցւոյն շինութեանը հրամանն առնելու համար Պատրիարքին դիմեցին , բայց Պատրիարքը թաղեցւոցմէ բազում ստակ պահանջելուն , ամբողջ սաք ելան , և Պէզճեանի թելադրութեամբ աղերսագիր տուին Սուլթանին ըսելով թէ՛ Պատրիարքն անկարող է ազգը կառավարելու և զժողովուրդը կը կեղեքէ , ուստի կը խնդրեմք որ ուրիշ Պատրիարք մը դրուելու շնորհքն ընէք : Սուլթանը աղերսագիրը կարդալով հրաման ըրաւ որ նոր Պատրիարք մ'ընտրեն . ուստի իշխանք ժողովելով , որոնց մէջ էին Տիւղեանք , Պօղոս եպիսկոպոս Անդրիանուպօլսեցին Պատրիարք ընտրեցին 1815 դեկ . 5 ին , և Աբրահամ Զյոտարի և 4 ամիս Պատրիարքութիւն ընելէն ետքը աքսորեցաւ ՚ի Մարզուան :

Հ . Պօղոս Պատրիարք ինչպէս կառավարեց ազգը :

Պ . Այս մարդն իր խոհեմ և ազգասէր բնութեամբն ազգն սխաւ խաղաղութեամբ կառավարել՝ և ուզելով որ կրօնական բաժանումներն վերցնէ , Հայ իշխաններուն խորհրդով՝ Հռովմէական Հայոց երեւելիներն հրաւիրեց , որոնք էին՝ Տիւղեան Գրիգոր , Աբիկեան Պօղոս , Աստուածատուրեան Մատթէոս Կարնեցի , Տափուտեան Անտօն , Թրնկրեան Յովսէփ և Գըլճեան Անտօն . և հարցուց թէ ի՞նչ է պատճառը որ Հայոց եկեղեցիէն հեռացեր են , և կը նախատեն իրենց կրօնաւորները . Հայոց եկեղեցին կազմուելէն ՚ի վեր ի՞նչ աւելցուցած կամ պակսեցուցած ունի՝ թող ցոյց տան : Հռովմէականք երեք ամիս միջոց խնդրեցին պատասխանելու համար , և շնորհակալութիւն յայտնելով՝ Պատրիարքին այսպիսի առաջարկութեանը՝ ելան դացին : Պօղոս Պատրիարք երեք ամիսէն աւելի ըսպասեց բայց պատասխան տուող չեղաւ : Այս առաջարկութիւնը Գոլէճեան վարդապետաց գործին չեկաւ , ըստ որում պիտի յայանուէր խարդախութիւննին : Պօղոս Պատրիարք վերստին հրաւիրեց Հայ և Հռովմէական իշխանները Գուրու չէյմէի պատրիարքարանը , և երկար ատեն նարանութիւն մ'ընելով յորդորեց զանոնք :

բայց Հռովմէականք իրենց կղերին վրայօք գան-
դատանօք սկսան խօսիլ թէ՛ չեն ուզեր գալ ե-
րես առ երես . ահաւասիկ մենք պատրաստ եմք
ինչ որ կ'ուզէք ըրէք՝ ըսելով գացին : Ուստի
Պօղոս Պատրիարք ստիպուեցաւ կարգաւորները
հրաւիրել :

Հ. Հռովմէական Հայոց կարգաւորներն եկա՞ն
Պօղոս Պատրիարքին հրաւիրին :

Պ. Ոչ թէ գալ՝ այլ և պատասխան տալու ան-
գամ հարկ չսեպեցին . ուստի վերջին անգամ՝
մ'ալ ժողովի հրաւիրեց Պօղոս Պատրիարք Հը-
ռովմէական Հայ արհեստաւորները , և պատմեց
անոնց մի առ մի միութեան համար ըրած ժողով-
ները , իրեն առաջարկութիւնները և Հռովմէա-
կանաց Գոլէճեան կղերէն անպատասխանի մնալը ,
որոնք իմանալով իրաւունք տուին Պատրիարքին ,
և Պատրիարքն օրհնելով՝ զանոնք արձակեց :
Նոյն գիշերը 300 էն աւելի Հռովմէականք Քե-
րայի Լատինաց Ս . Եբրորդութեան եկեղեցւոյն
մէջ ժողուելով՝ կանչեցին իրենց կրօնաւորները ,
և հարցուցին անոնց թէ՛ ինչո՞ւ Պատրիարքին
հարցումներուն պատասխան չեն տար , բայց ա-
նոնք չկրնալով ինքզինքնին արդարացնել , Լա-
տին կրօնաւորաց ձեռքով ժողովուրդն եկեղե-

ցիէն դուրս վաճակեցին , ըսելով թէ այս ձեք
ժողովատեղին չէ՛ այլ Լատինաց եկեղեցի է .
ուստի ժողովուրդն սկսաւ աղաղակել և ըսել .
Երբ մեր ստակները կ'առնէք՝ եկեղեցին ձերն է
կ'ըսէք , և երբ ժողով մ'ընելու եկանք՝ մեզ
դուրս կը վանէք , եկեղեցին Լատինաց է՝ ըսե-
լով : Նոյն գիշերը սաստիկ անձրեւ դալուն՝ Տիւզ-
եանց գրագիր Պ . Աթանասին տունը հաւաքուե-
լով՝ կանչեցին դարձեալ իրենց քահանայները ,
և սկսան հարցունել և ըսել . Դուք Հայոց եկե-
ղեցին կը նախատէք , հերքելի է հերքածուէ-
ըսելով . ահա Պատրիարքը ձեզ ժողովքի կը հը-
րաւիրէ , ինչո՞ւ չէք երթար յայտ յանդիման
խօսելու . մենք ընտանեաց տէր և զբաղեալ
մարդիկներ՝ ձեր պատճառաւ չենք կրնար փոր-
ձութեան մէջ իյնալով՝ շարունակ տուգանք վը՝
ճարել :

Հ. Գոլէճեանք ի՞նչ ընթացք բռնեցին :

Պ. Նոյն գիշերը ժողովրդեան ցոյցքէն վախ-
նալով՝ խոտացան երթալ , և ժողովուրդը հա-
մոզեցին որ իրենք աւելի եւս պատրաստ են սոյն
միութեան գործը դլուխ հանել . ժողովուրդը
դո՛հ սրտով նոյն գիշերը մեկնեցաւ : Իսկ Գոլէճ-
եանք այս բանիս վրէժն առնել ուզելով՝ Լատին

կրօնաւորներն իրենց զօրավիգ առած՝ Գափաան
 բաշայի փոխանորդին իմացուցին թէ խուճը մը
 Հայեր ժողովելով Լատին եկեղեցին կոխեցին, և
 այս գիշեր ալ դեռսպանատունը պիտի կոխեն :
 Փոխանորդն ալ հաւատալով նոյն գիշերը բազ-
 մաթիւ զօրքով կուգայ և յանկարծ Բերայի Հա-
 յոց Երրորդութեան եկեղեցին կը մտնէ, որպէս
 թէ հոն ժողովուած ըլլան Հայք, բայց մարդ-
 չգտնելով հարցուփորձ կ'ընէ, կը քննէ և բողո-
 քովին դրսարտութիւն ըլլալը հասկընալով՝ ան-
 հնարին զայրացմամբ ետ կը դառնայ : Հետեւեալ
 առտուն երբ Պատրիարքն իմացաւ Լատինաց այս
 վատութիւնը՝ բոլոր Հայ իշխանաց լուր զրկեց,
 ուղերով որ Բ. Դրան իմացնէ և պէտք եղած
 պատիժը տնօրինել տայ : Բայց իշխանք աղաչե-
 ցին որ հիմակու հիմայ ձայն չհանէ և ուրիշ յար-
 մար ժամանակի մը թողու, վասն զի նոյն օրերը
 Տիւղեանց տանը կործանմանը պատճառաւ՝ բո-
 լոր Հայոց ազգը ահ ու դողի մէջ էր. ուստի Լա-
 տինք ու Գոլէճեանք յարմար առիթ գտնելով
 ուղածնին կ'ընէին, և որ ամենէն ցաւալին է՝
 միաբանութեան մեծ գործը չյաջողեցաւ, որուն
 ամեն մարդ անձկանօք կը փափաքէր, մանա-
 ւանդ Պէզճեան :

Հ. Պէզճեանի վրայ ինչ գիտելիք կայ :
 Պ. Պէզճեան՝ Տիւղեանց Զէյթլիներուն քով
 դործակալութեան պաշտօն կը վարէր, և այնքան
 սիրելի եղաւ իւր աշակըթեամբը՝ որ արքունի
 փողերանոցին գործերը Պէզճեանի խորհրդակ-
 ցութեամբ կը կատարուէին : Քիչ ատենէն փո-
 դերանոցին վերատեսչութիւնն իրեն յանձնել
 ուղեցին, բայց Պէզճեան իր հեռատեսութեամբը
 մերժեց, վասնզի Տաճիկք գոհ աչօք չը պիտի
 տեսնէին, մանաւանդ որ փողերանոցին գործա-
 կալներուն չափազանց շոյալութիւնը Դրան պաշ-
 տօնէից կասկած տուած էր, և ասոնց մէջ ամե-
 նէն անագորոյնը Հալէթ էֆէնտի ըսուած անձն
 էր, որ չէ թէ միայն Տիւղեանց՝ այլ բոլոր Գը-
 ռիստոնէից հակառակ էր. մանաւանդ՝ Սուլթա-
 նին ալ շատ սիրելի ըլլալով՝ իր կամքը կատարե-
 լու շատ դիւրութիւններ ուներ : Եւ երբ խայ-
 բուլլահ էֆէնտի ընդհանուր վերատեսուչ եղաւ
 փողերանոցին, Հալէթի դրդմամբը Տիւղեանք
 բանտարկեցան՝ պատճառելով թէ հաշիւնին պի-
 տինայուի : Այս միջոցին մէկ քանի անձերէ
 բռնի ստորագրութիւն առաւ, ըսելով թէ Տիւ-
 եանք դանձուն պարտական են : Յետոյ Պօստան-
 ճի պաշիի ձեռօք Տիւղեանց և անոնց ազգակա-

նաց և փողերանոցի բոլոր գործակալաց տունները կնքելով այրերն ՚ի բանտ և կիներն ՚ի Պատրիարքարան զրկեց :

Հ. Տիւզեանց վիճակն ի՞նչ եղաւ .

Պ. Սարսափ և արհաւիրք բոլոր ազգայնոց վրայ տիրած էր, ոչ ոք կը համարձակէր այս դէպքին վրայ բան մը հարցնելու . բայց Պէղճեան գիշեր ցերէկ կը մտածէր որ իր բարերարներուն ազատութեան միջոց գտնէ : Նոյն օրերն արքունի ճարտապետ Գրիգոր ամիրան՝ փողերանոցի ներքին տեսչութիւնը գարձեալ Հայու մը յանձնուելու լուրն առնելով Պէրպէր պաշիէն՝ անմիջապէս կը ներկայացնէ Պէրպէր պաշիին զՊէղճեան : Այսպէս՝ Սուլթանին հրամանաւ Պէղճեան փողերանոցի ներքին տեսուչ կ'ըլլայ և խայրուլլա՛ն էֆէնտիէն ալ մեծ ընդունելութիւն գտնելով կըսկսի գործի . պէտք եղած կարգադրութիւնները կ'ընէ և իւր բարերարացն ազատութեան միջոցները կ'ըսկսի խորհիլ : Այս միջոցին կնքուած տունները բացուելով ամեն բան աճուրդի կը դրուէին ամեն հինգշաբթի . իսկ բանտարկելոց մէկ քանիները բանտին մէջ մեռան ժանտախտէն Տիւզեանք գլխատեցան ու մեծ աուգի մէջ ձգեցին Ազդը . 1817 հոկտեմբեր 4 ին

ամեն Հայ լացաւ, բաց ՚ի Թընկըրեան և Գըլճեան ընտանիքէն, որ Գոլէճեան քահանայից հետ Գանախի Տալուտեան Անտօնի տունը ցնծութեան տօն կը կատարէին ՚ի նախատինս մարդկութեան : Այս գործին վրայ չափազանց բարկացան Հայք, բայց լուսթիւնն առ այժմ խոհեմութիւն սեպելով, Տիւզեանց մարմինները թաղելու հրամանն առնելով Բ. Դռնէն՝ թաղեցին ՚ի Գուրու չէչմէ՝ իրենց նախնեաց գերեզմանատունը : Քանի մ'ամիսէն Պէղճեան պատեհ առիթ գտնելով՝ Պէրպէր պաշիէն բանտարկելոց ազատութիւնը խնդրեց . Պէրպէր պաշին ալ Սուլթանին հրամանաւ բոլոր բանտարկեալները Պատրիարքարան զրկեց որպէս զի Պատրիարքն որոշեալ տեղեր աքսորէ :

Հ. Պօզոս Պատրիարք ի՞նչ ընթացք բռնեց :

Պ. Բ. Դրան հրամանաւ Տիւզեանց ընտանիքին մէջ գտնուած երեւելիները զատ զատ տեղեր աքսորեց, և մնացածներն արք և կանայք ազատ թողուեցան : Տիւզեանց և ուրիշ աքսորեալներուն տուններն աճուրդի ելած ատեն և կեղծեցական զաղդեր տեսնուելով՝ յայտնուեցաւ որ՝ Հռովմէական Հայ տուններու մէջ Պատարագ կ'ըլլան, Այս բանս Բ. Դուռն իմանալով

հարցուց և տեղեկացաւ թէ Հայոց ազգէն մաս
մը ժողովուրդ Հայոց եկեղեցիէն դատուած , և
Հայոց Պատրիարքին իրաւասութիւնը չեն ճանչ-
նար , Ուստի խիստ հրաման մ'եկաւ Բ . Գռնէն ,
որ շուտով այս բաժանումը վերցուի և Հայոց
Պատրիարքն ամբողջ իր ազգին երաշխաւոր ըլ-
լայ . Պատրիարքն այս լուրն առնելուն պէս ան-
միջապէս Հոյ իշխանայ և ուրիշ երեւելի արհես-
տաւորաց հետ ժողով մ'ըրաւ , և անոնց հաւա-
նութեամբը Հռովմէական Հայ իշխաններն և ե-
րեւելի արհեստաւորներն հրաւիրեց , և ար-
քունի հրամանը հաղորդեց անոնց . և որովհե-
տեւ Հռովմէականներէն շատերը ձանձրացած ու
զզուած էին այսպէս բաժնուած և օտարացած
մնալէն , որոշեցին որ երկու կողմանէ դիտնական
անձինք նստելով քննեն այն խնդիրներն որոնց
համար վէճ և բաժանում եղած է : Ուստի ա-
նոնց կողմէն Գոյէճեան քահանայից և Լատին ե-
պիսկոպոսին Մօնսիներօր վէնիկէնտիոս ֆուէսի
հրամանաւը Հ . Մեսրոպը Աղա չրաքեան , Հ . Թա-
թէոս Ասկէրեան , Հ . Գրիգոր Գապարաճեան ,
Հ . Քերովբէ Ազնաւուրեան , Հ . Պօղոս Բժիշկ .
Հ . Ստեփանոս Եպիսկոպոս ազգերեան ընտրուե-
ցան . իսկ մեր կողմանէ Տ . Մեսրոպը քահանայ

Մայր եկեղեցւոյ , Տ . Բարթուղիմէոս քահանայ
Ս . Խաչ եկեղեցւոյ և Թաղւոր վարժապետ . և
Արքաղոց կողմանէ Հ . Մեսրոպը , Հ . Թովմա ,
Հ . Սերովբէ : Այս ժողովին կը նախագահէր Ըս-
տեփանոս Եպիսկոպոս Ազգերեան :

Հ . Ժողովն ինչպէս համաձայնեցաւ :

Պ . Երեք ամիսի չափ մերթ Պէզճեանի և մերթ
ճարտարապետ ամիրայից տուները ժողովուրով ,
համաձայնեցան վիճարանելու խնդրոց կէտերուն
վրայ , և ստորագրելով հետեւեալ օրը Պատրի-
արքին ներկայացուցին : Պատրիարքն անմիջապէս
ընդհանուր ժողով դուժարեց , ուր ներկայ էր
նաև Սոյ կիրակոս կաթուղիկոսը . ժողովքն այս
որոշումը մի առ մի քննելով հաւանեցաւ : Պօղոս
Պատրիարք սիրոյ և միութեան վրայ դեղեցիկ ա-
տենաբանութիւն մը ըրաւ և ժողովականք միա-
բան հաւանութեամբ սոյն համաձայնեալ խնդ-
րոց տպուիլը խնդրեցին Հրաւեր սիրոյ անուամբ .
Պօղոս Պատրիարք ընդունելով օրհնեց ժողո-
վուրդը , և ժողովականք զիրար համբուրելով
բաժնուեցան մեծաւ ուրախութեամբ : Նաեւ
աշխարհամատրան կիւրակէ օրը 18 ապրիլ 1820
Մայր եկեղեցին ժողոված էին ամեն աստիճանի
երեւելի անձինք , և թէ աշխարհական թէ ե-

կեղեցական խուռն բազմութիւն մը վերագործող Հայոց քահանայներով և ժողովրդով, Աբբայեան և Գոլէճեան վարդապետներէն մէկ քանին՝ դաւազան ՚ի ձեռնին վերջար և փիլոն առած՝ դասին մէջ կայնած էին : Պատարագի ատեն Աւետարանը Հ. Մեսրոպը կարդաց, Տաթևացոյն և Որոտնեցոյն անունները չի յիշատակուեցան. նոյնպէս Պօղոս Պատրիարք իր երկու սարկաւաղները վարդապետ ձեռնադրեց առանց Լեւոնի և Քաղկեդոնի ժողովները նշողութիւն. Պատարագէն վերջը բոլոր երեւելի ամիրայք պատրիարքարան ելան և իրենց Հնորհակալութիւնը յայտնեցին Պատրիարքին : Այս ասկէ ետքը ժողովուրդը մէկըմէկ սիրով գրկեց և համբուրեց. իսկ երեւելեաց կողմանէ մէկ մէկուտրուած խնջոյքներն անթիւ էին :

Հ. Գոլէճեանք ի՞նչ միջոց խորհեցան Հայոց միութիւնը վրդովելու համար :

Պ. Թէեւ Պօղոս Պատրիարք այս գործին իր ձեռնհասութենէն վեր ըլլալը լաւ գիտէր, բայց մէկ կողմէն ազգին սէրը և միւս կողմէն Գրան սախալումը պարտաւորեցին այսպէս փութանակի գործել : Եւ դեռ կաթողիկոսէն և դաւառական առաջնորդներէն բողոքներ չեկած, Լատինք

և Գոլէճեանք սկսան գրգռել զժողովուրդն, ըսելով որ պէտք է Ս. Պապը յիշէք որ կատարեալ ուղղափառ ըլլաք : Եւ երբ 12 յուլիս 1820 Պատրիարքը վերջին օժման իւզն օրհնելով եկեղեցիները զրկեց օծուիլ ուղող հիւանդներն օծելու : Այն ատեն՝ Լատինք իրենց բոլոր յոյսերուն ոչնչանալը տեսնելով՝ վերջին փորձ մ'ալ ըրին և յաջողեցան : 1820 օգոստոս 7 ին ֆուցիանդի Լատին եպիսկոպոսին խորհրդովը Գոլէճեան վարդապետ մը Հայ վարդապետի հագուստով Հրաբերայ տետրը ձեռքը, (որուն սկիզբը գտնուած Ս. Լուսաւորչայ պատկերին վրայ Պապին պատկերը փակուած էր) շուկան Աստուածատու կոչկարաց խանութները շրջելով՝ գրգռել սկսաւ, ըսելով՝ ի՞նչ անհոգ նստեր էք, Պատրիարքը էջմիածինն ուրանալով Պապին հնազանդեցաւ, Ս. Մեռոնը վերցաւ, ալ ասկէ ետքը ձեթով պիտի օծուիք՝ ազգանի՛նման, ալ լռելու ժամանակ չէ, մենք վաղը պատրիարքարան պիտի իջնենք, դուք ալ իջէք, և խնայենք Պատրիարքին թէ մենք Լուսաւորչայ որդիք եմք, ոչ թէ Հոռովմայ Պապին :

Հ. Քոլէճեանց այս ըրածն ի՞նչ աղէտներ բերաւ ազգին գլխուն :

Պ . Պօղոս Պատրիարք այս լուրն առնելուն պէս անմիջապէս առաջնն առնել ուզեց , բայց գիշերուան երրորդ ժամուն ըլլալուն բան չկրցաւ ընել , Հետեւեալ առտուն խուռն բաղնիսթիւն Մայր եկեղեցի իջնելով սկսան աղաղակել և ըսել . մենք Հայ եմք , մենք Ս . Լուսաւորչայ որդիք եմք , մենք Ֆռանկ չենք ըլլար : Պօղոս Պատրիարք Մարկոս և Յակոբ եպիսկոպոսները զրկեց որ համոզեն զԺողովուրդը , բայց ժողովուրդն ամենեւին մտիկ չընելով պատրիարքարանի դուռը խորտակեցին , մտան ներս և Պատրիարքը կը փնտռէին . բայց նա մերձակայ պատուհանէն Տաճկի մը տուն փախած էր : Քիչ մը ետքը Եհնիչէր , աղանին իր զօրքովը հասաւ , ժողովուրդէն մէկ քանի անձինք բռնեց և միւսներն ալ ցիրուցան ընելով՝ քիչ մը զօրք թողուց Պատրիարքարանի դրան առջեւ . և ինքը մեկնեցաւ : Բ . Դուռն այս գրդուութեան հեղինակները դրտնելու համար բանաարկեալները տանջել սկսաւ , որոնց՝ մին Տէլի Պաղտասարը , ուրիշ մ'ալ կարապետ անուն սարկաւաթ մը և գրդուիչ Գոլճեւեան վարդապետը մատնեցին , բայց վարդապետը չգտնուեցաւ . յետոյ սարկաւաթը մատնեց զՍախայեան Գրիգոր ամիրան և անոր ազգա-

կան Ազարիա անուն երիտասարդը , Արիիարեան Մկրտիչ , Գարա քէհեա Աբրահամ , կէլիէլեան Պօղոս ամիրաները և ուրիշ շատեր :

Հ . Բանտարկեալներն ի՞նչ եղան :

Պ . Անոնք որ խոստովանեցան՝ գլխատուեցան , ինչպէս Սախայեան Գրիգոր ամիրայն Մայր եկեղեցւոյ դրանն առջեւ , կարապետ կեսարացի՝ Տիքիլի Թաչի առջեւ , և Տէլի Պաղտասար՝ Սամաթիա իր սրճարանին առջեւ գլխատուեցան , և Ազարիա երիտասարդը Սուլթան Պայազիտ Բարմադ գափու կոչուած տեղը կախուեցաւ . իսկ մատնիչ սարկաւաթը բանտին մէջ Մահմետակահնութիւնն ընդունելով ազատեցաւ , և միւս բանտարկեալներն աքսորուեցան . որոնց մէջ էին Աղնաուրեան կարապետ , Պէղճեան Յարութիւն որով փողերանոցի տեսչութիւնն ալ Պիլէգիկճեան Պօղոս Պապական Հայուն յանձնուեցաւ : իսկ Աբրայեանք որ սկսէր էին Հայոց եկեղեցին յաճախել , այս տեսնելով սկսան Լատինաց եկեղեցին երթալ : Ասոնց հետեւեցան նաև Աբբայի ժողովուրդք . միայն Գապարաճեան Հ . Գրիգոր հրաժարելով Աբբայեան միաբանութենէն , փախաւ ՚ի Փարիզ : Այս միջոցին Հալէթ էֆէնտի և անոր խորհրդակից իսխել Հրեայն աքսորանաց մէջ խեղ-

դամահ մեռան : Պէղճեան՝ որ աքսորէն դարձած և փողերանոցին տեսչութիւնը վերատին իրեն յանձնուած էր , յարմար առիթ սեպելով՝ Սուլթանէն Տիւղեանց Չէլէպլիներուն աքսորէն վերադառնալու հրամանն առաւ 15 ապրիլ 1823 , և վերադարձան Տիւղեանք , Նոյն օրերը Ստոյ կիրակոս կաթուղիկոսը վախճանեցաւ տեղւոյն այլադգի իշխանաց թոյն տալովն , որուն յաջորդեց Եփրեմ իր եղբօրորդին , որ դեռ 18 տարեկան էր : Պօղոս Պատրիարք 8 տարի ազդը կառավարելէն ետքը՝ ծերութեանը պատճառաւ հրաժարեցաւ պատրիարքութենէն :

Հ . ՌՎ յաջորդեց Պօղոս Պատրիարքի :

Պ . Կարապետ վարդապետ Կ . Պօլսեցի : Սա իր խելացի և խոհեմ բնաւորութեամբը Պէղճեանի հետ խորհրդակցութեամբ որոշեցին Հրուովմէական փոխանորդ մը դնել ՚ի Ղալաթիա որպէս զի պատրիարքարան եկած արքունի հրամաններն անմիջապէս հաղորդուին Հուովմէական Հայոց : Ասոր համար Պէղճեան՝ Պիլէզիկճեան Պօղոսի տունն երթալով հրաւիրեց Հուովմէական Հայոց գլխաւորները , և ծանոյց Պատրիարքին կամքն ու հաճութիւնը . որոնք ուրախութեամբ ընդունելով , իրենց և Պէղճեանի հաւանութեամբ

բը Նուրիճան Անտօն վարդապետն ընտրեցին , բայց հետեւեալ օրը Հուովմէականք իրենք իրենց դադունի ժողով ընելով՝ Մարուշ Պօղոս վարդապետն ընտրեցին փոխանակ Նուրիճան Անտօնի . ասոր ալ դոհ չլլալով սկսան մտածել որ հերետիկոս Պատրիարքի մ'իրաւասութենէն ելնելով՝ զատ Պատրիարք և զատ Պատրիարքարան ունենան . Նոյն օրերը մեռաւ Չամչեան Հ . Միքայէլ վարդապետ : Կարապետ Պատրիարքի օրով Օրթագիւղի Ս . Աստուածածնայ եկեղեցին նորոգուեցաւ :

Հ . Այս միջոցին Հայաստանի մէջ ի՞նչ գլխաւոր դէպք պատահեցաւ :

Պ . Պարսիկք 1823 ին յանկարծ Ռուսաստան յարձակելով բաւական տեղ դրաւեցին , Ռուսաց զօրքը նուազ ըլլալուն համար : Հայերը տեսնելով Պարսից ահագին յարձակումը , մանաւանդ երկար ժամանակէ ՚ի վեր Պարսիցմէ կրած տառապանացն ալ չկրնալով համբերել , Ներսէս եպիսկոպոս Աշտարակեցւոյն յորդորանօքը 20-25000 հոգիէ բաղկացեալ բանակ մը կազմեցին Պարսկաց դէմ ելան և այնքան նեղը ձգեցին զՊարսիկները՝ որ ստիպուեցան ետ քաշուիլ : Հայոց զօրապետներն էին Մատաթեան , Բեհ-

բուգեան, Երկայնաբազուկն Արդութեանց, Մովսէս Կնէազ և Գանազեացի Աղասին, որ սոսկական սպայ մ'էր: Ռուսք զայս տեսնելով իբրենք ալ ահագին բազմութեամբ յարձակեցան Պարսկաստան և սկսան անխնայ ջարդել, մինչեւ Պարսիկք յուսահատեալ սկսան փախչիլ, և Ռուսք անոնց երկրին մէջ յառաջանալով այրեցին աւերեցին քանդեցին, այնպէս որ Պարսից Շահը շատ աղաչանօք և ղեւսպաններու միջնորդութեամբ հաշտուեցաւ՝ Ռուսիոյ ամեն պայմաններն ընդունելով: Նոյն ատենը Սրարատ գաւառը իր շրջակայ քաղաքներովն և գիւղերովք հանդերձ Ռուսաց իշխանութեան տակ անցաւ. նաեւ պայման ալ դրուեցաւ որ, Պարսկաստանէն Ռուսաստան անցնիլ ուղող քրիստոնեայնները չարգիլուին, այս ալ Հայագգի Ազա Մինաս Լազարեանցի խորհրդովք եղաւ:

Հ. Ինչ հնարք մտածեցին Պապականք զատ Պատրիարք և Պատրիարքարան ունենալու համար:

Պ. Թընկրրեանք՝ Սպարապետ Մէհմէտ բաշային սեղանաւորներն էին՝ անոր միջոցաւ աղերսագիր մը տուին Սուլթանին, որուն մէջ հետեւեալը գրուած էր. « Պարսից հպատակ Հայերն ապստամբելով, Ռուսաց օգնութեամբը գը-

րաւեցին Սրարատ նահանգը՝ որուն մէջ կը գըտնուի իրենց ընդհանուր կաթողիկոսին նստած Էջմիածնայ վանքը. ուստի Հայք Ձեր տէրութեան հետ թշնամութիւն ունենալով, հիմայ մտադիր են Օսմանեան երկիրներն արշաւել և քաղաքներն ու գիւղերը գրաւելով, իրենց թագաւորութիւնը վերականգնել Ռուսաց տէրութեան հովանաւորութեան տակ. և մենք՝ որ թէպէտ ազգաւ Հայ եմք՝ բայց կրօնքով Պապական ըլլալնուս և անոնց Պատրիարքէն կառավարուելովս, մենք ալ ապստամբ Հայոց իբր համամիտ պիտի սեպուինք Ձեր վեհափառութեան առջեւ. ուստի կը խնդրեմք որ մեզի զատ Պատրիարք և պատրիարքարան մը չնորհէք »:

Այս աղերսագիրը երբ Սուլթան Մահմուտ կը կարդայ, անմիջապէս կանչել կուտայ զՊէղճեան գրուածներուն վրայ բացատրութիւն կ'ուզէ: Պէղճեան առանց վարանելու մի առ մի Սուլթանին կը ներկայացնէ Գաղատացի Պապականաց անհաշտ ատելութիւնն ու թշնամութիւնը Հայոց դէմ, և թէ Պատրիարքը՝ ըստ որում պատասխանատու է ազգին համար. կրնայ երաշխաւորել ազգին: Ռուսի Սուլթանին հրամանաւ կանչուեցան թէ կարապետ Պատրիարքը և թէ հրա-

ժարեալ Պօղոս Պատրիարքը՝ հարցուելու համար որ կրնան երաշխաւոր ըլլալ Օսմանեան տէրութեան մէջ գտնուած Հայոց :

Հ. Պատրիարքներն ի՞նչ պատասխան տուին :

Պ. Պօղոս Պատրիարք աներկիւղ և վստահ հաստատեց Հայոց ազգին հաւատարիմ , հլու և տիրասէր ընթացքը , և թէ Օսմանեան տէրութեան շնորհիւ անդորր և խաղաղ կեանք վարելով ամեն օր աղօթողէ թէ առատագուծ Սուլթանին և թէ անոր արդարասէր նախարարաց համար . և թէ ինք և թէ կարապետ Պատրիարք ըստ ամենայնի կ'երաշխաւորեն բոլոր ազգին համար , ապահովցնելով որ այդպիսի վատ խորհուրդ մը ընաւ մտքէ անցած չէ : Կրկին կը հարցուի թէ ո՛ւսկից կրնաք գիտնալ հեռաւոր քաղաքներ ընակող ազգայնոց խորհուրդները , և ի՞նչպէս կրնաք ապահովցնել զմեզ ապստամբութիւն չծագելու մասին , միթէ ինչ որ կըլլայ ձեր խորհրդով կ'ըլլայ : Պօղոս Պատրիարք կը պատասխանէ թէ՛ քրիստոնէական կրօնին մէջ խորհուրդ մը կայ , որ ամեն մարդ իր սրտին դազանիքը պարտական է քահանային խոստովանել , որպէս զի մեզացը թողութիւն գտնէ . ուստի եթէ քահանայք այդպիսի խորհուրդ մը նըշ-

մարելու ըլլան՝ անմիջապէս մեզ կը ծանուցանեն որ առաջըն առնենք . և ահա այս պատճառաւ է որ բոլոր ազգին կերաշխաւորենք . Միայն կաթոլիկ ըսուած մաս մը Հայերու չենք կրնար երաշխաւորել , վասն զի անոնք ոչ միայն մեր եկեղեցին կուգան և ոչ մեր քահանայից կը խոստովանին : Եպարգոսը համոզուելով Սուլթանին կիմացնէ ինչ որ Պատրիարքէն կը լսէ . ուստի Սուլթանը սաստիկ բարկացած այսպիսի անլուր զրպարտութեան վրայ , կը հրամայէ որ աքսորուին թընկերեանք : Թընկերեան Յակոբ Ի կեսարիա , և եղբայրը Յովսէփ Ի Սերաստիա կ'աքսորուին իրենց ընտանիքներովը , 3 հոկ. 1827 ին :

Հ. Ի՞նչու համար Պապական Հայք ոմանք աքսորուեցան և ոմանք տեղափոխեցան :

Պ. Յունաստանի ապստամբութեան ժամանակ , Սուլթան Մահմուտ Եւրոպական դեսպանները ճամբելով պատերազմ հրատարակեց ընդ դէմ Ռուսաց . և որովհետեւ Բ. Դուռը զիտէր որ Պապական Հայք Հայոց հետ չմիաբանեցան , և Եւրոպացւոց հետ յարաբերութիւն ունին , հըրովարտակ զրկեց Հայոց Պատրիարքարանը , ուրուն մէջ հետեւեալ պատուէրները կ'ընէր . Ա. Բոլոր գաղատացիք իրենց հայրենիքը . Բ .

Հռովմէական կարգաւորներն յԵւրոպա : Գ . Պօլսեցի Հռովմէականք՝ որոնք որ չեն հնազանդիր Հայոց Պատրիարքին յԱնաստուլ : Գ . Մայրապետները , աքսորուին . Ե . Հռովմէականք չնստին 'ի Բերա և 'ի Ղարաթիա և Եւրոպացի գտնուող տեղեր . այլ ուրիշ Հայաբնակ թաղերը բնակին : Եւ որովհետեւ նոյն ատեն պատրիարքարանն այրած էր , Սամաթիա Ս . Գէորգ եկեղեցին հրաւիրուելով բոլոր Լուսաւորչական և Հրուովմէական Հայոց երեւելիներն ու արհեստաւորները՝ 'ի ներկայութեան անոնց հրովարտակը կարգացուեցաւ . և 27 դեկ. 1827 ին սկսաւ աքսորը 1828 Յուն . Գ ին : Նախ Գաղատացիք աքսորեցան իրենց ընտանիքներովը սարսափելի խեղճութեամբ , որոնց մէջ Լուսաւորչական Հայեր ալ կային՝ հրովարտակին մէջ լաւ որոշուած չրլլալուն համար : 27 յունվար 1828 ին Պօլսոյ մէջ տեղափոխութիւններ եղան . 6 փետրուար կարգաւորներն աքսորուեցան յԵւրոպա . 23 փետրուար մայրապետներն աքսորուեցան , 30 ը 'ի Պանալըմա . և 11 ը 'ի Մահալըճ . իսկ Տիւղեանք Ալլահիէրտեան , Չամչեանք և ուրիշ երեւելի ընտանիքներ՝ Հայոց Պատրիարքին իրաւասութիւնն ընդունելով մնացին Կ . Պօլսոյ մէջ : Այս

միջոցին Մայր եկեղեցին Գումգափուի մեծ սրբաբարձակ ձեւով շինուեցաւ : Նոյն ատեն Կ , Պօլսոյ մեծ սով մը կը արէր Օսմանեանց հետ սուսաց ունեցած պատերազմին պատճառաւ :

Հ . Թրքո-Ռուսական պատերազմին վախճանն ի՞նչ եղաւ :

Պ . Ռուսոց բանակը վրաստանէն անցնելով եկաւ պաշարեց Ախրցխա քաղաքը , և սկսան պատերազմիլ : Եւ որովհետեւ քաղաքը դժուարէն օգնութիւն չունեցաւ , 30 օր դիմանալէն յետոյ բնակիչք յանձնեցին զանի : Այս պատերազմին մէջ 25000 մարդ միայն քրիստոնեայներէն ջարդուեցան , քանի մ'օրէն Պայաղիտ , Կարս , Մուշ և Կարին յառաջացան Ռուսք , և եկան Բաբերդ քաղաքը պաշարեցին . բայց ժողովուրդը դէմ դնելով քաջութեամբ պատերազմեցան , և եօթն անգամ յաղթեցին Ռուսաց , բայց վերջապէս յաղթուեցան . վասն զի Ռուսք քաղաքին ջուրը կտրելով հեռացան , և երբ Բաբերդցիք քաղաքէն դուրս յարձակեցան՝ Ռուսք դուռնալով սկսան թնդանօդներ արձակել , որով շատ մարդ ջարդուեցաւ : Այս պատերազմը 2 տարիի չափ տեւեղն ետքը 7 հոկտեմբեր 1829 ին հաշտութիւն եղաւ : Անդղիոյ և Գաղղիոյ դեսպան-

ները վերադարձան , և երբ Պէօյիւք տէրէ դաշտավայրին մէջ Սուլթանին խնջոք մը կուտային , խնդրեցին Սուլթանէն՝ որ Հռովմէական Հայք աքսորէ աղատուին և զատ Պատրիարքով կառավարուին : Սուլթանն ընդունեց և (6 յունուար 1830) վերադարձան և Լատինացոց եկեղեցին չյաճախելու համար ալ զատ եկեղեցի շինելու հրաման առին իրենց : Նոյն տարին նաև Նուրիճանեան Անտօն վարդապետ գերապայծաւը Պատրիարք զրկուեցաւ Հռովմէն , բայց Սուլթանը չընդունեց , վասն զի Աւստրիոյ հպատակ էր . ուստի Մանուէլեան Յակոբ վարդապետ Պատրիարք եղաւ . և այսպէս Հռովմէականք սկսան երկու Պատրիարքով կառավարուիլ , մին քաղաքական , և միւսը կրօնական : Այս միջոցին 5000ի չափ Հայ տղաքներ Անատօլուի քաղաքներէն Կ . Պօլիս բերուեցան , որոնք Թէրսանէին և Խիլիքհանէին մէջ կ'աշխատէին՝ միայն հաց և հանդերձ ընդունելով : Կարապետ Պատրիարք 8 տարի ազդը կառավարելէն ետքը հրաժարեցաւ , և իրեն յաջորդեց Ստեփանոս Աղաւնի Պատրիարք :

Հ . Հռովմէական Պատրիարքներն ինչպէս կառավարեցին իրենց ժողովուրդը :

Պ . Նուրիճան Անտօն՝ որ հոգեւոր Պատրիարք

էր , ուզեց ճիշտ Հայոց եկեղեցւոյ ծիսից և անբարոզութեանցը համեմատ կառավարել՝ առանց բան մ'աւելցնել կամ պակսեցնելու . բայց Լատինք և Գոլէճեանք հակառակեցան և Լատին ծեսերով կ'ուզէին կառավարել զեկեղեցին . ասոր համար մեծ դժտութաւն մը ծագեցաւ մէջերնին , և երկուքի բաժնուեցան Սբբայեանք և Գոլէճեանք անուններով : Սբբայեանք իմացան ինչ անելանելի լաբիւրինդոսի մէջ ի յնալնին , և Նուրիճանին ճարը հասած՝ գրբեց 'ի Հռովմ Ս . Պապէն կոնդակ բերել տուաւ , որ Հայոց նախնի արարողութիւններն ու ծեսերը անխախտ պահուին , և ամենայն կերպով հնադանդին Նուրիճան Պատրիարքի հրամանացը , և ով որ հակառակի նզովեալ ըլլայ : Սակայն Գոլէճեանք դարձեալ իրենց չար նպատակն առաջ տանելու համար՝ ամեն ճիգ թափեցին , և յաջողեցան փոփոխութիւններ ընել հին տօնացոյցէն , որ Ս . Պահակ , Ս . Մեսրոփը և ուրիշ Ս . Հայրապետներ նզովելով կը նզովեն Տօնացոյցէն փոփոխութիւն մ'ընողը . որք են Ս . Ծննդեան տօնն առաջ ընելով սրբոց տօներն ալ փոխուեցան , և Ս . հազորութեան գինիին հետ ջուր խառնեցին՝ Լուսաւորչայ դրութեանը հակառակ , Ս . Աստուածն առանց խաչեցարի սկսան

երգել, Պատարագի մէջ Պապը յիշել, Լայն. որով զատ եկեղեցի և զատ ազգ մ'ըլլալով ըսկասն տաճկերէն խօսիլ, այնպէս որ շատ մոլեռանդ և վատ տգէտներ Հայերէն խօսելն անգամ մեղք կը համարէին. Հռովմէական Պատրիարքներն ուղեցին Բերիացիներն իրենց իշխանութեան տակ առնել. բայց կառավարութիւնն անոնց ազգայնութեան իրաւունքը ճանչնալով՝ զատ Պատրիարք դրաւ: Յակօբ Մանուէլեան 2 տարի և 8 ամիս պատրիարքութիւն ընելով մեռաւ: Իրեն յաջորդեց Վէննայի Միաբաններէն Սերովբէ վարդապետ: Այս միջոցներուն Պէղճեան կը վախճանի ՚ի մեծ սուգ թողլով բոլոր Հայութիւնը:

Հ. Պէղճեանի համառօտ վարքն ինչ է:

Պ. Պէղճեան Յարութիւն ամիրան բազմաթիւ եկեղեցիներ շինեց, Մայր եկեղեցւոյ ուսումնարանին եկամուտներ պատրաստեց, Ս. Փրկչի վանքն ամեն կարասիներով հատատեց, Երուսաղէմայ Ս. Գրեղմանին վրայ Հայոց պատարագ մատուցանելու հրամանն առաւ, և իւր ծախիւքը Պարսկերէն և Հայերէն բառարան մը տպագրել տուաւ: Նոյնպէս Վենետիկ տպուած մեծ-Հայկազեան բառարանին համար պէտք եղած դրամական օգնութիւնն ըրաւ և բոլոր օտար ազգաց ըրած մեծ

բարեքններուն ու տէրութեան հաւատարիմ ծառայելուն՝ մանաւանդ Ռուսաց պատերազմէն վերջը Օսմանեան տէրութեան 11,000,000 վնենեակեան ոսկի պարտքը վճարելու հնարքը գտաւ, որով Թաւլէրի Հիւսայան բարձր պատուանշանին արժանացաւ, և անկէ ետքը դրեթէ միշտ Սուլթանին հետ կը տեսնուէր ու հետը շրջելու բարձր արտօնութիւնը համարձակ կը վայելէր: Իր հիւանդութեան ատեն Սուլթանին բարձր այցելութիւնը ժամու մը չափ ընդունելու պատիւն ունենալէ ետեւ՝ մեռաւ 3 յունվար 1834 ին: Արքունի պալատին յատկացած նաւամատոյցէն նաւ դրուելով Եէնի դափու տարուեցաւ, և այն տեղ մեծահանդէս յուղարկուորութեամբ Մայր եկեղեցւոյ դաւիթը թաղուեցաւ Սուլթանին հրամանաւ. վասն զի Պօլսոյ բերդաքաղաքին մէջ Սուլթաններէ և խիստ երեւելի փաշաներէ ու անոնց պարագայներէն ՚ի զատ մարդ չէր թաղուէր:

Հ. Պէղճեանի մեռնելէն ետքը Ստեփանոս Պատրիարք ինչպէս կառավարեց ազգը:

Պ. Ստեփանոսի օրով բազմաթիւ եկեղեցիներ շինուեցան, ինչպէս ճարտարապետ Յովհաննէս ամիրայն ՚ի յիշատակ Գրիգոր ամիրայն՝ Ս. Գրիգոր Էռասուրիչ անուամբ եկեղեցի մը շինել

տուաւ ՚ի Գուղիունճուք նաև թէ յԱնատոլու և թէ Կ. Պօլիս շատ թաղերու մէջ վարժարաններ բացուեցան : Այն ատենի անուանի վարժապետներն էին Փէշտրմալճեան Գրիգոր, Գէորգ պատուելի Տ. Յովհաննէսեան, Պաղտասար պատուելի, Խաչատուր պատուելի, Յարութիւն պատուելի, Թաղւոր պատուելի, Փիղիգայ Պօղոս վարժապետ և Տ. Մեսրոպ բահանայ : Ճարտարապետ Կարապետ և անոր ընտայրը Յովհաննէս առ միբաները մեծ խնամքով դիշեր ցերեկ գպրոցներուն յառաջադիմութեան համար հող կը տանէին, ինչպէս Մայր եկեղեցւոյ դպրոցը, Խասդիւղի Երեմիսեան և Օրթագիւղի Ս. Թարգմանչաց վարժարանները : Բայց ասանցմով դո՛հ չըլլալով դիշերթիկ վարժարանի մը պէտքն անհրաժեշտ կը զգային. ուստի Պատրիարքին հետ խորհուրդ ընելով Երուսաղէմայ Գարբիէլ Պատրիարքէն իւսկիւտարի մէջ եղած Երուսաղէմատունը Աղգին շնորհուիլը խնդրեցին, և ընդունեցան՝ Սէրվերեան ամիրային ծախիւքը եռայարկ գպրոց մը շինեցին ճեՄԱՒԱՆ անուամբ, և ամեն թաղի գպրոցներուն յառաջագէ՛մ աշակերտաց ընտիրներէն 50 ի չափ առնելով դործի սկսան : Եւ որովհետեւ ճեմարանը մեծ ծախքի կը կարօ-

տէր, որոշեցին որ տարուէ տարի 120.000 զուշրուշ աղքատ տղոց համար Երուսաղէմայ վանքը տայ, և հարուստ տղոցմէ տարին 3000 ական դուրուշ առնուի :

Հ. Ստեփանոս Պատրիարքի ատեն ի՛նչ երեւելի դէպք պատահեցաւ :

Պ. Ստեփանոսի օրով Ամերիկայի Միսիօնարք Պօլիս դալով Հայոց հետ խիտ սիրով տեսնուիլ սկսան : Միամիտ Հայերն այնքան մեծ պատիւ և ընդունելութիւն կ'ընէին այս նոր աշխարհին ճիղվիթներուն՝ որ իրենք անդամ կը զարմանային Հայոց այս աստիճան մարդասէր և հիւրասէր ըլլալուն վրայ : Ասնք մասնաւոր վարժարան մ'ալ բացած էին, որպէս զի Հայք անոր նման գպրոց տեսած չըլլալովսին՝ աւելի համարում՝ ունենան իրենց վրայ և Հայ տղաքներն իրենց գպրոցը դրկեն. սակայն Հայերը շուտով իմացան ասոնց նպատակը՝ բաց ՚ի քանի մը ծոյլ և անդործ անձինքներէ, որոնք առատ ուճիկ առնեցնուն՝ սկսան անոնց կողմը բռնել : Ամերայք Ստեփանոսի թոյլ բարուցը համար զինքը Պատրիարքութենէ վար առին Տ տարի ազգը կառավարելէն ետքը, և Մարզուանու և Ամասիոյ անաջնորդ Յակոբոս եպիսկոպոսը Պատրիարք

դրին : Ասի բաւական ատենէ 'ի վեր Ստեփանոս Պատրիարքի խորհրդականն էր : Յակոբոս Պատրիարք ուզելով ազգը նորաղանդից տեսութենէն հեռացնել՝ քանի մը կասկածոտ անձինք որք են թովմաս վարդապետ , Ֆիլիղոսայ Պօղոս վարժապետ , Տ . Գէորգ և տիրացու Յովհաննէս՝ աքսորել տուաւ : Նոյն օրերը մեռաւ Սուլթան Մահմուտ , և յաջորդեց իր որդին Սուլթան Մէճիտ 18 տարեկան , 19 յունիս 1839 . որուն շնորհիւ թանգիմաթը հաստատուեցաւ 9 նոյեմբեր 1839 :

Հ . Յակոբոս Պատրիարք ի նշագէս կառավարեց ազգը :

Պ . Յակոբոս՝ ժողովրդասէր ըլլալուն , ամիրայից բռնութիւնները տեսնելով՝ չէր կրնար համբերել , կը վաժաւքէր որ ժողովուրդն ու ամիրանները հաւասարեցնէ . բայց ամիրայք իրենց ամբարտաւանութեամբը շարունակ ժողովրդեան հետ խստութեամբ կը վարուէին . հետեւաբար ազգիս մէջ երկպառակութիւնը պակաս չէր , ուստի ժողովուրդն ամիրայից ճանկէն ազատելու և իր իրաւանցը տէր ընելու ճիշտ ատենն էր , շնորհիւ թանգիմաթի : Արդէն սկսէր էին ժողովրդին մէջէն ամիրայից դէմ առամունք կրճը-

տել : Վասն զի ճեմարանին բացուած ատեն Յակոբ Պատրիարք աղէկ հող կը տանէր և իր ծախիւքը Մարզուանէն ու Ամասիայէն երկու տըղայ բերած էր . նոյնպէս իւրաքանչիւր ամիրայք խոստացած էին տարին 3000 ական զուրուջ՝ մէկ մէկ տղու թոշակ վճարել . սակայն դանազան տարաձայնութիւններ հանելով և ճարտարապետ ամիրայից հետ հակառակելով՝ սկսան չվճարել : ուստի Յակոբոս Պատրիարք այն ստակներուն տեղը լեցընելու համար , դուրս գացող Հայերէն Յական զուրուջի տուրք մը սահմանեց 'ի նպաստ ճեմարանին . և նոյնպէս ամիրայից ալ օր աւուր վատթարանալը տեսնելով՝ բոլորն ալ պատրիարքարան հրաւիրեց , և առաջարկեց որ պաշտօնական կերպիւ ժողովրդէն յատուկ տուրք մը ժողովի , և այդ ստակին մատակարարութեան համար ժողովրդին կողմէն 24 հողաբարձու ընտրուին : Ամիրայք հաճութիւն ցըցուցին , հետեւանք չկրնալով տեսնել . ուստի 24 անձինք ընտրուեցան , որոնց 2ը իրենցմէ էր , Մերեմեդուլեան Հեթում՝ ատենադպիր և երկու ալ գանձապետներ ընտրուեցան :

Հ . Յակոբոս Պատրիարք ուրիշ ի նշ բարեկարգութիւններ ըրաւ :

Պ. Աղղային պատրիարքարանի մէջ գատաստանական ժողով մը հաստատեց՝ եկեղեցական և աշխարհական անձինքներէ բաղկացեալ, ընդ նախադահութեամբ պատրիարքական փոխանորդի: Նոյնպէս թաղերու մէջ ժողովքներ հաստատել սուաւ, որոնք պատրիարքարանի հետ յարաբերութիւններ ունէին: Առաջին անգամ ժողովրդեան կողմանէ ընտրեալ այս 24 անձինքը՝ աղղային ելեւմտից հսկելու իշխանութիւնն ստացան, ուստի ուղեցին որ ամիրայից կողմէն Յ հոգի անտուչ կամ միւթէվէլլի դրուին, որպէս զի ժողովքին ըրածներուն տեղեկանան: Ամիրայք այս առաջարկութիւնը չընդունեցին, ըսելով, զմեզ ձեցի հաւասարեցնել կ'ուղէք: Այս խօսքին վրայ թէև ժողովը ցրուեցաւ, բայց ամիրայից յոխորտանքն ալ վերջինն եղաւ: Այս միջոցին աղղին գործերն երեսի վրայ մնացած էին, թաղական դպրոցները ժողովրդեան վրայ մնացած, ամիրայք ճեմարանը գոցելու հնարքներ կը մտածէին, ճարտարապետ ամիրայից հետ թշնամութիւն ունենալուն համար. վասն զի անոնց առաջարկութեամբը բացուած և աւելի անոնց խնամքն առաջ կերթար, վերջապէս ամիրայք ճեմարանը գոցելու հնարքը դտան: Նախ

համոզեցին երուսողէմայ փոխանորդը՝ որ 120000 քրշ. տարեկան տուրքը դադրեցնէ քիչ մ'ատեն յետոյ իրենց ծանօթ բարեկամներուն թոշակաւոր ազաքները հանել տուին. ճեմարանը ուրիշ տեղէ եկամուտ մը չունենալով՝ Պատրիարքը վերջապէս ի ժողով հրաւիրեց ամիրաները, և անհրաժեշտ ազդին, 80000 զուրուշ պէտք ունենալըն իմացուց: Ամիրաները պատասխանեցին թէ 40000 զուրուշը կուտանք, 40000 զուրուշն ալ թող ժողովուրդը վճարէ: Ժողովուրդը պատրաստ էր տալու, բայց իրենք՝ ոչ երբէք. ուստի Յակոբոս Պատրիարք յուսահատելով հրաժարեցաւ 2 տարի ազդը կառավարելէն ետքը:

Հ. Ո՞վ յաջորդեց Յակոբոս Պատրիարքին:

Պ. Երբոր Յակոբոս հրաժարեցաւ Պատրիարքութենէ՝ ժողովրդեան ատելութիւնն ու յուզմունքը աւելի շատցաւ ամիրայից դէմ, անանկ որ մինչև Եպարզոսին ականջը հասնելով՝ ամիրաներէն երեք հոգի կանչեց և հարցուց Յակոբոս Պատրիարքին առանց Բ. Դրան իմաց տալու հրաժարելուն պատճառը: Ամիրաները չզիտնալ ձեւացնելով, ինդրեցին որ ուրիշ Պատրիարքի մը ընտրութիւնը չնորհէ. Եպարզոսն ընդունեցաւ և առաջարկեց որ եթէ արժանաւոր մէկը

Պայ թող ընտրեն : Ուստի անմիջապէս Ստեփանոս նախկին Պատրիարքը կ'առաջարկեն . եպարքոսն ալ Սուլթանին խնայնելով՝ վերստին Ստեփանոսը Պատրիարք կը կարգէ , որ խիստ երկչառ ըլլալուն ամիրայից շատով կը խոնարհէր . և իրեն խորհրդական ընտրեցին Պողոս եպիսկոպոս : Բայց ժողովուրդը չհանդարտեցաւ , վասն զի ճեմարանին ծախքը Սէրվէրեան չկրնալով տանիլ , հրաժարեր էր . տնօրէն Յակոբ Մանուէլեանն ալ 6 ապրիլ 1841 ըննութեան հանդիսին պատճառաւ աղայոց ծնողքն և ուրիշ ուսումնասէր և ճեմարանին բարեկամ անձինք հրաւիրելով՝ ի ճեմարան , ազդու ատենարանութեամբ իմացուց ճեմարանին կործանման վիճակի մէջ ըլլալը : Ասոր վրայ այն տեղ ներկայ եղող ժողովուրդը « Միակամ » անուամբ ընկերութիւն մը կը հաստատեն ճեմարանին հաստատ յարատեւութեանը ամեն ջանք չինայելու : և կը խնդրեն Պատրիարքէն թէ ճեմարանին յատկացեալ եկամուտըն Աղգային ուրիշ եկամուտներէն բաժնուի , վասն զի ամիրաները Յակոբ Պատրիարքին սահմանած անցազրատան 3 ախան զուրուշ տուրքը Փրկչի վանուց յատկացուցէր էին . ճեմարանը շուտով դոցուելու համար Պատրիարքարանն ընկերութեան ձայնին ախանչ չ'կախեց :

Հ . Ստեփանոս Պատրիարքի օրով ինչ երեւելի գործ պատահեցաւ :

Պ . Միակամ անուամբ ընկերութիւնը երբ տեսաւ որ Պատրիարքարանը ամիրայից ազդեցութեամբն իրենց ախանչ չ'կախեց , ճեմարանի աշակերտք թօհաֆճի եղիաղար անուն Հայու մ'առաջնորդութեամբ ^{Էրզրումի} ազերսագիր կուտան Սուլթանին , ճեմարանին յարատեւութեանը համար . ասոր վրայ Պատրիարքը զայրացած՝ այս գործին դուլս կեցողներէն մէկ քանիները կանչելով կը յանդիմանէ բայց անոնք բանի տեղ չդնելով այն սաստը , երթալով գործը կը սաստկանայ , ամիրայք կը խնդան ժողովուրդեան վրայ , ուստի բոլոր ժողովուրդը ոտք ելած , դարձեալ աղերսագիր կուտան Սուլթանին , աղաչելով որ Աղգային ելեւմտական գործերը ժողովուրդեան կողմէն ընտրեալ 24 անձանց ձեռօք տեսնուի , և այն 24 ներք Բ . Դուռը վաւերացնէ : Սուլթանը կը հրամայէ որ ժողովուրդեան դատը տեսնուի . ուստի արհեստաւորաց գլխաւորներէն արդարութեան ատենին մէջ դատ վարելով վերջապէս ստացան իրենց ուղածը , անանկ որ ամիրաներն ամենեւին գործի չպիտի խառնուին , իւրաքանչիւր ^{Էրզրումի} իր մէջէն պիտի ընտրէ , և Էրզրումի

Գ.Ք.Ն. վկայականով պիտի գայ Պատրիարքարան
 և ասանցմով պիտի ընտրուին 24 ներք ու բոլոր
 Ազգային գործոց տեղութիւնը վարեն : Եւ անա
 այս անգամ ժողովրդեան կողմէն վարչութիւն
 մը կը սահմանուի որ Հայոց Ազգին ծնունդէն ՚ի
 վեր տեսնուած ու լուած բան չէր . նախատինք
 մ'էր ասի ամիրայից , ուստի ամեն հնար ՚ի գործ
 դրին և Բ . Դուռնն եկած Պատրիարքարան անդոր
 ծաղրելի թողուցին . ժողովն անհամբեր կերպիւ
 թերման կսպասէր , որ հայիւ պահանջէր . 2 ամի
 ւրն անցաւ և դեռ թերման չեկաւ : Այս միջոցին
 ճեմարանը գոցուեցաւ և ամիրայք իրենց վրէժն
 առած սեպեցին ճարտարապետ ամիրաներէն ,
 ուստի օգոստոս 24 ին ժողովուրդը վերստին ա
 ղերսագիր կուտայ Սուլթանին Զեյնի պարնէն
 գարձած ատեն : Սուլթանը կը հրամայէ որ Հայ
 յոց ազգին դատը շուտով և անմիջապէս տես
 նուի : Բ . Դուռնն օգոստոս 24 ին աղերսագիր
 տուողը կը փնտռէ , որ գինեպան Իսկէնտէրն և
 24 անձինք էին : Երբ ժողովուրդը կիմանայ ա
 ղերսագիր տուողներուն փնտուուիլը , 3000 էն ա
 ւելի անձինք շուկան խանութնին գոցելով գի
 նեպան Իսկէնտէրի առաջնորդութեամբ Բ . Դու
 րը կը դիմեն : Ուր տեղ ներկայ եղող 24 անձե

րէն 16 ք բանտարկուեր էին , և երբ Իսկէնտէրն
 ալ կուզեն բանտարկել , ժողովուրդը ճայնը կը
 բարձրացնէ և կըսկսին աղաղակել թէ մենք
 եմք աղերսագիր տուողը , Ազգն է , ամենքնիս
 եմք , ուստի Բ . Դուռը ժողովուրդը քաղցրու
 թեամբ կը համոզէ և բանտարկեալներն ալ ազատ
 կ'ընողու , խոստանալով նաև իրենց ուղածը կա
 տարել : Նոյն միջոցին ամիրայից կողմն եղող Ալ
 թունեան Պետրոս վատ վարդապետն արտաքին
 գործոց պաշտօնէին դիմելով պարագլխոց գըլ
 խատուիլը և ոմանց ալ աքսորուիլը կը խնդրէ ,
 քայց կառավարութիւնը կը մերժէ անոր առա
 ջարկութիւնը , միայն օգոստոս 24 ի դէպքն ան
 խոհեմաբար յանցանք ըլլալը 24 ներուն իմացը
 ներով և իրենք եւս խոստանալով՝ սեպտեմբեր
 17 ին կաքսորուին հետեւեալ անձինքը . Յով
 հաննէս վարդապետ Սեթեան , Գրիգոր Յովի
 թեան , Յակոբ Մանուէլեան , Յարութիւն Յով
 հաննէսեան , Անդրէաս ոսկերիչ , մահտեսի Պետ
 րոս պասմանի : Նոյն օրը ժողովրդեան կողմանէ
 Բ . Դուռը կերթան Պողոս վարդապետ , Միզան
 ճի Ստեփան և ուրիշներ , աքսորին դէմ բողո
 քելու համար . անոնք ալ կաքսորուին , և Պատ
 րիարքն ու ամիրաները Բ . Դուռը կը կանչուին

ժողովուրդը խաղաղեցնելու համար : Ստեփանոս երկրորդ անգամ 1 տարի Պատրիարքութիւն ընելէն ետքը՝ հրաժարեցնելով՝ Աստուածատուր եպիսկոպոսը Պատրիարք կը կարգեն , բայց ոչ ժողովրդեան հաճութեամբը , 13 սեպտ. 1841 ինչոյն օրերը Սամաթիոյ՝ Հայոց Պատրիարքարանը այրեցաւ :

Հ . Աստուածատուր Պատրիարքն ի՞նչպէս կառավարեց Ազգը :

Պ . Ամիրայք կարծելով որ ալ ժողովուրդը հանդարտած է , դարձեալ սկսան առջի ընթացքը շարունակել . սակայն ժողովուրդը քահանաներով հանդերձ դարձեալ և չորրորդ անգամ , մալմաները լցուած՝ աղերսագիր տուաւ Սուլթանին , ըսելով թէ մենք Տէրութեան հրամանաց անհնազանդ չեմք , բայց ամիրայից ալ դերին չեմք : Եւ թէպէտ նոյն օրն ամենքն ալ կը բանտարկուին , բայց դիչերն ազատութիւն կըստանան իրենց տունը երթալու : Բ . Դուռը ՚ի շնորհս ամիրայից դարձեալ յերկարաձգել կըսկըսի ժողովրդեան բողոքը , ուստի ժողովուրդն առաւել եւս զայրացած՝ միանալով երթում ըրին թէ ինչ որ պատահի բանտ , արտոր , մահ տանել և ամիրայից կամացը չհնազանդել : Ս . յո

երդումն ամիրաները վարհուրեցուց . ուստի Աստուածատուր Պատրիարք , Տատեան Յովհաննէս , և Արզումանեան Արզուման ամիրաները , ժողովրդեան գլխաւորները վէզիր խան ՚ի ժողով հըրաւիրելով , կը համոզեն խոստանալով որ ժողովրդեան կամացը պիտի հնազանդին , և այսպէս կը խաղաղեցնեն ժողովուրդը , և Բ . Դուռը Պատրիարքարանէն տեղեկանալով ժողովրդեան իրաւացի և արդար խնդրոյն , հրովարտակաւ կը հաստատէ 12 դեկտեմբեր 1841 արհեստաւորներէն 27 անձինք Ազգային գործերու մատակարարութեանը համար , և ամիրաներէն ըստորագրութիւն կառնէ Ազգային գործերու չը խառնուելու համար : Ուստի ժողովրդական վազուութիւնն աւելի ոյժ առնելով կը հաստատուի . բայց տարիէ մը վերջը ժողովրդական վարչութիւնը ձանձրանալով չորս կողմէն ելած խոչընդոտներէն՝ հրաժարականը տուաւ Բ . Դրան , որով 13 նոյեմբեր 1842 վերստին ամիրայից յանձնուեցաւ ազգային վարչութիւնը :

Հ . Ամիրայք ի՞նչպէս կառավարեցին Ազգը :

Պ . Ամիրայք ալ չկրնալով առաջուան պէս ժողովուրդը կառավարել , ուրիշ ճար մը մտածեցին : Նախ ժողովրդեան հետ հաշտուիլ , այս ալ

անկարելի էր . ուստի Երկանեան ամիրային նախագահութեամբն ամիրայից ժողով մը դուռնորուեցաւ , և այն տեղ՝ Երկանեան՝ Աղզին թշուառութիւնը մի առ մի բացատրելով՝ յայտնեց որ Պատրիարքաց անհոգութիւնն է պատճառը . ուստի ժողովքը միաբանութեամբ որոշեց որ ժողովքին կողմանէ Պատրիարքին հրաժարականն ուղղուի : Եւ երկու ամիրայ քաղաքավարութեամբ Պատրիարքին ներկայանալով հրաժարականը կը խնդրեն . և որովհետեւ ձանձրացած էր Պատրիարքն Աղզային երկպառակութիւնէն , անձնական ակարութիւն պատճառելով , հրաժարականը դրեց Բ . Դուռը և տարի Պատրիարքութիւն ընելէն ետքը , և Պատրիարք եղաւ Մատթէոս եպիսկոպոս առաջնորդ . Զմիւռնիոյ ժողովրդասէր և ուսումնասէր անձը Ա . յուլիս 1844 ին , որ ժողովրդեան սիրելու ըլլալով՝ էր ազգու ասեռարանութիւններովն ու համադիչ խօսքերովք ժողովուրդն ամիրայից հետ հաշտեցուց , և 30 հոգիէ բաղկացեալ վարչութեան ժողով մը կազմեց , որուն 16 ը ամիրաներէն և 14 ը ժողովրդէն էին : Այս միջոցին թէպէտ ամեն թաղ ըսկսեց էր էր դպրոցներուն յառաջդիմութեանը համար աշխատիլ , բայց ասոնց մէջ ամենէն

իջայրունն ու յառաջադէմը Սամսթիոյ Ս . Մահակեան վարժարանն էր , որ ընկերութեան մը արդեամբ կը կառավարուէր , փախազեան Անդրանիկ և Ղազարոսեան ֆրիստոտուր հաստատարիտ և ամեն կողմէ եկած խոչընդոտներու համբերելով յաղթող անձանց մատակարարութեամբը . նոյնպէս Ներսիսեան վարժարանը , բայց այս ձեզայիղեան Մկրտիչ ամիրայի խնամօք : Այս ատենները վերստին սկսաւ էջմիածնայ կաթողիկոսին յիշատակութիւնը Պօլսոյ եկեղեցիներուն մէջ , վասն զի 1828 Ռուսաց պատերազմին համար դադրած էր Բ . Դրան հրամանաւ թէ կաթողիկոսին յիշատակութիւնը և թէ նուիրակաց դալուստը : Այս միջոցին 1843 , Ներսէս Աշտարակեցի կաթողիկոս կ'ընտրուի Աղգովին 14 տարի աքսորանայ դատապարտուէլէն յետոյ , որ Աղգային իրաւանց պաշտպանութեանը համար էր :

Ը . Ներսէս կաթողիկոսի վրայ ինչ գիտելիք կայ :

Պ . Երբ Ս . էջմիածնայ կարբեցի Յովհաննէս ընդհանուր կաթողիկոսը մեռաւ , իրեն յաջորդեց Ներսէս Ե . Աշտարակեցի , որ խոհեմ , հեռատես , Ազգասէր և ուսումնասէր անձ մ'էր :

Դեռ եպիսկոպոս չեղած քանիցս անգամ բողոքած էր նախորդ վախճանեալ Յովհաննէս Կաթողիկոսին Պալատենեան շինել և ինքն ստորագրելուն համար . նաև շատ անգամ աղաչելով ստիպած էր զինքը՝ որ ստորագրութիւնը յետս կոչէ . բայց Յովհաննէս Կաթողիկոսն անպատասխան կը համարէր յետս կոչումը : Եւ երբ Ներսէս՝ Կաթողիկոս ընտրուեցաւ , Ռուսաց կայսրը շնորհաւորելով Կաթողիկոսը՝ հրաւիրեց ՚ի Բեարպուրկ : Այն տեղը նախ կայսրն այցելութեան կուգայ Կաթողիկոսին . Ներսէս Կաթողիկոս խօսակցութեան միջոցին կը յիշեցնէ կայսեր , Բասքերվիչ զօրապետին ազգանքներէն յորդորելով Պարսկաց արշաւանքի ատեն Հայոց Ազգին կայսրութեան փառքին համար թափած արիւնը , և իրեն՝ Հայոց Ազգին ու եկեղեցւոյն ազատութեանը համար սուած ստորագրութիւնը քովս իբր սրբազան մասունք պահած ըլլալը : կայսրը կը պատասխանէ ու կըսէ . հաստատ եմ իմ խոստմանս վրայ՝ որ յանուն աստուծոյ ստորագրեցի և չեմ ուզեր ձեր Ազգին պարտական մնալ՝ որ այնչափ արիւն թափեց կայսրութեանս փառքին համար . բայց այժմեան քաղաքակաւնութիւնը չներեր , ուստի պէտք է համբերել

մինչեւ որ Աստուած ինքը տնօրինէ : Եւ հետեւեալ օրը երբ փոխադարձ այցելութեան կերթայ Ս . Կաթողիկոսը առ կայսեր , խօսակցութեան միջոցին կայսրը Հայ և Ռուս եկեղեցեաց միութիւնը կառավարկէ : Կաթողիկոսը պատասխանելով կըսէ՝ Տէր . դուք միութիւն կուզէք , բայց ի՞նչ եղանակաւ՝ հի՛նը նորին հետ թէ՛ նորը հինին , որն է արդարը , ձեր գատողութեանը կը յանձնեմ : Ուրիշ օր մ'ալ երբ կը տեսնուին , կայսրը կառավարկէ որ վեղարին ձեւը փոխէ , և Ռուսաց հոգեւոր Մեծաբնէն ձեւովը դնէ : Կաթողիկոսը կը պատասխանէ , Տէր , երբ Զմիւռին Ս . Ստեփանոս եկեղեցւոյն մէջ վարդապետ կը ձեռնադրուէի , Քրիստոսի խաչելութեան առջին ուխտեցի որ այս ձեւ վեղարով գերեզման իջնամ ուստի Աստուծոյ առջեւ որ ուխտած եմ , ի՞նչ պէս կընամ ուխտս դրժել ՚ի շնորհս մարդկան : Եւ երբոր կայսրն այս խօսքերը կը լսէ , հիանալով կը դովէ զանի և կը հրամայէ ադամանդեայ խաչ կրել վեղարին վրայ :

Հ . Սատթէոս Պատրիարքին օրով ի՞նչ երեւելի դէպքեր պատահեցան :

Պ . 1845 ին ապրիլ 3 ին Հռովմէական Հայոց աշխարհական պատրիարքը մեռնելով տեղը յա-

Նորդեց Անտօն վարդապետ Հասունեան : Մատթէոս Պատրիարք շնորհաւորութեան զրկեց երկու հողի իր կողմէն , և այս առաջինն եղաւ Հայոց և Հռովմէականաց մէկզմէկու այցելութիւնը : Բ . Դրան հրամանաւ Հայ եկեղեցականաց զլիարկները փոխուեցան : Եւ երբ Պատրիարքներուն Միւսթէշարութեան շքանշան տրուեցաւ Բ . Դունէն , Հասունեան Անտօն շնորհաւորելու եկաւ զՄատթէոս Պատրիարքը : Նոյն օրերը Ռուսաց կոստանդիանոս մեծ Դուքսը Պօլիս գալով այցելութեան եկաւ Մատթէոս Պատրիարքին , ընկերութեամբ արտաքին դործոց պաշտօնեայ Բիֆաթ բաշային . Ռուսաց դեսպանին և Այվազեան Յովհաննէս անուն Ռուսիացի երեւելի պատկերհանին . նոյնպէս Գաղղիոյ թագաւորի որդին Մօնթբանսիէ դուքսն այցելութեան եկաւ Մատթէոս Պատրիարքի : Ասոր օրով Բողոքականաց քարոզիչ Միսիօնարները , որոնք նախ դպրոցներ բանալով բաւական Հայ աշակերտներ առած՝ ճրի Գաղղիարէն՝ Անգղիարէն կուսուցանէին , սկսան կրօնական դիտութիւն դաս տալ . ազքատաց սղորմութիւն բաշխել , պարտականներու օգնել . այս կերպով բաւական մարդ որսալով սկսան Հայոց եկեղեցին յայտնի յանդիման նախատել . ո .

րով Մատթէոս Պատրիարք չկրնալով հանդուրժել՝ կոնդակներ զրկեց եկեղեցիները և նշովեց զանոնք , Մատթէոսի օրով դարձեալ վէճ բացուեցաւ Հայոց և Յունաց մէջ Երուսաղէմի Ս . Ծննդեան տաճարին դրան բանալոյն համար : Նոյն օրերը Սամովիոյ Ս . Սահակեան դպրոցին տարեկան քննութեան հանդէսը կատարուեցաւ ՚ի ներկայութեան Մատթէոս Պատրիարքի , Ամիրայից , Միթէրճիմ Մէհէմմէա բաշայի , բժշկապետ Խամայիլ Եֆէնտիի , Չէվէր Եֆէնտիի , թէրճիման Յուատ պէյ Եֆէնտիի , և բազմաթիւ ժողովրդեան : Ասոր օրով հաստատուեցաւ նաև Ազգային վաւերացեալ դործերն ու եզելութիւններն Ազգայնոց հաղորդելու համար Հայաստան անուն լրագիրը : Նոյն օրերը՝ 1859 յունվար 1՝ Հայկազեան անուամբ ընկերութիւն մ՝ալ հաստատուեցաւ , դպրոցներուն աժան դնով դասագիրքեր մատակարարելու նպատակաւ :

Հ . Ամիրայք ի՛նչու թշնամացան Մատթէոս Պատրիարքին հետ :

Պ . Տեսնելով անոր բացարձակ իշխանութիւն վարելը , և միշտ Ազգային յառաջադիմութեան և դպրոցներու զարգացման անդուլ աշխատիլը , ամիրաները այս բանն աղէկ աչքով չէին տես-

ներ . և առաջին յեղախոխութենէն ալ խրատուած ըլլալնուն , ուրիշ միջոցներ կը մտածեն , այն է առաջնորդները փոխեն : Բայց Մատթէոս Պատրիարք համարձակ խօսելով թէ առաջնորդները գաւառացիք կրնարեն , և Հոգեւոր ժողովն ընտրեալին և ընտրողին արժանաւորութեամբը կը վաւերացնէ Հայաստանեայց Ս . Եկեղեցւոյ կանոնին համեմատ . ամիրաներն այս լսելով շատերը հետը կը թշնամանան , բայց նոյն միջոցին ճշդայիրէան Մկրտիչ ամիրան խիստ զօրեղ և պայծառ փրճակ մ'ունենալուն կակնածէին , վասն զի զՊատրիարքը կը պաշտպանէր : Քիչ ժամանակ ետքը ճէղայիրէան ալ թշնամացաւ Պատրիարքի հետ , ըստ որում Մատթէոս Պատրիարք տրկարութեանը պատճառաւ անոր հօրը մահուան յուղարկաւորութեան հանդէսին չէր գացեր՝ ուստի ամենը մէկ գալով խորհուրդ կրնեն Պատրիարքը հրաժարեցնելու , բայց ժողովուրդէն վախնալով կորոչեն որ Պատրիարքին իշխանութիւնը սահմանափակեն , Ազգային վարչութեան գործերն երկու ժողովով կառավարուին , և Պատրիարքն առանց ժողովոյ գիտութեանը Բ . Դրան Խօրէր չգրէ : Ուստի կրճիկեան Յակոբի և ճէղայիրէան Մկրտիչի ձեռամբ Բէշիա բաշան հաճե-

ցընելով , ասի հրովարտակ մը կը գրէ Սուլթանէն վաւերացած՝ 'ի Պատրիարքարան՝ 3 մայիս 1847 : Մատթէոս Պատրիարք եկեղեցականները , ամիրաները և ժողովրդեան զլիաւորները հրաւիրելով հրովարտակը կը կարդայ , որով երկու ժողով որոշելու արածնութիւնը կը տրուէր մէկը 14 եկեղեցականներէ բաղկացեալ կրօնական Հոգեւոր անուամբ . և միւսը 20 աշխարհականներէ Գերագոյն անուամբ . ասոնց նախագահը Պատրիարքը պիտի ըլլայ և գործադիրն ալ Լեւոնի անուամբ կրճիկեան Յակոբ : Սյն տեղ ներկայ կը զող ժողովուրդը՝ ժողովոց անդամները կրնարն և անունները Բ . Դուռը զրկեցին վաւերացնելու համար . միանգամայն պայման դրին՝ որ երկու տարին անգամ մ'անգամոց փոխախութիւն ըլլայ և հրովարտակաւ վաւերացուի :

Հ . Յերիէրի ո՞վ է և ի՞նչ յարաբերութիւն ունեցաւ Հայոց հետ :

Պ . 1847 մայիս 20 ին Բ . Դունէն ժողովին վաւերացման հրովարտակը գալով , Ազգային գործերը կարգադրել սկսան . բայց ասով ամիրայք ո՛չ Պատրիարքին և ո՛չ Ազգին միտս մը տուած եղան , վասն զի Պատրիարքը գիտէր որ օր մը ներկայ ժողովին մէջ բազմոզ ամիրայից տեղ ,



ժողովուրդն իր ազատ կամքովն ուղած անձը պիտի ընտրէ : Նոյն օրերը Կ. Պօլիս եկաւ Հռովմայէն Ֆերիէրի կարդինայը՝ մեծամեծ ընծաներով , և Բ. Դուռը հրաման զրկեց Հայոց և Յունաց Պատրիարքներուն՝ որ քաղաքականութեան համար այցելութեան երթան Ֆերիէրի : Ուստի Մատթէոս Պատրիարք ընկերութեամբ Չամուրճեան պատուելիի , և Սղաթօնեան Մկրտիչի՝ այցելութեան կերթայ , և փոխադարձ Ֆերիէրի այցելութիւնը խիստ փառաւոր կերպիւ կընդունէ : Ամիսէ մը վերջը Պատրիարքարանը Հայերէն սրբուած կոնդակ մը կուղայ , որուն մէջ Հայոց եկեղեցին հերձուածող անուանելով կը հրաւիրէր Հռովմայ եկեղեցւոյն զիրիւ մտնել : Մատթէոս Պատրիարք՝ Տատեան և Պալեան ամիրաներուն գիմելով կը խնդրէ որ Բ. Դրան իմացունեն այս նախատինքը՝ բայց անոնք փոխանակ Բ. Դրան իմաց տալով՝ Պէշիկթաշ իրենց տունը կը հրաւիրեն զՖերիէրի , և կը խնդրեն ցոյց տալ Հայոց եկեղեցւոյն մուրրութիւնները : Հոն կը գրտնուի նաեւ Մատթէոս Պատրիարք և Չամուրճեան պատուելին : Ֆերիէրի կըսկսի ոչինչ փաստերով ազդացուցանել , բայց Մատթէոս Պատրիարք ամենը ջրերէն ետքը՝ Հայոց եկեղեցւոյն հաստա-

տութեան օրէն մինչեւ այսօր անարատ և անխախտ մնալն , և Հռովմայ եկեղեցւոյն քանի քանի անգամ փոփոխութիւն կրելը կապացուցանէ : Նոյն օրը ժամանակը Հներելուն , կորոշուի որ Բ. անգամ մ'ալ խօսակցին այս նիւթին վրայ : Արդ 1848 յունվար 29՝ Ֆերիէրի Պատրիարքարան դալով Կրճիկեան Յակոբ և Չամուրճեանի հետ երկար ատեն տեսնուելով կը մեկնի : Երկու օրէն Լատին քահանայի մը ձեռօք Չամուրճեան պատուելին կը հրաւիրուի Ֆերիէրի կարդինայէ : Չամուրճեան պատուելին երթալով , կըսկսին դարձեալ Հայոց եկեղեցւոյն ուղղափառութեանը վերայ խօսիլ , և Չամուրճեան կը հաստատէ և կը համոզէ թէ Հայ եկեղեցին ուղղափառ է և ուղղափառ պիտի մնայ միշտ ,

Հ. Հասուն Անտօն՝ Ֆերիէրի Հայոց Պատրիարքին հետ տեսնուիլը երբ լսեց , ինչ ընթացք բունց :

Պ. Անմըջապէս իր համախոհներովը Ֆէս նաղըրիին տունը ժողովեցան նոյն գիշերը : Հրաւիրուեցաւ նաեւ Ֆերիէրի կարդինայն ալ , եւ ընթրիքէն վերջը Հայոց վրայ խօսք բացուելով , Ֆերիէրի ըսաւ թէ Հայոց վրայ հերետիկոսական ամենեւին կասկած մը չտեսնելու համար Ս. դա-

հին առջեւ պիտի վկայեմ : Այս խօսքէն , ներկայ եղող ժողովականք ամենը մէկէն կըսկսին մեղադրել զՖերիէրի , ըսելով . Արդարեւ , Գերազայծառ տէր , դուք շատ միամիտ էք եղեր որ Հայոց չարամտութիւնը չկրցիք հասկնալ , Հայերն ինչպէս կը դաւանին՝ այնպէս չեն հաւատար , և դուք ձեր միամիտութեամբը խաբուած էք անոնց խօսքերուն՝ անոնք անհաշտելի թըշնամի են Հռովմայ դահուն : Մենք որ ՉՕ տարի է շարունակ կաշխատիմք Հռովմայ դահուն անսխալութեանը համար , և դուք որ հիմայ սխալական երեւցուցիք հերեւտիկոսաց , պիտի բողոքեմք ձեզի համար առ Ս . դահն Հռովմայ , եւ այլն : Եւ այնչափ կընեն՝ որ Ֆերիէրի կը խոստանայ իր խօսքը յետո կոչել : Եւ երբ կրկին տեսութեան կուգայ Տատեաններուն տունը յԱյստեֆանոյ , հոն կը գտնուի նաեւ Մատթէոս Պատրիարք՝ և ընթրիքի ատեն Տատեան Գարեգին՝ միութեան վրայ ատենաբանութիւն կընէ ; որու վրայ շատ ուրախ կըլլայ Ֆերիէրի : Եւ այն երբ դարձեալ միութեան վրայ խօսք կը բացուի Ֆերիէրի կը պատասխանէ : Ես շատերէն իմացայ որ Հայերն ինչպէս որ կը դաւանին՝ նոյնպէս չեն հաւատար , ուստի ես ալ կը կասկածիմ թէ չրբ

լայ որ անխոհեմութեամբ սխալ դատած ըլլամ՝ և ես Ս . դահին Հայոց համար ոչ աղէկ և ոչ դէշ բան մը պիտի կընամ վկայել : Մատթէոս Պատրիարք իմանալով որ Հասունեանք համոզեր են զՖերիէրի , առանց բան մ'արտասանելու իր հրաժարական օղջոյնը տալով կը հեռանայ , նոյնպէս և Ֆերիէրի , Նոյն օրերը « Համազգեաց » անուամբ ընկերութիւն մը հաստատուեցաւ :

Հ . Համազգեաց ընկերութիւնը կազմողները որո՞նք էին :

Պ . Հռովմէական Հայոց ազգասէր և ուսումնասէր երիտասարդները Լուսաւորչական Հայոց հետ խորհրդակցելով . ուզեցին ուսմանը տարածել և ուսումնական վերակենդանութիւն մը տալ աղբին , ամեն դաւառի և գիւղերու մէջ դպրոցներ բանալ , երկրագործութիւնը ծաղկեցնել և Սղղային հնութիւններու թանգարան մը հաստատել : Այս ընկերութիւնը կազմեցին՝ որուն կանոնագրութիւնը Միխիթարեան միաբանութենէն Հ . Պետրոս վարդապետը խմբագրեց ; Բիշ միջոցի մէջ ընկերութիւնն այնքան ընդարձակեցաւ՝ որ անդամաց թիւը 600 ի կը հասնէր : Երբ Հասուն՝ Համազգեաց ընկերութեան քիչ ատենի մէջ այսչափ յառաջանան ու ընդարձակ

ուիլը տեսաւ , հեռատեսութեամբն իր միապետական ապագայ իշխանութեան նուաստանալը նշմարելով՝ անմիջապէս իր արբանեակներովն ու համախոհներովն ընկերութիւնը կործանելու միջոցները սկսաւ խորհիլ : Նախ ժողովուրդը համոզեց՝ ըսելով թէ Հռոյմէական Ս . կրօնին դէմ է հերեւտիկոս Հայոց հետ ընկերութիւն կազմել և հոգեւոր սիրով հաղորդակցելը , և թէ չեմք կրնալ արձակում և հաղորդութիւն տալ ձեզ մինչեւ որ այդպիսի վնասակար ընկերութեանէ մը զղջալով ետ չկենաք , քանզի այս ընկերութիւնը չէթէ միայն ձեր հոգւոյն և մարմնոյն վնաս է , այլ մեծ անարգութիւն է Ս . դասին : Հասուն միայն ասով ալ դո՛հ չըլլալով իր կամացը համեմատ Հռոյմ՝ գրեց և կոնդակ բերել տուաւ՝ վերջապէս ամեն ճիգ թափեց ընկերութիւնը կործանելու , և յաջողեցաւ , թէպէտ ընկերութիւնը շատ ընդդիմացաւ , բողոքեց 'ի Հռոյմ' , բողոքեց նաեւ Ռ . Դրան , բայց անբերի եղաւ : Ուստի հիմնադիրք ալ 'ի նախատինս Հասունի' քարուկիր տուն մը շինել տուին , « Համագրեաց ընկերութեան կեդրոն » անուանելով : Այսչափ թշուառութեան և Հասունին ամեն մեքենաներուն անվեհեր դէմ դնողները՝ ըստ մեծի մասին

Մուրատեան և Ռաֆայէլեան դպրոցներուն աշակերտներն էին :

Հ . Մուրատեան և Ռաֆայէլեան վարժարաններն ո՞վ բացած է և ո՞ւր են :

Պ . Պարսկաստանի Հայերը վաճառականութեան պատճառաւ Հնդկաստան՝ այն ամենահարուստ երկիրը դիմելով՝ դաղթականութիւն մը կազմեցին հոն , և իրենց ճարտարութեան ու յաջողակութեան համար , երկրին թագաւորներն ալ մեծ մարդասիրութիւն կը ցուցնեն , ամեն տեսակ աղատութիւններ կուտան . Հայք այնտեղ մեծամեծ պաշտօններու կը հասնին , մեծ ազդեցութիւն կունենան , և իրենց առեւտրական յաջողակութեամբը գրեթէ բոլոր երկրին տէր կըլլան : Երբ Անգղիացիք Հնդկաստան արշաւեցին Հայք աւելի յաջողութիւն գտնելու յուսով , Անգղիացւոց կօզնեն , բայց յոյսերնին 'ի դերեւ ելնելէ 'ի զատ' ուր որ Անգղիացւոց ձեռքն անցաւ , այն տեղի վաճառականութիւնն ալ Հայոց ձեռքէն ելաւ : Ասոնց մէջէն երեւելի եղաւ Մատրասցի Սամուէլ Մուրատ ազգասէր և ուսումնասէր վաճառականը , որ մեծ գումար մը կտակ ըրած է Հայոց Ազգին աղքատ տղայոց համար վարժարան մը բանալ և ձրի դաստիարակելու

նպատակաւ , վարժարանին միայն ուսումնական մատակարարութիւնը Մխլթարեան Հարց յանձնելով : Այս վարժարանը՝ նախ 'ի Բատուա բացուեցաւ , և յետոյ 'ի Փարիզ , Մարտիան Լարճարան անուամբ : Նոյնպէս Հնդկաստանցի Ռաֆայէլ Փարաղամեան Հայ վաճառականը մեծ գումար մը կտակած է որ ձէնէտիկի մէջ վարժարան մը բացուի , այս ալ առաջինին պայմաններովը , Ռաֆայէլան Լարճարան անուամբ : Բայց ցաւ է մեզ որ՝ Մխլթարեանք յիշեալ բարերարներուն կամայը համեմատ անխտիր Հայ աղքատ պատանեաց չեն վայլեցներ այն մեծ շնորհքը , բայց միայն Հռովմէական Հայոց , և այն ալ թոշակաւ :

Հ . Հնդկաստանի Հայոց վրայ ուրիշ ինչ գիտելիք կայ :

Պ . Թէեւ Հնդկաստանի Հայ գաղթականութիւնը շատ պղտիկ , բայց իրենց վաճառականութեամբը բոլոր երեւելի քաղաքաց մէջ տարածուած է ինչպէս Պոմպա , Կալիպթա , Մատրաս , Պաթալիա , Սինկափոր , Էայն , և որպէս վաճառականութեամբ նոյն քաղաքներուն մէջ երեւելի՝ նոյնպէս ազգասիրութեամբ ամբողջ Հայոց մէջ երեւելի եղած են : Իրենց մէջ երեւելի ընկերութիւններ ունին , որոց մէկն է Մարտիան

ընկերութիւնը : Կալիպթայի մէջ տպարան մ'ունի և բաւական գրքեր տպած է : 1830 Մարտիան անուամբ ճեմարան մ'ալ կառուցած է , և Մարտիան անուամբ հմտալից օրագիր մը կը հրատարակուէր , Մետրովբ Թաղեադեանցի խըմբադրութեամբ : Այս ուսումնական անձն ուրիշ շատ հեղինակութիւններ ալ ունի : Հնդկաստանի մէջ երեւելի եղած է նաեւ Տիկին Մարիամ Յակոբեան , որ իր ծախիւքը մօտ ատեններս աղջկանց վարժարան մը հիմնած է 'ի Հնդկաստան . բայց ցաւ է մեզ որ օրինաւոր առաջնորդներ չունենալովս , թէ Հնդկաստանի և թէ Լեհաստանի Հայութիւնն օր աւուր ոչնչանալու վրայ է . թէպէտեւ մերթ ընդ մերթ Հնդկաստանէն նամակներ կը տեսնեմք լրագրաց մէջ , բայց Լեհաստանէն և միւս Եւրոպական քաղաքներու մէջ գանուող Հայերէն ոչ ոք տեղեկութիւն ունի :

Հ . Մատթէոսի Պատրիարքութիւնը ո՞րչափ տեւեց :

Պ . Ամիրայք , որ վարժուած էին ուզած ատենին Պատրիարքներն ու առաջնորդները փոխել , Մատթէոս Պատրիարքի ալ կուզէին նոյն ընթացքը բռնել . բայց ժողովրդէն ակնածելովս բան մը չէին կրնար ընել : Նոյն օրերը ճանիկ ա-

միրայի քոյրը կը մեռնի, Պատրիարքը՝ յուզարկաւորութեան հանդիսին անձնական տկարութեանը պատճառաւ ներկայ չգտնուելուն՝ ճանիկ ամիրայ կը թշնամանայ Պատրիարքին հետ. նոյնպէս կը թշնամանայ Միսակ ամիրայ որ Բերայի եկեղեցւոյն կալուածներէն մին, ուր վերջերն Արեւելեան թատրոնը կանգնեցին, կուզէր Գայիանեանց գալոցի շինութեանը համար տրուած ստակին փոխարէն առնել: Բուսի Մատթէոսի 25000 զուրուչի արժուութեամբ մուշտակ մը կը դրկէ, Պատրիարքը չընդունիր, և անմիջապէս Բերայի եկեղեցւոյն Տ. Զարարիա քահանան կանչելով կիմացնէ, այն ալ ժողովրդեան իմացնելով եկեղեցւոյն Գեորգիոսի Միսակէն կառնուի, և Տատեան Պօղոսի կը յանձնուի: Ասոր վրայ ամիրայից մէջ Պատրիարքին թշնամիները շատնալով ժողովին կողմէն երկուանգամ հրաժարականը կուզուի. Մատթէոս՝ ես ժողովրդեան ձայնովը Պատրիարք եղած եմ և միայն ժողովրդեան ձայնովը կը հրաժարիմ, կը պատասխանէ: Ամիրայք անսնելով որ չպիտի կարենան հրաժարեցնել, կը համբերեն, և ուրիշ գէպքով մ'առիթ կը գտնեն հրաժարեցնելու: Օտեան Պօղոս ամիրան Պատրիարքի ձեռամբ 50000

զուրուչ կը նուիրէ Գարակէօմրիւկի եկեղեցւոյն և գալոցին, միանգամայն կաղաչէ որ մարդ չիմանայ: Ճէզայիբլեան՝ Պատրիարքին երթալով կուզէ իմանալ նուիրատուն ո՞վ ըլլալը. Մատթէոս խոստովանութիւն մ'ըլլալուն համար չուզեր յայտնել. Ճէզայիբլեան կը բարկանայ և Բէշիտ բաշայի երթալով Պատրիարքին հրաժարելը կը խնդրէ, Բէշիտ բաշա կրճիկեանի ձեռամբ Պատրիարքին հրաժարականը կը խնդրէ. Մատթէոս Պատրիարք զզուելով ամիրայից վատ ընթացքէն՝ Վ հոկտեմբեր 1848 ընդհանուր ժողով կը գումարէ Մայր եկեղեցին, հրաժարականը կուտայ 3 տարի Պատրիարքութիւն ընելէն յետոյ:

Հ. Մատթէոսի ո՞վ յաջորդեց:

Պ. Մատթէոս Պատրիարքի հրաժարական տրուած օրը ժողովուրդը շատ կը դիմանայ, բայց վերջապէս գինեպան իսկէնտէրի առաջարկութեամբը Յակոբոս Նախկին Պատրիարքը կընտրուի վերստին, ժողովրդեան և ամիրայից հաճութեամբը: Վ նոյեմբեր 1848 Եւդոկիայէն գալով կոկոի Աղբը կառավարել: Ասոր օրով Աղբն աւելի շարժում ընել սկսաւ, մանաւանդ գաւառներու մէջ առ հասարակ Հայոց մէջ մտաւորա-

կան շարժում կերեւնար : Յակոբ Պատրիարք իր
խորհրդականներովն Սղոյին դիշերթիկ վարժա-
րանի մը պէտքն անհրաժեշտ զգալով իսկիւ-
տարի ճեմարանը վերստին բանալ կուտայ . ո-
րով թաղական դպրոցներու յառաջադէմ աչա-
կերաները, փոխանակ թոշակաւ օտար ազգաց
դպրոցները յաճախելու, այն տեղ կը դիմէին :
Նոյն տարին նաեւ Եէտի գուլէի Ս. Փրկչի վա-
նուց մէջ նախակրթական դպրոց մը բացուեցաւ,
պանդուխտ, աղքատ, որք և անպաշտպան տը-
ղայոց համար . բայց քիչ մը վերջը ճեմարանին
ծախուց չլրնալով տոկալ, ճեմարանին կահկա-
րասիքը աչակերաններով մէկտեղ Ս. Փրկչի վան-
քը կը փոխադրուի, և կսկսի Փրկչեան վարժա-
րանը ծաղկիլ զանազան ուսմանց և լեզուաց դա-
սախօսութիւններով . ուստի կաթողիկոսը Յա-
կոբ Պատրիարքին աղքատիւական գործերն և
Սղոյին ուսումնական վերակենդանութիւն տարու
համար աշխատութիւններն իմանալով, մեծա-
զին՝ Փրկչին և Աւետարանչաց պատկերներով
զարդարեալ մարդարտազարդ կոնքեռ մը, եւ
Զմիւռնիոյ եկեղեցւոյն նպաստելու համար 1000
բօլ էմբելիալ կը զրկէ : Նոյն օրերը Երուսաղէմի
կերակոս Պատրիարքը վախճանելով իրեն կը յա-

ջորդէ Զմիւռնացի Յովհաննէս Եպիսկոպոս : Նոյն
պէս Յակոբ Պատրիարքի օրով 1 յունիս 1852 ի-
րարու հակառակ երկու պարսաւադիրք կը տես-
նուի Հայոց եկեղեցւոյն դէմ, որուն մին Հասու-
նի կողմէն զՄխիթարեանս հերետիկոս, հերձուա-
ծող, Հայոց կողմնակից և առ երեսս Հռովմէա-
կան են ըսելով կը բամբասէր : միւսը Մխիթար-
եանց կողմէն, որ Հայոց եկեղեցին հերետիկոս,
հերձուածող հրատարակելէն ՚ի զատ ինքզինքն
ալ կատարեալ Գաթողիկ և ամենաշերմեռանդ-
ծառայ Հռովմայ եկեղեցւոյ կը հրատարակէր, որ
քիչ շիթութիւն չպատճառեց Հռովմէական Հա-
յոց մէջ . ասոր համար Հասուն քաղաքական
պատրիարքութենէ հրաժարելով սկսաւ միայն
հոգեւոր իշխանութիւնը վարել և իրեն յաջոր-
դեց Սէլվեան : Բայց քիչ մը վերջը Սէլվեան
պատրիարքութիւնը ձգելով, Կակոնեան Նիկո-
ղայոս վարդապետն աշխարհական Պատրիարք ե-
ղաւ 12 նոյեմբեր 1852 :

Հ. Յակոբ Պատրիարքի օրով ի՞նչ երեւելի
դէպք պատահեցաւ :

Պ. Կարապետ վարդապետ Շահնազարեան,
որ բաւական ատեն փարիզ հաստատած էր բնա-
կութիւնը, իր երեւելի տաղանդովը և լեզուա-

գիտութեամբը փարիզի քանի մ'երեւելի ընկե-
 բութեան անդամ ըլլալով՝ Ասպետութեան պատ-
 ուանչանին կարժանանայ, և Նաբոլէօն կայսեր
 հրամանաւ փարիզի մէջ մատուռ մը կը հաստա-
 տէ՝ Հայաստանեայց եկեղեցւոյ արարողութեանց
 ծիսից համեմատ, և կսկսի պատարագել, հոն
 գտնուող Լուսաւորչական Հայերն իրենց պաշտա-
 մունքէն չը զրկելու համար: Այս միջոցին Հ.
 Գաբրիէլ Այվազեան, Հ. Սարգիս Թէոդորեան,
 Հ. Ամբրոսիոս և Հ. Խորէն Գալֆաեան վարդա-
 պետները, կը հրաժարին վենետիոյ Մխիթար-
 եան միաբանութենէն և Հայաստանեայց եկեղե-
 ցին կը յարին, ընդունելով անոր դաւանութիւ-
 նը, և կըսկսին Մասնայ Աղանէ անուամբ լրագիր
 մը հրատարակել. նոյնպէս վարժարան մ'ալ կը
 բանան Արեւելեան Բազմալեզու վարժարան անուամբ,
 և կըսկսին դասախօսութեան սոյն վարժարանին
 մէջ, ուրկէ բաւական աշակերտներ կը հասցու-
 նեն. բայց քիչ մը վերջը, իրենց մէջ անհամա-
 ձայնութիւն տիրելով՝ դպրոցը կը դոցուի, և ա-
 շակերտներն ալ ցիրուցան կըլլան, որով պատ-
 ճառ կըլլան Աղգին վրայ մեծագումար պարտք
 մը ձգել: Թէպէտ՝ թէ՛ այս դպրոցին կանգուն
 մնալուն՝ և թէ՛ փարիզի Մուրատեան վարժարա-

նրն ամբողջ Հայ ազգին աղքատ տղայքը դաս-
 տիարակուելուն համար եղած կեանքն ամբողջա-
 պէս գործադրել տալու համար շատ աշխատե-
 ցաւ Ազգասէր Հայ ամիրայ մը, սակայն հոն ալ
 ճիգուիթութիւնը՝ մասնաւորապէս մեր ազգին
 ժանտախտը՝ վերստին յաղթանակեց: Նոյն օրե-
 րը 1857 վետրվար 13 վախճանեցաւ Ներսէս ընդ-
 հանուր Հայոց սուրբ Հայրապետը 94 տարեկան
 հասակին մէջ՝ 14 տարի Հայրապետութիւն ընե-
 լէն ետքը, և Ազգը որ մեծ ակնկալութիւններ
 ունէր այս սրբազան անձէն, անոր յանկարծա-
 կան մահուամբն ՚ի սուգ ընկղմեցաւ:

Հ. Ներսէս կաթողիկոսի ո՞վ յաջորդեց:

Պ. Այս անգամ ընտրութիւնը Տաճկաստանի
 եպիսկոպոսաց վրայ ձգուելուն, 1858 ապրիլ ամ-
 սոյն մէջ կրօնական և աշխարհական անձերէ
 ընդ հանուր ժողով դումարուելով՝ երեք արժա-
 նաւոր անձինք կընտրուին, որք են Յովհաննէս
 Պատրիարք Երուսաղէմի, Մատթէոս Նախկին
 Պատրիարք Կ. Պօլսոյ, և Գեորգ արքեպիսկոպոս
 առաջնորդ Պրուսայու, և իրենց կողմէն երկու
 Տիխիսեցի իշխաններ երեսփոխան ընտրելով կը
 դրկեն Ս. Էջմիածին՝ Տաճկաստանի Հայոց կող-
 մէն կաթողիկոսութեան քուէ տալու: Եւ 1858

Մունիս 18 ին Մատթէոս արքեպիսկոպոս՝ նախ
 կին Պատրիարք Կ. Պօլսոյ՝ ընդհանուր Հայոց Կա-
 թուղիկոս կընտրուի : Այս ընտրութիւնը նախ
 Ռուսաց Կայսրը կը վաւերացնէ և դեսպանատան
 միջոցաւ նոյն տարւոյն օգոստոս 11 ին Բ. Դրան
 կիմացունէ Մատթէոսի ընդհանուր Հայոց Կա-
 թուղիկոսութիւնը . և Բ. Դուռը շնորհաւորե-
 լով, կը հրամայէ նաեւ թէ՛ երբ որ ուզէ կրնայ
 երթալ ՚ի Ս. Էջմիածին : Նոյն օրէն կըսկսի յիշ-
 ուիլ նորընտիր Հայրապետին անունը բոլոր եկե-
 ղեցեաց մէջ : Դեկտեմբեր 16 ին Էջմիածնայ կող-
 մէն Մակար եպիսկոպոս և երկու վարդապետ
 հրաւիրակ կուղան . նոյնպէս 1839 ապրիլ 20
 Ռուսաց Կայսեր կողմէն հրաւիրակ կուղան վսեմ
 Միքայէլ Լօրիս Մէլիքով Հայ զորապետը իր բա-
 նակին օգնական Հայազգի Միքայէլ Միանսարո-
 վի հետ . որոնք խիստ մեծ պատուով ընդունուե-
 ցան թէ Սղղին երեւելի իշխաններէն և թէ ու-
 սումնականներէն : Գանի քանի անգամ կոչունք
 ներ տրուեցան թէ Բերա թէ Օրթագիւղ և թէ
 Պէշիկթաշ . բայց ասոնց ամենը գերազանցեց
 Բերայի Օրէւ Տը Պէշիկ անուն օթեւանին կոչուն-
 քը : Բոլոր Հայ ուսումնականք ներկայ էին , և
 մեր Օգոստափառ Սուլթանին և վէհ. Կայսեր

Ռուսաց բարեմաղթութիւններ եղան : Նոյնպէս
 Անդղիացոց դեսպանն իր դեսպանատան մէջ
 փառաւոր հացկերոյթ մ'ըբաւ ՚ի պատիւ վեհ.
 Կաթուղիկոսին և վսեմ : Միքայէլ զորապետին .
 հոն ներկայ էին Ռուսիոյ , Պէլճիքայի դեսպանք
 և Պօղոս պէյ Տատեան :

Հ : Յակոբ Պատրիարքի իշխանութիւնը ո՞րչափ
 տուեց :

Պ . Յակոբ Պատրիարք 9 տարի և 9 ամիս Աղ-
 դը կառավարելէն ետքը իր ծերութեանը պատ-
 ճառաւ կը հրաժարի 1838 հոկտեմբեր 7 ին : Թէ
 և ժողովուրդը մեծ ցաւ կզգայ այնպիսի ազգա-
 սէր և ուսումնասէր հովուէ մը զրկուելուն վը-
 րայ , բայց ժողովականք կը վստահացունեն զժո-
 ղովուրդը թէ՛ իրեն յաջորդող նորընտիր Գեորգ
 Պատրիարքը՝ Յակոբ Պատրիարքի ընթացքէն չը
 պիտի շեղի : Ասոր օրով Կ . Պօլիս կուգայ Ռու-
 սաց Կայսեր եղբայրը կոստանդիանոս մեծ Դուք-
 սը , որ ընտանեօք Ս . Երուսաղէմ գացած և
 Հայոց Ս . Յակովբայ վանքին այցելութիւն ընե-
 լով Յովհաննէս Պատրիարքէն շատ սիրով եւ
 մեծ պատուով ընդունուած էր : Վեհափառ
 Հայրապետն ընկերակցութեամբ Գեորգ Պատրի-
 արքի և Պօղոս պէյ Տատեանի այցելութեան կեր-

Թայ և մեծ սիրով կրնդունուի . և կը խնդրէ նաև մեծ Դուքսը , որ եթէ կաթուղիկոսը հաճելու ըլլայ՝ միատեղ ճամբորդեն ՚ի Ս . Էջմիածին . եւ կաթուղիկոսը մեծաւ շնորհակալութեամբ կրնադունի այս հրաւերը : Նոյնպէս Օգոստափառ Սուլթանը վեհ . կաթուղիկոսին երթալն իմանալով կը հրաւիրէ իր պալատը , և կաթուղիկոսը մեծ ընդունելութիւն գտնելով կը վերադառնայ յՕրթագիւղ ճանիկ ամիշայի տունը : Եւ հետեւեալ օրը 1839 յունիս 2 ճամբայ կեղլան , ուղեկցութեամբ Սարգիս եպիսկոպոս Անդրիանուպօլսեցի և Սարգիս վարդապետ Թէոդորեանի , մասնաւոր շոգենաւով , որ Նիքօլայէֆէն կոստանդիանոս մեծ Դուքսը բերել տուած էր վեհ . կաթուղիկոսին համար : Նոյն օրերը Հ . Գաբրիէլ Այվազեան , Փարիզէն Ռուսաստան կերթայ և կայսեր հրամանաւ առաջնորդ կը կարգուի Նախըւանայ , Պէսարապոյ , և Ղրիմու , Հայաստանեայց Ս . եկեղեցւոյ դրութեանը հակառակ , Հ . Գաբրիէլ Թէոդոսիայի մէջ գիշերօթիկ վարժարան մը կը բանայ Խալիպեան ուսումնարան անուամբ , Խալիպեան Պ . Յարութիւնի ծախիւք , բայց այժմ դոցուած է :

Հ . Գէորք Պատրիարք ի նչպէս կառավարեց Ազգը :

Պ . Երբոր կաթուղիկոսը ճամբայ ելաւ , Ազգային եկամտից կարգադրութեան և Պատրիարքարանի ու Հիւանդանոցի ծախուց մատակարարութեան դիւրութեանը համար , մասնաժողովի մը ձեռամբ կանոնադրութիւն մը կը խմբագրուի , Գերագոյն ժողովը կուզէ որ երկու տարի առաջ խմբագրուած կանոնագրութեան յանձնաժողովը նոր խմբագրուած կանոնագրութեան յանձնաժողովին հետ միանալով , կատարեալ կանոնագրութիւն մը խմբագրեն , Օսմանեան Տէրութեան շնորհած արտօնութեանց համաձայն , Ազգային իրաւանց և պարտուց բովանդակութիւնն ըլլայ . որուն հիմը ընդհանուր Հայ Ազգին դաղտնի քուէարկութեամբ ընտրուած երեսփոխանական Ազգային ժողով մը կազմէ , որ կատարելապէս Ազգը ներկայացնէ , Այս կանոնադրութիւնը ծնող և ուսումնականաց ուշադրութիւնը գրաւողն , անմահ յիշատակաց արժանի Նիկողոս Աղա Պալեան եղաւ , որուն խորհրդական գանուեցան Ռուսինեան , Աղաթօնեան , և ուրիշ քանի մ'երեւելի ուսումնականներ : Գէորք Պատրիարք թէ սոյն կանոնադրութեան և թէ ուրիշ մէկ քանի Ազգային խնդրոց հակառակ դալուն՝ Գերագոյն ժողովը զանի գահէն վար առաւ 2 տար :

րի և 4 ամիս Պատրիարքութիւն ընելէն ետքը ,
1860 ապրիլ 21 ին :



ՄԱՍՆ ՏԱՍՆԵՐՈՐԴ

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՎԱՐՁՈՒԹԻՒՆ

ԳՂՈՒԽ Ա.

ԳԷՈՐԳ ՊԱՏՐԻԱՐԳԷՆ ՄԻՆՉԵՒ ԵՆԲՍԷՍ Բ . Ի

ՊԱՏՐԻԱՐԳՈՒԹԻՒՆԸ

1860 — 1874

Հ . Գէորգ Պատրիարքին ո՞վ յաջորդեց :

Պ . Սարգիս եպիսկոպոս Անդրիանուպօլսեցի ,
որ 1860 մայիս 14 ին ըստ սովորութեան Բ . Դու-
ռը կերթայ և Կայսերական հրովարտակա Պատ-
րիարքութիւնը կը հաստատուի : Նոյն տարին նաև
մայիս 24 ին ալ ընդհանուր ժողով կը գումար-

ուի , յորում ներկայ կը գտնուին Սարգիս նո՞-
րընտիր Պատրիարք : Յակոբ նախկին Պատրիարք
և ուրիշ բարձրաստիճան եկեղեցականներ . աշ-
խարհականներէն Տատեան , Պալեան , Երամեան
ամիրաները , և ուրիշ պատուաւոր ուսումնականք
և բաղմաթիւ ժողովուրդ : Այն տեղ նոր խըմ-
բադրուած կանոնադրութիւնը ծայրէ 'ի ծայր
կարդացուելով , կը հարցուի եկեղեցականաց թէ,
կրօնքի , եկեղեցւոյ ու անոր սուրբ կանոնաց
դէմ բան մը կա՞յ , գիտողութիւն մ'ունին , ո՞չ
կը պատասխանեն ամբողջ կրօնականք : Թէպէտ
եւ ըննութեան ալ կարօտ չէր , վասն զի Ազգին
սիրելի և հաւատարիմ անձինքն էին սոյն կանո-
նադրութիւնը խմբագրողները : Ուստի նոյն օրն
ամենքն ալ ստորագրելով Ազգովին կրնգունին
նոյն կանոնադրութիւնը ԱԶԳԱՅԻՆ ՍԱՀՄԱՆԱ-
ՆԱԴՐՈՒԹԻՒՆ անուամբ , որոյ հիմնական սկզբ-
բունքներն են :

Ա .

« Ազգին ամեն մէկ անհատն առ Յղգն պար-
տաւորութիւններ ունի . Ազգն ալ իր կողմէն
« առ Ազգային ամեն մէկ անհատ պարտաւո-

« բութիւններ ունի . դարձեալ ամեն մէկ ան-
 « հատ իրաւունքներ ունի Ազգէն , և Ազգն ան-
 « հատներէն :

« Այս պարտիքներն որոշող և այս իրաւունք-
 « ները հաստատող իշխանութիւնը Ազգային վար-
 « չութիւն կը կոչուի , որում Օսմանեան Տէրու-
 « թեան յատուկ արտօնութեամբ յանձեալ է
 « Տաճկաստանի Հայոց ներքին գործոց տնօրէ-
 « նութիւնը :

Բ .

« Ազգային վարչութիւնը հիմնեալ է իրաւանց
 « ու պարտոց սկզբունքին վրայ , որ արդարու-
 « թեան սկզբունք է՝ իր ուժը ձայնից բազմու-
 « թեան մէջ կը կայանայ , որ օրինաւորութեան
 « սկզբունք է : Ամենայն տնօրէնութիւն Ազգա-
 « յին՝ որ չէ համաձայն սոյն սկզբանց , ո՛չ ար-
 « դար է և ո՛չ օրինաւոր :

Գ .

« Ազգն ու Ազգային վարչութիւնը փոխադարձ
 « պարտիքներով կապուած են իրարու հետ :

Դ .

« Ազգայնոց պարտաւորութիւններն է Ազգին
 « պիտոյիցը պահանջած ծախքերուն մասնակից
 « ըլլալ , իւրաքանչիւրն իր կարողութեանը չա-
 « փով . Ազգին խնդրած ծառայութեանց յանձ
 « նառու ըլլալ , և Ազգային վարչութեան ըրած
 « տնօրէնութեանց ազգասիրաբար հնազանդիլ :

Ե .

« Ազգային վարչութեան պարտականութիւնն
 « է Ազգին բարոյական , մտաւորական և նիւթա-
 « կան պիտոյիցը հոգ տանիլ . Հայաստանեայց
 « Ս . եկեղեցւոյ դաւանութիւնն ու աւանդու-
 « թիւններն անխախտ պահել . մարդկութեան
 « հարկաւոր եղած անհրաժեշտ գիտելեաց ու-
 « սումն Ազգին ամեն աստիճանի թէ մանչ և թէ
 « աղջիկ տղայոց հաւատարապէս ծաւալել , Ազ-
 « գային հաստատութիւնները պայծառ պահել .
 « Ազգին հասոյթներն օրինաւոր կերպով աւել-
 « ցընել և ծախքերն իմաստութեամբ տնտե-
 « սել . Ազգին ծառայութեան մշտնջենապէս
 « նուիրեալ անձանց կացութիւնը բարւոքել և

« ապագան ապահովել . կարօտելոց խնամ տալ
 « նիւ հայրաբար . Աղգայնոց մէջ ծագած վէճերն
 « արդարութեամբ խաղաղել . և վերջապէս Աղ-
 « գին բարեկարգութեանն և յառաջադիմու-
 « թեանը աշխատութիւն չխնայել :

Չ .

« Ահա այս ամեն պարտիքները կատարելու և
 « իրաւունքները ապահովելու դիտմամբ է որ
 « Աղգը հետեւեալ կերպով կը ստհմանադրէ
 « զԱղգային գործոց վարչութիւնը » :

Հ . Սարգիս պատրիարք ինչպէս կառավարեց
 Աղգը :

Պ . Թէ Սահմանադրութեան անթերի գործադ-
 րութեանը համար տուած երդումէն և թէ 1860
 յուլիս 14 ի բողոքական Հայու մը մահուամբ ,
 որ Հայոց գերեզմանատան մէջ թաղել կուզէին ,
 իր անձը վտանգի մէջ դնելով՝ թէ Եւրոպական
 տէրութեանց դեսպաններուն և թէ Բ . Դրան
 առջև Աղգին իրաւունքները պաշտպանելով եւ
 արինհեղութեան առաջըն առնելուն , Աղգին
 ամենասիրելի պատրիարքն եղաւ . և վեհ . կա-
 թուլիկոսն իմանալով պատրիարքին անձնուի-

րութիւնները՝ Ռուսաց դեսպանին միջոցաւ թանձ
 կագին մատանի մը կը դրկէ . և օգոստոս 25 իր
 նախադահութեամբն ըստ Սահմանադրութեան
 ընդհանուր ժողով կը հրաւիրէ . հոն քուէից բա-
 ցարձակ առաւելութեամբ կընտրուին 120 երես-
 փոխանք , որուն Ատենապետ Մէրվիէն և փոխ .
 ատենապետ Մինասեան Մինաս էֆէնտիները կընտ-
 րուին նաեւ ատենադպիր Աղաթօնեան Մկրտիչ ,
 փոխ . ատենադպիր Իւթիւճեան Կարապետ էֆէն-
 տիները . նոյնպէս կընտրուին նոյն օրը Կրօնական
 ժողովոյ 14 անդամները և ֆաղաքական ժողո-
 վոյն 20 անդամները . և հոկտեմբեր 13 ին Տըն-
 տեսական և Դատաստանական խորհուրդները
 կընտրուին : Նոյն օրը Սարգիս պատրիարքին այ-
 ցելութեան կուգայ Գաղղիոյ դեսպան Մ . Լա-
 վալէթ Մարքիզը . Սարգիս պատրիարք ալ փո-
 խադարձ այցելութեան երթալով , շատ սիրով
 կընդունուի : Նոյեմբեր 18 ին առաջին կարգի
 Մէճիտիէ պատուանշանը կընդունի Բ . Դոնէն :
 Նոյեմբեր 20 ին ալ կընտրուին Ռուսմական
 խորհուրդ և Հիւանդանոցին հողաբարձութիւնը :

Հ . Սարգիս պատրիարքին օրով ինչ գլխաւոր
 դիտելիք կայ :

Պ . 1860 թուականը Հայոց համար նշանաւոր

Թուական մ'եղաւ, վասն զի այս օրէն սկսաւ ամեն թաղ ընկերութիւններ հաստատել. բայց դժբաղդարար խիստ քիչը կանգուն մնայ, ինչպէս Հայկական ընկերութիւնը, վարդանանց ընկերութիւնը, Բարեգործական ընկերութիւնը, որ Ազգին մէջ երկրագործութեան արհեստը դիւրացնելու և ուսմունքը որբ՝ անտերունջ և աղքատ տղայոց մէջ ծաւալելու համար կազմուեցաւ, եւ 3000 ի չափ Օսմանեան ոսկի հաւաքելով՝ անգործ կեցած է մինչեւ այսօր. նոյնպէս անձնուէր ընկերութիւնը կը հաստատուի, հետեւեալ կանոնով որուն հիմնադիրն է գրավաճառ Պ. Յարութիւն Մարդարեան :

ԿԱՆՈՆ

Անձնուէր ընկերութեան անդամ եղող անձը պարտք կը համարի, իրեն ընակած տեղին մօտ ընակող նժդեհ ազգայնոց կարգաւ չգիտցող եղբարց ոտքն երթալով՝ Ազգէն նուիրուած մէկ մէկ Քերական իր հետը տանելով, « էն մինչեւ թ դրբերը ձրիաբար սովբեցընել, և այն անձին ձեռադրովն անունը գրել տալու ջանքն ի գործ դնել, առանց փոխադինաբար նուէր մ'ընդու-

նելու, բայց եթէ ուսանողը մեծ ստիպում ընէ ընծայ մը տալու ընկերութեան, անդամ եղողին չվերաբերիր, այլ այն ազգային պաշտպանութեան տակ գտնուող որբ և անտերունջ զաւկաց : Արդ այս ընկերութեան անդամ եղողը պիտի ըլլայ ամեն թաղէն չորսական հօգի որոնք կարգաւ մէկ մէկ շաբաթ կիրակի օրերն իրենց պաշտօնը պիտի կատարեն. ըսել է որ՝ չորս կիրակին անգամ մը ամեն մէկ անդամին պարտքն է անպատճառ սովբեցնել, իրենց սեփհականեալ տեղը երթալով՝ որ ընկերութիւնը իրենց պիտի ցուցընէ :

1860 օգոստ . 6

ՄԱՐԳԱՐԵԱՆ ՅԱՐՈՒԹԻՒՆ

Եւ ահա այս կողիկ և դիւրըմբռնելի կանոնով հաստատեալ ընկերութիւնն այսօր Հայաստանի մէջ խիստ քիչ գաւառ պիտի գտնենք որ տարածուած չըլլայ իր անձնուէր պաշտպաններուն ջանիւքը :

Նոյնպէս 1860 յուլիս 17 Հոովմէական Հայոց աշխարհական Նիկողայոս պատրիարք կալոնեան կը հրաժարի : Ժողովուրդը կուգէ Սահմանաբութիւն մը հաստատել և ըստ այնմ պատրէսքը բնտրել, բայց Հասուն Անտոն երկպառակութիւն

ձգելով մէջերնին ինք կը յափշտակէ պատրիարքութիւնը :

Այս միջոցին 1860-61 Բերայի մէջ Արեւելեան թատրոնը կը բացուի , և այնչափ մեծ համբաւ կ'ստանայ դերասանուհեաց և դերասանաց յաջողակութեամբը որ օտար ազգի դերասանաց գովեստին կարծանանայ : Գրեթէ շատ ներկայացման ներկայ կը գտնուին , նոյնպէս Եւրոպական տէրութեանց դեսպանները և բազմաթիւ Եւրոպացիք : Բայց ափսոս , Հայութիւնը մէկ զգացմամբ ամփոփող սոյն սրբազան յարկը որ ազգասէր Հայուն բաւական մեծ միութարութիւն մ'էր՝ ճիզվիթաց մատովն հիմն ՚ի վեր տապալեցաւ , թէ եւ հաստատամիտ և անձնուէր դերասանք մինչեւ ցայսօր կը շարունակեն նախկին դերասան Պ . Յակոբ վարդուլեանի վարչութեանը տակ :

Հ . Սարգսի պատրիարքութիւնը ո՞րչափ տեւեց :

Պ . 1860 դեկտեմբեր 23 ին Երուսաղէմայ Յովհաննէս պատրիարքը 75 տարեկան հասակին մէջ կաթուածահար ըլլալով կը վախճանի . միաբանք կուզեն ըստ վաղեմի սովորութեան վանքին միաբաններէն ընտրել իրենց պատրիարքը , և վանքին ելեւմուտը իրենք գիտնալ . բայց Սահմանադրական Ընդհանուր Ժողովը կուզէ վանքին

ելեւմուտը գիտնալ , հաշիւ պահանջել , ըստ Սահմանադրութեան՝ եթէ վանքին միաբաններուն մէջ արժանաւոր մէկը չգտնուի՝ դուրսէն պատրիարք մը ընտրել : Այս խնդիրներուն վրայ Ժողովուրդը կը յուզի , և որովհետեւ Սահմանադրութիւնն ալ տակաւին բաւական թշնամիներ ունէր , Երուսաղէմայ միաբանից հետ միանալով կըսկսին ազգը խռովել , և երկուքի բաժնել՝ Սահմանադրականք լուսաւորուանուամբ և միւս մասը Խաւարու անուամբ կորոշուին : Այս միջոցին Սահմանադրութեան տարեդարձը կը տօնեն 1861 մայիս 28 Պէկքօզ ՚ի Հիւնքեար իսկէլէսի , և լուսաւորեալք խաւարեալք երկարատեն մէկզմէկ նախատել , թշնամանել և կրուուելէ յետոյ Սարգիս պատրիարք խաւարելոց կը յարի , և իջմիածնայ ընդհանրական Հայոց կաթուղիկոսէն եկած կոնդակը՝ որ Երուսաղէմի պատրիարքութեան համար էր , եկեղեցիներուն մէջ բռնի կարդացնելու համար Բ . Գռնէն որոյ հանել կուտայ , բայց Մեղի շաբաթաթերթ հանդիսին 1861 օգոստոս 21 ի յաւելուածովը դրդեալ՝ հոկտեմբեր 15 ին Ժողովուրդը Եէնի դարուի եկեղեցին կը դիմէ կոնդակը չը կարդացնելու և պատրիարքին անունը Ս . Պա-

տարադի տտեն չը յիշեցնելու համար : Հոն խաւարերոց հետ սոսկալի կռիւ մ'է կելնէ , ուր անմիջապէս ուտիկանութեան զինուորներ հասնելով կը խաղաղեցունեն . նոյն օրը բազմաթիւ անձինք բանտարկուեցան : Եւ վերջապէս հոկտեմբեր 20ին Բ . Դրան հրամանաւ Սարգիս պատրիարք կը հըրաժարի՝ 1 տարի և 6 ամիս պատրիարքութիւն ընելէն յետոյ :

Հ . Սարգիս Պատրիարքի ո'վ յաջորդեց :

Պ . Տ . Ստեփանոս եպիսկոպոս Մաղաքեան՝ Նիկովիդիոյ առաջնորդ՝ տեղապահ կը կարգուի : Ասոր օրով Ազգային Սահմանադրութիւնը դեռ Բ . Դուռն էր վաւերացուելու համար . Սահմանադրականք տեսնելով որ Սահմանադրութիւնը Բ . Դուռը սպասելուն պատճառը յանձնաժողովն ու տեղապահն է , 1863 օգոստոս 1 ին 6 — 700 ի չափ սահմանադրական երիտասարդք Պատրիարքարան իջնելով , տեղապահը , յանձնաժողովոյ անդամները , տեղապահին փոխանորդը , գրագիրներն և բոլոր գործակալները դուրս հանելով , Պատրիարքարանին դռները կը գոցեն եւ բանալիները Եէնի դարուի թաղական խորհրդին յանձնելով՝ ամենքը իրենց գործին կերթան , Բ . Դուռն իմանալով զայս՝ անմիջապէս ուտիկանու-

թեան դուրս Սէլիմ բաշան 300 ի մօտ զինուորով Պատրիարքարան կուգայ դռները կը բանայ , եւ 50 ի մօտ զինուոր թողլով կերթայ : Նոյն օրը Ռւնեցւոց կոտորածին լուրը Պօլիս հասնելով Ազգը կրկին կը յուզուի , 1863 հոկտեմբեր 3 ին Յակոբ նախկին պատրիարք Ս . Երուսաղէմ կերթայ . հոկտեմբեր 30՝ դիշերը լուցիկէն անկողինը բռնկելով ձեռքն ու մօրուսը կայրի և ցաւուն չկրնալով դիմանալ չորս օրէն կը վախճանի : 1863 փետրվար 1 Բերայի Հռովմէական հայոց Ռսկերբերան եկեղեցւոյն օժման հանդէսը կը կատարէ Անտոն Հասունեան 'ի ներկայութեան Համազգային իշխանաց :

Հ . Որչափ ատեն առանց պատրիարքի մնացին Հայք :

Պ . Պատրիարքարանը գոյուելէն քանի մ' ամիս ետքը , Բ . Դուռը Սահմանադրութիւնը կը շինորհէ և Տ . Ստեփանոս տեղապահի նախագահութեամբ ժողովները կը կազմուին . և 1863 հոկտեմբեր 15 ընդհանուր ժողովը պատրիարք կընտրէ Տ . Պօղոս արքեպիսկոպոս Թաքթաքեան առաջնորդ Զմիւռնիոյ . նոյեմբեր 5 ին Պօլիս կուգայ և ժողովուրդը խիստ փառաւոր կերպիւ կը դիմաւորէ կեցցէ Սահմանադրական առաջին պատ-

րիարքը գոչելով . կը տանին Մայր եկեղեցին : հոն պատրիարքը Սահմանադրութեան տետրակն 'ի ձեռին կուխտէ առաջի Աստուծոյ և բազմաթիւ Հայ հասարակութեան ներկայութեանը՝ Սահմանադրութեան անթերի գործադրութեանը վերայ . ժողովուրդը գոհ սրտով կը մեկնի : Եւ պատրիարքը նոյեմբեր 14 ին Սուլթանին և Բ. Դրան կը ներկայանայ : Ասկէ ետքը Հայոց ազգը անուամբ պատրիարք մը կունենայ . ժողովներուն մէջ անհամաձայնութիւնները կը տիրեն ու կըրսիսին մին զմիւսին գործերը քննադատել , և հետզհետէ կը լուծուին : Նոյն ատենները , 1864 սեպտեմբեր 24 , Աղթամարայ Պիւլպիւլ կաթողիկոսը վանայ ծովուն եզերքը կապաննուի և ուրիշ մը կընտրուի : Նոյնպէս Սոյ կաթողիկոսը կը վախճանի և Նիկողոս եպիսկոպոս ինքզինք կաթողիկոս ձեռնադրել կուտայ : Այս երկու կաթողիկոսները թէ կրօնական և թէ ֆաղաքական ժողովները անվաւեր կը հրատարակեն : Նոյն օրերը նաեւ Էջմիածնայ ընդհանրական կաթողիկոսն ալ կը վախճանի և ընտրութիւնը Տաճկաստանի եպիսկոպոսայ ձգուելուն , Տ . Գէորգ արքեպիսկոպոս առաջնորդ Պրուսայու ընդհանուր կաթողիկոս կընտրուի 1866 սեպտեմբեր

17 ին : Այս միջոցին Հռովմէական հայոց Լիբանանու կաթողիկոսն ալ վախճանելով՝ Անտոն Հասունեան առանց ազգին հաւանութեանը կաթողիկոս կընտրուի Հռովմէն՝ միանգամայն քաղաքական պատրիարք ըլլալով : Նոյն օրերը բացուեցաւ Խասգիւղ Առաքել-Նուպար-Շահնաղարեան վարժարանը :

Հ . Առաքել-Նուպար-Շահնաղարեան վարժարանը ո՞վ բացաւ :

Պ . Շահնաղարեան կարապետ վարդապետ օղախիոթութեան համար Եգիպտոս գանուած ատեն , կիլիկիոյ մէջ ժառանգաւորաց դպրոց մը բանալու խորհուրդն ունենալը վսեմախայլ Նուպար վաշայի կը յայտնէ , բայց հիւանդութիւնն օր աւուր սաստկանալով կատիպուի Կ . Պօլիս դալ և հիւանդութեանը դարման մը գտնել . և Պօլսոյ մէջ աւելի տկարանալով՝ և իւր վերջին օրերը մօտենալը գուշակելով , իր կտակը կը շինէ 'ի ներկայութեան Ներսէս եպիսկոպոս վարժապետեանի և ուրիշ քանի մ'երեւելի անձանց , որուն բովանդակութիւնն է , բոլոր իր գոյքերը ծախուելով 1000 ոսկւոյ գումար մը գոյանայ . այդ գումարը իր տոկոսովը երբ 4000 ի լրանայ , նոյն ատեն այն 4000 ոսկւոյն տոկոսովը տասը

ձինք կը բանտարկուին . ժողովուրդն առաւել
 եւս զայրանալով կսկսի վերստին բողոքել , և
 Պօլսոյ եկեղեցիներն , այն սրբազան տաճարները՝
 որ ժողովուրդը ակնածութեամբ և խիստ սպա-
 կառանօք կը մտնէր կեղնէր , ալ ասկէ ետքը
 մէկ մէկ խռովատեղի կը դառնայ , և վերջապէս
 1869 յունուար 23 ին կը հրաժարի 5 տարի պատ-
 ըրիարքութիւն ընելով :

Հ . Պօլսոս պատրիարքի սփյ յաջորդեց :

Պ . 1869 յունուար 23 ին տեղապահ կը կար-
 գուի , Արխատակէս արքեպիսկոպոս առաջնորդ-
 Անդրիանուպօլսոյ . և Սուլթանին դահակալու-
 թեան տարեդարձը շնորհաւորելու համար պա-
 լատը կերթայ . հոն Անտօն Հասունեան առաջ-
 նորդութիւնը յինքն ձգել ուղերուն , Գեր . Ա .
 րխատակէս եպիսկոպոս որուն ընկերացած էին
 իօրեն եպիսկոպոս ևայն , առանց Սուլթանին
 ներկայանալու ետ կը դառնան , Հետեւեալ օրը
 բոլոր պատուաւոր ազգայինք այսպիսի սրբազան
 իրաւունք մը պաշտպանելուն համար շնորհակա-
 լութեան կերթան ՚ի Պատրիարքարան , և 1869
 յուլիս 31 Ընդհանուր ժողով գումարելով , պատ-
 ըրիարք կընարուի Տ . Իգնատիոս արքեպիսկոպոս
 Կ . Պօլսեցի առաջնորդ . վանայ , և պատրիար-

քական հրովարտակն եղնելէն օր մը վերջը կը
 վախճանի 1869 օգոստոս 12 ին որուն յուղարկա-
 ւորութեան հանդէսը խիստ փառաւոր կերպիւ-
 կատարուելով , Բերայի Ս . Երրորդութեան եկե-
 ղեցւոյն բակը կը թաղեն . Գիչ մ'ատեն առանց
 պատրիարքի և տեղապահի մնալով պատրիար-
 քական փոխանօրդ կարապետ վարդապետի նա-
 խագահութեամբ քանի մ'անդամ Ընդհանուր
 ժողով գումարելով , և բաւական երկար վիճա-
 բանութիւններ ընելէն յետոյ 1869 սեպտեմբեր
 4՝ պատրիարք կ'ընտրուի եպիսկոպոս Մշոյ և ա-
 ռաջնորդ Ս . կարապետի Գլակայ վանուց Տ . Մը-
 կըրաիչ իրիմեան վանեցի :

վեՐՁ

ՅՈՒՅԱԿ

ՀԱՅԵՐԷՆ ԼՐԱԳՐԱՑ ԵՒ ՀԱՆԴԻՄԻՑ

Ազգասէր արարատեան	1845	Կալկաթա
Ազգասէր արարատեան	1849	Կալկաթա Բ. անդամ
Ազգարար	1795	»
Ազգարար բիւզանդեան	1840	Կ. Պօլիս Խ. Ոսկանեան
Ախապիր դօսթանթանիէ	1855	Կ. Պօլիս Ռ. Քիւրքճեան
Ասիա	1872	Կ. Պօլիս Գ. Ռէխեան
Աստղիկ արեւելեան	1855	Կ. Պօլիս Մեարդրեան Բն.
Արարատ	1850	Տփլիսի Մոսերեան
Արարատ	1869	Կ. Պօլիս Այվատեան
Արարատ	1871	Կ. Պօլիս
Արարատ ամազիր	1863	Էջմիածին
Արեւելեան դար	1860	Կ. Պօլիս Գ. Տէյիրմէնճեան
Արեւմուտք	1859	Փարիզ Ս. Ոսկանեան
Արծուի վասպուրական	1855	Կ. Պօլիս
ուր վասպուրական	1857	Կ. Պօլիս Մ. Վ. Խրիմեան
Ն. Տարօնոյ	1865	Տարօն Գ. Արուանձտեանց
	1865	Եգիպտոս Ա. Մուրատեան
ատեան	1859	Զմիւռն. Ղ. Պաղտասրեն
Ն	1455	Զմիւռնիա Տէտէեան
	1855	Կ. Պօլիս Միսիօնարք
	945	Վենետիկ Միսիթ. Հարք
		Մատրաս

Բանասէր	1851	Կ. Պօլիս Մ. Յ. Հիւարլեան
Բուրպատան Ս. Սահակեն	1851	Կ. Պօլիս աչ Սահկ. վարժ.
Գարուն Հայաստանի	1862	Զմիւռն. Գ. Պարտիզպան
Դիտակ բիւզանդեան	1812	Վենետիկ Ղ. Վ. Յիզ/ճ/բ/ւ 2.
Դիմակ	1862	Զմիւռնիա Տէտէեան
Դիտակ շաքաթաթերդ	1870	Կ. Պօլիս Հ. Մ. Իւթիւճեան
Դաստիարակ	1872	Թէոդոսիա Գ. Խաչիկով
Դպրոց	1875	Ռուսիա Վ. Վարդապետ Փաստովեան
Եղանակ բիւզանդեան		
Երեւակ	1857	Կ. Պօլիս Յ. Տէրոյենց
Երկրագունք	1964	Մանչէսթեր Կ. Վ. Շահ- Նազարեան
Եւրոպա լրագիր	1847	Վիեննա
Եւրոպա լր. ընդ տանեկան	1858	Վիեննա
Եփրատ	1869	Կ. Պօլիս Ս. Հ. Յէլէկեան
Զեփիւռ Հայրենեաց	1862	Կ. Պօլիս Գափամանճեան
Զուարճախօս	1856	Կ. Պօլիս
Զօհալ	1855	Կ. Պօլիս Յ. Տէրոյենց
Էվրազը շարգըյէ	1867	Էրզրում
Էրիզա	1868	Կ. Պօլիս Խ. Թ. Թերզեան
Ընտանի իմաստասէր	1854	Կ. Պօլիս Ազգարկ. Բնկրթ.
Թագվիմ վագայի հրէէն	1852	Կ. Պօլիս
Թութակ հայկազնեան	1855	Զմիւռնիա Տ. Վրդանէս
Թռչնիկ օրգր. ամսօրեայ	1861	Կ. Պօլիս
Թռչնիկ տաճիկերէն	1868	Կ. Պօլիս Իլիէքեան
Թռչնիկ Պեղասեան	1865	Կ. Պօլիս Գ. Ալաթճեան

Յատրոնն	1874	Կ. Պօլիս Յ. Պաթոնեան
Յամանակ	1865	Կ. Պօլիս Ս. Փափաղեան
Իրաւունք	1868	Զմիւռնիա Տէր Ս. Միրզա
Լուսարայլ, հանդէս կիսամսայ	1864	Զմիւռնիա Պ. Ազճալեան
Լրոյ գիր	1858	Կ. Պօլիս
Խիւտալէնկեար	1869	Պրուսա
Մաղիկ	1862	Զմիւռնիա Գ. Զլինկիրեան
Միաճան	1866	Կ. Պօլիս Զուլաճեան
Միլն աւարայրի	1866	Կ. Պօլիս Մ. Աղաբէկեան
Կիթաւ	1864	
Կիլիկիա	1861	Կ. Պօլիս Խեթիւճեան
Կովլաս	1846	Տիփսիս Տար. Արծրունեան
Հայկական աշխարհի կռուք	1864	Տիփսիս
Հայկական աշխարհ	1866	Տիփսիս Հ. Էնֆիէճեանց
Հայաստան	1846	Կ. Պօլիս Մ. Աղաթօնեան և Զամուրճեան
Հայրենասէր	1855	Զմիւռնիա Մ. Սէլուեանց
Հայրենասէր	1850	Նիկոմիդեա Ա. Մուրատ
Հիւսիսարայլ	1858	Մոսկուա Ս. Նազարեանց
Հորիզոն	1870	Կ. Պօլիս Գ. Մ. Էղաճեան
Հայրենիք	1870	Կ. Պօլիս Ա. Վարդանեան
Հայկական աշխարհ շուշի	1875	Խ. Վրդալ. Ստեփանեան
Ճերիտէյի հովատիս	1859	Կ. Պօլիս
Ճեմարան դիտելեաց		
Ճոպարալ	1859	Սէրեան Մօսթու

Մամուլ	1819	Այվաղեան
Մասեաց աղանի	1855	Փարիզ. յետոյ 'ի Թէոն դոսիա Այվաղուլլաքի և Գալֆայեան
Մամուլ արեւելեան		Մ. Մամուրեան
Մասիս	1852	Կ. Պօլիս Կ. Ս. Խեթիւճեան
Մասիս օրաթերթ	1867	Կ. Պօլիս <i>Չ. Նիկոլայ Գրիկ</i>
Մանղուժէի էֆքեար	1866	Կ. Պօլիս Կ. Փանոսեան
Մեղու	1851	Կ. Պօլիս Յ. Սըլաճեան
Մեղու Հայաստանի	1858	Թիֆլիզ
Մէճմուսյը հովատիս	1852	Կ. Պօլիս Յ. Վարդանեան
Մշակ		<i>1872 Տիփսիս Գ. Կրճարաբ:</i>
Մուսայք Մասեաց	1857	Կ. Պօլիս
Մուսայք Մասեաց	1862	Կ. Պօլիս Ա. Հայկունի
Միւթիւն	1861	Զմիւռնիա
Միւնատիի էրճիյաս	1859	Կ. Պօլիս Կ. Փանոսեան
Յայտարար լրագիր	1847	Կ. Պօլիս
Յաւերժահարս	1862	Զմիւռնիա Ս. Փափաղ
Յոյս	1864	Արմաշի վանքէն
Նոյեան աղանի	1852	Կ. Պօլիս Գ. Մարկոսեան
<i>Նոր շար</i>		<i>1883 Թիփսիս Ա. Ասրոյեան</i>
Շտեմարան պիտանի գի- տելեաց	1858	Զմիւռնիա
Ուսումնասէր	1849	Սինկափոր վիմադրոյժ
Սէտոյը Հաղըղաթ	1870	Կ. Պօլիս
Սէր	1860	Կ. Պօլիս Ա. Ճէվաճիրեան
Սիօն	1866	Երուսաղէմ
Սուրհանդակ բիւզանդեան	1847	
Վարադայի հաւատիս	1868	Կ. Պօլիս Կ. Փանոսեան

Վարդ 1862 Կ. Պոլիս Թ. Պէռեանց
Ս. Բարսեղեան

Վարդ Կեսարիոյ 1865 Կ. Պոլիս Մարտիրոս
Բահանայ Նիկողոսեան

Տիեզերք հանդէս զրոսավայր

Փարիզ 1861 ֆարիզ Մուրատեան

Փող առաւօտեան 1870 Կ. Պոլիս Յ. Պարոնեան

Փունջ 1860 Կ. Պոլիս Հ. Ալաճաճեան

Փնջիկ » »

Օրադիր 1862 Կ. Պոլիս Օ. Խօճասարեհ

Պռակտ Եւ. հ. Նշանադրով 1867 Հալէս պատշոնական



« Ազգային գրադարան



NL0108462

